

ՀՀ ՓԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА  
INSTITUTE OF ARTS NAS RA

---

# ԿԱՆԹԵՂ

## ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ

**КАНТЕХ**  
НАУЧНЫЕ ТРУДЫ

**KANTEGH**  
ARTICLES

**1 (70)**



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱՎԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2017

ՀՏԴ 001  
ԳՄԴ 72  
Կ 203

Կ 203 Կանթեղ: Գիտական հոդվածներ /Գլխ. խմբ.՝ Ա.Ասատրյան. - Եր.: Ասողիկ,  
282 էջ:

### **Գլխավոր խմբագիր՝ Աննա Գ. ԱՍԱՏՐՅԱՆ**

#### **Խմբագրական խորհուրդ**

**ԱՂԱՍՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ,  
ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա, ԶԱՔԱՐՅԱՆ Անուշավան, ԽԱՌԱՏՅԱՆ Ալբերտ,  
ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ, ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն,  
ՄԵԼՔՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (գլխավոր խմբագրի տեղակալ),  
ՅՈՒՐԵՎԱ Տառյանա, ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ, ՊՈԿՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա,  
ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

**Главный редактор Анна Г. АСАТРЯН**

#### **Редакционная коллегия**

**ԱԳԱՏՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ,  
ԱՍՊԱՐՅԱՆ Սեդա, ԱՂԱՍՅԱՆ Անուշավան, ԱՂԱՐՅԱՆ Վիգեն, ԱՂԿՈՆՅԱՆ Աշոտ,  
ԱՂՐՏՅԱՆ Մանե (заместитель главного редактора), ԱՂՐՏԻՍՅԱՆ Աշոտ,  
ՕԳԱՆԵՏՅԱՆ Գենրիկ, ՕԳԱՆՅԱՆ Կաժիկ, ՍՈՂՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա, ՏԱԿՅԱՆ Արմեն,  
ՏԱՐԳՅԱՆ Լևոն, ՄԱՐԱՏՅԱՆ Ալբերտ, ՄՐԵՎԱ Տառյանա**

**Editor-in-Chief Anna G. ASATRYAN**

#### **International Editorial Council**

**ԱԳԱՏՅԱՆ Արարատ, ԱՂԱՍՅԱՆ Լիլիթ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՍՊԱՐՅԱՆ Սեդա,  
ԱՂԱՐՅԱՆ Վիգեն, ԱՂՐՏՅԱՆ Մուրադ, ԱՂՎԱՆՆԻՍՅԱՆ Գենրիկ, ԱՂԱՐՅԱՆ Ալբերտ,  
ԱՂԿՈՆՅԱՆ Աշոտ, ԱՂՐՏՅԱՆ Մանե (Deputy Editor-in-Chief), ԱՂՐՏԻՍՅԱՆ Աշոտ,  
ԱՂԱՆՅԱՆ Կաժիկ, ԱՂՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա, ԱՂԱԿՅԱՆ Արմեն, ԱՂՐԳՅԱՆ Լևոն,  
ՄՐԻԵՎԱ Տառյանա, ԱՂԱՐՅԱՆ Անուշավան**

ՀՏԴ 001  
ԳՄԴ 72

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՀՈՐԱՑԻՈՆ ԵՎ ԳՈՎԵՐՆ

### ԱՐԱ ԵՐՆՋԱԿՅԱՆ

Հոգվածն անդրադառնում է Շեքսպիրի երկու ստեղծագործությունների գործող անձանց՝ Հորացիոյին՝ «Համլետ»-ից և Գովերին՝ «Պերիկլես»-ից: Դիտարկվում է այն թեզը, որ Հորացիոն և Գովերը, կատարելով խմբավարների դեր, ստեղծում են ժամանակային ճեղքվածք իրենց ու մյուսների միջև՝ ապահովելով տեղի ունեցողի ընդգրկումը և ընկալումը:

Նշված գործերի «սովորական» հերոսները, ովքեր իրական ժամանակի մեջ են, թվում է՝ «ստուգվում» են ժամանակից դուրս գոյող հերոսների կողմից:

**Բանալի բաներ** – Հորացիո, Գովեր, բազմաչափություն, Պերիկլես, խմբավար, Շեքսպիր, Համլետ:

Ինչպես գիտենք, պատմական փաստերի հետ վարվելու ազատությունը, որ հատուկ էր եղիսաբեթյան դարաշրջանին, Շեքսպիրի համար չի եղել ինքնանպատակ: Նա դիմել է դրան միայն այն ժամանակ, երբ պահանջել են «բեմականության շահերը»: Դրամատուրգը փոխել է հերոսների տարիքը, տարբեր ժամանակներ է տեղափոխել այս կամ այն իրադարձությունը, անգամ հանուն թատերայնության պիես է ներմուծել մտացածին կամ վաղուց մահացած դեմքերի: Նման «կամայականությունները» լիովին համապատասխանում էին ռենեսանսային հումանիզմի փիլիսոփայությանը, ըստ որի՝ «Ես»-ի ֆիզիկական բաղադրիչը ժամանակի հետ անցել է ոչինչ ու չգոյություն, իսկ հոգևորը ձգտել կատարելության ու հավերժի:

Դրամայում հորինվածքի ու պատմական ճշմարտության չափանիշ է եղել միայն սյուժեն, որը կամ ունեցել է համամարդկային արժեք, կամ զուրկ է եղել դրանից:

Նման նպատակը թելադրել է մի էթիկա, որն ամբողջապես անտեսել է պատմական ժամանակի գործոնը: Այստեղից էլ անցյալը «կենդանացնելու», վաղուց գոյություն ունեցած հերոսներին «շունչ տալու», հանդիսականի առջև երբեմն իրենց կատարած դերը «կրկնել տալու» ձգտումը, որ հնարավորություն

էր տալու հանդիսականներին առավել խորը և համակողմանի վերապրելու տեղի ունեցածը: Օրինակ՝ «Պերիկլեսում», ինչպես նկատեցինք, Շեքսպիրը պարերգչախմբի գործառույթը հանձնարարել է իրական պատմական դեմքի՝ պոետ Ջոն Գովերին, ով ապրել է XVI դարում, և դա անշուշտ ուժգնացրել է պիեսի էպիկականության տպավորությունը:

Գովերը բեմ է դուրս գալիս յոթ անգամ: Նա և՛ նախաբանն է, և՛ վերջաբանը, և՛ պարերգչախումբը: Ինչպես Հորացիոն, այնպես էլ Գովերն անմասնակից է գործողությանը, ընդհանուր հետաքրքրություններով կապված չէ այլ հերոսների հետ և առաջին հայացքից դրամայի սյուժեում ավելորդ է: Այդուհանդերձ, ինչպես Ի. Ռացկին է նշել, հերոսն ունի «առաջնային կարևորություն ընդհանուր դրամատիկական ներգործություն ստեղծելու գործում»<sup>1</sup>:

Ներկայացնելով հանդիսականին այն ամենը, ինչ եղել է կամ ինչ լինելու է, նա մեկ ամբողջության մեջ է միավորում Պերիկլեսի կյանքի չկապակցված դրվագները:

Գովերի խոսքում, որ միտումնավոր գրվել է հնաբանությամբ (ի տարբերություն հնգոտնյա յամբի, որով գրված է տքստի հիմնական մասը, Գովերը խոսում է քառոտնյա հանգավորված երկտողերով), հաճախ է հիշվում ժամանակը՝ ընդգծելու համար, որ «գործողությունը տեղի է ունենում հնում»:

Պոետի արտաքինը, որ համապատասխանել է իր դարաշրջանի սովորույթներին, նույնպես անջնջելի տպավորություն է թողել հանդիսականի վրա:

Այսպիսով, Գովերի կերպարն ստեղծել է «ժամանակային հեռավորություն» և հանդիսականին դրանով իսկ ակնարկել, որ մարդ արարածը պարուրված է ներկայում ու ապագայում ապրող անցյալով: Հավանաբար այս նպատակն է հետապնդել դրամատուրգը՝ «Համլետի» գործող անձանց միջավայր ներմուծելով հոռմեացի պոետ Հորացիուսին:

Այլ դարաշրջանների իրադարձություններին հոռմեացի պոետի և XVI դարի անգլիացի պոետի մասնակցությունը լիովին համապատասխանում է պատմական ժամանակի «բաց» լինելու վերաբերյալ Շեքսպիրի ընկալումներին: Ըստ այդ տեսակետի. «պատմական ժամանակն անընդմեջ է, ի հեճուկս այն պատկերացման, թե պահերը (իրադարձությունները) հանդես են գալիս տարանջատ (անցյալը, ներկան կամ ապագան)»<sup>2</sup>:

<sup>1</sup> **И. А. Рацкий.** “Перикл” Шекспира: (на пути к трагикомической комедии). Шекспировские чтения – 1977. Москва, Наука, 1977, стр. 130.

<sup>2</sup> **М. А. Барг.** Шекспир и история. Москва, Наука, 1979, стр. 57.

Այս կերպ Շեքսպիրը, ի տարբերություն XVI դարի պրոֆեսիոնալ պատմաբանների, տալիս է ժամանակի շատ ավելի բարդ մեկնությունը: Դա ոչ միայն դարաշրջանների բնական հերթափոխությունն է, այլև առավել ընդհանրական ու հավերժական, այժմեական իրադարձությունների քողի տակ թաքնված մի երևույթ:

«Համլետում» և «Պերիկլետում», սյուժեի հավանական պերիպետիաներով հանդերձ, Հորացիո և Գովեր պոետներն ստեղծում են ներկայության յուրահատուկ էֆեկտ, այնպիսի մարդկանց կողմնակի հայացք, որ առերևույթ չեզոք են տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ, բայց իրականում ամբողջապես վերահսկում են դրանք: Գործողությունն այդ դեպքում զարգանում է ոչ միայն ուղղահայաց, այլև հորիզոնական: Ժամանակն ասես կանգ է առնում: Նշված գործերի «սովորական» հերոսները, ովքեր իրական ժամանակի մեջ են, թվում է՝ «ստուգվում» են ժամանակից դուրս գոյող հերոսների կողմից: Հավանական է, որ Շեքսպիրը գիտակցված է գրչակիցների ընտրել «քննությունն ընդունողների» դերում:

### Համլետ

Լավ դիտիր նրան, ես ել աչքերս դեմքին կհառեմ,

Հետո երկուսս մեր կարծիքները կմիացնենք

Նրա երեսի արտահայտածը դատելու համար:

(I, 2)

Մեր կարծիքով սա շեքսպիրյան ժամանակի «բազմաչափության» վառ օրինակ է: Նշված «բազմաչափությունն» այստեղ չի դիտվում «ժամանակային գծապատկերի երկակիության» համատեքստում, որ բնորոշ էր եղիսաբեթյան, ինչպես և շեքսպիրյան դրամային, որտեղ «տվյալ պատմության թատերական տարբերակի» տևողությունը տարբերվում է «իրական պատմության» տևողությունից<sup>3</sup>:

Նկատի չունենք բազում պիեսներում Անիկստի մանրամասնորեն նկարագրած «երկակի ժամանակի» գործոնը, երբ հանգամանքների բերումով

<sup>3</sup> Հայտնի է, օրինակ, որ «Ռիչարդ Երրորդի» բեմական պատմությունը տարբեր հաշվարկումներով տատանվում է 8-12 օրերի միջ-, իսկ «իրական» պատմությունը, որ պատկերվում է պիեսում, ընդգրկում է երկու թագավորություն՝ Էդվարդ Չորրորդի ու Ռիչարդ Երրորդի:

Շեքսպիրի տարբեր հերոսների համար ժամանակի ընթացքը տարբերվում է<sup>4</sup>:

Մեզ առավելապես հետաքրքրում է այն ազդեցությունը, որ հանդիսականի վրա թողել է պատմական դեմքի բեմ գալը: Հանդիսականը հնարավորություն է ունեցել ոչ միայն հետևելու դրամայի կնճոհին, կարեկցելու նրա հերոսներին, այլև համեմատելու անցյալն ու ներկան, զգալու տեղի ունեցողի բազմաչափ բնույթը:

Ժամանակի շարժումը կարելի է զգալ ու գիտակցել միայն նրան իր հակոտնյայի՝ հավերժության հետ զուգադրելու դեպքում: Ժամանակը թվացել է փխրուն, անցողիկ, իսկ հավերժը՝ անփոփոխ: Թեպետ այս երկու կատեգորիաները տարածականորեն տարանջատված են, ակնհայտ է, որ առաջինը հարաբերում է երկրորդին այնպես, ինչպես հարաբերականը բացարձակին:

## ГОРАЦИО И ГАУЭР

ԱՐԱ ԵՐՈՋՅԱԿՅԱՆ

Статья посвящена двум шекспировским персонажам – Горацио из “Гамлета” и Гауэру из “Перикла”.

Рассматривается версия, согласно которой они, в роли дирижеров, создают в своих пьесах временной разрыв между собой и остальными героями. “Обычные” персонажи указанных произведений, действующие в реальном времени, как бы “тестируются” теми, кто стоит вне времени.

**Ключевые слова** – Горацио, Гауэр, Перикл, Шекспир, Гамлет, Хор.

## HORATIO AND GOWER

ԱՐԱ ԵՐՆՅԱԿՅԱՆ

The article is dedicated to two Shakespearean characters – Horatio from “Hamlet” and Gower from “Pericles”.

---

<sup>4</sup> Ա. Ա. Անիկст. Шекспир. Ремесло драматурга. Москва, Советский писатель, 1974, стр. 101.

---

We consider the version according to which they assumed the role of conductors, who create in their plays a time gap between themselves and the rest of the heroes. The “ordinary” characters of the mentioned plays, who act in real time, are as if “tested” by the ones standing beyond time.

**Key words** – Horatio, Gower, Pericles, Shakespeare, Hamlet, Chorus.

## ՇԵՔՍՊԻՐԻ ՄԻԿՐՈ- ԵՎ ՄԱԿՐՈ ՏԻԵՋԵՐՔԸ

### ԱՐԱ ԵՐՆՋԱԿՅԱՆ

Հոգվածում դիտարկվում են Շեքսպիրի ժամանակակիցների պատկերացումները միկրոտիեզերքի և մակրոտիեզերքի մասին, որտեղ գործում են կարգի պահպանման օրենքները: Ոչ միայն դրանց խախտումը, այլև շեղումը դրանցից սպառնում է տիեզերական քաոսի թագավորությանը:

Առաջարկվում է Համլետի՝ «Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել» հայտնի արտահայտության նոր մեկնաբանություն:

**Բանալի բաներ** – Շեքսպիր, Մաքիավելլի, Հուլիոս Կեսար, Հին Հռոմ, Ժան Բոդեն, միկրոտիեզերք, մակրոտիեզերք:

Շեքսպիրի ժամանակներում կար տեսակետ, թե աշխարհը հնարավոր է ներկայացնել համընդգրկուն օրենքների միջոցով: Ոչ հաղորդյալների հայացքից թաքուն հատուկ նշանները կարող էին հնարավորություն տալ կռահելու իրերի ու տիեզերքի ճշմարիտ իմաստը: Հրատարակվել են գրքեր, որոնցում պատկերվել են իրերի կապը և մարդկային հարաբերությունները կարգավորող հանգուցային հերոսներ ու կերպարներ:

XVI դարի պոետ Էդմունդ Սպենսերը «Օրհներգ երկնային գեղեցկությանը» գործում կոչ էր անում. «Նայի՛ր այս անընդգրկելի Տիեզերքի նախագծին»:

Որքան էլ տարօրինակ է, սակայն XVI դարի մարդն իր առօրյա կյանքում վճիռներ կայացնելու համար կարիք է ունեցել իմանալու, թե ինչպես է կառուցված տիեզերքը, ինչ տեղ է զբաղեցնում ինքը մյուս կենդանի արարածների շարքում, ինչպես է ինքը կապված մոլորակների, արևի հետ և այլն: Տիեզերքի մասին նվազագույն գիտելիքներ ունենալով՝ Եղիսաբեթի ենթակաները դատել են բացառապես տիեզերական կատեգորիաներով: Դատելու համար, թե որքանով է հասարակությունը, որում իրենք են ապրում, «անսխալ», անհրաժեշտ է եղել իմանալ, թե ինչպես է կազմված բուսական աշխարհը (հիշենք «Համլետի» այն տեսարանը, որում Օֆելյան բաժանում է ծաղիկներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր իմաստը), ինչ կարգեր են գործում կենդանիների աշ-



խարհում, ինչպես են փոխներգործում աստղերը:

«Այդ աշխարհը նախնական է ու վերջնական՝ որպես աստվածային արարումների հատկանիշների խստագույնս ամրագրված նվիրակարգ»<sup>1</sup>:

Միլթոնը տվել է «Տիեզերքի սկզբնավորման» հետևյալ պատկերը. «Անեզր օվկիանոս, ուր թագավորում է վաղնջական գիշերը և չորս տարրերի անընդմեջ մարտը՝ նրանց նախնական վիճակով: Միայն արարչագործության մեջ է այդ թշնամանքը վերափոխվում համաձայնության, ի հայտ են գալիս երկիրը, ջուրը, կրակը և օդը»:

Նրանից 200 տարի առաջ տիեզերքի նվիրակարգը նկարագրել է հայտնի իրավաբան Ջոն Ֆորտեսքյուն. «Այդ կարգի մեջ հրեշտակը տեղակայված է հրեշտակի վրա..., մարդը՝ մարդու, կենդանին՝ կենդանու, ծուկը՝ ձկան... Այսպես (համայն Տիեզերքում) չկա մի բան, որ համակված չլինի կարգի կապակցումով»<sup>2</sup>:

Հայտնի է, որ Շեքսպիրն ընդունել է իր ժամանակի տիեզերաբանների հայացքները միկրոտիեզերքի՝ «մարդու» և մակրոտիեզերքի՝ «տիեզերքի» կապի վերաբերյալ: Ավելին՝ Ա. Բարտոշկիչի տեսակետի համաձայն. «Տիեզերական ամբողջությունը նման է հսկայական ծավալներով ընդլայնված մարդկային մարմնի: Մարդը տիեզերքի պատճենն է, միկրոտիեզերք. այս պատկերները, որ հնագույն ժամանակներից յուրացրել էր Վերածնության մշակույթը, պատկանում են Շեքսպիրի արվեստի հանգուցային թեմաների դասին»<sup>3</sup>:

«Շնորհիվ այնպիսի հատկանիշի, ինչպիսին համահունչությունն է, Շեքսպիրը մշտապես բարձրացնում էր երաժշտությունն ամենաբարձր պատվանդանին: «Հարմոնիայի թագուհի» երաժշտությունը նա օգտագործում էր գեղեցիկի իդեալի որոնումների և հաստատման համար: Եվ պատահական չէ, որ մարդ-միկրոտիեզերքի և տիեզերք-մակրոտիեզերքի գնահատման համար նա դիմում է հենց երաժշտությանը: Ոլորտների երաժշտության բազմակի հիշատակման մեջ հարկ է տեսնել ոչ միայն իր ժամանակներում վերածնված անտիկ, մասնավորապես այդպագորացիական գաղափարի արձագանքները, այլև ինչ-որ միասնական, համընդհանուր հարմոնիայի առկայություն տեսնելու

<sup>1</sup> **М. А. Барг.** Шекспир и история. Москва, Наука. 1979, стр. 84.

<sup>2</sup> **М. А. Барг.** Шекспир и история. Москва, Наука. 1979, стр. 84. Համամասն մտքեր է հայտնել նա- V դարի փիլիսոփա Դիոնիսիոս Արեոպագացին, ով նվիրակարգի հիմք է համարել մեկընդմիջտ տրված «ազնվագարմության աստիճանը». ջուրը երկրից ավելի ազնվագարմ է, ոսկին՝ պղնձից, սուտակը՝ աղամանից - այլև:

<sup>3</sup> **А. В. Бартошевич.** Для кого написан “Гамлет”. Москва, “Театр”, № 5, 1992, стр. 128-142.

ձգտում: Շեքսպիրը կապում էր այդ հարմոնիան երկրային և երկնային երաժըշտության հետ՝ մի փոքր ավելի բարձր դասելով երկրորդը, սակայն երբևէ միմյանց չհակադրելով»<sup>4</sup>:

«Տրոիլուր և Կրեսիդան» պիեսում Շեքսպիրը գրեթե տառացիորեն վերարտադրել է արարչագործության պատկերը.

### Ուլիսես

Ինքը երկինքը, մոլորակները և այս կենտրոնը  
 Իրենց կարգն ունեն, առաջնությունը,  
 Տեղն ու ընթացքը, ձևն ու օրենքը, ներդաշնակումը:  
 Դրա համար էլ փառավոր արևն իր ազնվափայլ  
 Բարձրության վրա, բազմաձ իր գահին,  
 Իշխում է մյուս մոլորակները, բուժիչ հայացքով  
 Ուղղում է նրանց մտքերը հոռի  
 Եվ արշավասույր, հանց թագավորի հրովարտակը  
 Թռչում է դեպի չարը ու բարին հավասարապես...

(I, 3)

(հատվածները բերված են ըստ Հենրի Սևանի թարգմանության  
 մեքենագիր օրինակի, 1973 թ., Երևան)

Շեքսպիրի ժամանակակիցը՝ Ժան Բոդենը, իր «հորդորումների» ժողովածուի մեջ գրել է. «Եթե անդրադառնանք բնության..., երկրային արարածների առանձնահատկությանը, ապա կհայտնաբերենք մշտական, ներդաշնակ կապ, որ հակադրությունները կապակցում է անքակտելի հանգույցներով... Այսպես՝ նկատում ենք, որ հողը և քարերը կապակցված են կավով ու կրով... Ձկների ու թռչունների միջև թռչող ձկներն են: Մարդկանց և կենդանիների միջև՝ կապիկները...»<sup>5</sup>:

Այս կարգի պահպանումը նշանակում էր «բնության օրենքների» պահպանում, որ ընդհանուր էին համայն գոյության համար: Ոչ միայն դրանց խախտումը, այլև շեղումը դրանցից սպառնում էր տիեզերական քաոսի թագավորությամբ:

<sup>4</sup> Я. И. Хачикян. Шекспир об искусстве. Ереван, Советакан грох, 1977, стр. 14.

<sup>5</sup> М. А. Барг. Шекспир и история. Москва, Наука, 1979, стр. 86.

### Ուլիսես

Բայց երբ եղկելի մոլորակները  
 Հանդգնեն դուրս գալ իրենց բնական շրջապատույտից՝  
 Ինչպիսի՜ աղետ կարող է ծագել,  
 Ո՞վ կգուշակի վախճանը երկրի:  
 («Տրոիլոսը և Կրեսիդան», I, 3)

Այսպիսով, համապատասխանությունների տարբեր հարթությունների միջև գոյություն ունի այնպիսի ներդաշնակություն, որ բավական է՝ «մեծ շղթայի» մի օղակում կարգը խախտվի, արձագանքի պես հաջորդում է այն, որ «աններդաշնակությունն ու խառնաշփոթությունը տարածվում են ամբողջ տիեզերքով, նրա բոլոր ոլորտներով»: Այսպես, օրինակ՝ արևի խավարումը (ներդաշնակության խախտում) աղետներ է կանխագուշակում երկրի համայն կենդանի արարածների համար (երկրաշարժեր, ջրհեղեղներ, փոթորիկներ և այլն): Եվ հակառակը, եթե կեցության օրենքները խախտված են մարդկանց միջև, անմիջապես դրան արձագանքում են երկինքն ու երկրի ընդերքը: Օրինակ՝ Մակբեթը սպանում է իրեն հյուրընկալված Դունկան թագավորին: Կարդում ենք.

### Լենոքս

Այս գիշերն ինչպե՛ս փոթորկալից էր:  
 Այնտեղ, ուր կայինք, ծխնելույզները հողմից վար ընկան:  
 Ասում են, օդում ողբալի ճիչեր լսելի էին  
 Եվ տարօրինակ մահվան գոչյուններ...

Ապա՝

Եվ գուշակումներ՝ սոսկալի ձայնով՝  
 Սասանումների ու խառնակությանց,  
 Որ աղետալից այս դարի թուխսից նոր են դուրս գալու:  
 Խավարի թոչունն ամբողջ գիշերը վայեց անդադար:  
 Ասում են, երկիրն ինքն էլ ջերմ ուներ և դողդողում էր:

(II, 3)

Մեր առջև է Շեքսպիրի ժամանակակիցների գիտակցության մեջ իշխող համընդհանուր ճշմարտության մի օրինակ, այն է՝ ի վերուստ հաստատված կարգի ամեն մի խախտում լի է կործանարար հետևանքներով և, ի վերջո, տիեզերական քաոսի հաստատման վտանգով:

### Ուլիսես

...երբ խախտենք կարգը,

Չենք կարող երբեք խույս տալ քաոսից:

(«Տրոիլոսը և Կրեսիդան», 1, 3)

Դանիո թագավորության մեջ քաոս հաստատվեց, երբ Էլսինորում խախտվեցին կեցության բազում բնական օրենքներ՝ օրինական թագավորի սպանություն, այրի թագուհու շուտափույթ ամուսնություն թագավորի եղբոր հետ, Օֆելյայի դավաճանությունը... Եվ ի հետևանք այս ամենի՝ ուրվականի հայտնվելը, որ, հողում հանգիստ առնելու փոխարեն, շրջում է երկրով մեկ ու սարսափ տարածում մարդկանց մեջ:

Գիտենք, որ Շեքսպիրը Դանիո նեխած թագավորության այս տիեզերական խառնաշփոթն ընդգծել է Համլետի խոսքերով. «Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել» (“The time out of joint”):

Այս արտահայտությունը կարելի է մեկնել այլ կերպ: Պիեսում (Էլսինորում) խախտված է սովորական ժամանակային կարգը: «Հարություն» է առել ոչ միայն Համլետի հայրը, այլև Հորացիուսը, մի պոետ, ով ապրել է ավելի քան հազար տարի առաջ: Սա Համլետին էլ ավելի լուրջ հիմքեր է տալիս ասելու. «Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել»: Այսպիսով, Շեքսպիրը հերթական անգամ հուշում է, որ պիեսում տեղի ունեցող իրադարձությունները դուրս են տրամաբանության սովորական ընթացքից. այստեղ գործում են միկրո- և մակրո տիեզերքի օրենքները:

Իր պիեսներում Շեքսպիրը բազմիցս է ընդգծել այն գաղափարը, որ կարգի խախտումը բոլոր հարթություններում կործանարար է պետության համար: Թագավորական գահի շուրջ նման շեղումները նա ցույց է տվել Ռիչարդ Երկրորդի և Ռիչարդ Երրորդի, զավակների, ծառաների երախտամոռությունն ու հավատուրացությունը՝ Լիր արքայի, թագակրի ստոր սպանությունը՝ Մակբեթի, քաղաքացիական խժոժությունները՝ Հենրի Վեցերորդի օրինակներով: Ուրեմն՝ խնդիրը միայն Դանեմարքան չէ: Նա գոյություն է ունեցել շատ ավելի վաղ ժամանակներում (համենայն դեպս՝ Հին Հռոմի ժամանակներից) և գոյություն կունենա հետագայում էլ: Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել և՛ անցյալում, և՛ ներկայում: Իսկ այդ իրադարձությունները համեմատելու, ընդհանրացնելու համար կարիք կա կողմնակի դիտորդի: Սրա համար է Շեքսպիրին անհրաժեշտ եղել Հորացիոն:

Մաքիավելլին գրել է. «Հին դասականությունը մշակել է գծապատկերներ ու մեթոդներ, որոնք օրինակելի կարող են լինել բոլոր ժամանակների համար: Նկատի ունենալով, որ մարդիկ ի բնե անփոփոխ են (պատմությունը կրկնվում է)՝ կարող ենք ասել, որ պատմությունը կարող է բերել գործնական օգուտ...»: Այլ կերպ ասած ճակատագրական հեղաբեկումներում միտքը մշտապես անդրադառնում է անցյալի փորձին՝ լինի դա իր, թե ուրիշի փորձը, պատմությամբ՝ «ոչ միայն իբրև հույսի և խիզախության ակունքի», այլև որպես «մտային նյութի» շտեմարանի՝ տեղի ունեցողը լուսաբանելու և ապագան կանխատեսելու համար:

Այն իմացությունը, որ ձեռք էին բերել Շեքսպիրի ժամանակակիցները՝ ծանոթանալով անտիկ աշխարհի հետ, զարմանալի էին իրադարձությունների հանդեպ հայացքների նորությամբ: Անհրաժեշտություն ծագեց համեմատելու սեփական բարքերը «նրանց բարքերի» հետ, զուգահրելու արդիականությունը հին ժամանակների հետ: Եվ հռոմեացի պոետն իր ահռելի իմացությամբ և փորձով ավելի քան համապատասխանում էր այդ դերին:

Այն հարցը, թե ինչու է դրամատուրգն իր մեկնարկն սկսում Հավերժական քաղաքից, ունի պարզ բացատրություն. «Համլետը» նա սկսեց գրել անմիջապես «Հուլիոս Կեսարից» հետո և դեռևս դրանում պատկերված իրադարձությունների տպավորության տակ էր (տե՛ս Հորացիոս, Էպոդոս 7):

Հորացիոն Հռոմի քաղաքացի է, կայսրության օրինական տիրակալի՝ Հուլիոս Կեսարի հանդեպ մահափորձի վկան, ու պատահական չէ, որ նա հիշում է հենց Հռոմը, հենց այդ շրջանի Հռոմը: Նա քաջածանոթ էր նման պալատական հեղաշրջումների հետևանքներին, այդ իսկ պատճառով էլ խոսում է քառյկ մասին շատ ավելի վաղ, քան Համլետը. «...դա գուժում է մի մեծ սասանում մեր պետության մեջ»:

## МИКРОКОСМ И МАКРОКОСМ ШЕКСПИРА

АРА ЕРНДЖАКЯН

В статье рассматриваются представления современников Шекспира о микро- и макрокосме. Английский драматург считал, что весь мир есть единая система, части которой тесно взаимодействуют, и вся система в целом подчинена общим ритмам и циклам, имеющим свои индивидуальные проявления.

Предлагается новая трактовка известной реплики Гамлета: “Порвалась связь времен...”.

**Ключевые слова** – Шекспир, Макиавелли, Юлий Цезарь, Древний Рим, Жан Боден, микрокосм, макрокосм.

## MICROCOSM AND MACROCOSM OF SHAKESPEARE

ARA YERNJAKYAN

The article reviews the ideas about macro- and microcosm shared by Shakespeare's contemporaries. The English playwright regarded the whole world as a single system, whose parts cooperate closely, while the system as a whole is subordinated to common rhythms and cycles having their individual manifestations.

We offer a new interpretation of Hamlet's famous cue: “The time is out of joint...”

**Key words** – Shakespeare, Machiavelli, Julius Caesar, Ancient Rome, Jean Bodin, microcosm, macrocosm.

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ Դ. Հ. ԼՈՌԻՆԵՆՍԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿՈՒՄ

### ՎԻՈՒԼԵՏԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հոդվածում փորձ է արվում վերլուծելու մարդու անհատական և հասարակական գիտակցությունները՝ Դ. Հ. Լոուրենսի տեսության հիման վրա: Վերլուծությունը ցույց է տվել, որ անհատական գիտակցության ժամանակ մարդը սկսում է ճանաչել իր անձը, իր ցանկությունները: Հասարակական գիտակցությունը բնորոշ է այն մարդկանց, ովքեր չեն կարող պատկերացնել իրենց կյանքն առանց արհեստական կանոնների և հասարակական կարծիքի: Լոուրենսն առաջարկում է այլընտրանք, ըստ որի՝ յուրաքանչյուր մարդ պետք է գտնի իր երկրորդ կեսին, ինչի արդյունքում բնական ազդակները և ցանկություններն ազատորեն կդրսևորվեն:

**Քանակի բառեր** – անհատական գիտակցություն, հասարակական գիտակցություն, ֆիքսված ուղղություն, մեկուսացում, ժամանակակից փոքրիկ էգոիստներ, բնազդ, բանականություն:

Դ. Հ. Լոուրենսի անհատ/զույգ/հասարակություն մոդելը ձևավորվել է անգլիացի գրողի անհատական և հասարակական գիտակցության տեսության հիման վրա, որն արտացոլվել է իր փոքր արձակում: Այս մոդելի միջոցով Լոուրենսը մի կողմից փորձում է իր հերոսներին հեռացնել հասարակությունից, որպեսզի նրանք կարողանան ազատվել հասարակության ճնշող ազդեցությունից, ձեռք բերել ազատություն, վայելել կյանքը՝ կենտրոնանալով միմիայն իրենց բնազդների, բնական կարիքների վրա, մյուս կողմից մինչև հասարակության մի մասնիկը դառնալը Լոուրենսի հերոսները փորձում են գտնել իրենց զույգին, որպեսզի սեռական բնազդը կարողանա բնական և ազատորեն դրսևորվել:

Այսպիսով, այս մոդելում զույգը գտնվում է անհատի և հասարակության միջև: Որպեսզի մարդը կարողանա ձեռք բերել անհատին բնորոշ հատկանիշներ, նա պետք է ձևավորի անհատական գիտակցություն, իսկ հասարակական գիտակցությունը, ըստ Լոուրենսի, հատուկ է այն մարդկանց, որոնք

հասարակության անբաժանելի մասն են<sup>1</sup>: Անհատական և հասարակական գիտակցությունների միջև տարբերության մասին Լոուրենսը մանրամասնորեն ընթերցողին է ներկայացնում «Անհատական գիտակցություն/հասարակական գիտակցություն» էսսեում («The Individual Consciousness V. The Social Consciousness, 1936»):

Լոուրենսը քաջատեղյակ էր հասարակության բացասական ազդեցությանը, ինչն արգելք է դառնում, որպեսզի մարդն իր անձը լիովին ճանաչի և ապրի ազատ: Նա «Ժողովրդավարություն» («Democracy, 1936») էսսեում գրում է, որ խելացի մարդը պետք է պայքարի ընդդեմ մեխանիզմների և նյութապաշտության՝ իր հոգու ազատության համար: Ժամանակակից մարդու ուղղությունը «Ֆիքսված» է, և այն փոխելն անհնար է<sup>2</sup>: «Ֆիքսված ուղղություն» ասելով՝ նա նկատի ուներ անհատի նպատակները, որոնք մեզ արդեն քաջ հայտնի են նրա էսսեներից: Նպատակ՝ ձեռք բերելու կարողություն, հոշակ, ուժ, որոնք, ըստ նրա, հոգու հիվանդություններ են և մարդուն տանում են ինքնակործանման: Այս «Ֆիքսված ուղղությունը» նաև խոչընդոտում է մարդկանց միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը<sup>3</sup>:

Լոուրենսն ատելությամբ է լցված արիեստական կյանքի նկատմամբ: Ըստ նրա՝ ժամանակակից գիտակցության պատճառով անհատը շեղվում է քնական կյանքով ապրելու ուղուց. «Տղամարդիկ, կանայք, մեծերն ու փոքրերն, ավա՛ղ, իրենց սեփական խելքը չունեն և չեն ապրում իրենց կյանքով<sup>4</sup>: Մինչև հոգու խորքը հիասթափվելով հասարակության մտածելակերպից՝ Լոուրենսը «Իսադաղության իրականություն» («The Reality of Peace, 1936») էսսեում գրում է. «Միակ ելքը մահն է, ինչը հնարավորություն կտա ազատել մեր հոգիները, մեր սեփական եսը հասարակության ազդեցությունից<sup>5</sup>: Լոուրենսը կարծում է,

<sup>1</sup> **D. H. Lawrence**, The Individual Consciousness V. The Social Consciousness, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press 1968, p. 761.

<sup>2</sup> **D. H. Lawrence**, Democracy, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press 1968, p.716.

<sup>3</sup> **D. H. Lawrence**, Democracy, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press 1968, p.717.

<sup>4</sup> **D. H. Lawrence**, The Individual Consciousness V. The Social Consciousness, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press 1968.

<sup>5</sup> **D. H. Lawrence**, The Reality of Peace, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press 1968, p. 673.



որ հասարակությունը մեծ վնաս է հասցրել անհատին, քանի որ նա չի կարողանում ազատորեն տնօրինել իր կյանքը:

Ճիշտ է, Լոուրենսը գիտակցում էր, որ մարդկանցից մեկուսանալը սխալ է, սակայն նրա հերոսները միշտ փորձել են փախչել՝ ազատություն ձեռք բերելու համար: Այս գաղափարը կարելի է հանդիպել նրա «Տղամարդը, ով սիրում էր կղզիները» («The Man Who Loved Islands, 1928»), «Արև» («Sun, 1928») «Կինն, ով հեռացավ» («The Woman Who Rode Away, 1928»), «Տղամարդն, ով մահացավ» («The Man Who Died, 1929») պատմվածքներում:

«Տղամարդը, ով սիրում էր կղզիները» պատմվածքի հերոսը ցանկանում է մեկուսանալ մի անմարդաբնակ կղզում, որպեսզի կարողանա կենտրոնանալ ինքն իր անձի վրա: Այնտեղ, որտեղ նա ապրում է, չափազանց շատ են մարդիկ, ինչը նրան ամենևին դուր չի գալիս<sup>6</sup>: Այս պատմվածքը բաղկացած է երեք մասից, որոնցից յուրաքանչյուրն առանձին կղզի է: Եթե առաջին և երկրորդ կղզիները համեմատաբար բնակեցված են, ապա երրորդ կղզում պատմվածքի հերոսը լիովին մենակ է, ամբողջովին կտրված է արտաքին աշխարհից: Ինչպես նշել են որոշ քննադատներ, պատմվածքը, որը ներկայացնում է Լոուրենսի՝ հասարակությունից հեռանալու գաղափարը, արտացոլում է գրողի այն տեսակետը, որ մտքի ազդեցությունը մարմնի վրա շատ մեծ է, և որպեսզի իր հերոսներն ազատվեն այդ ազդեցությունից և կենտրոնանան իրենց մարմնի վրա, մեկուսանում են, ինչը շատ դեպքերում, ինչպես օրինակ այս դեպքում, բերում է ինքնակործանման<sup>7</sup>: Լոուրենսն այնպիսի հերոսներ է կերտում, որոնք ինքնական հրաժարվում են հասարակության մի մասնիկը լինելուց: Նա գրում է, որ ժամանակակից վեպերում, ինչպես օրինակ՝ Ջոն Գոլսվորթիի ստեղծագործություններում, իրական անհատներ չկան. «Մարդիկ՝ տղամարդիկ, կանայք, երեխաները, չունեն իրենց սեփական կարծիքը, չեն ապրում իրենց սեփական կյանքով: Այն պահին, երբ մարդը գիտակցում է իր անհատականությունը, նա հասկանում է, որ գոյություն ունի սուբյեկտիվ և օբյեկտիվ իրականություն»<sup>8</sup>:

<sup>6</sup> D. H. Lawrence, *The Man Who Loved Islands in the Woman Who Rode Away and other Stories* (Edited by Dieter Mehr, etc.), Cambridge: Cambridge University Press 1995, p 149.

<sup>7</sup> L. E. Harris, *The Island as a Mental Image of Withdrawal* (Edited by D.G. Russell, etc.) Dunedin, New Zealand: Human Performance Associates 1986, pp. 178-181.

<sup>8</sup> D. H. Lawrence, *The Individual Consciousness V. The Social Consciousness*, Phoenix, *The Posthumous Papers of D. H. Lawrence* (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press 1968, p. 761.

«Կինն, ով հեռացավ» պատմվածքն ընթերցողին է ներկայացնում հասարակական և անհատական գիտակցության պայքարը: Լոուրենսը գլխավոր հերոսուհու միջոցով իր հակակրանքն է արտահայտում հասարակական գիտակցության նկատմամբ: Ամուսնացած կինը երջանիկ չէ: Նրա նյարդերը հետզհետե սկսում են տեղի տալ: Մի օր նրան հիացնում է իր հյուրերից մեկի ասածը: Հենց այդ հյուրի շնորհիվ նրա գլխում մի միտք է առաջանում՝ հեռանալ ժամանակակից մարդկանցից, կտրվել առօրյա հոգսերից: Կինը ցանկանում է հեռու փախչել և բնակվել հնդկացի ցեղերի մեջ: Լոուրենսը նրան նկարագրում է որպես բանտարկյալ իր իսկ սեփական տանը: Երկու երեխաների մայրը, չմտածելով իր երեխաների և ամուսնու մասին, միմիայն ցանկանում է մեկուսանալ հեռավոր մի վայրում, որտեղ ժամանակակից մտածելակերպն այլևս չի կարող ազդեցություն ունենալ իր վրա և փոխել իր կյանքը: Նա հոգնել է ամեն ինչից: Ժամանակակից կյանքն այլևս չի գոհացնում նրան: Նա ցանկանում է հասարակ կյանք վարել հնդկացի ցեղերի նման<sup>9</sup>: Լոուրենսն իր հերոսուհուն ազատում է հասարակական գիտակցությունից: Եվ չնայած Լոուրենսը մեկուսացնում է իր հերոսուհուն, նա գիտակցում է դրա պատճառած վնասների մասին. «Այժմ եթե հարցնեմ մի կնոջ կամ տղամարդու, թե արդյոք կցանկանա՞ լինել լիովին ազատ, չչփվել հոր կամ մոր, եղբոր կամ քրոջ, ընկերոջ կամ հարևանի հետ, շատ դեպքերում պատասխանը կլինի, այո՛: Իսկ իրական վտանգն այն է, որ դու պարփակվում ես ինքդ քո մեջ, դառնում ես չչփվող և զգում ես, թե որքան դատարկ է քո կյանքը: Մեկուսացումը, սահմանափակումը մեր «Ես-ի» մեջ ամենավտանգավոր բանն է: Մենք դարձել ենք ժամանակակից փոքրիկ էգոիստներ: Աշխարհը լի է հիմարներով, որոնք խզել են բոլոր կապերը այլ մարդկանց հետ՝ դատապարտելով իրենց դատարկությանը: Եթե Իմանուել Կանտը մեկուսանար և գրի չառներ իր հրաշալի մտքերը, նրա մտքերը այդպես էլ կպտտվեին իր գլխում»<sup>10</sup>: Լեդի Էսքովիֆին ուղղված նամակում Լոուրենսն իր ատելությունն է արտահայտում պատերազմների նկատմամբ. «Պատերազմը ոչ միայն ֆիզիկապես է ոչնչացնում մարդուն, այլև հոգեպես, քանի որ մարդիկ խզում են իրենց կապը տիեզերքի հետ և պայքարում են պաշտոնի, տարածքի, փողի, սեփականության համար: Ինձ համար երբեմն անտանելի է դառնում այն փաստը, որ

<sup>9</sup> D. H. Lawrence, *The Woman Who Rode Away in The Woman Who Rode Away* (Edited by Dieter Mehl and etc.), Cambridge: Cambridge University Press 2001, p. 39.

<sup>10</sup> D. H. Lawrence, *We Need One Another*, Phoenix, *The Posthumous Papers of D. H. Lawrence* (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press 1968, p.188.

ապրում են հասարակության մեջ և նրա մի մասնիկն են: Հասարակությունից հեռանալ, ապրել մեկուսի, նշանակում է դառնալ ճգնավոր, մենակյաց, իսկ մնալ ոչ առողջ մտածելակերպ ունեցող հասարակության մեջ, կնշանակի հիվանդանալ նույն հիվանդությամբ, քանի որ այն վարակիչ է և մեկ բառով կոչվում է նյութապաշտություն»<sup>11</sup>:

Մարդը պետք է սովորի ապրել՝ անտեսելով այլ մարդկանց կարծիքը: Ահա այսպես է ապրել Լոուրենսը: Նրա համար կարևոր դեր չի ունեցել հասարակության կարծիքը: Նա գիտակցում էր, որ միայն ինքն է պատասխանատու իր սեփական կյանքի համար:

«Արև» պատմվածքի հերոսուհին ստիպված մեկուսանում է հեռավոր մի գյուղում, որտեղ նա ձեռք է բերում անհատական գիտակցություն: Հասարակությունից հեռանալը նրա վրա դրական ազդեցություն է ունենում<sup>12</sup>: Նա ազատվում է համընդհանուր կարծիքից և սկսում է ապրել բնական մարդու նման:

Լոուրենսը հակադրում է բնական մարդու հատկանիշները հասարակական գիտակցություն ունեցող մարդու հատկանիշներին: Բնական մարդը ձգտում է փախչել այն իրականությունից, որտեղ միայն նյութապաշտ մարդիկ են ապրում, ինչպես օրինակ՝ «Կինն, ով հեռացավ» պատմվածքի հերոսուհին: Կնոջ, որի անունն ընթերցողն այդպես էլ չիմացավ մինչև պատմվածքի ավարտը, և իր ամուսնու՝ Լեդերմանի միջև ներքին հակասություններ կան: Այդ հակասությունները երկու տարբեր աշխարհայացք ունենալու արդյունք են: Տղամարդու և կնոջ հարաբերությունները սարսափելի վատ են, և Լոուրենսը մի քանի պատճառ է նշում դրա համար: Լեդերմանն իդեալիստ է: Նա օր ու գիշեր աշխատում է՝ գումար և կարողություն ունենալու համար, ինչն այն բանի նշան է, որ նա բանականությամբ է առաջնորդվում և մերժում է բնազդները: Ժամանակակից մարդկանց նման փորձում է իր տեղը գտնել կյանքում և հպարտանալ իր ձեռքբերումներով: Իսկ Լեդերմանի կինը՝ կին, ով հեռացավ, հակառակ իր ամուսնու, չի հետաքրքրվում նման բաներով: Առօրյա հոգսերը, հասարակության կողմից ստեղծված օրենքները հոգնեցրել են իրեն<sup>13</sup>:

<sup>11</sup> D. H. Lawrence, The Letters (Edited with an Introduction by Aldous Huxley), London: William Heinemann Ltd. 1932, p. 379.

<sup>12</sup> D. H. Lawrence, Sun in The Woman Who Rode Away (Edited by Dieter Mehl and etc.), Cambridge: Cambridge University Press 2001, p. 21.

<sup>13</sup> D. H. Lawrence, The Woman Who Rode Away in The Woman Who Rode Away (Edited by Dieter Mehl and etc.), Cambridge: Cambridge University Press 2001, p. 39.

Տղամարդու և կնոջ հարաբերությունները Լոուրենսի համար առաջնային տեղում են: Նրա հերոսները երբեմն ցանկանում են փախչել՝ հասարակությունից մեկուսանալու, անհատական գիտակցություն ձևավորելու և բնազդներով առաջնորդվելու համար: Մեկուսացման ճանապարհին Լոուրենսի հերոսները հանդիպում են իրենց երկրորդ կեսին, որպեսզի սեռական բնազդը բնականորեն դրսևորվի: Նրանք հիմնականում պարզ, չզարգացած, հասարակ կենսակերպ ունեցող մարդիկ են. «Անհատականությունը կարևորվում է հասարակության մեջ, և պետք է այդ փաստն ընդունենք: Նախքան այլ մարդկանց հետ շփվելը, մենք զուտ անհատներ ենք, և այդ անհատականությունը ոչինչ չարժե: Մարդու էությունը ձգտում է կապ հաստատել մեկ այլ մարդու հետ: Սա բիոհաղորդակցություն ունենալու ցանկությունն է: Սակայն սա ավելին է, քան բիոհաղորդակցությունը: Դա կենդանի շփում է: Այսպես ենք մենք դառնում իսկական անհատներ: Քանի դեռ մենք կենդանի ենք, առողջ, մենք ձգտում ենք մարդկային հարաբերություններ հաստատել այլ մարդկանց հետ: Եվ այդ ցանկությունն անգիտակցական մակարդակում է տեղի ունենում»<sup>14</sup>:

## ПРОБЛЕМА ИНДИВИДУАЛЬНОГО И ОБЩЕСТВЕННОГО СОЗНАНИЯ В МАЛОЙ ПРОЗЕ Д. Г. ЛОУРЕНСА

ВИОЛЕТА ОГАННЕСЯН

В статье анализируется индивидуальное и общественное сознание на материале коротких рассказов Д. Г. Лоуренса. Анализ показал, что в случае индивидуального сознания человек познает самого себя, рефлексивно признает свои желания, в то время как общественное сознание характеризует людей, которые не мыслят свою жизнь без надуманных правил и оглядки на общественное мнение. Лоуренс предлагает альтернативу, в соответствии с которой каждый человек должен найти свою вторую половинку, что позволит ему свободно выражать собственные естественные порывы и желания.

**Ключевые слова** - индивидуальное сознание, общественное сознание, фиксированное направление, изоляция, современные маленькие эгоисты, инстинкты, рациональность.

<sup>14</sup> D. H. Lawrence, We Need One Another, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press 1968, p.189.

## THE PROBLEM OF INDIVIDUAL AND SOCIAL CONSCIOUSNESS IN D. H. LAWRENCE'S SHORT FICTION

VIOLETA HOVHANNISYAN

The article analyzes individual and social consciousness as exemplified by of D. H. Lawrence's short stories. The analysis showed that in the case of individual consciousness, a person learns about himself, reflexively recognizes own desires, while social consciousness is typical for people who cannot imagine their lives without made-up rules and consideration for the public opinion. D. H. Lawrence offers an alternative, according to which every individual must find his/her soul mate and thus be able to freely express own natural impulses and desires.

**Key words** - individual consciousness, social consciousness, fixed direction, isolation, modern little egoists, instincts, rationality.

## ПРОБЛЕМА НЕРАЗРЕШЁННОГО ПРОШЛОГО И СИСТЕМА ОБРАЗОВ В РОМАНЕ ГЕНРИХА БЁЛЛЯ “И НЕ СКАЗАЛ НИ ЕДИНОГО СЛОВА”

СЮЗАННА НАВАСАРДЯН

*„Сам я просто немец; единственное удостоверение личности, которое мне никто не должен выписывать и продлевать – это язык на котором я пишу“.*

*Г.Бёлль*

Многие работы Г. Бёлля посвящены проблемам взаимодействия католической церкви и общества. Роман „И не сказал ни единого слова” был опубликован в 1953 году. В нем отображаются реалии послевоенных лет, социальные и моральные последствия недавно пережитой войны, голод и нищета, истерзанные войной судьбы, опустошенные человеческие жизни. Это повествование о людях, в душах которых война оставила неизлечимые раны, о людях скромных, обойденных судьбой, но не ставших равнодушными созерцателями жизни; им свойственны эмоциональность и переживания. В романе прослеживаются взаимоотношения персонажей, нацистское прошлое представителей новой власти, образ католицизма в послевоенные годы.

**Ключевые слова** - послевоенное время, католицизм, бедность, нищета, любовь.

Крупнейший писатель ”поколения вернувшихся”, да и всей послевоенной немецкой литературы, Генрих Бёлль считается “совестью” немецкого народа, который всю свою жизнь и своё творчество возложил на алтарь возрождения своей нации.

Бёлль родился 21 декабря 1917 г. в Кёльне, в либеральной католической семье ремесленника. Творить он начал в послевоенные годы. В 1950 г. стал членом „Группы 47”. В немецкой литературе Генрих Бёлль занимает особое место. В замечательных творениях писателя отражены мировосприятие и судьбы нескольких поколений немцев. В центре его произведений – национальный социализм и вторая мировая война.

Г. Бёлль пишет об ужасах войны, о разбитых судьбах переживших войну людей, о военных сиротах, их нищенском положении.

Критическое осмысление современного общества позволяет Генриху Бёллю поднимать острые нравственные проблемы. Сам Бёлль рос в семье, где религиозность не заканчивалась формальным следованием христианским ритуалам и посещением церкви. Родители Бёлля внедрили в сознание детей веру, воспитывали свободно, без насилия. После падения фашистского режима он размышлял о том, каким должен быть идеал современного человека. Генрих Бёлль вошел в литературу как один из самых активных членов “Группы 47” – авторов “литературы развалин”, как называли современники произведения вернувшихся с войны писателей. Роман “И не сказал ни единого слова” относится к числу этих произведений.

Писатель ясно формулирует мысль о том, что без осознания прошлого нельзя идти вперед. Лишь дав оценку произошедшим событиям возможно построить новое, чистое общество. В романе происходит поляризация персонажей – и не столько по социальному, сколько по нравственному их положению. Один полюс образуют люди надменные, жестокие, льстивые, влиятельные, на другом полюсе находятся их жертвы – добрые, справедливые, искренне верующие люди.

Генрих Бёлль изобразил и подверг критике аморальность господствующего класса, продажность христианства. Писатель воспринимал религию как систему нравственных норм.

Философские и гуманистические идеи Бёлля можно понять и оценить, проанализировав систему образов и определённых типов героев его прозаических произведений. Без этого невозможно также составить полное представление о поэтике писателя<sup>1</sup>.

Большинство исследователей рассматривают произведения Г. Бёлля главным образом с общественной и нравственной точек зрения. Этому способствовали не только сюжетные построения его рассказов и романов, но и активное участие писателя в общественно-политической жизни страны.

Бёлль классическим образом обрисовывает жизнь своих героев, передает противоречивость их мыслей и чувств. Он убежден, что решающим

---

<sup>1</sup> Канетти Э. Превращение // Проблема человека в западной философии. Москва, 1988, с. 378-381.

критерием для пишущего является „совесть писателя” как общественного человека.

Главное в творчестве Бёлля – совесть, честность и доброта, внимание к малым и старым, трогательная забота о женщинах, у которых война забрала мужей, и о детях, лишенных войной отцов.

Героям романа “И не сказал ни единого слова” присущи сильные чувства, они эмоциональны, однако о своих страданиях они не кричат, переживают молча; их не покидает вера. Цель автора – показать, что именно вера и терпение помогают людям с надломленной судьбой не впасть в отчаяние. Писатель дает им утешение, надежду, открывает неведомые им самим сокровища их души.

В художественной литературе заглавие произведения играет важную роль. Оно органично сливается с его структурой, становится его первичным ориентиром, своеобразным лейтмотивом. В нашем случае название романа “И не сказал ни единого слова” настраивает на мысль, что в жизни героя произошло нечто значительное, провидческое, возможно, некий перелом, вызывающий у читателя неоднозначную реакцию.

Генрих Бёлль в романе „И не сказал ни единого слова” описывает жизнь многодетной семейной пары Богнеров в послевоенной Германии.

Главный герой Фред – служащий одного церковного учреждения – человек слабовольный. Не выдерживая тягот нищенской жизни, он оставляет жену и троих детей, однако свое жалкое жалованье почти целиком отправляет семье, отложив себе лишь 10 марок.

Фред страдает алкоголизмом и не контролирует вспышки своей агрессии. На протяжении всего романа он ходит из кабака в кабак в поисках знакомых, приятелей, которые одолжили бы ему денег. Надежды не оправдываются, и он продолжает пить, пока остается без гроша в кармане.

Супруги Фред и Кете Богнеры в течение двух месяцев живут раздельно. Фреда раздражают теснота комнаты, постоянная детская возня, убожество обстановки, в которой его жена, веруя и надеясь, продолжает нести материнскую ношу в тяжкие послевоенные годы.

Все беды и несчастья героями прямо или косвенно связываются с недавним прошлым. Даже если персонаж и живет днем настоящим, в какой-то момент перед его мысленным взором внезапно – как из небытия, из мира воспоминаний, из “первой” жизни – выплывают лица погибших родных и



друзей, воскрешаются события, память о которых нелегко стереть. Чуть ли не в каждом встречном им видится виновник их несчастий и разбитых судеб.

Семья разваливается от безнадёжности. Богнеры получают финансовую поддержку от хозяйки жилья, крайне религиозной фрау Франке - черствой, бездушной к своим ближним, но состоящей в отличных отношениях с местным духовенством дамы, формально исполняющей все церковные ритуалы. Это церковнослужители отвели фрау Франке просторное помещение, решив, что именно ей оно крайне необходимо. А ведь сравнительно более комфортные жилищные условия могли бы если не осчастливить чету Богнеров, то хотя бы дать шанс сохранить брак. Как бы то ни было, им была выделена одна-единственная крохотная комнатка.

Принципиальной особенностью романов Бёлля, в том числе и романа "И не сказал ни единого слова", является то, что почти всех его героев одолевают внутренние конфликты, типичные для "разбитого поколения": они не хотят и не могут жить прошлым - для них тяжесть воспоминаний равносильна смерти<sup>2</sup>. Так, разлад Фреда с самим собой не дает ему порвать с семьей окончательно: ведь это единственное, что у него осталось.

Ненависть и страх вселяются в душу Кете при виде фрау Франке. „Я боюсь слушать святую мессу, я боюсь смотреть на священника у алтаря, потому что это тот самый человек, который курит хорошие сигареты и рассказывает глупые анекдоты дамочкам из церковных комиссий и обществ". Кете посещает церковь, когда там нет службы, и ощущает „беспредельное умиротворение от близости бога"<sup>3</sup>. Для фрау Франке деньги - это "сокровища", на которые никто не может посягнуть. "Слово „деньги" она выговаривает с такой кроткостью, что я пугаюсь; так некоторые люди произносят слова „жизнь" или „любовь", „смерть" или "бог": в их голосе слышится мягкость и легкий трепет, и огромная нежность"<sup>4</sup>.

В состоянии крайней безысходности Фред направляется в доминиканскую церковь обратиться к богу, но не божий лик является его взору, а лица людей, к которым он обращался в надежде занять денег:

---

<sup>2</sup> Grin Verlag GmbH, Die Bedeutung der Ehe in Heinrich Bölls Roman „Und sagte kein einziges Wort“, München, 2013, S. 10-12.

<sup>3</sup> Böll H., „Und sagte kein einziges Wort“, Leipzig, 1970, S. 8.

<sup>4</sup> Там же, с. 9.

официантки из сосисочной, Вагнера, служанки Байземов, школьного товарища, и – его собственное лицо просителя.

Не получив ни пфеннига, отчаявшийся и продрогший, он выходит из церкви и устремляется в пивнушку Ботцнера, где и пропивает остатки содержимого в карманах. Перед нами классический образ маленького человека со сломленным духом, без цели в жизни, душевная боль которого переросла в равнодушие ко всему. Бёлль показал, что нищенское существование и низкое социальное положение способны разрушить семейные узы. Этому образу автор противопоставляет образ женщины – жены героя Кете, которая, хоть и исстрадалась душой, но продолжает верить, надеяться и любить.

Вообще, писатель исключает своих «положительных» героев из обычной серой среды: его персонажи в основном люди «странноватые», оторванные от настоящего и живущие прошлым. Понять их психологию, их мировоззренческие особенности, их подход к актуальным проблемам времени, в котором они живут, можно только через призму прошлого. И это – основной ключ к пониманию художественного мира и поэтики Бёлля в целом.

По всей видимости, любимым персонажем Генриха Бёлля в данном романе является Кете. Маленькая отважная женщина предана своему мужу. Она – мать – измученная, но не сломленная, печальная, но живучая, страдающая от бедности и от отчуждения мужа. На ее плечах – непосильная ноша, но она наделена упорством и стойкостью.

В современной немецкой литературе вряд ли еще найдется женский образ, который по своей художественной силе мог бы сравниться с образом Кете – мужественной, героической женщины, жизнь которой представляет собой замкнутый круг: дети – кухня – церковь. Может показаться, что автор восхваляет ее за то, что она покорилась судьбе. Но молчанье – не всегда признак покорности, оно многозначительно. Ее история не похожа на историю святой, безропотно несущей свой крест. Это скорее гимн обыкновенной, но героической женщине, борющейся с грязью общества, гимн той, кто излечивает человеческие души, чьи руки готовят мирный ужин, кормят солдат, лечат одним только чутким прикосновением, той, что в глубине души не перестает надеяться на лучшую жизнь и уповать на бога.

Исповедуясь, она рассказывает духовнику “о своей ненависти к священникам, которые живут в больших домах, о фрау Франке”, о своем бессилии, о грязи, в которой она живет. Но она знает, что ненавидеть грешно,

и ее ненависть постепенно переходит в грусть. “Войдите через узкую дверь, – слышит она слова духовного отца, – ибо широки ворота и широка дорога, которая ведет к гибели, и многие идут туда. Но узок вход и узка дорога, ведущая к жизни, и лишь немногие находят ее... Узкая, самая узкая дорога для всех, что мы знаем, это дорога по острию ножа, и, мне кажется вы идете по ней... Вы судите ненавидя, ведь мы не можем ни судить, ни ненавидеть...”<sup>5</sup>.

Случайное „столкновение” с супругой на улице открывает Фреду глаза. День, который они проводят вместе, переворачивает все в его душе. Он вновь видит перед собой благородное создание, женщину, прошедшую через ад, любящую жену и мать.

У Фреда нет оправдания своему поступку, он осознает, что он неудачник. Единственное его оправдание – это любовь к жене и детям. Именно бессилие и жизненная несправедливость заставили его уйти из семьи, возложить все тяжести на плечи Кете. Она заботилась о детях, не забывала о Фреде, ей виделось лицо матери, лица их погибших малышей... Ей осталось лишь верить. „Бог” – это единственное, что у меня осталось”<sup>6</sup>. Она просит и Фреда приблизиться к богу. Но прошлое не ушло, оно живо и сбивает людей с истинного пути, и не так просто остановить этот процесс, помочь человеку встать на путь, ведущий к богу. В порыве откровения Фред признаётся: „Только молитва – это единственное, что может помочь. Когда я пьян, мне иногда удается молиться”<sup>7</sup>.

Роман выделяется на фоне современной прозы прежде всего удивительно тонким сплетением суровой, иногда жестокой реальности послевоенных лет и романтичности человеческих отношений, любви, человечности и моральных поисков, которые помогают героям надеяться и не впасть в отчаяние.

Построить новый дом, начать все сначала. „Нам, дорогая, это надо учесть, когда мы построим себе новый дом, над которым будет развиваться знамя честности и справедливости”<sup>8</sup>.

Ей вспомнились слова песни „...и не сказал ни единого слова...”

---

<sup>5</sup> Там же, с. 35.

<sup>6</sup> Там же, с. 53.

<sup>7</sup> Там же, с. 61.

<sup>8</sup> Там же, с. 158.

Вся композиция романа “И не сказал ни единого слова”, его идейный стержень – это глубокое осмысление проблемы сохранения человечности в бесчеловечном мире, проблема защиты “маленького человека” от слепого и безжалостного маховика истории.

## ՀԼՈՒԾՎԱԾ ԱՆՑՅԱԼԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՆՐԻԽ ԲՅՈՒԼԻ «ԵՎ ՉԱՍԱՑ ՈՉ ՄԻ ԲԱՌ» ՎԵՊՈՒՄ

ՍՅՈՒՋԱՆՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

«Եվ չասաց ոչ մի բառ» վեպը հրատարակվել է 1953թ.: Բյուրի շատ աշխատանքներ արտացոլանք են կաթոլիկության, եկեղեցու և ժամանակակից հասարակության: Վեպն անդրադառնում է հետպատերազմյան տարիների՝ ոչ վաղ անցյալում վերապրած այնպիսի խնդիրների, ինչպիսիք են պատերազմի հետևանքով առաջացած սոցիալ-բարոյական խնդիրները, սովն ու թշվառությունը, պատերազմից խեղված ճակատագրերը, մարդկային փուչ կյանքը: Վեպում միահյուսվում են ոչ միայն մարդկային ճակատագրեր, այլ նաև նրանց փոխհարաբերությունները, նոր իշխանության նացիստական անցյալը և կաթոլիկ եկեղեցու կերպարը հետպատերազմյան տարիներին: Վեպն այն մարդկանց մասին է, ում հոգիներում պատերազմը թողել է անջնջելի հետքեր, համեստ մարդիկ, ում ճակատագիրը շրջանցել է, ում հատուկ են զգացմունքայնությունն ու ապրումները:

**Բանալի բաներ** - հետպատերազմյան տարիներ, կաթոլիկություն, աղքատություն, թշվառություն, սեր:

## THE ISSUE OF THE UNRESOLVED PAST AND THE IMAGERY IN HEINRICH BÖLL'S “AND NEVER SAID A WORD”

SYUZANNA NAVASARDYAN

Many of Böll's works reflect the problems of interaction of the Catholic Church and the society. The novel “And Never Said a Word” was published in 1953. It touches upon the realities of post-war years, the social and moral consequences of the tragedy they just suffered, the famine and poverty, the war-

torn destinies and ravaged human lives. It is a narrative about people, whose souls had been incurably injured by the recent war, about humble people who had been robbed of happiness, yet did not turn into idle spectators of the dramas of life; they are endowed with deep emotions and passions.

The novel traces the development of the characters' interrelations, the Nazi past of the new authorities, the image of Catholicism in the post-war years.

**Key words** - post-war period, Catholicism, poverty, misery, love.

# ՄԻՋՏԵՔՍԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐԻԵՎ ՊԱՏՈՒՄԻ ԿԵՐՏՄԱՆ ՄԻՋՈՑ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԽՈՒՄ ՀԱՐ» ՎԻՊԱՎՈՒՄ

## ԳՐԻԳՈՐ ՇԱՇԻԿՅԱՆ

Ինտերտեքստուալություն (միջտեքստայնություն) եզրույթն առաջին անգամ կիրառել է հետստրուկտուրալիզմի տեսաբան Յուլիա Կրիստևան 1967 թ.: Չնայած եզրույթը XX դարում է գիտական շրջանառության մեջ դրվել, սակայն միջտեքստայնությունն իբրև երևույթ նոր չէ գրականության և առհասարակ մշակույթի տիրույթում. բոլոր ժամանակներում էլ տեքստերը կապված են եղել միմյանց հետ, և այս կամ այն տեքստի հատվածները գիտակցաբար կամ անգիտակցաբար ներմուծվել են մեկ այլ տեքստ: Մի ստեղծագործությունից պոկված և մեկ այլ ստեղծագործություն ներմուծված տեքստի հատվածը կարող է ազդել և՛ կառուցվածքի, և՛ իմաստի վրա: Այս տեսանկյունից ուշագրավ օրինակ է Հրանտ Մաթևոսյանի «Խումհար» վիպակը, որտեղ ներդրված տեքստերի և հիմնական տեքստի միջև բազմաթիվ կապեր են հաստատվում, որոնք ձևավորում են վիպակի ասեվիքը, որն առանձին ընդհանուր տեքստում և ներդրված տեքստերում չկա և բացառապես նրանց համատեղ ներկայության արդյունքն է:

**Քանալի բաներ** – ինտերտեքստ, միջտեքստայնություն, նարատալոգիա, նարատոր, տեքստ, տեքստը տեքստում, պատում, Հ. Մաթևոսյան, Խումհար:

Ինտերտեքստուալություն (միջտեքստայնություն) եզրույթն առաջին անգամ կիրառել է հետստրուկտուրալիզմի տեսաբան Յուլիա Կրիստևան 1967 թ.: Չնայած եզրույթը XX դարում է գիտական շրջանառության մեջ դրվել, սակայն միջտեքստայնությունն իբրև երևույթ նոր չէ գրականության և առհասարակ մշակույթի տիրույթում. բոլոր ժամանակներում էլ տեքստերը կապված են եղել միմյանց հետ, և այս կամ այն տեքստի հատվածները գիտակցաբար կամ անգիտակցաբար ներմուծվել են մեկ այլ տեքստ<sup>1</sup>: Այս ամենը նման է նամակագրության. պատասխան նամակում միշտ էլ առկա է նախորդը, և եթե պատկերացնենք, որ մշակույթն էլ նամակագրություն է հազարամյակների մեջ, օրինաչափ է դառնում այն պնդումը, թե յուրաքանչյուր ստեղծագործություն ինտերտեքստ է: Ռոլան Բարտն այս մասին գրում է. «Ամեն մի տեքստ ինտերտեքստ է, տարբեր տեքստեր նրա մեջ ներկա են տարբեր մակարդակներով և

---

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Ժենյա Քալանթարյան**, Դիտանկյուն, Եր., 2015, էջ 23-40:

առավել կամ պակաս ճանաչելի ձևերով՝ նախընթաց մշակույթի տեքստերը և շրջապատող մշակույթի տեքստերը: Ամեն մի տեքստ նոր հյուսվածք է՝ գործված հների քաղվածքներից: Մշակութային կողերի, քաղվածքների, ուղիղական կառույցների հատվածներից, սոցիալական դարձվածների ֆրագմենտներից և այլն. նրանք բոլորը կլանված են տեքստից և խառնված նրա մեջ, որովհետև մինչև տեքստը և նրա շուրջը գոյություն ունի լեզուն: Իբրև յուրաքանչյուր տեքստի անհրաժեշտ նախապայման՝ ինտերտեքստայնությունը չի կարող հանգեցնել սկզբնաղբյուրների և ազդեցության խնդրին, այն իրենից ներկայացնում է անանուն բանաձևերի (որոնց ծագումը հազվադեպ կարելի է բացահայտել), անգիտակցաբար կամ ինքնաբերաբար արված քաղվածքների (որոնք տրված են առանց չափերտների) ընդհանուր դաշտ»<sup>2</sup>:

Յուլիա Կրիստևայի կողմից ինտերտեքստի բնորոշման գործում անմիջական դեր կատարեց Միխայիլ Բախտինի՝ 1924 թ. գրած «Բովանդակության, նյութի և ձևի հիմնախնդիրը խոսքարվեստում» աշխատությունը, որի մեջ հեղինակը նշում է, թե գրողն իրեն տրված իրականությունից բացի գործ ունի նաև իրենից առաջ և իր օրերում ստեղծվող գրականության հետ և մշտական «երկխոսության» մեջ է դրանց հետ («երկխոսություն», որը ենթադրում է գրողի պայքարը կամ համակեցությունը գոյություն ունեցող գրական ձևերի հետ): Կրիստևայի երկխոսության այս գաղափարի իր ընկալումն է դրել ինտերտեքստի հիմքում: Առհասարակ միջտեքստայնությունը սերտորեն կապված է «հեղինակի մահվան» տեսության հետ, և մինչև Կրիստևայի կողմից ինտերտեքստի գաղափարին հանգելը Միշել Ֆուկոն, Ռույան Բարտը և ուրիշներ արդեն հող էին նախապատրաստել դրա համար<sup>3</sup>:

Միջտեքստային կապերի իրողությունը տարբեր անվանումներ է ունեցել (գրական փոխառություններ, ռեմինիսցենցիա, գրականություն գրականության մեջ, տեքստը տեքստում և այլն), սակայն դրանց էությունը մեծ հաշվով նույնն է, և բոլորին բնորոշ է գիտակցական և ոչ գիտակցական կիրառությունը: Այս ուսումնասիրության շրջանակում նպատակահարմար ենք գտնում օգտագործել «տեքստը տեքստում» անվանումը, և մեզ հետաքրքրում են գրողի՝ ուրիշի կամ սեփական տեքստերից բացառապես գիտակցաբար արված մեջբերումները: Ըստ այդմ՝ տարբերակելի են տեքստի ներխուժման երկու հիմնական ձևեր.

<sup>2</sup> «Գրականության տեսության արդի խնդիրներ», Եր., 2016, էջ 142:

<sup>3</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Западное литературоведение 20-го века, Энциклопедия, М., 2004, с. 164.

- հեղինակային, երբ հեղինակը սեփական տեքստն է ներդնում սեփական տեքստի մեջ,
- ոչ հեղինակային, երբ հեղինակը ուրիշի՝ օտար հեղինակի տեքստն է ներդնում սեփական տեքստի մեջ:

Գեղարվեստական ստեղծագործության մեջ «տեքստը տեքստում» դրսևավորումը երբեք ինքնանպատակ չի լինում և կարևոր գործառույթ է իրականացնում: Յուրի Լոտմանը նշում է, որ իր բնական իմաստային կապերից պոկված և մեխանիկորեն այլ իմաստային տարածություն ներմուծված տեքստի հատվածը կարող է կատարել մի շարք գործառույթներ՝ խաղալ իմաստային կատալիզատորի դեր, փոխել հիմնական իմաստի բնույթը, աննկատ մնալ և այլն<sup>4</sup>: Լոտմանն ընդգծում է. «Մեզ համար հատկապես հետաքրքիր են դեպքերը, երբ անսպասելի տեքստային ներխուժումը ստանում է իմաստային էական գործառույթներ: Ընդգծված ակնհայտությամբ դա դրսևորվում է գեղարվեստական տեքստերում»<sup>5</sup>:

Վերոնշյալ դեպքերը մեզ համար ևս խիստ հետաքրքրական են, և այս ուսումնասիրության նպատակն է դիտարկել Հրանտ Մաթևոսյանի «Խումհար» վիպակը՝ իբրև գիտակցված միջտեքստայնության ուշագրավ օրինակ, ճշտել, թե առանցքային նշանակություն ունեցող ներդրված տեքստերը (այսուհետ՝ ներդիրներ) ինչպիսի հարաբերության մեջ են միմյանց և հիմնական տեքստի հետ և իմաստային ինչպիսի գործառույթ են կատարում: Դա հնարավորություն կտա համապարփակ պատկերացում կազմելու հայ գրողի՝ նարատիվի (պատումի) կառուցման սկզբունքների մասին:

\*\*\*

«Խումհար» վիպակը սկսվում է արևածաղիկների պատկերով, որը, պարզվում է, կենտրոնական կերպարի՝ Արմենակ Մնացականյանի պատմվածքի ավարտն է: Վիպակի սկզբում կարդում ենք. «Արևածաղիկները նայում են պայծա՛ր, պայծառ: Լուռ կանգնել են ու միասին նայում են: Թաքուն մի բան, արգելված մի բան անելիս են եղել, ծերունու ոտնաձայնի վրա շտկվել էին, նայում են ու լռում: Երեխաների խմբի պես: Եթե մեղուն լեզու ունի և կարողանում է իրենց բաների մասին իրար իմաց տալ ու հասկանալ, եթե կրունկը երամ է կապում ու իր կառավար թագուհուն զգում առջևը, եթե զամբիկն

<sup>4</sup> Տե՛ս **Лотман Ю. М.**, Семиосфера, СПб, с. 66.

<sup>5</sup> Նույն տեղում:



արածում ու արածելու հետ բարկանում է հեռացող քուռակի վրա, և քուռակը հասկանում է, ուրեմն այս երկնքի տակ աստծու ամեն արարած էլ ունի մարդկային իր լեզուն: Անտառն ինչպե՞ս է առաջ գնում, թփերն առջևն է գցում, թփերը գնում են, ինքը գնում է թփերի ետևից: Կապուլտե սարի մերկ լանջին գիհի մի թուփ է կպել ու վերև է կանչում ձորի անտառին: Է՛, կկանչի, կկանչի ու կչորանա, քանի որ մարդն ու անասունը շատացել են, անտառի դեմը փակում են»<sup>6</sup>:

Վերոնշյալ հատվածին հաջորդում է հետևյալը. «Պատմվածքը կարծես ստացվում է, հավանական է՝ լավ պատմվածք է լինելու: Ինչ որ է, այս վերջին պարբերությունն ինձ դուր է գալիս: Եվ իրար արժեն իմ հոգնությունը, պատմվածքը, ծխախոտի թանկ տուփը՝ որ ես դատարկել եմ: Գիհի ծառն ուրեմն ձորի անտառին կանչում է վերև՝ իր մոտ, որ միասին առաջ գնան մինչև՛...» (էջ 297):

Վիպական պատմվածքի առկայությունը «տեքստը տեքստում» կառույցի առաջին դրսևորումն է: Այստեղ ուշագրավ գործընթաց է տեղի ունենում. ներդիրը, որն այս դեպքում պատմվածքի վերջնամասն է, սեփական սահմաններն է բերում *հիմնական տեքստի* տիրույթ (ներդիրին նախորդող կամ հաջորդող տեքստը), որի շնորհիվ էլ վերջինս ընթերցողի կողմից սկսում է ընկալվել իբրև «իրականություն», իսկ ներդիրը՝ «պայմանականություն»: Յու. Լոտմանը գրում է, որ «իրականի և պայմանականի» հակադրության խաղը բնորոշ է «տեքստը տեքստում» յուրաքանչյուր դրսևորմանը<sup>7</sup>: Այս երևույթը հանդիպում է արվեստի գրեթե բոլոր բնագավառներում. Յու. Լոտմանը իբրև պիեսում պիեսի հայտնվելու օրինակ նշում է Շեքսպիրի «Համլետը», վեպում վեպի՝ Մ. Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան», նկարում նկարի՝ Դ. Վելասկեսի «Վեներան և Ամուրը», Յան վան Էյքի «Բանկիր Առնոլֆինիի» կնոջ հետ դիմանկարը»՝ հայելային արտացոլման միջոցով<sup>8</sup>:

«Խումհար» վիպակի սկզբում ներդրված պատմվածքի ավարտն առաջին հերթին կատարում է «իրականի և պայմանականի» տարանջատման դեր, և ընթերցողը ենթագիտակցորեն ներդիրներից դուրս գտնվող տեքստը սկսում է ընկալել իբրև հիմնական տեքստ և «իրականություն», իսկ ներդիրը՝ հիմնական տեքստ ներմուծված միավոր և «պայմանականություն»: Այս բաժանու-

<sup>6</sup> **Մաթևոսյան Հր.**, Վիպակներ, Եր., «Նաիրի», 1990, էջ 297 (այսուհետև վիպակից մեջբերումների միայն էջերը կնշենք տեքստում):

<sup>7</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Лотман Ю. М.**, նշվ. աշխ., էջ 67:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 67-71:

մից հետո է միայն երևան գալիս ներդիրի իմաստային կողմը՝ մենք-ի գաղափարի կարևորությունը (մենք-ի, միասին-ի գիտակցության կարևորությունն ու տազնապը, թե այն վերանում է. սա է դրված մաթևոսյանական պոետիկայի հիմքային շերտերից մեկում): «Անտառն ինչպե՛ս է առաջ գնում, թփերն առջևն է գցում, թփերը գնում են, ինքը գնում է թփերի ետևից: Կապուտլեռ սարի մերկ լանջին գիհի մի թուփ է կպել ու վերև է կանչում ձորի անտառին: Է՛, կկանչի, կկանչի ու կչորանա, քանի որ մարդն ու անասունը շատացել են, անտառի դեմը փակում են» (էջ 297): Այս հայանցիկ պատկերը հաստատում է մենք-ի կարևորությունն ու նշմարում պատմողի տազնապը, թե խաթարվել է այն:

Հաջորդ ներդիրները լրագրային հողվածներն են. առաջինը՝ մորեխների մասին, երկրորդը՝ «Դարի ամուսնություն» խորագիրը կրող հատվածը, որ Արիստոտել Օնասիսի և Ժակլին Քենեդիի ամուսնության մասին է: Երկու ներդիրներն էլ ունեն հստակ ընդգծված սահմաններ և ընդհանուր տեքստի տիրույթում հանդես են գալիս իբրև լրագրից արված մեջբերումներ: Վավերագրերի ներմուծումը գեղարվեստական ստեղծագործություն «տեքստը տեքստում» դրսևորման ամենատարածված ձևերից է, որը հանդիպում է ոչ միայն գրականության, այլև արվեստի մյուս տեսակներում, օրինակ՝ Ա. Տարկովսկու «Հայելի» ֆիլմում օգտագործված են փաստագրական դրվագներ, գեղանկարչության մեջ՝ կոլաժներում, կիրառվում էին լուսանկարներ, լրագրից հատվածներ և այլն: Այս դեպքում արդեն հիմնական տեքստն ընկալվում է իբրև «պայմանականություն», իսկ ներդիրները՝ «իրականություն»:

Իմաստային առումով Հր. Մաթևոսյանի վիպակում լրագրից ընթերցված երկու կտորներն էլ ծառայում են վերևում ասված մենք-ի գաղափարի խտացմանը: Առաջին կտորում կարդում ենք. «1915 թ. քսանյոթամյա գիտնական Բ. Պ. Ուվարովը Հյուսիսային Կովկասում հետազոտեց ու տվեց մորեխի նախրացման, նախրագոյացման խնդրի հանճարեղ բացատրությունը, ինչը որ հաստատվեց նաև Արևադարձում արված հետազոտումն ասիրություններով: Պարզվեց, որ մորեխն ապրում է երկու՝ մենակեցային և նախրային կենսաձևերի մեջ, և այդ կենսաձևերը արտաքինով, ներքին կառուցվածքով ու բազմացման կերպերով բոլորովին նման չեն միմյանց: Մենակեցային վիճակի մորեխը, եթե միջավայրն այսպես ասած նախրային հոսանուտ, քոչի նախրային կախարդանք չունի, հակված չէ մերձենալու իր նմանին, խմբի անդամ, խմբի մաս, խումբ դառնալու, և այդ դեպքում նա պահպանում է, անհատական երանգների փոքր տարբերություններով, իր ցեղի գունաձևային, ներքին կառուցվածքի ու բազմացման եղանակի բոլոր հատկությունները: Նախրային

վիճակի մորեխն արդեն ընդհակառակը. սրանք խիտ խմբերով հավաքվում, բեղիկներով, ոտքերով ու մարմնով անընդհատ քսվում են միմյանց, և այդ շփումները նրանց բոլորին դնում են բարձր այսպես կոչված շարժիչայնության մեջ, գրգռում քռչի բնագրը: Ձեր աչքի առջև մենակեցային վիճակի մորեխը վերածում է նախրայինի. գույնի ցեղային, տեղային և անհատական երանգները վերանում են, մորեխը մզանում, նարնջասև գույն է առնում, ծծրակի մոտ մեջքը կորվում է, թևերը երկարում են, մուգ գույնի շնորհիվ ջերմությունը հինգ-ութ աստիճանով բարձրանում է, և այդ ժամանակ նախիրը պատրաստ է պոկվելու: Մորեխը երկինք է բարձրանում քամու հակառակ ուղղությամբ և երբ արդեն վեց հարյուր-հազար մետր բարձրության է՝ գլուխը շրջում ու իրեն տալիս է քամուն» (էջ 303): Այլ կերպ ասած՝ մենք-ը, որ այս դեպքում նախրային վիճակի մորեխն է, կլանում և իրեն է ձուլում ես-ին՝ մենակեցային վիճակի մորեխին:

Արիստոտել Օնասիսի և Ժակլին Քենեդիի ամուսնության մասին հողվածի շուրջ ուշագրավ խոսակցություն է ծավալվում Արմենակ Մնացականյանի, Էլզար Գուրամիշվիլիի և Վիկտոր Մակարովի միջև.

«-Օնասիսն, այո, Ժակլին Քենեդիին կնության է առել,- ասաց Վիկտոր Մակարովը:

Էլզարը հեզնեց.- Կնության է առել... Չափարը մարդուկնիկ իրար օգնելով կարկատել, մարգերում պոմիդորի սածիլ են տնկել, ջրել ու դռանը հիմա հոգնած նստած են:

-Մի՛ կարծիր, Էլզար,- Մակարովը ուժեղ, գեղեցիկ պարանոցը ետ թեքեց,- դու մի կարծիր, թե գիշատիչը ռումբ է կուլ տվել: Դա փոխշահավետ ամուսնություն է» (էջ 304):

Փոխշահավետ ամուսնությունը, ուրեմն, այս դեպքում շեշտում է մենք-ի բացակայությունը, Արիստոտել Օնասիսը և Ժակլին Քենեդին ես-եր են, մենք չեն, հետևաբար՝ հեշտ խոցելի են:

Հաջորդ և ամենածավալուն ներդիրը Միքելանջելո Անտոնիոնիի «Գիշերը» ֆիլմն է, որի դիտման ժամանակ Արմենակը մեկնաբանություններ է անում ինքն իր համար, և ընթերցողը կարդում է կերպարի ընկալում-մեկնաբանությունը («իրականի և պայմանականի» խաղի տեսանկյունից կրկնվում է առաջին ներդիրի ստեղծած տպավորությունը): Ֆիլմի գլխավոր կերպարներն են ամուսիններ Մարչելո Մաստրոյանին և Ժաննա Մարոն: Այս կերպարները վիպակի տիրույթում դառնում են Օնասիսի և Ժակլին Քենեդիի «նմանակները», և ներդիրի մեջ քայլ առ քայլ բացահայտվում է նրանց՝ միմյանց հան-

դեպ օտար լինելու, մենք չլինելու հանգամանքը: Ներդիրն ավարտվում է արևածաղիկներով հատվածը հիշեցնող վերջնամասով. «Հեռվի տնակը կանգնած էր անշարժ, ցողունները կանգնած էին անշարժ, անտառը կարծես ծառերի բանակ էր, բայց ծառերը կանգնած էին անջատ, անտառի եզր ելած կաղնին անտառի հետ կապ չուներ, գանգուր բոխին կանգնած էր անջատ, բոլոր ծառերը կանգնած էին անջատ առ անջատ, ամեն ինչ կանգնած էր ինքն իր համար, ոչ մեկը ոչ ոքի հետ չուներ ոչ մի կապվածություն» (էջ 316):

Վերոնշյալ չորս ներդիրները հատուկ գործառույթ են կատարում. դրանք շարունակում, լրացնում են միմյանց և ձևավորում են ներդիր-հիմնական տեքստ հակադրություն: Ներդրված տեքստերում առաջ քաշված հարցադրումները, պատկերված իրադարձություններն անխուսափելիորեն զուգահեռվում են հիմնական տեքստի իրադարձությունների հետ, և այս «երկու կողմերի» զուգահեռի հիման վրա էլ ձևավորվում է վիպակի սյուժեն: Արմենակ Մնացականյանը Մարջելոյի նման կիրք չի զգում իր կնոջ՝ Հասմիկի նկատմամբ, նրա մեջ չնկատածը փնտրում է Եվա Օգերովայի և այլ կանանց բաց ծնկների և ներկված շրթունքների մեջ: Եվայի հետ զրույցի ժամանակ Արմենակը հիշում է Հասմիկին, խոսում նրա մասին, և երկու կանայք համեմատության մեջ են դրվում, ինչը, իհարկե, դուր չի գալիս Եվային. «Ոչ այնքան բաց» որ ինձ վիրավորի, ոչ այնքան թաքցրած՝ որ ես հանկարծ մտածեմ, թե ինքը համաձայն է, որ երևանցի ինչ-որ տնտեսուհի նման է իրեն՝ կինոյի ասպիրանտ Եվա Օգերովային, նկատելի-աննկատելի ինչ-որ շարժումով նա հասկացրեց, որ նմանություն տեսնելը, այնուամենայնիվ, իմ կամայականությունն է» (էջ 376):

Սակայն, ի տարբերություն Արիստոտել Օնասիսի և Ժակլին Քենեդիի, Մարջելո Մաստրոյանիի և Ժաննա Մարոյի, Արմենակը և Հասմիկը, այնուամենայնիվ, «մենք» են. նրանց կապում, «մենք» են սարքում իրենց երեխաները: Եվայի հարցին, թե նա սիրո՞ւմ է իր կնոջը, Արմենակը պատասխանում է. «Ես իմ կնոջը սիրում եմ: Սիրում եմ հիմա՝ այս րոպեիս, երբ կոնյակն ինձ տաքացրել է ու քո ծնկներն ինձ դուր են գալիս, իսկ ինքը երեխային կուրծք է տվել, երեխան կշտացել է, և հիմա լուռ նայում ու իրար ուսումնասիրում են, մայրը հիմա ասելու է «փրշտ» և երեխան խլրտալու, խրտնելու ու նրանից թաքնվելու է նրա կրծքերի մեջ. քիչ հետո երեխան մի աչքով տակնիվեր նայելու է մորը, և այն, ինչը կաթի չափ կարևոր է, մանանայի պես դարձյալ մի կաթիլ ցողվելու է նրա փոքրիկ էության մեջ: Իսկ ճաշն այնտեղ վառվում է, և քիչ հետո մայրն ասելու է՝ «թաղեմ քեզ, ճաշս վառեցիր» (էջ 375):

Արմենակը, ուրեմն, մենակ չէ, «մենք» է, եթե ֆիզիկապես հեռու է տնից և մենակ է, միննույնն է, մենակ չէ, որովհետև նրա հետ են ընտանիքի, տան մասին հուշերը:

Հրանտ Մաթևոսյանի «Խումհար» վիպակի պատումը ձևավորվում է սքողված և ակնհայտ բազմաթիվ ներդիրների շնորհիվ, սակայն վերոնշյալ ներդիրներն են, որ կառուցվածքային-իմաստային էական գործառույթ են կատարում: Կառուցվածքային մակարդակում հիմնական տեքստն ու ներդիրները մեկուսացնում են միմյանց՝ ստեղծելով «իրականության» և «պայմանակա-նության» պատրանք: Իմաստային առումով առավել բարդ գործընթաց է տեղի ունենում. ներդիրները, հայտնվելով վիպակի տարածքում, զուգահեռվում, ձուլվում կամ հակադրվում են միմյանց և հիմնական տեքստին, ինչի արդյունքում էլ ձեռք են բերում նոր, նախկինում չունեցած իմաստ և ազդում ստեղծագործության ասեվիքի վրա: Մասերի միջև բազմաթիվ կապեր են հաստատվում, որոնք ձևավորում են վիպակի ասեվիքը, որն առանձին ընդհանուր տեքստում և ներդիրներում չկա և բացառապես նրանց համատեղ ներկայության արդյունքն է:

## **ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТЬ КАК СРЕДСТВО ФОРМИРОВАНИЯ НАРРАЦИИ В ПОВЕСТИ “ПОХМЕЛЬЕ” ГРАНТА МАТЕВОСЯНА**

ГРИГОР ШАШИКЯН

Термин «интертекстуальность» впервые предложила теоретик пост-структурализма Юлия Кристева в 1967 году. Хотя термин вошел в научный оборот в 20-м веке, однако само явление не новое в литературе и в культуре в целом. Во все времена тексты были связаны между собой, и отрывки из того или иного текста сознательно или неосознанно включались в другие. Часть текста, вырванная из одного произведения и встроенная в другое может изменить как структуру, так и общий смысл нового произведения. С этой точки зрения интересна повесть Гранта Матевосяна “Похмелье”, где между встроенными отрывками и основным текстом просматривается множество связей, формирующих общую идею повести, которой нет как в отдельном общем тексте, так и во встроенных отрывках: она является исключительно результатом их соединения.

**Ключевые слова:** интертекст, интертекстуальность, нарратология, нарратор, текст, текст в тексте, наррация, Г. Матевосян, Похмелье

## INTERTEXTUALITY AS A MEANS OF STRUCTURING NARRATION IN HRANT MATEVOSYAN'S "KHUMHAR"

GRIGOR SHASHIKYAN

The term “intertextuality” was coined by poststructuralist Julia Kristeva in 1967. Even though the term became commonly used in scientific circles in the 20th century, the phenomenon itself is not new in literature and culture in general; in all times, texts had been interconnected, and passages from one text were intentionally or unintentionally inserted in other texts. In general, such insertions can influence both on the structure and the meaning of the whole. Keeping this in mind, it is worth to examine Hrant Matevosyan’s novel “Khumhar [Hangover]”, where various links are established between the inserted and original passages of the text. These links form the main message of the novel that does not exist in the inserted and original texts separately, but is the result of combination of both.

**Key words** – intertext, intertextuality, narratology, narrator, text, text in text, narration, H. Matevosyan, Khumhar

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆԴԻ ՄԱՆԿԱԿԱՆ

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1920-1950 ԹԹ.)

#### ՖԻՐՈՒՋԻՄՈՂԱԴԱՄ ՄԱՀՄՈՒԴ<sup>1</sup> (ԻՐԱՆ)

Հոդվածը նվիրված է մանկական գրականության ուսումնասիրությանը Իրանի սահմանադրական շրջանից հետո: Ուսումնասիրության առարկա է դարձել մասնավորապես սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի մանկական գրականությունը, որն ընդգրկում է 1920-1950-ական թվականները:

**Բանալի բառեր** – Իրան, մանկական գրականություն, 1920-1950-ական թվականներ:

Պարսկական գրականությունը սահմանադրական իրադարձություններից ու 1919 թ. հեղաշրջումից հետո կարճ ժամանակահատվածի համար ընդմիջվեց և թուլացավ: Սակայն կարճ ժամանակ անց պարսկական չափածոյի և արձակի տիրույթում ի հայտ եկավ գրական զարգացումների նոր ալիք: Պարսկական բանաստեղծությունը փոփոխվեց կառուցվածքի ու բովանդակության առումով, սակայն որպեսզի մանկապատանեկան գրականությունը կարողանա օգտվել նրանից, և ստեղծվեն մանկական բանաստեղծություններ, դեռևս ժամանակ էր պահանջվում: Իսկ պարսկական արձակի համար առիթն ավելի բարենպաստ էր: Արևմտյան առանձին պատմվածքների ու վեպերի թարգմանությունը նախադրյալ ստեղծեց պարսկական նորագույն պատմվածքների ձևավորման համար: Մեծանուն գրողներ, այդ թվում՝ Ջամալզադեն, Բոզորգե Ալավին, Սադեղ Չուբաքը, Սադեղ Հեդայաթը և այլք, ասպարեզ եկան, ինչն էլ հող նախապատրաստեց մանկապատանեկան գրականության մեջ արժեքավոր ստեղծագործությունների ստեղծման համար:

Ինչպես աշխարհում քսաներորդ դարը կոչվեց «մանկան դարաշրջան», այդպես էլ Իրանում աննախադեպ շարժում սկսվեց մանկապատանեկան գրականության ոլորտում: Մանկական ուսուցողական առաջին գրքերի տպագրումից ի վեր, որի նախապատմությունը հասնում է մինչև սահմանադրական

---

<sup>1</sup> Իրան, Թերբաթե Հեյդարիյեհ, Իսլամական Ազադ համալսարանի Թերբաթե Հեյդարիյեհ մասնաճյուղ, պարսից լեզվի և գրականության բաժին (ամբիոն):

Ժամանակաշրջան, մինչ այն ժամանակ, երբ նախ՝ բարոյագիտության, ապա՝ մշակույթի նախարարությունը սկսեց միանման դարձնել դասագրքերը, գրականության ու գրական ժանրերի տեղն ու դերը դասագրքերում ուղեկցվեցին ինչ-որ զարգացումներով: Սահմանադրական ժամանակաշրջանում և 1920թ. հաջորդող տարիներին դասագրքերի միջոցով տեղի էր ունենում երեխաների առաջին ծանոթացումը գրականությանը, և քանի որ դասագրքերի հեղինակներն ավելի շուտ մանկավարժներն էին, և գրականությունը միմիայն գիտության ու գիտելիքի կամ խրատների փոխանցման համար էր օգտագործվում, մանկական գրքերի ու դասագրքերի մեծ մասը հատկացվել էին դիդակտիկ՝ «մանկավարժական գրականությանը»: Մեկ ընդհանուր հայացքով մանկական գրականությունն Իրանի սահմանադրական շրջանից հետո, համաձայն սոցիալ-քաղաքական իրողությունների, կարելի է ուսումնասիրել երեք շրջաններով.

- ✓ սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի մանկական գրականություն (1920-1950 թթ.),
- ✓ սահմանադրությանը հաջորդող երկրորդ սերնդի մանկական գրականություն (1950-1980 թթ.),
- ✓ սահմանադրությանը հաջորդող երրորդ սերնդի մանկական գրականություն (1980-2010 թթ.):

Սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի արվեստագետներն ու գրողները քաղաքական ու սոցիալական բազմաթիվ իրադարձությունների բովով անցան: 1920 թ. հեղաշրջման ժամանակ դազախ գինվորները Ռեզախանի ղեկավարությամբ գրավեցին Թեհրանը: Ռեզախանը նախ պատերազմի նախարարի պաշտոնում վերացրեց բազմաթիվ խռովություններ ու ավազակություններ, ապա 1922 թ. Ղաջարյան Ահմադ Շահի հրամանով նշանակվեց վարչապետի պաշտոնում: Նա սկզբում անհաջող փորձ արեց հանրապետական կարգերի հաստատման ուղղությամբ, սակայն 1924 թ. գահ բարձրացավ: Նա, ի վերջո, 1941 թ. դաշնակիցների կողմից Իրանի բռնագրավումից հետո Բրիտանիայի ճնշումների ներքո ստիպված հեռացավ գահից և երեք տարի անց իր մահկանացուն կնքեց Հարավային Աֆրիկայի Յոհաննեսբուրգ քաղաքում<sup>2</sup>: Այն ազատությունները, որ ի հայտ եկան սահմանադրական շրջանում, վերացան Ռեզախանի իշխանության օրոք: Բազմաթիվ գրողներ ու գրականա-

<sup>2</sup> Ռեզախանը Փահլավի թագավորության հիմնադիրն է Իրանում և վերջ տվեց Ղաջարյան թագավորությանը:



գետներ հալածվեցին, ոմանք աքսորվեցին կամ բանտերում հայտնվեցին<sup>3</sup>: 1941 թ. ամռանը Երկրորդ համաշխարհային պատերազմի կեսերին, երբ բրիտանական ու խորհրդային զորքերը ներխուժեցին Իրան, Ռեզա Շահ Փահլավին փաստացի աքսորվեց երկրից, և Մոհամմադեզա Փահլավին փոխարինեց հորը և գահ բարձրացավ: Նոր թագավորի հարաբերական անզորությունը և իրականում սահմանադրական սկզբունքների սահմանափակ հաստատումն ու դրանց վերականգնումը հատկապես սկզբնական շրջանի տարիներին հանգեցնում էին քաղաքական ոլորտի արագ զարգացումներին և ուժային մարմինների, հատկապես Ռեզա Շահի օրոք հիմնադրված բանակի սասանմանը: Հենց այդ շրջանում թարգմանության գործընթացը, որը սկիզբ էր առել «Դարոլֆոնունի»<sup>4</sup> հիմնադրմամբ, մուտք գործեց նաև պարսկական, այդ թվում և մանկապատանեկան գրականություն: Իրանում մանկական գրքերի թարգմանության ընթացքին կարելի է հետևել սկսած 1920 թվականից: 1920-1940 թթ. պարսկերեն թարգմանվեցին մի շարք արտասահմանյան պատմվածքներ, այդ թվում՝ Հանս Քրիստիան Անդերսենի պատմվածքները, որոնք Ալինադի Վազիրիի, Ռուհի Արբաբի և Մեհրի Ահիի ջանքերով մուտք գործեցին մանկական գրքերի հրատարակությունների շուկա և թափ հաղորդեցին մանկապատանեկան գրական զարգացումներին<sup>5</sup>: 1941-1950 թթ., այսինքն՝ Մոհամմադեզա Փահլավիի թագավորության առաջին տասնամյակում շուրջ 15 անգամ վարչապետ փոխվեց: Այսպիսով, սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի գրողները ձևավորվեցին սահմանադրական շրջանի քաղաքական ու սոցիալական խնդիրներով ալեկոծված և վախով ու հույսով լի մթնոլորտում և ստեղծագործում էին տագնապալի ու հուսահատությամբ լի միջավայրում: Բնական է, որ արևմտյան գրական տեքստերից թարգմանված ստեղծագործությունները կարող էին ազդել այդ ժամանակաշրջանի գրական ստեղծագործությունների արարման վրա: Սահմանադրական շրջանի գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գրականությունը միաձուլված է Իրանի ժողովրդի ժամանակակից կյանքի և նրա ճնշող խնդիրների

<sup>3</sup> Աբրահամյան Ե., Իրանը՝ երկու հեղափոխությունների միջև, «Նեյ» հրատ., Ա տպ., Թեհրան, 1998, էջ 124:

<sup>4</sup> Որոշ հետազոտողներ «Դարոլֆոնունը» համարում են Իրանի առաջին արդի դպրոցը:

<sup>5</sup> Հեջազի Բ., Մանկապատանեկան գրականություն. առանձնահատկություններն ու տարբեր կողմերը, Կանանց լուսավորիչներ և ուսումնասիրություններ, Թեհրան, 1995, էջ 184:

հետ, և հայրենասիրությունը վիպասաններին առաջնորդել է դեպի Իրանի փառավոր պատմությանն առնչվող թեմաներ:

Իրանի գրական առաջին ստեղծագործությունը, որն այդ ժամանակաշրջանում գրվել է վեպի տարբերակով և պատմական բովանդակությամբ, գրի է առնվել պարսից լեզվի ամենաաշխատասեր վիպասաններից մեկի՝ Սանաթիզադե Քերմանիի կողմից և վերնագրված է «Դամգոսթարան» (ծուղակների լարում) կամ «Մազդակի վրիժառուները»: Այս վեպի նախագիծն ընթերցողին իր հետ տեղափոխում է Սասանյան վերջին թագավոր Հազկերտ Գ-ի արքունիք, որը շրջապատված է զրադաշտ դավաճան հոգևորականների կողմից, և մի կողմից նրան սպառնում են Մազդակի հեղափոխական կողմնակիցները, մյուս կողմից առկա է արաբների հարձակման վտանգը, և այս երկու ճնշումների ներքո փլուզվում է կայսրությունը: Վեպն ավարտվում է Մազդակի կողմնակիցներից մեկի ձեռքով Հազկերտի մահվամբ և հոր կործանման վրեժը լուծող Հազկերտի որդի Հորմոզանի ձեռքով Օմար խալիֆաթի սպանությամբ: Գրողն այս վեպում պատմական իրադարձություններն օգտագործել է գրեթե իր համար ցանկալի ձևով: Այս ստեղծագործության մեջ առկա են անկապ դեպքեր ու խճճված սադրանքներ, որոնք հիշեցնում են Ալեքսանդր Դյումայի վեպերից մեկը: Հեղինակը նույնիսկ կերպարները մշակելիս ևս պատմական ճշգրտություն չունի, և նրա պատմվածքի հերոսները թագավորի ու փերիների պատմվածքների պարկեշտ ու զուսպ աշխարհի նման առաքինի ու մաքուր են, մինչդեռ պատմվածքի հանցագործները նկարագրվել են ամբողջովին սև գույնով: Ամփոփելով հարկ է նշել, որ այս վեպն այն ժամանակաշրջանի կտրվածքով ամբողջությամբ նկարագրում է Իրանում մի նոր գրականության ձևավորման նախանշանները: Այս վեպը տվյալ ժամանակաշրջանի բոլոր ստեղծագործությունների պես Իրանի անկախության վերացման պատճառները ներկայացնում է այնպես, որ դա ահազանգ լինի հետագա սերնդի համար: Վեպը 1900 թ. է գրվել, սակայն քսան տարի անց առաջին անգամ Բոմբեյում և հինգ տարի անց Թեհրանում տպագրվեց: Սանաթիզադեն իր հետագա վեպերում հետամուտ է լինում նույն պատմությանը: Նա որևէ պարտավորություն չունի պատմական ուսումնասիրությունների հանդեպ և արվեստի տեսանկյունից որևէ տեսակի զարգացում չներկայացրեց:

«Նկարիչ Մանիի» պատմվածքը «Մանիի» կյանքի ու սիրո ռոմանտիկ պատմությունն է, որը տեղի է ունենում Հռոմի կայսր Վալերիինի հետ Շապուհի պատերազմների շրջանում՝ երրորդ դարում: Վեպը 1926 թ. տպագրվեց Թեհրանում: «Ռազմիկը» մեկ այլ պատմվածք է, որը Թեհրանում տպագրվեց

1933 թ., և թեման վերաբերում է Սասանյան առաջին թագավորների ժամանակաշրջանին: «Սևազգեստները»<sup>6</sup> պատմվածքը ևս հայտնի է որպես իրանական տարր պարունակող ստեղծագործություն, որն Աբումուլեմի ապստամբության մասին է: Սանաաթիզադեի աշխատանքները չեն սահմանափակվում պատմական խնդիրներով, և պարսկական արձակը պարտական է նրա առաջին երևակայական վեպին՝ «Խելառների ժողովը» վերտառությամբ, որտեղ իր կարգախոսը վերցրել է Սաադիի խոսքերից, այն է՝ «Բոլոր մարդիկ խելագար են, և խելագարն է խելացի»: Այս վեպում մարդկանց մի խումբը հիպնոսի քուն է մտնում և այդ քնի միջոցով տեղափոխվում երկու հազար տարի հետո, այնպիսի շրջան, որն անվանում են «բանականության դարաշրջան», և որտեղ նրանք անցնում են տարօրինակ դեպքերի միջով: Գիրքը տպագրվել է 1923 թ.: Այս հեղինակի մյուս ստեղծագործություններից է «Ռոստամը քսաներկուերորդ դարում» գիրքը<sup>7</sup>:

Պատմվածքի անվանի հեղինակներից է Միրզա Մոհամմադբադեր Խոսրավի Քերմանշահին, ով հին ազնվականներից էր և իր մի խումբ այլ հայրենակիցների նման միացավ Սահմանադրական շարժմանը: Նա Իլխանյան շրջանի իրանական գերդաստաններից մեկի պատմությունը պիեսի տեսքով գրի առավ և այն վերնագրեց «Շամսն ու Թողրան», որի բովանդակությունը կազմում են ռոմանտիկ իրադարձությունները, պատերազմները, սադրանքներն ու սերը, ողբերգությունն ու հաղթանակները, և օժտված է գաղափարախոսական ու սոցիալական արժեքներով, որոնց անդրադարձել է ռուս իրանագետ Մախալսկին:

Սանաաթիզադեի, Խոսրավիի և ուրիշների արժեքավոր գործերով հանդերձ, սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի գրականությունը գրական հետազոտությունների մեծ մասում սկսվում է Մոհամմադալի Ջամալզադեի ներկայացմամբ:

**Սեյեդ Մոհամմադալի Ջամալզադեն** ծնվել է 1892 թ. Իսպահան քաղաքում<sup>8</sup> և իր մահկանացուն կնքել 1997 թ. Շվեյցարիայի Ժնև քաղաքում<sup>9</sup>: Նա

<sup>6</sup> **Սանաաթիզադե Քերմանի Աբ.**, Սևազգեստները, Հասան-Մարեֆաթի անվան գրքի ու գրենական պիտույքների կենտրոն, Թեհրան, 1944:

<sup>7</sup> **Սանաաթիզադե Քերմանի Աբ.**, Ռոստամը քսաներկուերորդ դարում, «Էթեթհադիե» հրատ., Թեհրան, 1934:

<sup>8</sup> Ջամալզադեի ծննդյան ամսաթվի մասին Մոհամմադ-Իբրահիմ Բաթթանի Փարիզին մի հոդվածում, որը գրել էր ազատության ճանապարհի նահատակի գրքի վերաբերյալ (Թեհրան, 1972), «Իրանցիների սթափության պատմությունը» գրքում նշված ամսա-

իրանցի ժամանակակից գրող ու թարգմանիչ է, ով հայտնի է որպես կարճ պատմվածքի հայր և պարսից գրականության մեջ ռեալիզմի ոճի հիմնադիր:

Նա իրանական կարճ պատմվածքների ժողովածուն «Լինում է, չի լինում» վերնագրով հրատարակեց 1920 թ. Բեռլինում: Ջամալզադեն իր պատմվածքներում պարզ ու հումորային լեզվով և ասացվածքների ու ժարգոնների միջոցով քննադատում է ժամանակի տիրող վիճակը: Մոհամմադալի Ջամալզադեին Սադեղ Հեդայաթի ու Բոզորգե Ալավիի հետ միասին համարում են պարսկական արդի գրականության երեք գլխավոր հիմնադիրները: Նրա «Լինում է, չի լինում» գրքում տպագրված «Պարսկերենը շաքար է» կարճ պատմվածքը սովորաբար համարվում է որպես արևմտյան ձևով գրված առաջին պարսկերեն կարճ պատմվածքը: Այս պատմվածքը, որը գրվել է պարսկական արձակի ձևավորումից հազար տարի անց, հանգուցակետ է համարվում պարսկական գրականության համար: Ավելին, Ջամալզադեի «Լինում է, չի լինում» գրքի առաջաբանը պարսկական արդի արձակի կարևորագույն գրական փաստաթուղթը և իրականում հռչակագիրն է: Առաջաբանում Ջամալզադեն ընդգծում է, որ «Արդի գրականության կիրառումն առաջին հերթին հանրային մշակույթի արձագանքն է, ապա՝ սոցիալական խնդիրների ու իրողությունների արտացոլումը»<sup>10</sup>: Ջամալզադեի պատմվածքներից շատերն արժանացել են նաև երեխաների ու դեռահասների ուշադրությանը: Դրանցից են՝ «Սար ո թահե յե քյարբաս» (թարգմ.-պարսկերեն ասացվածք՝ «միմյանց հետ հավասար» իմաստով), «Դարովմաջանին» (հոգեբուժարան), «Կարճ պատմվածքներ՝ մորուքավոր երեխաների համար», «Բացի Աստծուց ուրիշ մեկը չկար» (թարգմ.- Պարսկերենում սա միշտ հաջորդում է «Լինում է, չի լինում» կապակցությանը) և այլն:

թվերից Ջամալզադեի ծննդյան թվականը. ներկայացրել է 1892 թ.: Սակայն Ջամալզադեն 1950 թ. մայիս ամսին այի Դեհբաշիին ուղղված իր նամակում գրում է. «Ծննդյանս թվականն էիք ուզել, ընկերներս այն համարում են որպես՝ գաղտնի է, չասես, տարբերակ, սակայն իրականում դա ինձ էլ է անհայտ: Բայց համոզված եմ, որ մահվանս թվականն ավելի հստակ կլինի, քան ծննդյանս թվականը, և միգուցե գրչի ու գրենական պիտույքների հետ իմ ծանոթության արդյունքն էլ հենց դա լինի»: Նա հետագայում, ըստ համընկնումների ու ընտանեկան պատմագրությունների, ընդունել է 1892 թ.:

<sup>9</sup> 1997 թ. նոյեմբերի 8:

<sup>10</sup> «Լինում է, չի լինում», մշակումը՝ Դեհբաշ Ալիի, 379-րդ հատված՝ «Մոհամմադալի Ջամալզադեի կենսագրությունը», աղբյուրը՝ «Ֆարհանգեստան» ամսագիր, Գ տարի, աշուն, Թեհրան, 1997:

Այս ժամանակաշրջանի գրական ստեղծագործությունների կարևոր առանձնահատկություններից են քաղաքական մտքերի արտահայտումը և գաղափարախոսական խոհերի պարզաբանումը ժողովրդական լեզվով և հասարակության բոլոր դասակարգերում ներթափանցելը: Քսաներորդ դարի պարսկական գրականության ակնառու արձակագիրներից ու Իրանի ծախսակողմյան ամենահայտնի գրողն է Մոջթաբա **Բոզորգե Ալավին**<sup>11</sup>, ում ստեղծագործություններում էլ նկատելի է այս առանձնահատկությունը: Բոզորգե Ալավին ծնվել է 1904 թ. փետրվարի 2-ին Թեհրանում: 1920 թ. ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Գերմանիա և 1928 թ. ավարտում Մյունխենի համալսարանը և վերադառնում Իրան: 1933 թ. հրատարակեց «Չամեղան» («Ճամպրուկ») կարճ պատմվածքների ժողովածուն: 1935 թ. կալանավորվեց և բանտում մնաց մինչև Ռեզա Շահի իշխանության ավարտը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Բոզորգե Ալավին հայացքներով հակվեց դեպի Խորհրդային Միության կոմունիստական գաղափարախոսությունը: Կարճ ժամանակ անց՝ «մորդադի 28-ի» (19 օգոստոսի) հեղաշրջման և Մոհամմադ Մոսադեղի ձախողումից հետո՝ 1951 թ., մեկնեց Իրանից: «Նրա աչքերը» վեպը, որը նրա լավագույն ստեղծագործություններից է համարվում, տպագրվել է դրանից հետո՝ 1952 թ.<sup>12</sup>: Թեև Բոզորգե Ալավին անմիջականորեն աշխատանք չի կատարել մանկապատանեկան գրականության ոլորտում, սակայն նրա գրելու ոճը, ինչպես նաև նրա սոցիալական ու քաղաքական հայացքները կարելի է տեսնել հետագայում ձևավորված մանկապատանեկան գրական ստեղծագործություններում:

**Սադեղ Հեղայաթն** այն մարդկանցից է, ով շատ մտերիմ էր Բոզորգե Ալավիի հետ և նաև աշխատանքներ է կատարել մանկապատանեկան գրականության ասպարեզում: Մեր կարծիքով այս երկու հեղինակները փոխադարձաբար ազդել են միմյանց վրա<sup>13</sup>, և երկուսն էլ մեծ ներդրում ունեն Իրանում մանկապատանեկան գրականության զարգացման գործում:

<sup>11</sup> **Բոզորգե Ալավի**, ժամանակի ընթացքը, թարգմ.՝ Գոլմոհամադի Ա. և Ֆաթահի Մ., «Նեգահ» հրատ., Թեհրան, 2006:

<sup>12</sup> **Աբրահամյան Ե.**, Իրանը՝ երկու հեղափոխությունների միջև, թարգմ.՝ Գոլմոհամադի Ա. և Ֆաթահի Մ., «Նեյ հրատ.», ԺԳ տպ., Թեհրան, 2007:

<sup>13</sup> Իհարկե, Սադեղ Հեղայաթի ու Բոզորգե Ալավիի փոխազդեցությունը պահանջում է առանձին ու առավել լուրջ հետազոտություն: Նշված կարծիքը ձևավորվել է այս երկու հեղինակների կենսագրականի ու աշխատությունների ընդհանուր դիտարկման արդյունքում:

Սադեղ Հեդայաթը ծնվել է Թեհրանում 1903թ. փետրվարի 17-ին: 1909 թ. իր տարրական ուսումնառությունն սկսել է 6 տարեկան հասակում Թեհրանի հոգևոր վարժարանում: 1914 թ. դպրոցում հրատարակեց «Ննջեց-յալների կանչը» պատի օրաթերթը, իսկ միջնակարգ ուսումը շարունակեց «Դարոլֆոնուն» ավագ դպրոցում: Սակայն 1915 թ. աչքի հիվանդության պատճառով թողեց դպրոցը և 1916 թ. ուսումը շարունակեց ֆրանսիացիների «Սեն Լուի» դպրոցում: Դրանից հետո ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Բելգիա և Ֆրանսիա, սակայն ուսումն անավարտ թողնելով՝ վերադառնում է Թեհրան: Այդ ընթացքում ինքնասպանության փորձ է կատարում, որը ձախողվում է, և իր առաջին կարճ պատմվածքները գրում է նույն տարում: Դրանցից են «Մաղլեն» կարճ պատմվածքը, «Ողջ-ողջ թաղվածը» ժողովածուն և «Սասանի դուստր Փարվինը» պիեսը: 1930 թ. նա առավել ընդլայնված գրական գործունեություն է սկսում և մուտք է գործում գրականության ավելի նոր ոլորտներ: Ֆրանսերենից թարգմանում է կարճ պատմվածքներ Անտուան Չեխովից, Գաստոն Շերոյից, Արթուր Շնիցլերից և դրանք տպագրում է «Աֆսանե» (Առասպել) ամսագրում: Հենց այդ ժամանակաշրջանում են տպագրվում նրա «Միրզա Յադուլլահի սրտի խոսքը»<sup>14</sup> և «Արդյունքով հեքիաթը»<sup>15</sup> ստեղծագործությունները: «Օսանե» գիրքը բանահյուսությունից հավաքագրված առաջին ժողովածուն է, որը Հեդայաթն ի մի է բերել հենց այդ տարվա ընթացքում: Պարսկերենի բանահյուսության տաղերը պարունակող այս գրքի տպագրությունն ու հրատարակումը մի կողմից նման է Գերմանիայում Գրիմ եղբայրների աշխատանքին և հանգեցրեց նրան, որ առավել մեծ ուշադրության արժանանա բանահյուսության կարևորությունը երեխաների ու դեռահասների համար: 1938 թ. «Մուսիդի» («Երաժշտություն») ամսագրի հետ Սադեղ Հեդայաթի համագործակցության արդյունքում ամսագրում տպագրվեցին պարսկական որոշ առասպելներ ու ասացվածքներ, այդ թվում՝ «Մկնիկը», «Շանգուլն ու Մանգուլը» (ուլիկները), և, մեր կարծիքով, նա, այսպիսով, նախադրյալներ ստեղծեց, որպեսզի մանկական գրականությունն արժանանա հանրության ուշադրությանը:

Տպագրվել են նաև Սադեղ Հեդայաթի այլ ստեղծագործություններ, որոնք միզուցե նպատակահարմար չեն երեխաների համար, սակայն կարո-

<sup>14</sup> Այն հետագայում հայտնի դարձավ «Մոհալլել» (թարգմ. Երեք անգամ ամուսնալուծված կնոջ հետ ամուսնացող տղամարդը, որն այս քայլով օգնում է, որ կինն ամուսնանա նախկին ամուսնու հետ) անվանումով:

<sup>15</sup> Այս գիրքը նախնիների խրատական հեքիաթների պարողիան (ծաղրերգություն) է:

ղացել են ընթերցողներ գտնել դեռահասների շրջանակներում: Հեղայաթի կարճ պատմվածքներից են՝ «Երեք կաթիլ արյունը», «Մուֆն ու ստվերը» և «Թափառող շունը»: Սադեղ Հեղայաթի արժեքավոր ստեղծագործություններից են նաև «Արարման առասպելը», «Մարգարտյա թնդանոթը», «Անբանությունը», «Տիկին Ալավիեն», «Կոյր բուն» և այլն:

**Ֆազյոլահ Սոբհի Մեհթադին** այն մարդկանցից է, ով սկզբում իր աշխատանքն սկսեց Սադեղ Հեղայաթի հետ «Երաժշտություն» ամսագրում, և չի բացառվում, որ իր գրչի արվեստում ընդօրինակած լինի նրան: Նա ռադիոյի աշխատանքներն սկսվելուց հետո մուտք է գործում այդ լրատվամիջոց և 1939 թ. իր աշխատանքն է սկսում ռադիոյի մանկական ծրագրում՝ որպես հեքիաթասաց: Նա այս հաղորդման միջոցով Իրանի մանուկներին խնդրեց, որ գրի առնեն իրենց շրջանների պատմվածքները և ուղարկեն իրեն: Այս կոչի արգասիքը 11 հատոր գրքերն են, որոնցից կարևորագույններն են՝ «Ամու-Նոռուզի առասպելները», «Բալխի Դիվանը» և «Հոր պատգամը»: Որոշ մասնագետներ Սոբհի Մեհթադիի աշխատանքը՝ Իրանում մանկական բանահյուսական առասպելների հավաքագրումը, համեմատում են Եվրոպայում Շառլ Պերոյի աշխատանքների հետ:

**Սադեղ Չուբաքը** ևս այս ժամանակաշրջանի գրողներից է, ով գործունեություն է ծավալել նաև մանկապատանեկան գրականության ոլորտում<sup>16</sup>: Չուբաքը պարսկական կարճ պատմվածքի առաջին հեղինակներից է և Մոհամմադալի Զամալզադեից ու Սադեղ Հեղայաթից հետո նրան կարելի է անվանել Իրանի արդի պատմվածքների առաջատար գրողներից մեկը: Նա տիրապետում էր անգլերեն լեզվին և զբաղվում էր նաև թարգմանությամբ: Նա պարսկերեն է թարգմանել «Փինոքիոյի» հայտնի պատմությունը՝ «Փայտյա խաղատիկնիկը (մարդուկը)» վերտառությամբ: Նրա ջանքերով է թարգմանվել նաև Էդգար Ալլան Պոյի «Ագռավը» բանաստեղծությունը: Նա մեր կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածի սկզբում է ձևավորվել, իսկ դրա վերջին տարիներին արդեն իսկ լիովին հայտնի գրող էր: Սակայն իր համբավի գլխավոր մասնաբաժինը ձեռք բերեց սահմանադրությանը հաջորդող շրջանի գրողների երկրորդ սերնդի շրջանակներում: Հետևաբար, ըստ իս, նրան և սահմանադրությանը հաջորդող շրջանի մի քանի այլ գրողների պետք է

<sup>16</sup> Ծնվել է 1915 թ. և մինչև 1950 թ. հրատարակել է հետևյալ աշխատանքները՝ «Մարիոնետների թատրոնը», «Ինչո՞ւ փոթորկեց ծովը», «Կապիկը, որի վարժեցնող-պարեցնողը մահացել էր»:

համարել երկու սերունդները միմյանց հետ կապող կամուրջ:

Վերոնշյալ հեղինակների շարքից բացի, ովքեր իրենց արժանի ներդրումն ունեցան Իրանի նորագույն գրականության և հատկապես մանկապատանեկան գրականության զարգացման ու ծաղկման մեջ, ոմն Միրզա Ջափար Ասգարզադե ներկայացվում է որպես Իրանում մանկական նորագույն գրականության հայր, ով, մեր կարծիքով, այդպես է կոչվել՝ ելնելով այն հանգամանքից, որ առաջին անձն է, որ հատուկ մոտեցմամբ քայլեր նախաձեռնեց Իրանում մանկապատանեկան գրքերի հրատարակման ու ստեղծման ուղղությամբ:

Ջափար Ասգարզադեն ծնվել է 1885 թ. Երևանում<sup>17</sup>, որն այսօր Հայաստանի մայրաքաղաքն է: Նա իր երիտասարդ տարիքի սկզբնական շրջանում Թավրիզում մի մանկապարտեզ հիմնադրեց «Մանկական պարտեզ» անունով և ստեղծագործություններ վերարտադրեց ու գրեց երեխաների համար: 1927 թվականից ի վեր, բազում դժվարություններով հանդերձ, սկսեց մանկական գրքերի հրատարակումը, որոնց պատկերազարդումները կատարում էր ինքն անձամբ: Նրա գրքերից «Ձնե հայրիկը» հետագայում մանկապատանեկան մտավոր դաստիարակչական կենտրոնի կողմից հրատարակվեց, և գրքի համաշխարհային խորհուրդն այն ընտրեց որպես մանկական լավագույն գիրք: Նա ժողովրդական որոշ պատմվածքներ մանկապարտեզում բեմականացնելու նպատակով ներկայացրել է պիեսի տարբերակով: Այդ պիեսներից են «Ծերուկն ու բողկը», «Տիկին խավարասերը» և «Գայլն ու հովիվը»:

## **ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА ПЕРВОГО ПОКОЛЕНИЯ ПОСТКОНСТИТУЦИОННОГО ПЕРИОДА ИРАНА (1920-1950гг.)**

ФИРУЗИМОГАДАМ МАХМУД<sup>18</sup> (ИРАН)

Статья посвящена изучению детской литературы, созданной в период, последовавший за принятием Конституции Ирана. В частности, исследуется детская литература первого поколения периода с 1920 по 1950 гг.

<sup>17</sup> **Բաղչեբան Ջ.**, Ջափար Բաղչեբանի կենսագրությունը (մենագրություն), «Արժանգ» հրատ., Թեհրան, 1977: «Հայրս Ուրմիո (Ռեզաիյեի) շրջանից էր, և մեր ընտանիքը տեղափոխվել էր Երևան՝ հրուշակագործությամբ ու շինարարական աշխատանքներով զբաղվելու նպատակով»:

<sup>18</sup> Իրան, Թերբատե Գեյդարեյխ, ֆիլիալ Թերբատե Գեյդարեյխ Իսլամского университета Азад, отделение (кафедра) персидского языка и литературы (председатель).



**Ключевые слова** – Иран, детская литература, 1920-1950 гг.

**THE FIRST GENERATION OF CHILDREN'S LITERATURE IN POST-  
CONSTITUTIONAL IRAN (1920-1950)**

FIRUZIMOGHADAM MAHMUD<sup>19</sup> (IRAN)

The article studies children's literature in the post-constitutional period of Iran. The study is particularly focused on the first generation of children's literature, created during the period between 1920 and 1950 after the adoption of the Constitution of Iran.

**Key words** – Iran, children's literature, period 1920-1950.

---

<sup>19</sup> Iran, Terbathe Heydarieh, Torbathe Heydarieh branch of the Islamic Azad University, Department of Persian language and literature (chair).

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԿՐՈՐԴ  
ՍԵՐՆԴԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
(1950-1980ԹԹ.)**

**ՖԻՐՈՒՋԻՄՈՂԱԴԱՄ ՄԱՀՄՈՒԴ՝ (ԻՐԱՆ)**

Հոդվածը նվիրված է մանկական գրականության ուսումնասիրությանը Իրանի սահմանադրական շրջանից հետո: Ուսումնասիրության առարկա է դարձել մասնավորապես սահմանադրությանը հաջորդող երկրորդ սերնդի մանկական գրականությունը, որն ընդգրկում է 1950-1980-ական թվականները:

**Բանալի բառեր** – Իրան, մանկական գրականություն, 1950-1980-ական թվականներ:

Իրանում քսաներորդ դարի երկրորդ կեսի սկզբին ի հայտ եկան սահմանադրությանը հաջորդող շրջանի երկրորդ սերնդի գրողները: Այդ ժամանակաշրջանն ընդգրկում է 1950-1980 թթ.: Այդ ժամանակ առնչվում ենք մանկապատանեկան գրականության ասպարեզում լուրջ շարժման հետ: Թեպետ սկզբում տեղի ունեցավ «մորդադի 28-ի» (19 օգոստոսի) հեղաշրջումը, սակայն ընդհանուր առմամբ այդ ժամանակ Իրանը մասամբ քաղաքական ու սոցիալական կայունություն էր ձեռք բերել, և երեխաներին ու դեռահասներին ուշադրություն դարձնելը ներկայացվում էր որպես կառավարության լուրջ ծրագրերից մեկը: Այդ ժամանակ հիմնադրվեց «Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնը»<sup>2</sup>, և մանկապատանեկան գրականությանն անկախ ինքնություն տրվեց: Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնը հիմնադրվեց՝ սոցիալական, մշակութային ու արվեստի զարգացումներից ու պահանջներից ելնելով և իրանցի մանուկների ու դեռահասների գրականությունը, արվեստն ու մշակութային արտադրանքը կազմակերպելու նպատակով: Այս ժամանակաշրջանում ի հայտ եկան այնպիսի գրողներ, գեղանկարիչներ ու արվեստագետներ, ովքեր մասնավորապես նվիրվեցին մանկա-

---

<sup>1</sup> Իրան, Թերբաթե Հեյդարիյեհ, Իսլամական Ազադ համալսարանի Թերբաթե Հեյդարիյեհ մասնաճյուղ, պարսից լեզվի և գրականության բաժին (ամբիոն):

<sup>2</sup> **Թուրան Մ.**, Մանկական գրականության դանդաղ ընթացքը, Մանկան գրքի խորհուրդը, Թեհրան, 1978, էջ 25, 27:

պատանեկան գրականությանը: Ձևավորվեցին հատուկ մանուկների համար նախատեսված ամսագրեր, բազմաթիվ պետական ու մասնավոր հիմնարկներ ծրագրեր մշակեցին մանկապատանեկան ոլորտի աշխատանքների համար: Պարսկական չափածոյի ու արձակի վերաբերյալ փոփոխություններ տեղի ունեցան, պարսկական բանաստեղծության մեջ նոր կաղապարներ ստեղծվեցին, և պատմվածքի ժանրը նոր ուղի որդեգրեց:

Մանկական գրականության երկրորդ սերնդում կարելի է հանդիպել այնպիսի կերպարների, ովքեր հասակ առան առաջին սերնդի մշակութային ու գրական միջավայրում և նույնիսկ դասեր սերտեցին ու ընդօրինակեցին այդ շրջանի գրողներից, սակայն վերջում նոր ուղի բացահայտեցին և նպաստեցին տարբեր կաղապարով ու ձևաչափով մանկապատանեկան գրականության ձևավորմանը:

Մանկավարժ, սոցիալական քննադատ, թարգմանիչ, պատմվածքների հեղինակ և ատրպատական ֆուլկլորի բնագավառի հետազոտող Սամադ Բեհրանգին (1938-1968) համարվում է մանկական գրողներից, և նրա «Սև ձկնիկը» գիրքը երկար ժամանակ «Իրանի ժողովրդական ֆիդայի պարտիզանների կազմակերպության» ոչ պաշտոնական հռչակագրի դերն էր խաղում: Սամադի ստեղծագործությունների ու խոհերի արդյունավետ կյանքը շատ ավելի ձգվեց, քան նրա կարճատև կյանքը: Նրա պատմվածքները, որոնց զովագրով էր երբեմն զբաղվում Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնը, երիտասարդ սերնդի մեջ, տարածեցին եսամոլությունից հեռու ինչ-որ հերոսականություն<sup>3</sup>:

1952 թ. «մորդադի 28-ի» (օգոստոսի 19-ի) հեղաշրջման հետևանքով, քաղաքական զարգացումներին զուգահեռ, ուշագրավ են պարսից լեզվում մանկապատանեկան գրականության մեջ տեղի ունեցած երեք կարևոր իրադարձություններ:

Առաջինն Ազադ Ռահնամայի կողմից Իրանի մանկավարժական բարձրագույն դպրոցում «Սեփիդեյե ֆարդա» (վաղվա արշալույսը) ամսագրի հիմնադրումն էր, որի շրջանակներում Բաղեր Հուշարի հետ համագործակցության արդյունքում հող նախապատրաստվեց՝ համալսարանական ու ակադեմիական հետազոտություններում մանկական գրականության տեսական խնդիրներն արծարծելու համար: Բաղեր Հուշարը պարզ ու քաղցրահունչ

---

<sup>3</sup> Azimi F., Quest for democracy in Iran C: a century of struggle against authoritarian rule, USA, 2008, p. 318.

արձակով ավելի քան հիսուն կարճ աշխատանքներ ունի 7-12 տարեկան երեխաների համար և նախադրյալներ ստեղծեց մանկավարժական բարձրագույն դպրոցում «մանկական գրականություն» առարկայի դասավանդման համար: Նույն այդ քայլերի արդյունքում Թուրան Միրհադին՝ որպես մոդեռնիզմի համակրող անձնավորություն, արժեքավոր աշխատանքներ կատարեց երեխաների ու դեռահասների համար ազատ ու գիտակից կրթության ուղղությամբ և մեծապես նպաստեց Իրանում մանկական գրականության նպատակներն առաջ մղելու գործին:

Երկրորդը «Ֆրենկլինի» անվան կազմակերպության գործունեությունն էր պարսկալեզու երեխաների ու դեռահասների համար արևմտյան գրողների գրական ստեղծագործությունների թարգմանության կապակցությամբ, որի շրջանակներում, համագործակցելով «Ամիր Քաբիր» հրատարակչության հետ, բազմաթիվ ստեղծագործություններ թարգմանվեցին պարսկերեն, այդ թվում՝ Հանս Քրիստիան Անդերսենի պատմվածքները, որի արդյունքում թարգմանվեցին ավելի մեծ թվով աշխատանքներ, օրինակ՝ «Գուլիվերի ճանապարհորդությունները», «Ռոբինզոն Կրուզոն», «Հեքլբերի ֆինի արկածները» և այլն, այսպիսով, հող նախապատրաստելով պարսկերենով բազմաթիվ պատմվածքների ստեղծման համար<sup>4</sup>:

Եվ երրորդը մանուկների համար հին պարսկական ստեղծագործությունների վերաշարադրումն էր, որը հանգեցրեց մանուկների համար հատուկ լեզվական առանձնահատկությունների ստեղծմանն այդ լսարանի գրական աշխատություններում: Էսան Յարշաթերը գրի է առել «Հնադարյան Իրանի պատմվածքները» և «Շահնամեի պատմվածքների ընտրանին», իսկ Զահրա

<sup>4</sup> Իհարկե, թարգմանչական աշխատանքներն սկսվել էին դեռևս նախքան այս ժամանակաշրջանը, սակայն երեխաների համար թարգմանություններին սկիզբ դրվեց այս շրջանում: Առաջին աշխատությունները, որոնք պարսկերեն թարգմանվեցին, Տոլստոյի «Սիրեք միմյանց» և «Նախանձի վերջը մահն է» աշխատություններն էին: Այդ երկու ստեղծագործություններն էլ Աբդոլաահիմ Խալիլային 1909 և 1910 թթ. թուրքերենից թարգմանել է պարսկերեն: Պուշկինի առաջին պատմվածքները տպագրվեցին «Առասպել» ժողովածուներում, «Տանձ տատիկը» Սոլթան Շարաֆեդին Ղահրամանիի և «Մեկ փամփուշտը» Միրզա Հոսեյնխան Անսարիի թարգմանությամբ, երկու աշխատանքներն էլ տպագրվել են 1929 թ., իսկ «Կապիտանի աղջիկը» Փարվիզ Նաթել Խանկարիի թարգմանությամբ՝ 1930 թ.: Չեխովին առաջին անգամ իրանցիներին ներկայացրեց Սադեղ Հեդայաթը: Ռուս գրականության հայր Մաքսիմ Գորկուց Իրանում տպագրված առաջին պատմվածքը «Ժամն» էր, որը Յուսեֆ Էթեսամիի թարգմանությամբ հրատարակվեց 1910 թ. «Բահար» ամսագրում:

Խանլարին վերաշարադրեց «Պարսկերեն հրապուրիչ պատմվածքները»: Այստեղ ավելի շատ փայլեց Մեհդի Ազառյազդիի աստղը, և նրա «Լավ պատմվածքներ՝ լավ երեխաների համար» ստեղծագործությունը հանրության ընդունելությանն արժանացավ:

Մեհդի Ազառյազդին ծնվել է 1922 թ. մարտի 18-ին Յազդ քաղաքում: Գրախանութում աշխատելով՝ նա ծանոթացավ բանաստեղծության ու գրականության ոլորտի նշանավոր դեմքերի հետ և կարճ ժամանակ անց տեղափոխվեց Թեհրան և իր համաքաղաքացի Հոսեյն Մաքիի միջնորդությամբ սկսեց աշխատել Նասեր Խոսրո փողոցում գտնվող «Հաջ Մոհամմադալի Էլմիի» անվան տպարանում: 1957 թ. տպագրվեց նրա «Լավ պատմվածքներ՝ լավ երեխաների համար» վերտառությամբ ութհատորյակի առաջին հատորը: Այդ գրքի համար նա արժանացավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մրցանակի: Նրա գրչին է պատկանում նաև «Նոր պատմվածքներ՝ հին գրքերից» ժողովածուն: Այս երկու ժողովածուներն արժանացան Փահլավի հիմնադրամի «Տարվա գիրքը» թագավորական մրցանակին: Մեր կարծիքով այս աշխատանքներին բնորոշ պարզ ու սահուն արձակը և ժողովրդի սոցիալական ու բարոյական մոտեցումների վրա հիմնված հասկացություններն այդ գրքերին հաջողություն բերեցին: Ազառյազդին իր մահկանացուն կնքեց 2009 թ. հուլիսի 9-ին, և նրա մահվան օրն Իրանում հայտարարվել է «Մանկական գրականության օր»:

Սահմանադրությանը հաջորդող հինգերորդ տասնամյակը, այսինքն՝ 1960-ականները, առանձնահատուկ նշանակություն ունի Իրանի հասարակության սոցիալական կյանքում: Այս ժամանակահատվածում մեծ թափ առավ քաղաքային կյանքը, և նկատելիորեն զարգացավ հասարակության միջին խավը: Կրթական համակարգում և դասագրքերում հիմնական փոփոխություններ կատարվեցին: Տպագրվեցին տարրականի դպրոցականների համար «Դպրոցականի պարբերականը» ժողովածուներ: Այդ պարզ ու մանկական ժողովածուները տպագրվում էին «Ֆրենկլինի» և ուսումնադաստիարակչական մարմնի կողմից, և այդ ուղղությամբ համագործակցում էին անվանի դեմքեր Փարվին Դոլաթաբադին և Մահմուդ Քիանուշը:

Մահմուդ Քիանուշը ծնվել է 1934 թ. Մաշհադ քաղաքում: Դեռևս պատանի հասակից սկսել է գրել բանաստեղծություններ ու պատմվածքներ և նույնիսկ փորձել է թարգմանություններ անել: Նրա աշխատանքներից են կարճ պատմվածքների երեք ժողովածուներ՝ «Այնտեղ մեկը չկար», «Եվ աղետն եկավ, և ապաքինում եկավ» և «Ողորկ ու փոս գավաթում», մեկ երկար պատմվածք՝ «Զբաղված մարդը», ինչպես նաև վեպեր՝ «Խոսք ու լռություն»,

«Ձյուն ու արյուն», «Ջրասույզն ու ծուկը», և մեկ փրիստփայական վեպ՝ «Ոգու հորիզոններում»: Ինչպես նաև թարգմանել է Ջան Շտեյն Բեկից /John Ernst Steinbeck, Jr/ «Անծանոթ Աստծուն» /To a God Unknown/, Դ.Հ. Լորուենսից /David Herbert Lawrence/ «Փախուստի դիմած կինը», Սամուել Բեքեթի /Samuel Barclay Beckett/ «Մալոնը մահանում է» /Malone Dies/ և Օժեն Օնեյլից /Eugene Gladstone O'Neill/ «Յերեկի շրջագայությունը գիշերում» /Long Day's Journey into Night/ ստեղծագործությունները: Նա նաև աշխատանքներ է տարել գրական քննադատության ուղղությամբ, սակայն այդուհանդերձ մանկապատանեկան գրականության հետազոտողներից շատերն Իրանում Մահմուդ Քիանուշին ներկայացնում են որպես «Իրանում մանկական բանաստեղծության հայր»: Քիանուշի համբավը մանկական բանաստեղծության բնագավառում ավելի շատ ստացվել է դպրոցական պարբերականներում նրա գործունեության շնորհիվ: «Փեյք» («Սուրհանդակ») ամսագրերը, որոնք տպագրվում էին 1960-1970 թթ. ուսումնական հրատարակչության գրասենյակի կողմից դպրոցականների, մանկավարժների ու ընտանիքների համար, և այսօրվա «Ռոշդ» («Ջարգացում») ամսագրերը դրանց շարունակությունն են՝ ավելի քան մեկ միլիոն ու յոթ հարյուր հազար տպաքանակով, և երկու շաբաթը մեկ բաժանվում էին դպրոցներում: Իրականում այդ ժամանակաշրջանում բազմաթիվ դպրոցականներ իրենց դասագրքերից ավելի կարդում էին պարբերականները: Բանաստեղծություններ, որոնցից շատերը Մահմուդ Քիանուշի ստեղծագործություններն էին:

Մահմուդ Քիանուշը միգրացեալ ակամայից մանկապատանեկան բանաստեղծությունը հիմնովին հեղաշրջեց: Քիանուշի գրառումների ուսումնասիրությունից կարելի է հասկանալ, որ նա գտնում է, որ չպետք է մանկական բանաստեղծությունը գրել մանկան կամ մանկական լեզվով, այլ մանուկների համար ստեղծագործող բանաստեղծը պետք է սիրի երեխաներին և գիտակցի, որ վերադառնալով իր մանկության շրջան՝ չի կարող կապ հաստատել մանուկների և մանկական աշխարհի հետ: Քիանուշը, ուշադրություն դարձնելով բովանդակությանը, միաժամանակ մեծապես կարևորում է նաև մանկան բանաստեղծության տեխնիկան ու երաժշտությունը: Քանի որ գտնում է, որ երեխաների համար խաղից կարևոր բան չկա, և խաղին անհրաժեշտ է ակտիվ ու շարժումներով հագեցած երաժշտություն: Արդյունքում հանգն ու ներդաշնակ վերջավորությունները, որոնք ինքնին երկու տեսակի երաժշտություն են, անհրաժեշտ են մանկական բանաստեղծության համար:

Իրանում մանկական գրականության երկրորդ սերնդի գրողների շարքում հանդիպում ենք այնպիսի հեղինակների, ովքեր թեպետ չեն ներկայացել որպես բանաստեղծ կամ պատմվածքների հեղինակ, սակայն առանց նրանց ներկայության հնարավոր չէին դառնա մանկապատանեկան գրականության ծաղի բեղմնավորումն ու բերքատվությունն այսօրվա տեսքով: Թուրան Միրհադին այնպիսի կերպար է, ում շնորհիվ կատարելագործվեցին Իրանում մանկապատանեկան ժամանակակից գրականության հիմքերը:

Թուրան Միրհադին Ֆրանսիայում գտնվելու ժամանակ բացահայտեց մանկական գրականության գիտական ու սոցիալական կողմերը: Այդ երկրում և կրթական համակարգի շրջանակներում նա բացահայտեց երեխաների սոցիալական ու մշակութային զարգացման գործում մանկական գրականության ու արվեստի անզուգական դերը, և դրանից հետո, երբ վերադարձավ Իրան, այդ վաստակած փորձառությունը զրույցների տեսքով կիսեց իր պատանեկան շրջանի ընկերոջ՝ Լեյլա Իմենի հետ: Ապա սկսած 1952 թվականից՝ այդ երկուսը հայտնվեցին Ազադ Ռահնամայի կողքին, ով հրատարակում էր «Սեփիդեյե Ֆարդա» ամսագիրը: Նրանց աշխատանքի արդյունքը 1955 թ. Թեհրանի համալսարանի գեղարվեստի ֆակուլտետում կազմակերպված մանկական գրքերի առաջին ցուցահանդեսն էր: Այդ ցուցահանդեսը կարևորվում է նրանով, որ այն ժամանակաշրջանի մշակութային հասարակությանը հիշեցրեց մանկական գրքերի ու գրադարանների պակասի մասին: Դրանից հետո էր, որ մանկական գրականության տարածման գծով շարժման սկիզբը դրվեց, որը ոչ պաշտոնական ու ոչ կենտրոնացված տարբերակով շարունակվեց մինչև 1961 թ. «Մանկան գրքի խորհրդի» հիմնադրումը<sup>5</sup>:

Իրանում մանկան գրքի խորհրդի ձևավորումը նշանակում է երկրում մանկական գրականության ինստիտուտի պաշտոնականացում: Այդ ինստիտուտի հիմնադրումից ի վեր, այսինքն՝ ավելի քան կես դար, Թուրան Միրհադին մեծ դեր է ունեցել Իրանի մանկական գրականության ուղղորդման ու առաջնորդման հարցում ազգային ու միջազգային ասպարեզներում: Գերմաներեն, ֆրանսերեն ու անգլերեն լեզուներին տիրապետելու հանգամանքը նրան վեր հանեց ազգային սահմաններից, և նա ներկայացավ որպես առանց սահմանների կերպար: Թուրան Միրհադին 1960 և 1970-ականներին մաս-

<sup>5</sup> Մոհամմադի Մ., Ղաիմի Ջ., Իրանի մանկական գրականության պատմություն, հատոր Ե, «Զիստա» հրատ., Թեհրան, 2002, էջ 213-217:

նակցել է մանկական գրականության միջազգային համաժողովներին և որպես «Հանս Քրիստիան Անդերսենի» համաշխարհային մրցանակի հանձնաժողովի անդամ:

Սահմանադրությանը հաջորդող վեցերորդ տասնամյակը (1970-1980 թթ.) այն ժամանակաշրջանն էր, որի սկզբնական տարիներին արդյունավորվեցին մանկապատանեկան գրականության այգում տնկած բազմաթիվ ծառեր: Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնը մեծ հաջողություններ էր արձանագրել մանկական գրական ու արվեստի ստեղծագործությունների ոլորտում: Մանկական գրականության ասպարեզում ստեղծագործելը ներկայացվել էր որպես նուրբ, միաժամանակ մասնագիտական ու գիտակից մոտեցում պահանջող արվեստ, և բոլորը, հատկապես կրթված խավը, բացահայտել էր երեխաների կյանքում դրա կարևորությունը: Եվ օրավոր աճում էր մանկական գրականության հեղինակների թիվը: Այս ժամանակահատվածում, բացի մանուկների համար ոտանավորներից ու պատմվածքներից, մանկական պիեսները, ֆիլմերն ու նկարչությունը ևս զգալի զարգացում ապրեցին: Այն համընկնում էր այս հետազոտության հեղինակի մանկության շրջանի հետ, երբ մանկական մտավոր զարգացման կենտրոնում ծանոթացել է արվեստի տեսակներին, ինչպես նաև գրականության աշխարհին: 1970 թ. հիմնադրվեց Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնի կինեմատոգրաֆիայի ստորաբաժանումը: Աբբաս Քիառոստամին, Նասեր Թաղվային, Ամիր Նադերին, Բահրամ Բեյգային, Ֆարշիդ Մետալային և մանկապատանեկան արվեստի ու գրականության, գեղանկարչության, թատրոնի, կինոյի և մանկապատանեկան գրականության հետ առնչվող այլ ոլորտների կարկառուն դեմքերից շատերն այդ ժամանակաշրջանում աշխատել են այս կենտրոնում:

Պատմվածքների հեղինակ Հուշանգ Մորադի Քերմանին այդ շրջանում ստեղծեց «Մաջիդի պատմվածքները»: Մոսթաֆա Ռահմանդուստը, Մոհամմադռեզա Սարշարը (հայտնի է Ռեզա Ռահգոզար մականունով), Փարվին Դոլաթաբադին, Մոնիրու Ռավանիփուրը, Մանուչեհր Էիթերամին, Ահմադռեզա Ահմադին և ուրիշներ այս ժամանակաշրջանի կարկառուն գրողներից են:

Մանուչեհր Էիթերամին ծնվել է 1942 թ. Թեհրանում: Նա պարսից լեզվի հաջողակ հումորիստներից է, ով մեծ հաջողություն է ունեցել նաև ման-



կապատանեկան գրական ստեղծագործություններում: Նա կատակերգության ժանրով լրջորեն սկսեց զբաղվել 1957 թվականից «Թոֆիդ» ամսագրի հետ՝ միաժամանակ համագործակցելով այլ թերթերի, ինչպես նաև ռադիո-հեռու-տատեսության հետ: Նրա մականունով ստորագրություններից են «Մ. Մորաքրոջ տղա» և «Ա-էս գործի մարդը» տարբերակները: Էիթերամին այդ ստեղծագործությունների մի հավաքածուն տպագրեց «Ջամեոլիեքայաթ» («Հեքիաթների ժողովածու») գրքում և կազմակերպեց նաև իր հումորային պատմվածքների մի հատվածի տպագրությունը «Երեխաներ, ինձ էլ խաղի մեջ ընդունեք» ժողովածուում: Մանուչեիր Էիթերամին իր կենդանության օրոք գրի է առել և հրատարակել ավելի քան հիսուն անուն գիրք երեխաների համար, որոնցից կարելի է նշել «Հասանի չէ էի, կարգի՞ն տղա...», «Աքաղաղ չէ էի, իրական ժամացույց...», «Արջն ու մեղրի կարասը» և «Գողն ու ճարպիկ հավը» ստեղծագործությունները:

Նշված շրջանի վերջին տարիները համընկնում են Իրանի մանկապատանեկան գրականության մեջ հիմնական փոփոխությունների հետ: 1978 թ. կործանվեց Մոհամմադեզա Փահլավիի թագավորական իշխանությունը իսլամական հեղափոխության հաղթանակի և Իսլամական Հանրապետության համակարգի ստեղծման արդյունքում: Եվ Իրանի ժամանակակից շրջանի գրողների շարքում նոր սերունդ ի հայտ եկավ:

## ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА ВТОРОГО ПОКОЛЕНИЯ СЛЕДУЮЩАЯ ЗА КОНСТИТУЦИЕЙ (1950-1980гг.)

ФИРУЗИМОГАДАМ МАХМУД<sup>6</sup> (ИРАН)

Статья посвящена изучению детской литературы, после конституционного периода Ирана. Исследование было сфокусировано, в частности, на детской литературе второго поколения после конституции, которая охватывает период 1950-1980 годов.

**Ключевые слова** – Иран, детская литература, 1950-1980гг.

---

<sup>6</sup> Иран, Тербате Гейдарейх, филиал Тербате Гейдарейх Исламского университета Азад, отделение (кафедра) персидского языка и литературы (председатель).

**THE SECOND GENERATION OF CHILDREN'S LITERATURE  
FOLLOWING THE CONSTITUTION (1950-1980)**

FIRUZIMOGHADAM MAHMUD<sup>7</sup> (IRAN)

The article is dedicated to the study of children's literature in post constitutional era of Iran. The object of the study is particularly the second generation of children's literature following the constitutional period, dated from 1950 to 1980.

**Key words** – Iran, children's literature, 1950-1980 period.

---

<sup>7</sup> Iran, Torbathe Heydarieh, Torbathe Heydarieh branch of the Islamic Azad University, Department of Persian language and literature (chair).

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՇՏՈՆ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԱԴԻԼԻՄԱՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Հոգվածում քննության է առնվում պաշտոն անվանող բառերի իմաստաբանական առանձնահատկությունները: Հատկապես ուշադրություն է դարձված այդ բառերի իմաստափոխությանը, հոմանիշների ձևավորմանը. բառերի հոմանիշային շարքեր կազմվել են հնաբանությունների, նորաբանությունների, փոխառությունների միջոցով: Ժողովրդի կյանքում տեղի ունեցած հասարակական-քաղաքական փոփոխությունների հետևանքով որոշակի փոփոխություններ է կրել նաև պաշտոն անվանող բառերի իմաստային դաշտը:

**Բանալի բառեր** – իմաստաբանության առանձնահատկությունները, պաշտոնների անվանումներ, հոմանիշային կապեր, իմաստափոխություն, հնաբանություններ, նորաբանություններ, հասարակական-քաղաքական փոփոխություններ, իմաստաբանական դաշտ, արևմտահայերեն-արևելահայերեն զուգակցումներ, փոխառություններ:

Իմաստաբանությունը զբաղվում է բառերի և դարձվածային միավորների բառային իմաստների և նրանց փոփոխությունների, նրանց տարբեր տեսակների ու իմաստային տարբեր հարաբերությունների, բառերի իմաստների միջև եղած փոխադարձ առնչությունների քննությամբ: Իմաստաբանական դաշտն ընդգրկում է այն բառերի ամբողջությունը, որոնք միավորվում են իմաստային ընդհանրությամբ: Այս մոտեցմամբ կարելի է իմաստաբանական խմբեր առանձնացնել ըստ տարբեր բառարանների տվյալների: Հայերենի բառապաշարի մեջ մի առանձին խումբ են կազմում պաշտոն անվանող բառերը, որոնց իմաստաբանական քննությունն արժանի է ուշադրության:

90-ական թթ. հետո Հայաստանի տնտեսական-հասարակական կյանքում տեղի ունեցած իրադարձություններն իրենց ազդեցությունը թողեցին նաև հայոց լեզվի բառապաշարի վրա: Խորհրդային շրջանում տարածված պաշ-

տոնների անվանումները փոխվեցին. միլիցիոները դարձավ ոստիկան, Լենինյան շրջանի գործադիր կոմիտեի նախագահը՝ Շենգավիթի թաղապետ, Գերագույն սովետի նախագահը՝ Աժ խոսնակ, Մինիստրների սովետի նախագահը՝ Վարչապետ, մինիստրը՝ նախարար և այլն:

Լեզվի արդի փուլի համար խորհրդային շրջանում տարածված պաշտոնների անվանումները դարձան հնաբանություններ՝ կուսկոմի քարտուղար, քաղկոմի քարտուղար, քաղսովետի նախագահ, գործկոմի նախագահ, ռայկոմի քարտուղար, գյուղսովետի նախագահ ևն, և գործածությունից դուրս մնացին՝ կապված անկախության տարիներին այդ պաշտոնների փոփոխությունների հետ. փոխվեցին ոչ միայն անվանումները, այլև գործառույթները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պաշտոն անվանող բառերը բառապաշարի մեջ մի առանձին խումբ են կազմում, և այդ բառերի քննությունը թե՛ լեզվաբանական, թե՛ հասարակական-քաղաքական տեսանկյունից որոշակի կարևորություն է ստանում: Իսկ ի՞նչ է նշանակում պաշտոն բառը: «Պաշտոն» բառի՝ էդ. Աղայանի բացատրությունը հետևյալն է. «1. Հիմնարկում՝ ձեռնարկությունում ևն մեկի ծառայության դիրքը և դրա հետ կապված պարտականություններն ու իրավունքները: 2. Ծառայության յուրահատուկ պարտականությունների ամբողջությունը՝ աշխատանքը: 3. Որևէ կարգի հանգամանքների՝ դրության ևն հետ կապված պարտականությունների ամբողջությունը: 4. Տվյալ համակարգի մեջ նրա միավորների հատուկ դերը՝ գործառույթը /ֆունկցիան/: Ենթակայի՝ ստորոգյալի՝ որոշչի ա.։ 5. Պաշտամունք: 6. Ծառայության տեղ, հաստիք: 7. Դեր՝ իբրև որևէ բանի ծառայելը»:

Մեր ուսումնասիրության նպատակն է ներկայացնել հայերենի՝ պաշտոն անվանող բառերի իմաստային դաշտը, քննել իմաստափոխության հետ կապված առանձնահատկություններ: Ընդ որում՝ մենք ուսումնասիրության նյութ ենք դարձրել այն բառերը, որոնք լեզվի արդի փուլում գործածություն են ստացել: Դրանք բառեր են, որոնք համարվում էին հնաբանություններ (տես՝ էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան), բայց որոնք կյանքի կոչվեցին անկախության տարիներին: Բառերի մի մասին անդրադարձել են հայտնի լեզվաբաններ Ա.Սուքիասյանը, Ալ.Մարգարյանը և ուրիշներ: Նրանք հնաբանություններ են համարել բառեր, որոնք խորհրդային շրջանում գործածական չէին՝ ավագանի, մարզպետ, սպարապետ, նախարար:

Ինչպես ուսումնասիրությունը ցույց տվեց, հայերենը պաշտոն անվանող բառեր փոխառել է տարբեր լեզուներից, և այժմ այդ բառերը գործածության մեջ են մտել պատմահասարակական իրադարձությունների փոփոխությամբ

պայմանավորված: Հայերենը պարսկերենից փոխառություններ կատարել է նրա զարգացման բոլոր շրջաններում՝ հին պարսկերեն, միջին պարսկերեն կամ պահլավերեն, նոր պարսկերեն, բայց փոխառությունների գերակշիռ մասը կատարել է միջին պարսկերենից: Հայերենը պարսկերենից կատարել է հետևյալ փոխառությունները՝ *մարզպան* (պիլ.marzapan «կուսակալ»), *մարզպետ* (պիլ. marzapat «արքունի գործակալ»), *նախարար* (պիլ. nafabara), *դայակ* (պիլ.dastyrak ), *դեսպան* (պիլ.despan բառից, որը թեև առանձին գործածված չէ, բայց պահպանվել է badespan «արքայական սուրհանդակ «բառի մեջ), *սպարապետ* (պիլ. spahpat «զորագլուխ»), *ոստիկան* (պիլ.ostikan), *վարդապետ* (պիլ.vardapati «վարժապետ»), դատավոր, պահակ, պարեկ, հրամանատար և այլն:

Հունարենից փոխառված պաշտոն անվանող բառերն են՝ կաթողիկոս, եպիսկոպոս, արքեպիսկոպոս, հյուպատոս, նոտար, ռեկտոր, պապ (հայրապետ), քարտուղար:

Հայերենը եվրոպական լեզուներից ևս պաշտոն անվանող բառեր է փոխառել՝ **առդիտոր** (անգլ.)-հաշվեքննիչ, **դիրեկտոր** (լատ.)-տնօրեն, **ինստրուկտոր** (իտալ.)-հրահանգիչ, **ինկասատոր** (իտալ.)-գանձիչ, **դեպուտատ** (լատ.) -պատգամավոր, **ադմինիստրատոր** (լատ.)- կառավարիչ, որևէ գործի, հիմնարկի վարիչ, **մենեջեր** (անգլ.) -կառավարիչ ևն: Բառերի մի մասը փոխարինվել է հայերեն համարժեքներով, և փոխառյալ բառերը դիտվում են օտարաբանություններ, ինչպես դիրեկտորն ու մինիստրը, կոնսուլն ու դեպուտատը: Պաշտոն անվանող բառերի մեջ կան այնպիսիք, որոնք բառարաններում, ինչպես նաև մասնագիտական գրականության մեջ դիտվում են պատմաբառեր՝ ոստիկան, համայնքապետ, սպարապետ, նախարար, մարզպետ ևն: Բայց տեղի է ունեցել այս և նման բառերի իմաստափոխություն: Սա վկայում է այն մասին, որ ժողովրդի կյանքում կատարվող հասարակական ու տնտեսական տեղաշարժերն ազդում են նաև բառապաշարի վրա. մի կողմից՝ որոշ իմաստներ մթազնում են, մյուս կողմից՝ առաջ են գալիս նորերը:

Քննելով ժամանակակից հայերենում գործածվող պաշտոն անվանող բառերի իմաստաբանությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ կան.

ա) պաշտոն անվանող բառեր, որոնք իրենց թե՛ արտաքին հնչյունական կազմով և թե՛ ներքին բովանդակությամբ՝ արտահայտած իմաստներով, նույնը կամ գրեթե նույնն են մնացել գրաբարի համեմատությամբ: Ինչպես.

**վարդապետ** (Հայկ.) պետ վարժից, վարժապետ, ուսուցիչ: (Աղ.) կուսակրոն քահանա, որ ապրում է վանքում կամ հոգևոր իշխանության կարգա-

դրությամբ ուղարկվում է որևէ քաղաք,

**դաստիարակ** «1.Նա, որ զբաղվում է մեկի դաստիարակությամբ, դաստիարակող, 2. դասդեկ»),

**քահանայապետ** («1. քահանաների պետ, գլխավոր, 2. եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյա՝ պատրիարք, եպիսկոպոս, կաթողիկոս, 3. ինքնուրույն եկեղեցու գերագույն հոգևոր պետի կոչում, որ տրվում է Հռոմի պապին»),

**դոնապան** («1.դոան պահապան, շվեյցար, 2. շենքի ծառայող, որի պարտականությունն է պահպանել բակի մաքրությունը») ևն:

բ) Պաշտոն անվանող բառեր, որոնք, ձևով նույնը մնալով և իրենց բուն իմաստը պահելով, ձեռք են բերել նոր իմաստներ կամ հարստացել նոր իմաստներով: Ինչպես **խոսնակը**. այս բառի՝ Ստ. Մալխասյանցի բացատրությունը հետևյալն է. «1. լավ խոսող, խոսելու շնորհք ունեցող, 2. օգուտ մեկի խոսող, փաստաբան, 3. բարեխոս, 4. խոսող, կանչող թռչուն, աքաղաղ»: Պահելով այս իմաստները՝ բառը ձեռք է բերել նոր «1. ոսդիոյի հաղորդավար, Աժ խոսնակ» իմաստները:

գ) Պաշտոն անվանող բառեր, որոնք, արտաքին հնչյունական կազմով նույնը մնալով, զրկվել են իրենց հիմնական կամ այլ իմաստներից և ստացել նոր իմաստներ: Այսպիսի իմաստափոխության են ենթարկվել հետևյալ բառերը:

**Դատախազ** բառը «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանում բացատրվում է որպես «ոսոխ, հակառակորդ»: Ժամանակակից հայերենում բառը կորցրել է իր այդ իմաստը և ձեռք բերել «1.օրենքի ճիշտ կենսագործման հսկողությունն իրականացնող պաշտոնյա, 2. պետական մեղադրող դատական պրոցեսում» իմաստները:

**Ավագանի** բառը գրաբարում բացատրվում էր «մեծամեծք, իշխանք, խորհրդականք արքայի», Ժամանակակից հայերենում ունի «ավագներ, ավագների դաս» բացատրությունը:

**Գործավար** (Հայկ.) ոստիկան, որ առաջ վարել զգործն, վերակացու, (Աղ.) պաշտոնյա, որ վարում է հիմնարկի գործերը, գրասենյակային գործառնությունը, գործերի վարիչ:

**Մարզպետ** (Հայկ.) կողմնապետ, մարզպան, արքունի գործակալ, մարզի կառավարիչ, (Աղ.) մարզի կառավարիչ:

**Հյուպատոս**- ( Հայկ.) բղեշխ, իշխան, հրամանատար, փոխարքա, (Աղ.) իր տերությունը ներկայացնող և իր տերության շահերը պաշտպանող պաշտոնական անձ ուրիշ տերության մեջ:

**Ոստիկան** (Աղ.) 1.Ոստիկանության ստորին պաշտոնյա (Ցարական Ռուսաստանում և արդի մի քանի եվրոպական երկրներում): 2. Մինիստր: 3. պատմ. Մարզպան, կուսակալ (արաբական տիրապետության շրջանում):

**Նախարար** (Աղ.) (պատմ.) 1.Ֆեոդալական Հայաստանում որևէ նահանգի՝ գավառի՝ երկրամասի տերը հանդիսացող իշխան: 2. Մինիստր:

**Պարեկ-** (Հայկ.) Շրջագետ, որ երևի շփոթիլ ընդ պարէտ: (Աղ.) Փոքրիկ գինված ջրկատ՝ խումբ (գինվորական ստորաբաժանման կամ միլիցիայի են) : Այժմ այս բառով կազմվել է բառակապակցություն՝ պարեկապահակային ծառայության պետ:

**Վարիչ-** (արևմտ.) վարորդ (կառքի վարիչ), (արևելի.) բաժնի ղեկավար:

**Դեկան-** (Հայկ.) լտ.դեկանիոն (Dekanus) իբր տասնապետ, և լայնաբար՝ Գնդապետ, ոստիկան են: (Աղ.)Ֆակուլտետի ղեկավար:

**Հայրապետ-** (Հայկ.) ազգապետ, ցեղապետ: (Աղ.) Եկեղեցու հայրերի պետ, կաթողիկոս:

**Կուրատոր-** (Մալխ.) որբերի խնամակալ: (Աղ.) խնամակալ, հոգաբարձու ուսումնական հաստատություններում:

**Կառավարիչ-** (Մալխ.) 1. կառքը վարող, 2.տնօրինող: (Աղ.)1. Գերատեսչության գործերը վարող պաշտոնյա, 2. երկիրը կամ նրա առանձին վարչական միավորը տնօրինող անձ:

Այսպիսով, փաստերը ցույց են տալիս, որ բառերի իմաստները ժամանակի ընթացքում փոխվում են, և լեզուն բառերի իմաստափոխության միջոցով արտացոլում է նաև ժողովրդի հասարակական կյանքում կատարված փոփոխություններն ու տեղաշարժերը: Բառերի ձևաիմաստային խմբերում, հատկապես հոմանիշների շարքում ևս փոփոխություններ են տեղի ունեցել, որը պայմանավորված է ոչ միայն նրանց գործածականությամբ, այլև ոճական կիրառությամբ: Հոմանիշային շարքեր կազմվել են կամ հնաբանությունների ու արդի հայերենում գործածվող բառերի միջոցով, կամ նորաբանությունների միջոցով, երբ նույն պաշտոնն անվանելու համար ստեղծվում են մեկից ավելի բառեր, կամ փոխառյալ բառերի ու հայերեն համարժեքների միջոցով: Այսպես.

ա) *հնաբանություններով կազմված հոմանիշներ*

**բարապան**-դարապան- դռնապան

**բեռնառաք**-առաքիչ

**բերդակալ**-բանտապետ

**գրքապետ**-գրադարանապետ

**կատապան**-քաղաքապետ  
**հանդերձապետ**-հանդերձապահ  
**հոտապետ**-հովվապետ  
**փուշտիպան**-թիկնապահ-թիկնագոր  
**քաղսովետի նախագահ**-քաղաքապետ  
**գյուղսովետի նախագահ**-գյուղապետ  
**գործկոմի նախագահ**-թաղապետ են:

Ընդգծվածները գործածությունից դուրս են եկել, դարձել հնաբաներ, իսկ նրանց որոշ մասը գործածվում է արևմտահայերենում:

բ) **Փոխառյալ բառերով կազմված հոմանիշներ (նույնանիշներ).**  
**աուդիտոր**-հաշվեքննիչ  
**մարքեթոլոգ**-շուկայագետ  
**մենեջեր**-կառավարիչ  
**օմբուդսմեն** –մարդու իրավունքների պաշտպան  
 ԵՊՀ կառավարիչ -**ռեկտոր**  
 գ) **արևմտահայերենով (ներքին փոխառություններ) կազմված հոմա-**

**նիշներ.**

**հոգաբարձու**- վերակացու-խնամատար  
**գանձապետ**- գանձապահ (գանձապետական պահառու)  
**գրադարանապետ**- գրադարանի վարիչ  
**երեսփոխան**-պատգամավոր  
**համայնքապետ**- թաղապետ  
**խոսնակ**- խորհրդարանի նախագահ  
**նախարարապետ**-վարչապետ  
**վճռաբեկ**-վճռաբեկ դատարանի դատավոր  
**նվագավար**- դիրիժոր  
**իրավարար**-մրցավար  
**հաշտարար**-ֆինանսական, տնտեսական հաշտարար  
**կաճառորդ** – ակադեմիկոս

Հոմանիշների առաջացման պատճառ կարող են դառնալ հայերենի բա-  
 նապաշար մուտք գործած օտար բառերը: Օրինակ.

**հյուպատոս-կոնսուլ**  
**պատգամավոր-դեպուտատ**  
**նախագահ-պրեզիդենտ**  
**ոստիկան-միլիցիա**



**փաստաբան-ադվոկատ**

**նախարար-մինիստր**

**տնօրեն- դիրեկտոր**

Լեզվի արդի փոփոխումն այս հոմանիշները զուգահեռ գործածություն ունեն (առավելապես խոսակցական ոճում):

դ) Նորաբանություններ

**սուպերնախարար-գերնախարար**

Ինչպես հայտնի է, հոմանիշների շարքի նվազագույն սահմանը երկանդամ լինելն է, հետևաբար՝ հոմանիշները կարող են լինել երկանդամ ու բազմանդամ:

Հայերենում պաշտոն անվանող բառերով կազմված երկանդամ հոմանիշները սակավ են: Ըստ բառարանների տված օրինակների՝ ներկայացնենք երկանդամ և բազմանդամ հոմանիշների շարքեր.

մարզպետ-մարզպան

խնամարար-խնամատար

կաթողիկոս-քահանայապետ

սեղանապետ-թամադա

ավանապետ-գավառապետ

ավագերեց-արքերեց-երիցապետ

անտառապահ-անտառապետ-անտառապաշտպան

արքեպիսկոպոս-եպիսկոպոսապետ

անձնապահ-գլխապահ-թիկնապահ

բերդապահ-բերդակալ-բերդատեր-բանտապետ

ասպահապետ-զորագլուխ-զորապետ-սպարապետ-զորավար ևն:

Ինչպես օրինակներն են վկայում, պաշտոն անվանող բառերի մեջ հոմանիշների առաջացման աղբյուրներից մեկը հայերենի բառային կազմի համալրումն է, որը կատարվել է իմաստափոխության, փոխառությունների, նորաբանությունների և մայր լեզու մուտք գործած օտարաբանությունների տեսքով:

Ամփոփելով նշենք, որ ժողովրդի կյանքում տեղի ունեցած հասարակական-քաղաքական փոփոխությունների հետևանքով որոշակի փոփոխություններ է կրել նաև պաշտոն անվանող բառերի իմաստային դաշտը: Որոշ բառեր գրաբարի համեմատ պահել են իրենց իմաստը կամ չնչին փոփոխությունների են ենթարկվել, որոշ բառեր ձեռք են բերել նոր իմաստներ, բառերի մի մասն էլ, կորցնելով իրենց նախկին իմաստը, ձեռք են բերել միանգամայն նոր իմաստ:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
2. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Ե., 1951:
3. Աճառյան Հ., Հայերենի արմատական բառարան, Ե., 1971-1979:
4. Ավետիսյան Լ., Արհեստ-արհեստավորանիշ անվանումները հայերենում, Ե., 2015:
5. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002:
6. Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Ե., 2011:
7. Մալխասյանց Ստ., Հայերենի բացատրական բառարան, հ. 1-4 , Ե., 1944-45:
8. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ, 1-2 , Ե., 1836-37:
9. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990:
10. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999:

## СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ СЛОВ, ОБОЗНАЧАЮЩИХ ДОЛЖНОСТИ

АНАИТ АДИЛХАНЫАН

В статье рассматриваются семантические особенности слов, обозначающих должности. Анализируются, в частности, наименования должностей, претерпевшие семантические изменения, их синонимические связи с соответствующими заимствованными, архаичными, неологическими формами. В армянском языке синонимические соответствия наименований должностей встречаются редко. Определенные изменения указанных слов часто вызваны общественно-политическими изменениями.

**Ключевые слова и выражения** – Общность семантики, семантические особенности, наименования должностей, синонимические связи, заимствования, архаизмы, неологизмы, общественно-политические изменения, семантическое поле, определенные изменения.

## THE SEMANTIC PECULIARITIES OF THE WORDS DENOTING POSITION

ANAHIT ADILKHANYAN

The semantic group of the words denoting position is discussed in the article. A special attention is paid to the changes in the meaning of the words, forming synonyms. Some words make up synonymic rows due to borrowings,

archaisms and neologisms. Certain changes in the semantic field of the words denoting position are often called forth by the changes in the social and political life of the nation.

*Key words* – semantic peculiarities, titles of positions, synonymic rows, borrowings, archaisms, neologisms, socio-political changes, semantic field, Western Armenian and Eastern Armenian combination.

**ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ  
ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,  
ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

**ՄԱՐԻԱՆԱ ԲԱԴԱԴՅԱՆ**

Հոդվածում ուսումնասիրվում են անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով եղանակավորող և հաղորդակցական դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Եղանակավորող և հաղորդակցական արժեք ունեցող դարձվածային միավորները խոսքին յուրատեսակ երանգ ու հուզական լիցք են հաղորդում և ունեն հուզաարտահայտչական բնույթ: Խոսքն ավելի պատկերավոր ու դիպուկ դարձնելու համար մարդիկ հաճախ օգտագործում են հաղորդակցական արժեք ունեցող դարձվածային միավորներ: Այս դարձվածային միավորները հանդես են գալիս ինչպես բառային, ձևաբանական, այնպես էլ շարահյուսական համակարգերում և օժտված են նախադասությանը հատուկ բոլոր առանձնահատկություններով՝ քերականական կարգերով և հատկանիշներով:

**Բանալի բառեր** – եղանակավորող, հաղորդակցական դարձվածքներ, հատկանիշ, դարձվածային միավորներ, համակարգ, նախադասություն:

Դարձվածքները կամ դարձվածային միավորները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են և արտահայտում են նրա լեզվամտածողության ինքնատիպությունն ու յուրահատկությունը: Դարձվածքներում իրենց արտահայտությունն են գտել ժողովրդի պատմական հարուստ կենսափորձը, նրա պատկերացումներն օբյեկտիվ աշխարհի, առարկաների և երևույթների մասին, վերաբերմունքը մարդկային հարաբերությունների նկատմամբ: Դարձվածաբանական միավորները խոսքին տալիս են պատկերավորություն, արտահայտչականություն, դիպուկություն և ձերբազատում խոսքը միապաղաղությունից, միօրինակությունից ու չորությունից: Դարձվածաբանական միավորներով միտքն առավել դիպուկ և հստակ է հասնում նպատակին՝ ազատելով խոսքը տաղտկալի լինելուց:

**Ա. Եղանակավորող դարձվածային միավորներ**

Դիտարկվող երեք լեզուների դարձվածաբանական համակարգերում անվանողական դարձվածքների շարքում են դասվում նաև եղանակավորող

դարձվածային միավորները, այդ թվում՝ նաև անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով եղանակավորող դարձվածքները:

Եղանակավորող դարձվածքները խոսքին յուրատեսակ երանգ ու հուզական լիցք են հաղորդում, արտահայտում են խոսողի իմացական, գնահատողական կամ զգայական վերաբերմունքը և ունեն հուզաարտահայտչական բնույթ: Դրանք հիմնականում հաղորդակցական բնույթ ունեն և հանդես են գալիս որպես նախադասություններ:

Եղանակավորող դարձվածքները տարբեր արժեքներ են ներկայացնում: Որոշ եղանակավորող դարձվածքներ իմաստային երանգ են հաղորդում խոսքին, մյուսներն ազդում են խոսքի հուզական կողմի վրա և ցույց են տալիս խոսողի զարմանքը, հիացմունքը, հիասթափությունը կամ զայրույթը և կամ դժգոհությունը: Պ. Բեդիրյանը «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» գրքում գրում է. «Բազմաթիվ են այն եղանակավորող Դ-ները, որոնք, մանավանդ տարածված խոսակցական լեզվում ու բարբառներում, ներկայացնում են օրինանքի ու մաղթանքի, անեծքի ու հայիոյանքի խոսքեր ... Եվ վերջապես կան եղանակավորող Դ-ներ էլ, որոնք խոսքին որևէ իմաստ չեն հաղորդում, այլ խոսողի, պատմողի կամ գրուցողի կողմից օգտագործվում են իբրև պատմվող հատվածները իրար կցելու, խոսակցին դիմելու, նրա ուշադրությունը հրավիրելու կամ ուղղակի խոսքը ռճավորելու համար»<sup>1</sup>:

Եղանակավորող դարձվածքների յուրահատկություններից են խոսքային միջավայրը և հնչերանգը: Դրանցից շատերը խոսքային տարբեր միջավայրում իմաստային կամ հուզական տարբեր երանգներ կարող են արտահայտել:

Եղանակավորող դարձվածային միավորները նոր չեն դիտարկվող երեք լեզուներում:

Հայերենում եղանակավորող դարձվածքների ծագման աղբյուրները կարող են լինել կենդանի լեզուն և բայական դարձվածքները: Եղանակավորող դարձվածքների միջոցով խոսողը խոսքի նկատմամբ արտահայտում է տարբեր վերաբերմունք, օրինակ՝ գոհունակություն, գովասանք, աղերսանք, մտերմական վերաբերմունք, բարեմաղթություն, երդում, ափսոսանք, հիացմունք, զարմանք, զայրույթ, հանդիմանություն և այլն: Եղանակավորող դարձվածքների ճնշող մասի մեջ բայը դրված է լինում ըղձական եղանակով: Սա ավելի շատ բնորոշ է օրինանքի ու անեծքի խոսքերին: Օրինակ.

---

<sup>1</sup> Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, «Լույս» հրատ., 1973, էջ 163,164:

**Աստված երկու բարիին մեկը տա** (օրինանք - մաղթանք) – Տառապող, հիվանդ մարդուն:

**Աստված խելքդ առնի** (խսկց. հանդիմանական խոսք) - Անխելք, չմտածված խոսք բանողին:

**Օրդ սև ու մուժ լինի** (անեծք) - Դժբախտ լինես:

**Տիպդ կտրվի կամ տիպը կտրվի** (անեծք, երբեմն էլ՝ մտերմական հանդիմանություն) - Անշնորհք, անպիտանի մարդուն:

**Լեզվիդ թու՛թ/փուռ բուսնի** (ժող. անեծք) – Չարախոս մարդուն:

**Մեկ Աստված ըսելուն կը հավատամ** (ա/մ ժող.) – Խիստ ստախոս է, միայն երբ «Աստված մեկ է» ըսե՛ կը հավատամ:

Անեծքներում և օրհնանքներում դարձվածքների գոյական բաղադրիչն ունի ստացական հոդի քերականական կարգը: Այստեղ ստացական **դ** հոդն ունի իմաստատարբերակիչ դեր, և դարձվածքը կիմաստագրվի, եթե հոդն օտարվի:

Եղանակավորող դարձվածքների բայական բաղադրիչի ամենակարևոր առանձնահատկություններից մեկը եղանակի քերականական կարգն է: Դարձվածքների բայ բաղադրիչները հիմնականում գործածվում են ըղձական եղանակով, այլ եղանակների գործածությունը շատ հազվադեպ է: Թվի քերականական կարգը եղանակավորող դարձվածքներում առանձնապես դեր չի խաղում. այս կարգի գրեթե բոլոր դարձվածքներում գոյականները հանդես են գալիս միայն եզակի թվով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անձի հատկանիշ արտահայտող եղանակավորող դարձվածքները բավականին փոքր թիվ են կազմում հայերենում, իսկ ռուսերենում և անգլերենում չեն հանդիպում:

Հայերենում անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով եղանակավորող դարձվածքները կազմվում են կառուցվածքային տարբեր տիպերով, և դարձվածքների անդամները միմյանց հետ կապված են շարահյուսական տարբեր հարաբերություններով: Հիշյալ դարձվածքներում գործում են բայական և անվանական անդամներին բնորոշ քերականական կարգերը՝ թվի, դեմքի, հոդի, եղանակի:

Անձի հատկանիշ արտահայտող եղանակավորող դարձվածքներն օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում՝ ոճավորելով խոսքը: Եղանակավորող դարձվածքները եղանակավորող բառերի պես նախադասության անդամ չեն լինում և, հետևաբար, շարահյուսական պաշտոններ չեն կարող կատարել:

### **Բ. Հաղորդակցական դարձվածային միավորներ**

Խոսքն ավելի պատկերավոր ու դիպուկ դարձնելու համար մարդիկ հաճախ օգտագործում են հաղորդակցական արժեք ունեցող դարձվածային միավորներ: Այս դարձվածային միավորները հանդես են գալիս ինչպես բառային, ձևաբանական, այնպես էլ շարահյուսական համակարգերում՝ որպես լեզվի հաղորդակցային մակարդակի իմաստակիր միավորներ, և օժտված են նախադասությանը հատուկ բոլոր առանձնահատկություններով՝ քերականական կարգերով և հատկանիշներով:

Ինչպես ցանկացած նախադասության, այնպես էլ հաղորդակցական դարձվածքներին հատուկ է ստորոգումը:

Մյուս առանձնահատկություններից են հնչերանգը և մտքի ավարտվածությունը: Շատ հաճախ մարդիկ փորձում են ավելի պատկերավոր ու արտահայտիչ դարձնել իրենց խոսքը և օգտագործում են միակազմ կամ թերի նախադասություններ. այս նախադասություններում առկա է հնչերանգային ստորոգումը:

Դարձվածային նախադասություններն ունեն հետևյալ առանձնահատկությունները.

ա) դարձվածային նախադասությունները վերարտադրվում են որպես խոսքի պատրաստի միավորներ:

բ) Ունեն իմաստային, բառային կազմի և գործառության կայունություն:

գ) Նախադասության իմաստն առաջանում է կապակցության բոլոր բաղադրիչների իմաստների գումարից:

դ) Նախադասություններն ունեն կայուն շարահայտություն:

ե) Ստորոգյալը չունի խոնարհման լրիվ հարացույց:

զ) Պարզ նախադասությունները հնարավոր չէ փոխարինել բարդերով և հակառակը<sup>2</sup>:

Ուսումնասիրվող երեք լեզուներում անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքներն օժտված են վերը նշված բոլոր առանձնահատկություններով: Յուրաքանչյուր նախադասություն արտահայտում է դատողություն և ունի տվյալ լեզվում հաստատված որոշակի կառուցվածք<sup>3</sup>:

---

<sup>2</sup> **Խ.Բադիկյան**, Ժամանակակից հայերենի դարձվածքային միավորները, ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 305-307:

<sup>3</sup> **Ա. Թոկմադյան**, “Очерки по сравнительной типологии английского, русского и армянского языков”, Е., 1995.

Խ. Բաղիկյանը «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» գրքում նշում է. «Սովորական նախադասությունների նման դարձվածայինները նույնպես ըստ իրենց կառուցվածքի լինում են՝ պարզ և բարդ, միակազմ և երկկազմ, լրիվ և թերի, շաղկապավոր և անշաղկապ»<sup>4</sup>: Օրինակ. **Մեջքը պինդ է: Վերնահարկը դափարկ է: Մարմանդ ջուր է: Լեզվի փակ փուշ չկա: Կարմիր կովը իր կաշվից դուրս չի գա: Խորամանկ աղվեսը չորս ոտքով է թակարդն ընկնում:**

Ըստ իրենց հնչերանգի և իրականության նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքի՝ ուսումնասիրվող երեք լեզուներում դարձվածային նախադասությունները լինում են պատմողական, հարցական, հրամայական, բացականչական և խառը, ինչպես նաև հաստատական և ժխտական:

Բերենք մի քանի օրինակ:

**Երբ նա դուրս է գալիս, արևն ամոթից ամպի փակ է մտնում:**– Շատ գեղեցիկ:

**Խաչ ունի՞** (խսկց.) – Անսիրտ, անխիղճ մարդու մասին:

**Звезд с неба не хватаем/ не хватал** – (խսկց.) Միջին ունակությունների մարդ:

**Мыху не обидум** – Հլու, հնազանդ մարդ:

**He is a regular flatfish** – Հիմար երիտասարդ է:

**Not so black as one is painted** – Ոչ այնքան վատ մարդ լինել:

**She is better than she is bonny** – (շոտլանդ.) Ոչ միայն գեղեցիկ է, այլ նաև լավը:

**What do you expect from a pig but a grunt** – (խսկց.) Կոպիտ, անկիրթ մարդու մասին:

Պարզ նախադասության կառուցվածքով դարձվածային միավորները լինում են երկկազմ և միակազմ: Իրենց հերթին երկկազմ նախադասությունները լինում են համառոտ և ընդարձակ:

Համառոտ դարձվածային նախադասությունները հիմնականում երկբաղադրիչ են, և ստորոգյալը կարող է լինել թե՛ պարզ և թե՛ բաղադրյալ (բայական և անվանական):

Թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում ուսումնասիրվող հաղորդակցական դարձվածային միավորների մեջ ամենամեծ թիվ են կազ-

<sup>4</sup> Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 306:



մում պարզ ընդարձակ նախադասությունները, որոնց մի մասում ենթական հանդես է գալիս իր լրացումներով, մյուս մասում՝ ստորոգյալը՝ իր լրացումներով, կամ ենթական և ստորոգյալը՝ իրենց լրացումներով:

Բերենք անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքների մի քանի օրինակ հայերենում, ռուսերենում և անգլերենում:

**Աստված հոգի է տվել, չի կարող առնել** - Ամբարիշտ՝ անխիղճ մարդ է:

**Արև լինի՝ մարդու վրա չի ծագի** (խսկց.) - Անբարյացակամ մարդ է:

**Դու կա՞ս միայն երուսաղեմ** - Միամիտ, անտեղյակ մարդ:

**Կարին քակը՝ երեսը գիտցող** (բրբ.) - Գիտուն մարդ է:

**Կրավը նոսր է** (խսկց.) - Անխելք, թեթևամիտ է, ծալը պակաս մարդ է:

**Հո նրան ասած, հո պարին** (ժող.) - Անզգա է, անհասկացող է:

**Ճանճերը բերանին ծեփուկ դնել** (գռիկ.) - Խեղճ, անճարակ, ողորմելի մարդ լինել:

**Սև ու դեղին, ով որ տեսնի, պարոհի լեղին** - Չափազանց տգեղ մարդ է:

**Воды не замутит** - Շատ հանգիստ, հնազանդ մարդ:

**Материно молоко на губах не обсохло** - (հեգն.) Երիտասարդ, անփորձ մարդ է:

**Нос не дорос** - Շատ երիտասարդ մարդ է:

**His head is screwed on the right way** - Խելացի մարդ է:

**He is too far north for me** - Չափազանց խորամանկ մարդ է:

**One's heart is/lies in the right place** - Բարի մարդ լինել:

Վերը նշված դարձվածքներում գործում են քերականական այն նույն կարգերն ու շարահյուսական հարաբերությունները, ինչ որ սովորական նախադասություններում: Մեծ մասամբ հաղորդակցական նախադասություններն օգտագործվում են ժողովրդախոսակցական ոճում:

Ա. Մուրվալյանը «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» գրքում գրում է. «Առաձների ու ասացվածքների մեջ իմաստի ուղղակի առման հետ միասին, այս կամ այն չափով, արտահայտված է նաև նրանց անուղղակի կամ փոխաբերական առումը: Այս տեսակետից էլ սրանք մոտենում են դարձվածային այն բառակապակցություններին կամ արտահայտություններին, որոնք կազմությամբ կարճ ու դիպուկ նախադասություններ են»<sup>5</sup>:

<sup>5</sup> Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, էջ 45:

Առաձներն ու ասացվածքներն ունեն բովանդակության խորություն. նրանց մեջ ամփոփված ու խտացված են ժողովրդի կյանքի տարբեր կողմերը: Հաշվի առնելով նրանց բաղադրամասերի փոխաբերական առումը և ընդհանուր իմաստը՝ շատ դեպքերում հնարավոր է դրանք արտահայտել ոչ թե հոմանիշ բառով, այլ ամբողջական նախադասությամբ:

Օրինակ՝

**Գայլի գլխին ավերարան ես կարդում, ասում է ոչխարը սարը մնաց** - Անուղղելի է:

**Ծառը որ վեր ընկնի, կացնավորը կշարանա** - Անպաշտպանի վրա բոլորը կհարձակվեն:

**Мал золотник, да дорог** – Կարճահասակ և երիտասարդ է, բայց օժտված է շատ դրական հատկանիշներով:

**Наш пострел везде поспел** – Ճարպիկ մարդու մասին:

**Ранняя птичка носок прочищает/очищает, а поздняя глаза/глазки продирает** - Աշխատասեր մարդու մասին:

**Смола к дубу не пристанет** - Ազնիվ մարդուն չես վարկաբեկի:

**Яйца курицы не учат** - Երիտասարդ մարդը չի սովորեցնում ավելի մեծին ու ավելի հմուտին:

**Better be born lucky than rich = He родись красивой, а родись счастливой** - Ավելի լավ է հաջողակ մարդ լինել, քան հարուստ:

**Idle folks lack no excuses = У лентяя Федорки всегда отговорки = Лодырь всегда найдет причину, лишь бы не работать** – Ծույլ մարդը միշտ պատրվակ է գտնում:

**Greedy folk have long arms** - Ազահ մարդիկ երկար ձեռքեր ունեն:

Բերված օրինակներից երկուսն է, որ առաձների և ասացվածքների փոխաբերական իմաստն արտահայտված է ամբողջական նախադասություններով: Սակայն գոյություն ունեն դարձվածային արտահայտություններ, որոնք իրենց փոխաբերական ընդհանուր կամ միասնական իմաստն արտահայտում են հոմանիշ բառերով կամ բառակապակցություններով: Օրինակ. **Բերանիցը կաթի համ է գալիս / բերանիցը կաթի հոտ է գալիս** - Դեռ անփորձ է, դեռ երեխա է: **Հազար ցավ ու դարդ փեսած** – Տանջված: **Իրար հեք հաց կիսած** – Մտերիմ:

## ХАРАКТЕРИЗУЮЩИЕ КАЧЕСТВА ЧЕЛОВЕКА НОМИНАТИВНЫЕ И КОММУНИКАТИВНЫЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ОБОРОТЫ В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

МАРИАНА БАДАДЯН

В статье исследуются характеризующие качества человека номинативные и коммуникативные фразеологические обороты в армянском, русском и английском языках. Указанные обороты представляют собой различные разговорно-бытовые речевые штампы, языковые выражения народной мудрости, которые по структуре соответствуют предложению.

**Ключевые слова** – номинативные, коммуникативные фразеологические обороты, качества, фразеологические обороты, структура, предложение.

## THE NOMINATIVE AND COMMUNICATIVE PHRASEOLOGICAL UNITS CHARACTERIZING A PERSON'S QUALITIES IN THE ARMENIAN RUSSIAN AND ENGLISH LANGUAGES

MARIANA BADADYAN

The article studies the nominative and communicative phraseological units characterizing the qualities of a person in the Armenian, Russian and English languages. Said phraseological units represent various cliches of colloquial phrases, linguistic expressions of folk wisdom time. Structurally they conform with a sentence.

**Key words** – nominative, communicative phraseological units, qualities, phraseological units, structure, sentence.

**ՄԻՋՏԵՔՍԱՑԻՆ ՏԱՐՐԵՐԸ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՍԿԱՑԱԿԱՆ-ԼԵԶՎԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ  
ՊԱՏԿԵՐՈՒՄ (Ս. ՄՈՆԵՄԻ «ԱՏՐԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ» ԵՎ  
«ԱՄՓՈՓԵԼՈՎ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ» ՎԵՊԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

ԱՆԱՀԻՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Հոդվածի նպատակն է դիտարկել ինքնամիջտեքստայնությունը՝ որպես հեղինակի անհատական ոճի ձևավորման միջոց: Ս. Մոնեմի «Ստրկություն մարդկային» վեպում և «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպում առկա ինքնամիջտեքստային տարրերի վերհանումը թույլ է տալիս բացահայտել «ազատություն» հասկացույթի հեղինակային հայեցակերպը: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ «ազատություն» հասկացույթը ինչպես մետատեքստում, այնպես էլ անդրադարձնող տեքստում զուգորդվում է «կամքի», «ճակատագրի» և «երջանկության» հետ, ինչն առկայացված է լեզվական տարբեր ցուցիչներով:

***Բանալի բառեր*** - ներտեքստայնություն, միջտեքստային հարաբերություններ, մետատեքստ, անդրադարձնող տեքստ, լեզվական ցուցիչներ:

1967թ. Յ. Կրիստևայի կողմից առաջարկված «միջտեքստայնություն» եզրի երևան գալուց հետո լեզվաբանության մեջ սկսվեց շրջանառվել նաև «ինքնամիջտեքստայնություն» (автоинтертекстуальность) եզրը, ինչը որոշ լեզվաբանների կողմից (Լ. Դելլենբախ, Ս. Հոլտոփս, Ն. Ֆատենա) դիտարկվեց որպես միջտեքստայնության տարատեսակ: Միջտեքստայնության համաբանությամբ ռուս լեզվաբան Ն. Ֆատենան ինքնամիջտեքստայնությունը դիտարկում է որպես միևնույն հեղինակի տարբեր ստեղծագործություններում առկա միջտեքստային հարաբերությունների ամբողջություն, ինչը նպաստում է հեղինակի անհատական ոճի ձևավորմանը<sup>1</sup>: Ինչպես արդարացիորեն նշում է Ն. Ֆատենան. «...հեղինակի ցանկացած տեքստ կառուցվում է տվյալ հեղինակի լեզվական համակարգին հատուկ անփոփոխականների միջոցով»<sup>2</sup>: Մեկ այլ ռուս լեզվաբան՝ Վ. Չերնյավսակայան, հավելում է, որ «...ինքնամիջտեքստայնությունը, թեմատիկ պրոգրեսիայի սկզբունքի

---

<sup>1</sup> **Фатева Н. С.** (2007), Интертекст в мире текстов: Контрапункт интертекстуальности, Москва, с. 91.

(Fateeva N. S. (2007), Intertekst v mire tekstov: Kontrapunkt intertekstualnosti, Moskva, s. 91)

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 92:

համաձայն, միավորում է տվյալ ստեղծագործողի երբևէ առաջ քաշած մտքերը և համախմբում է նրա կողմից ստեղծված բոլոր տեքստերը մեկ միասնական մակրոհամակարգի մեջ»<sup>3</sup>: Հետևաբար՝ ինքնամիջտեքստայնությունը կարելի է բնութագրել որպես մի յուրատեսակ «բանալի», ինչը թույլ է տալիս ներթափանցել հեղինակի ստեղծագործական աշխարհ՝ բացահայտելով նրա աշխարհընկալումը, աշխարհայացքը, ինչպես նաև լեզվաաշխարհը:

Այնուամենայնիվ, ինքնամիջտեքստայնության խնդրին անդրադառնալիս անհրաժեշտ է կարևորել նաև ընթերցողի գործոնը, ինչն առանցքային դեր է կատարում հեղինակի անհատական ոճի վերհանման գործընթացում: Գեղարվեստական երկը, լինելով հեղինակի իմացական և հուզական աշխարհի արտացոլում, յուրացվում է ընթերցողի գիտակցության մեջ որոշակի միջոցներով՝ լեզվական, արտալեզվական, մշակութային ևն: Ինչպես վկայում է Ե. Լյուբավինան. «...ներտեքստայնությունը օգնում է ընթերցողին ներթափանցել հեղինակի անհատական, հոգեբանական և գեղարվեստական աշխարհ՝ ծանոթանալով գրողի ինքնաճանաչմանը և ինքնագնահատականին»<sup>4</sup>:

Ա. Ֆիլիպովան դիտարկում է ինքնամիջտեքստայնությունը՝ որպես հեղինակի հասկացական-խոսքային համակարգի առանցքային մաս, ինչն իր արտացոլումն է գտնում հեղինակի տեքստային համակարգում բազմազան լեզվական ցուցիչների օգնությամբ: Հարկ է նկատել, որ ինքնամիջտեքստային ցուցիչները, որոնք կարող են արտահայտված լինել տարբեր լեզվական միջոցներով, բացահայտում են ոչ միայն միևնույն հեղինակի՝ տարբեր ժամանակաշրջաններում գրված ստեղծագործությունների (ինչպես գեղարվեստական, այնպես էլ ոչ գեղարվեստական՝ ինքնակենսագրական գրքեր, էսսեներ, նամակներ ևն) կապը տեքստային մակարդակում, այլև ծառայում են հեղինակային «ես»ի վերհանմանը:

Հոդվածը նպատակ ունի դիտարկելու ինքնամիջտեքստայնությունը՝ որպես հեղինակի անհատական ոճի ձևավորման միջոց: Այսպիսով, ինքնա-

---

<sup>3</sup> Чернявская В. Е. (2009), Лингвистика текста: Поликодовость, интертекстуальность, интердискурсивность, Москва, с. 192.

(Chernyavskaya V. E. (2009), Lingvistika teksta: Polikodovost, intertekstualnost, interdiskursivnost, Moskva, s. 192).

<sup>4</sup> Любавина Е. В. (2008), Интертекстуальность как интерпретационная стратегия: Интерпретация текста: ментальное зеркало видения, Екатеринбург, с. 155

(Lubawina E. V. (2008), Intertekstualnost kak interpretatsionnaya strategiya: Interpretatsiya teksta: mentalnoe zerkalo wideniya, Yekatirinburg, s. 155).

միջտեքստային տարբեր տարրերի վերլուծության միջոցով կփորձենք բացահայտել «ազատություն» հասկացության հեղինակային ընկալումը՝ հիմք ընդունելով Ս. Մոեմի «Սպրկություն մարդկային» վեպը և «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպը: Մեր ուսումնասիրության առանցքն է կազմում «ազատություն» հեղինակային հասկացությունը, ինչն էլ միավորում է այս երկու ստեղծագործությունները՝ նպատակ ունենալով վեր հանելու «ազատություն» հասկացության մոեմյան ընկալումն ու մեկնաբանումը:

Ս. Մոեմն այն աշխարհահոջակ ստեղծագործողներից մեկն է, ով հայտնի է ինչպես իր գեղարվեստական, այնպես էլ ոչ գեղարվեստական ստեղծագործություններով: Ս. Մոեմին բնորոշ են վերլուծական դատողությունը, մտածողությունը, ինչը հատկապես իր վառ արտահայտությունն է գտել նրա ոչ գեղարվեստական ստեղծագործություններում, որտեղ զետեղված ինքնամեկնաբանությունները Ս. Մոեմի գեղարվեստական համակարգում կարելի է դիտարկել որպես ինքնամիջտեքստայնության ձևերից մեկը: Պատահական չէ մեր կողմից «Սպրկություն մարդկային» և «Ամփոփելով անցած ուղին» ստեղծագործությունների ընտրությունը, քանի որ դրանցից առաջինը, լինելով գեղարվեստական ստեղծագործություն, իսկ երկրորդը՝ ինքնակենսագրական վեպ, միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են: «Սպրկություն մարդկային» վեպը, որը գրվել է 1915 թվականին, պարունակում է ինքնակենսագրական տարրեր և, այսպիսով, հանդես է գալիս որպես մետատեքստ «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպի համար, որը լույս է տեսել ավելի քան 23 տարի անց՝ 1938-ին: Իրականության, աշխարհի մասին սեփական մտքերը, գաղափարները ոչ միջնորդավորված, այսինքն՝ ոչ թե կերպարների միջոցով, այլ անձամբ ընթերցողին փոխանցելու ցանկությունը մղեցին Մոեմին 64 տարեկանում գրելու «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպը, որտեղ նա հաճախ անդրադառնում է այն թեմաներին և գաղափարներին, որոնք արձարծել է «Սպրկություն մարդկային» վեպում: Դրանցից մեկն «ազատության» գաղափարն է, որը Մոեմը զուգորդում է *կամքի, ճակատագրի և երջանկության հետ*:

Ստորև ներկայացված հատվածներում, որոնք վերցված են վերոնշյալ ստեղծագործություններից, ակնհայտ երևում են ինքնամիջտեքստային տարրերը՝ արտահայտված տարբեր լեզվական ցուցիչներով:

*'The illusion which man has that his will is free is so deeply rooted that I am ready to accept it. I act as though I were a free agent. But when an action is*

*performed it is clear that all the forces of the universe from all eternity conspired to cause it, and nothing I could do could have prevented it<sup>5</sup>.*

*I wanted to get what knowledge I could about the general structure of the universe; I wanted to make up my mind whether I had to consider only this life or a life to come; I wanted to discover whether I was a free agent or whether my feeling that I could mould myself according to my will was an illusion; I wanted to know whether life had any meaning or whether it was I that must strive it one<sup>6</sup>.*

Ակնհայտ է, որ ներկայացված երկու տեքստերում էլ՝ թե՛ անդրադարձվող և թե՛ անդրադարձնող, «ազատության» գաղափարը զուգորդվում է ազատ կամքի հետ, ինչպես նաև ակնառու են հեղինակի մտորումներն ազատ ընտրության հնարավորության բացակայության վերաբերյալ, ինչը ներկայացված է հետևյալ լեզվական ցուցիչներով՝ “*will is free*”, “*free agent*”, “*illusion*”: Հետաքրքրական է “*free agent*” դարձվածային միավորի օգտագործումը, որը միևնույն իմաստն է կրում երկու համատեքստերում էլ: Եթե առաջին օրինակում «Ստրկություն մարդկային» վեպի հերոսը համոզված է իր կամքի ազատության բացակայության հարցում՝ պնդելով, որ կամքի ազատությունը զուտ խաբկանք է՝ “*The illusion which man has that his will is free is so deeply rooted that I am ready to accept it*”, ապա ինքնակենսագրական վեպում Մոեմը մտորումների, երկմտանքի մեջ է և փորձում է գտնել այդ նույն հարցի պատասխանը՝ “*I wanted to discover whether my feeling that I could mould myself according to my will was an illusion*”:

Դիտարկենք նաև հաջորդ օրինակը, որտեղ ներտեքստային տարբեր ցուցիչների միջոցով ակնառու է Մոեմի՝ ազատությունը ճակատագրի հետ զուգորդելը:

*But when an action is performed it is clear that all the forces of the universe from all eternity conspired to cause it, and nothing I could do could have prevented it. It was inevitable<sup>7</sup>.*

I was glad to learn that the mind of man (himself the product of natural causes) was a function of the brain subject like the rest of his body to the laws of cause and effect, and that these laws were the same as those that governed the

---

<sup>5</sup> Maugham W. Somerset, Of Human Bondage, available online at: <http://www.planetpdf.com>, p. 418.

<sup>6</sup> Maugham W. Somerset (1978), The Summing up, London, p.162.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 418:

movements of star and atom. I exulted at the thought that the universe was no more than a vast machine in which every event was determined by a preceding event so that nothing could be other than it was<sup>8</sup>.

Մեջբերված երկու հատվածներում էլ կարելի է նկատել Մոեմի միտումը, այն է՝ մարդու գործողությունները ներկայացնել որպես ճակատագրի կողմից թելադրված արարքներ՝ անուղղակիորեն հերքելով վերջինիս կամքի ազատության հնարավորությունը: «Ստրկություն մարդկային» ստեղծագործության մեջ Մոեմը ճակատագիրն առկայացնում է *“forces of the universe”* բառակապակցության միջոցով: Միևնույն միտքը ներկայացված է «Ամփոփելով անցած ուղին» ստեղծագործության մեջ փոփոխված, այլ լեզվական միջոցներով՝ սակայն պահպանելով նույն իմաստը: Այսպես համեմատենք.

*“forces of the universe” - “natural causes”*

*“these laws were the same as those that governed the movements of star and atom”*

Հասկանալի է, որ վերջին ասույթում հեղինակը ներակայորեն արտահայտում է տիեզերքի գաղափարը, ինչը նա համարում է ճակատագրի շարժիչ ուժը:

Հարկ է նկատել, որ *“forces of the universe”* բառակապակցությունը ներտեքստային բնույթ է կրում, քանի որ այն մի քանի անգամ կրկնվում է մետատեքստում, որն էլ հետագայում որպես ինքնանդրադարձ դրսևորվել է ընդունող, անդրադարձնող տեքստում:

Ներկայացնենք հաջորդ օրինակը.

*It looked as though men were puppets in the hands of an unknown force, which drove them to do this and that...<sup>9</sup>*

*I believed that we were wretched puppets at the mercy of a ruthless fate; and that, bound by the inexorable laws of nature, we were doomed to take part in the ceaseless struggle for existence with nothing to look forward to but inevitable defeat<sup>10</sup>.*

Վերը բերված հատվածների քննությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ իսկապես Մոեմի կյանքում ճակատագիրն իր ուրույն տեղն է զբաղեցրել: «Ստրկություն մարդկային» վեպի հրապարակումից ավելի քան 23

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 992:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 51:



տարի անց Մոեմը վերադառնում է իր այն մտքին, որ «մարդիկ խղճուկ կամակատարներ են ճակատագրի ձեռքերում»: Հմմտ.

*“It looked as though men were puppets in the hands of an unknown force”*

*“I believed that we were wretched puppets at the mercy of a ruthless fate”*

Հետաքրքրական է, որ անդրադարձնող տեքստում Մոեմը “*unknown force*” բառակապակցության փոխարեն օգտագործում է “*fate*” բառը, ինչի միջոցով հեղինակն ավելի որոշակիացնում է իր միտքը՝ ընթերցողին հնարավորություն տալով բացահայտելու մետատեքստում օգտագործված “*forces of the universe*”, “*unknown force*” բառակապակցությունների բուն էությունը, որոնք ներակայորեն արտացոլում են «ճակատագրի» գաղափարը: Հատկանշական է, որ մարդու կամքի ազատության բացակայության գաղափարի առանցքը երկու հատվածներում էլ “*puppet-կամակալար*” բառն է, որը, երկու տարբեր համատեքստերում կապակցված լինելով այլ բառերի հետ, պահպանում է իր հիմնական իմաստը: Տարբերությունն այն է, որ երկրորդ հատվածում, այսինքն՝ անդրադարձնող տեքստում “*I believed that we were wretched puppets at the mercy of a ruthless fate*” ասույթը խոսքին հաղորդում է ավելի շատ հուզարտահայտչականություն՝ սաստկացնելով վերջինիս բացասական գնահատողական երանգը: Դրան են նպաստում “*wretched*”, “*at the mercy of*”, “*ruthless*” բառերն ու արտահայտությունները:

Հետաքրքրական է նաև “*drove*” և “*bound*” բայերի օգտագործումը հեղինակի կողմից, քանի որ դրանք երկուսն էլ կրում են «*ստիպողաբար ինչ-որ գործողության դրդելու, ազատության սահմանափակման*» իմաստը: Փաստորեն Մոեմը տարբեր տեքստերում վերոնշյալ հարիմաստ բայերի օգտագործմամբ միտված է արտահայտելու ճակատագրի դիմաց մարդու անզորության գաղափարը:

Ինչպես «Ստրկություն մարդկային» վեպում, այնպես էլ «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպում Մոեմը մտորում է ոչ միայն ազատության և ճակատագրի կապի շուրջ, այլև փորձում է բացահայտել նաև երջանկության և ազատության կապը:

Ներկայացնենք հետևյալ օրինակները.

*He adored the life of the German university with its happy freedom and its jolly companionships<sup>11</sup>.*

*But when I came back from Germany ... I had been happier than ever*

---

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 183:

*before. I had for the first time tasted freedom, and I could not bear the thought of going to Cambridge and being subjected once more to restraint<sup>12</sup>.*

Մեջբերված օրինակներում ինքնամիջտեքստային տարրերն առկա են ոչ միայն լեզվական մակարդակում, այլև արտալեզվական, քանի որ «Ստրկություն մարդկային» վեպը նույնպես հիմնված է Մոեմի ինքնակենսագրական փաստերի վրա, հետևաբար՝ թե՛ Ֆիլիպի և թե՛ Մոեմի համար Գերմանիան զուգորդվում է ազատության ձեռքբերման հետ, մինչդեռ Անգլիան զուգորդվում է ազատության բացակայության հետ: Ֆիլիպի ազատության բերկրանքը Գերմանիայում առկայացված է վեպում *“happy freedom”* մակդրային բառակապակցության միջոցով, ինչն անդրադարձնող տեքստում արտահայտված է փոփոխված շարահյուսական կառուցվածքով՝ սակայն պահպանելով նույն բառային գործածությունը: Հմնտ.

*“happy freedom” - I had been happier than ever before.*

*I had for the first time tasted freedom*

Հատկանշական է, որ Մոեմն Անգլիան համարում է սահմանափակումների երկիր, ինչի ապացույցն է միևնույն մտքի կրկնությունը երկու վեպերում էլ: Այսպես.

*he had looked upon England as a place of exile...*

*But in England you get neither: you're ground down by convention. You can't think as you like and you can't act as you like<sup>13</sup>.*

*To me England has been a country where I had obligations that I did not want to fulfill and responsibilities that irked me. I have never felt entirely myself till I had put at least the Channel between my native country and me<sup>14</sup>.*

«Ստրկություն մարդկային» վեպում Մոեմն Անգլիան պատկերում է որպես պայմանականությունների, սահմանափակումների երկիր, նույնիսկ այն համարում է արքորավայր՝ *“England as a place of exile”*, *“in England...: you're ground down by convention”*: Մինչդեռ «Ամփոփելով անցած ուղին» ստեղծագործության մեջ այդ նույն սահմանափակումները, ազատության բացակայությունը Մոեմը ներկայացնում է *“obligations”*, *“responsibilities”* բառերի միջոցով, ինչպես նաև *“I have never felt entirely myself”* ասույթի կիրառմամբ: Այսպիսով, վերոնշյալ ինքնամիջտեքստային տարրերն ուղղորդում են ընթերցողին

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 185:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 66:

բացահայտելու Մոեմի վերաբերմունքն Անգլիայի հանդեպ: Հարկ է նկատել, որ գեղարվեստական վեպում Մոեմը, օգտագործելով *“exile”* բառը, ինչպես նաև *“to be ground down by convention”* արտահայտությունը, հավելյալ գնահատողական երանգ է հաղորդում հերոսի խոսքին, մինչդեռ ինքնակենսագրական վեպը տարբերվում է ոճական հնարների սակավությամբ:

Այսպիսով, Ս. Մոեմի «Ստրկություն մարդկային» և «Ամփոփելով անցած ուղին» երկերի լեզվատճական քննության արդյունքներն ամփոփելով՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ ինքնամիջտեքստայնությունը կարելի է դիտարկել որպես հեղինակի անհատական ոճի բացահայտման միջոց: Վերոնշյալ ստեղծագործություններում առկա ինքնամիջտեքստային տարբեր տարրերի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում վեր հանելու «ազատություն» հասկացույթի մոեմյան ընկալումն ու մեկնաբանումը: Ուսումնասիրությունները վկայում են, որ Ս. Մոեմը թե՛ «Ստրկություն մարդկային» վեպում և թե՛ «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպում «ազատություն» հասկացույթը զուգորդում է կամքի, ճակատագրի և երջանկության հետ, ինչն առկայացվում է անդրադարձնող տեքստում լեզվական տարբեր ցուցիչներով:

## АВТОИНТЕРТЕКСТУАЛЬНЫЕ РЕПРЕЗЕНТАНТЫ КОНЦЕПТУАЛЬНО-ЯЗЫКОВОЙ КАРТИНЫ МИРА ПИСАТЕЛЯ (НА МАТЕРИАЛЕ РОМАНА С. МОЭМА “ВРЕМЯ СТРАСТЕЙ ЧЕЛОВЕЧЕСКИХ” И АВТОБИОГРАФИЧЕСКОГО РОМАНА “ПОДВОДЯ ИТОГИ”)

АНАИТ МАКАРЯН

Целью данной работы является рассмотрение понятия “автоинтертекстуальность” как средства формирования идиостиля писателя. Анализ автоинтертекстуальных репрезентантов в романе С. Моэма “Время страстей человеческих” и автобиографического романа “Подводя итоги” позволяет выявить индивидуально-авторское восприятие концепта “свобода”. Результаты исследования показывают, что автор ассоциирует концепт “свободу” с “волей”, “судьбой” и “счастьем” как в метатексте, так и в посттексте с помощью разных языковых маркеров.

**Ключевые слова** - автоинтертекстуальность, межтекстовые отношение, метатекст, посттекст, языковые маркеры

**AUTOINTERTEXTUAL MARKERS IN THE CONCEPTUAL AND LINGUISTIC  
PICTURE OF THE AUTHOR'S WORLD (BASED ON "OF HUMAN BONDAGE"  
AND "THE SUMMING UP" BY S. MAUGHAM)**

ANAHIT MAKARYAN

The present paper studies autointertextuality as a means of structuring the author's individual style. The analysis of the autointertextual markers in the novel "Of Human Bondage" and the autobiographical novel "The Summing Up" by S. Maugham discloses the author's individual perception and interpretation of the concept "freedom". The study in question has yielded some interesting conclusions: the writer associates the concept "freedom" with "will", "fate" and "happiness" both in the metatext and in the allusive text by means of various language markers.

**Key words** - autointertextuality, intertextual relations, metatext, allusive text, language markers.

# ԿՐՈՆԱԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ՍԻԼՎԱ ՊԱՊԻԿՅԱՆ

Հայերենի կրոնաեկեղեցական տերմինները բառակազմական վերլուծության ենթարկելով՝ հնարավորություն ենք ստանում պարզելու այս ենթահամակարգի տերմինակազմության օրինաչափությունները, առավել կենսունակ կաղապարները: Այս տերմինահամակարգում տերմիններ հիմնականում դառնում են գոյականները: Ըստ կազմության՝ կրոնաեկեղեցական տերմինները լինում են միաբառ և բառակապակցական: Միաբառ տերմիններն իրենց հերթին լինում են արմատական, ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր: Առանձնացվում են բարդ տերմինների տերմինային և ձևաբանական կաղապարները: Տերմին - բառակապակցություններն արտահայտում են որոշիչ-որոշյալի և հատկացուցիչ- հատկացյալի հարաբերություններ:

**Քանայի բառեր** – կրոնաեկեղեցական տերմիններ, գոյական, բարդ տերմիններ, ձևաբանական կաղապարներ, տերմինային կաղապարներ:

Համագործածական բառերի նման տերմինակազմությունը կատարվում է բառակազմական որոշակի կանոնների համաձայն: Տերմիններն ունեն մի առանձնահատկություն. դրանք «ստեղծվում են»<sup>1</sup> անհրաժեշտության թելադրանքով:

Ինչպես հայտնի է, տերմիններ հիմնականում դառնում են լիմաստ խոսքի մասերը: Գոյականներն իրենց անվանողական դերով առավել մեծ քանակ են կազմում: Ածականներն ու թվականները հիմնականում դառնում են բառակապակցական տերմինների բաղադրիչներ: Կրոնաեկեղեցական բնույթի բառերի մեջ հանդիպում են նաև տարարժեք բառեր<sup>2</sup>, որոնք այս տերմինահամակարգում հանդես են գալիս որպես երկակի գործառություն ունեցող բառեր: Այս տերմինահամակարգում տարարժեքություն արտահայտող բա-

<sup>1</sup> Г.О.Винокур, О некоторых явлениях словообразования в русской технической терминологии, М.-Л.,1959, с. 24.

<sup>2</sup> Տարարժեք բառերի հանգամանալից քննություն կատարել է պրոֆ. Լ. Խաչատրյանը «Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում», «Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան», «Գրաբարի բացատրական բառարան» (ձևաբանորեն տարարժեք բառեր) աշխատություններում և բազմաթիվ հոդվածներում:

ները հիմնականում երկարժեք են. կարելի է նշել և՛ որպես գոյական, և՛ որպես ածական հանդես եկող բառեր, ինչպես՝ *աղոթական, անեղ՝* «գ.,աստված,ած., չեղած», *ավերարանական, բեմական, եկեղեցական, ժողովող, երեց, հավատացյալ, հեթանոս, մատաղ, հրաշք, նեո, շուշուրակ, սուրբ, տեր* և այլն, համեմատաբար քիչ են ածական- մակբայ համատեղումներով բառերը՝ *առաքելաբար, աստվածորեն, ավերալից, հեթանոսաբար, հեթանոսական* և այլն:

Հայերենի կրոնանեկեղեցական տերմինները բառակազմական վերլուծության ենթարկելով՝ հնարավորություն ենք ստանում պարզելու այս ենթահամակարգի տերմինակազմության օրինաչափությունները, առավել կենսունակ կաղապարները:

Հայերենում կրոնանեկեղեցական տերմիններն արտահայտվում են մեկ բառով կամ բառակապակցությամբ: Միաբառ (համադրական) կրոնանեկեղեցական տերմինները լինում են արմատական, ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր: Բառակապակցական տերմինները բաղադրված են տարբեր խոսքի մասերով՝ գոյական + գոյական, ածական+գոյական, գոյական+դերբայ և այլն, և արտահայտում են տարբեր շարահյուսական հարաբերություններ՝ որոշիչ և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի:

Կատարել ենք կրոնանեկեղեցական բնույթի բառերի համաժամանակյա քննություն:

### 1. Միաբառ (համադրական) տերմիններ

**Արմատական տերմիններ:** Արմատական տերմիններն իրենց պարզ կազմության շնորհիվ հեշտությամբ յուրացվում են: Տերմինային կիրառության տեսակետից նույնպես դրանք հարմար են՝ կարճ, դիպուկ, հասկանալի:

Ինչպես գրում է ակադ. Գ.Ջահուկյանը. «Լեզվի զարգացման յուրաքանչյուր փուլում լինում են ա/ բառեր, որոնք այդ լեզվով խոսողների գիտակցության մեջ հանդես են գալիս որպես անվերլուծելի տարրեր, թեև պատմականորեն դրանք կարող են բաղադիր լինել...»<sup>3</sup>: Այդ պատճառով կարևոր է նկատի ունենալ լեզվի զարգացման շրջանները, քանի որ լեզվի անցյալ փուլում բառը կամ տերմինը կարող է արմատական չլինել, ինչպես գիտակցվում է այժմ:

Հայերեն կրոնանեկեղեցական արմատական տերմիններ՝ *աջ* (որոնց մեջ պահվում են սրբերի մատուցները), *երեց, է, ընծա, խաչ, կարգ, հոգի, հովիվ,*

<sup>3</sup> Գ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 150:

հոյս, մաքաղ, սուրբ, Կրոն և այլն:

Կրոնաեկեղեցական արմատական տերմինները կենսունակ են, գործածվում են մեծ հաճախականությամբ, մասնակցում են բաղադրյալ բառերի կազմությանը (ածանցում, բարդացում), դառնում են հիմնական բաղադրիչ կապակցական տերմինների կազմության մեջ:

Արմատական են համարվում նաև փոխառյալ տերմինները, որոնք փոխատու լեզվում գուցեև բաղադրյալ են եղել, սակայն փոխառու լեզուն չի տարբերակում այդ դրանք գիտակցվում են որպես պարզ, արմատական տերմիններ: Հայերենի կրոնաեկեղեցական տերմինահամակարգում փոխառությունների տեսակարար կշիռը մեծ է: Այդ փոխառությունների հիմնական մասը հին կամ հնագույն փոխառություններ են՝ կատարված ասորերենից, հունարենից և իրանական լեզուներից: Դրանց մի մասը պատմական զարգացման, հասարակական-քաղաքական իրադարձությունների, գաղափարախոսության փոփոխության հետևանքով դուրս է եկել գործածությունից, մի մասն իմաստափոխվել է, մյուս մասն էլ իր առաջնային նշանակությամբ գոյատևել է մինչև հիմա:

Փոխառյալ արմատական կրոնաեկեղեցական տերմիններ՝ աբեղա, ագապ, ալելուիա, ամեն, բախտ, դաբիր, դրախտ, եղեմ, եպիսկոպոս, ծոմ, կախարդ, կաթողիկոս, կանոն, կոնդակ, հերետիկոս, հրեշ, հրեշտակ, մամոնա, մարտիրոս, մեռոն (մյուռոն), մոզ, մոմ, քահանա, քարոզ, քերովբե, օլսաննա և այլն:

Որոշ փոխառյալ բառամիավորներ փոխատու լեզվում նախադասություններ կամ արտահայտություններ են, որոնք, սակայն, հայերենում դիտվում են որպես մեկ բառ, ինչպես՝

*Ալելուիա* (եբրայերեն) - «Գովեցե՛ք, փառաբանեցե՛ք Աստծուն»

*Կիրէլէիստն* (հունարեն) - «Տե՛ր, ողորմես»

*Մարանաթայ* (ասորերեն) - «Տերը գալու է, զգո՛յշ եղե՛ք»

*Պոսութթոս* ( հունարեն) - «Մերձեցի՛ր, ո՛վ Աստված»

*Սիկիրիէ* (հունարեն) - «Քե՛զ, Տե՛ր» (Ս.Պտրգ.)

*Օրթի* (հունարեն) - «Ուղիղ կանգնեցե՛ք» (ավետարանի ընթերցումը լսելու համար):

## 2. Բաղադրյալ տերմիններ

**ա) Ածանցավոր տերմիններ:** Ածանցումն ինչպես ընդհանուր բառապաշարում, այնպես էլ տերմինակազմության մեջ ունի կարևոր դեր: Ածանցներն իրենց համակարգող հատկանիշի շնորհիվ հնարավորություն են տալիս

տերմինաբանությունը համակարգելու ոչ միայն բառակազմական, այլև իմացաբանական-հասկացական տեսակետից:

Կրոնակեղեցական տերմինների կազմությանը մասնակցում են գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և բայական ածանցները: Նախաձանցավոր կազմությունները քիչ են: Ընդհանրապես նկատելի է, որ բոլոր գիտակարգերի տերմինահամակարգերում վերջաձանցներով կազմված տերմինների քանակը գերազանցում է նախաձանցներով կազմվածներին:

Գոյականակերտ վերջաձանցներից կրոնակեղեցական տերմինակազմությանը մասնակցում են *-անոց*, *-անք*, *-արան*, *-արար*, *-անք*, *-ություն*, *-ուհի*, *-ք* և այլն.

*-անոց* - *աղոթանոց*, *եղբայրանոց*, *եպիսկոպոսանոց*, *միանձնանոց*, *կուսանոց*,

*-անք* - *աղաչանք*, *կախարդանք*, *մաղթանք*, *մեղանք*, *մեղանչանք*,

*-արան*- *աղոթարան*, *եպիսկոպոսարան*, *կաթողիկոսարան*, *սրբարան*, *պապարագարան*, *վեհարան*,

*-ություն* - *աղոթականություն*, *եկեղեցականություն*, *ընծայություն*, *կրոնավորություն*, *հեթանոսություն*,

*-ուհի* - *աստվածուհի*, *կախարդուհի*, *հրեշտակուհի*, *միանձնուհի*, *սարկավագուհի*, *վանականուհի*, *վանուհի* (տարբեր է Վանուհի անձնանունից, որ Վան քաղաքի անունից է), *սրբուհի*,

*-ք* - *աղոթք*, *անեծք*, *մաղթանք*, *մեղք*, *նզովք*, *վանք*:

Նախաձանցներից կարող ենք նշել՝ *ան*- անաստված, անապաշխար, անհավատ, *հակ*՝ հակաքրիստոս, *նախ*՝ նախէ, նախագուշակ, նախընծա, նախասարկավագ, նախավկա և այլն:

Ածականակերտ վերջաձանցներից կրոնակեղեցական տերմինակազմությանը մասնակցում են՝ *-ական*՝ աստուածական (ՆՀԲ), *աղոթական*, *կրոնական*, *մաղթական*, *մաղթողական*, *մոգական*, *հեթանոսական*, *հմայական*, *քրիստոնեական*, *-ավոր*՝ հոգևոր, *վեղարավոր*, *-ային*՝ աստվածային, դիվային, եկեղեցային, կրոնային, սրբային, *-եղեն*՝ աստուածողէն (ՆՀԲ) և այլն:

Ածականակերտ վերջաձանցներով կազմված տերմինները դառնում են բառակապակցական տերմինների բաղադրիչներ և հանդես են գալիս որոշի դերում՝ *կրոնական արարողություն*, *մոգական հնարք*, *հեթանոսական կրոն*, *հմայական աղոթք* և այլն:

Մակբայակերտ վերջաձանցներից գործածական են՝ *-բար*՝ աստվածահրաշաքար, դիվաբար, եկեղեցաբար, կախարդաբար, հեթանոսաբար, հրեշ-



տակաբար, քրիստոսաբար, **-պես**՝ կրոնավորապես, սրբավայելչապես, **-որեն**՝ հեթանոսորեն, քրիստոսորեն, բայական ածանցներից՝ **-ալ**՝ արիոսանալ, սրբանալ, քրիստոնեանալ, **-ել**՝ ապաշխարել, դրժել, կախարդել, կրոնավորել, հմայել, պատարագել, սրբացնել, սրբապղծել և այլն:

Կրոնակեղեցական ածանցավոր տերմինների քննությունը ցույց է տալիս, որ տերմինակազմությանը հիմնականում մասնակցում են գոյականակերտ վերջածանցները:

**բ) Բարդ տերմիններ:** Բառաբարդումը հայերենի բառակազմության ամենակենսունակ միջոցն է: Կրոնակեղեցական տերմինակազմությանը հիմնականում մասնակցում են իսկական (բուն) բարդությունները: Մեծ թիվ են կազմում հոդակապով բուն բարդությունները՝ *աղոթակից, աղոթատուն, անեծքաչոր, անեծքամոր (մորից անիծված), դիցապաշտ, երդմնասուր, երդմնահար (անընդհար երդվող), եկեղեցագավառ, եկեղեցակարգ, երիցապետ, կրոնասեր, հոգեհաց, հոգեթաս, հոգեգալուստ, երկայնահոգի, հեթանոսամիտ, հրեշտակապետ, մաղթակից, մասնատուփ (որի մեջ պահում են սրբերի մասունքներ), մեղապարտ, մեղսաբեր, նզովագիր, նզովախոս, սրբագումար, սրբակրոն, սրբալույս, քրիստոսասեր* և այլն:

Անհոդակապ բարդություններ՝ *աղոթեթ, աղոթասաց, աստվածեղբայր, աստվածընտիր, աստվածորդի, երդմնուրաց, երիցկին, հրեշտակերամ, վաներեց, քարոզգիրք, քրիստոսուրաց* և այլն:

Կրոնակեղեցական տերմիններ կազմելիս որոշ տերմիններ կազմում են տերմինաշարքեր, ինչպես.

**աստված** - *աստվածընկալ, աստվածորդի, աստվածերկյուղ, աստվածատուր, Աստվածաշունչ, աստվածամայր, աստվածավախ* և այլն,

**աղոթ** - *աղոթասեր, աղոթատուն, աղոթակից, աղոթածայն, աղոթականչ, աղոթամատյան,*

**ընծա** - *ընծայական, ընծայաբեր, ընծայատար, առաջընծա, նորընծա, պոնընծա,*

**հոգի** - *հոգեգալուստ, հոգեհաց, հոգեվարք, դառնահոգի, հեզահոգի*

**սուրբ** - *սրբահամ, սրբահառաչ, սրբահոգի, սրբամաքուր, սրբանվագ, սրբաշեն, սրբապահ* և այլն:

Մեծ թիվ են կազմում Քրիստոս բառով կազմված բարդ տերմինները<sup>4</sup>, ինչպես՝ քրիստոսադավ, քրիստոսադավան, քրիստոսաժին, քրիստոսանենգ, քրիստոսանվեր, քրիստոսապաշտ, քրիստոսասեր և այլն: Լ.Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանում» Քրիստոս-ով բաղադրված են քրիստոսածալալ, քրիստոսահիմն, քրիստոսամատն, քրիստոսանիշ, քրիստոսանմանութիւն, քրիստոսապահ, քրիստոսապատառ, քրիստոսաւետեալ, քրիստոսափառ (էջ 290,291), ՆԲ-ում՝ քրիստոնեաբանություն, քրիստոնեավարական, քրիստոնեավարություն, քրիստոսաէջ, քրիստոսակերտ, քրիստոսաշունչ, քրիստոսավայել, քրիստոսատիպ բառերը (ՆԲ, 482):

Ըստ բարդ տերմինի բաղադրիչների տերմինայնության՝ կրոնակեղեցական տերմինները կարելի է ներկայացնել տերմինային կաղապարներով: Առանձնացրել ենք հետևյալ կաղապարները.

1. տերմիններ, որոնց երկու բաղադրիչն էլ տերմին են՝ S+S՝ *դիվապաշտ, դիցապաշտ, հրեշտակակրոն, մոգակրոն, սրբակրոն,*

2. տերմիններ, որոնց առաջին բաղադրիչը ոչ տերմին է, երկրորդը՝ տերմին՝ ոչS+ S, ինչպես՝ *լուսահոգի, մահագուշակ,*

3. տերմիններ, որոնց առաջին բաղադրիչը տերմին է, երկրորդը՝ ոչ տերմին՝ S+ոչS, ինչպես՝ *աղոթակից, աստվածընկալ, հրեշտակագումար, նզովագիր, սրբախոս, քահանայապետ,*

4. տերմիններ, որոնց երկու բաղադրիչն էլ ոչ տերմին են՝ ոչS+ ոչS՝ *ծխապեր, ծխապրուն* (քահանա ունեցող ընտանիք, քահանայատուն), *փակակալ* (եկեղեցու բանալիները պահող մարդ) (արևմտ.):

Կարելի է առանձնացնել նաև կրոնակեղեցական բարդ տերմինների ձևաբանական կաղապարները՝ հաշվի առնելով, թե տերմինի բաղադրիչներն ինչ խոսքի մասի են պատկանում: Ըստ այդմ՝ առանձնանում են հետևյալ ձևաբանական կաղապարները.

1. գոյական+գոյական՝ *հրեշտակակարգ, հրեշտակերամ, մարգարեաժողով, մեհենազարդ, պատարագագոհ,*

2. ածական+ գոյական՝ *թովչաձայն, սրբալույս, սրբաձայն, սրբատեղ,*

3. գոյական +ածական՝ *հրեշտակագեղ, հրեշտակախառն,*

4. ածական+ածական՝ *սրբամաքուր, սրբապիղծ,*

<sup>4</sup> Տե՛ս **Դ.Գյուրջինյան**, Կրոնակեղեցական լեզվական միավորների քննություն, Ս.Էջմիածին, 2002, էջ 23-34:

5. գոյական+բայահիմք կամ բայարմատ՝ *աղոթահայց* (աղոթքով հայցված), *եղեմաբուխ*, *կրոնասեր*, *հրեշտակագոր* (հրեշտակից զորացած), *հրեշտակամորթ* (հրեշտակի մորթած՝ հիվանդ անասունը մորթելը), *հրեշտակակոխ* (հոգեառ հրեշտակի կոխած), *մեղսածին*, *մեղսապյաց*, *պատարագընկալ* (պատարագն ընդունող, աստված), *քրիստոսապյաց*, *քրիստոսասեր* և այլն:

Կրոնաեկեղեցական տերմինահամակարգում զգալի թիվ են կազմում բայական հարադրությունները: Բովանդակության պլանում դրանք մեկ բառային իմաստ են արտահայտում, օրինակ՝ աղոթք անել, աղոթքի կանգնել (ծնկել՝ աղոթելու համար), աղօթս առնուլ (ՆՀԲ)՝ (օրհնվել), անծծ թափել, աստվածաթափուր լինել (ՆԲ, 58), երդում-պատառ լինել, երդում-կրակ ուտել, ընծայաբեր լինել, ժամ անել (1.պատարագ մատուցել, 2. ննջեցյալի հիշատակին հոգու հաց տալ), ժամ կանչել (եկեղեցի հրավիրել), ժամ առնել (պատարագ մատուցել), հոգեդարձ լինել, հոգին ավանդել, հոգուն մեղք անել, հոգու պարտքը լինել, մեղքը մտնել և այլն:

**գ) Բարդածանցավոր տերմիններ:** Բարդածանցումը բարդացման և ածանցման համակցությամբ նոր բառերի կազմումն է: Այս եղանակով կազմված տերմինները բավականին մեծ քանակ են կազմում այս տերմինահամակարգում. դրանք հիմնականում ածանցման միջոցով կազմվում են համադրական բարդություններից, ինչպես՝ աղոթակայություն, աղոթամատույց, աղոթարկու, անիծադրություն, դիվահմայություն, երդմաստություն, հրաշագործություն, մեհենատեղի, պատարագամատույց, սրբապղծություն, սրբանունդ և այլն:

### **3. Բառակապակցական տերմիններ**

Բառակապակցական տերմինների մասին մասնագետների կարծիքները տարբեր են: Մասնագետների մի մասը գտնում է, որ տերմինային այս կառույցները նույնական են ազատ բառակապակցությունների հետ, մյուսները՝ դարձվածաբանական միավորների հետ, մի մասն էլ նմանեցնում է միաբառ տերմիններին:

Բառակապակցական տերմիններն ամբողջական միավորներ են: Ինչ վերաբերում է դարձվածաբանությանը, որն արտահայտում է աշխարհի «պատկերավոր նկարագիրը» (դարձվածքները կայուն, վերաիմաստավորված, պատրաստի միավորներ են), բառակապակցական տերմիններն ունեն ավելի շատ բնորոշիչ հատկանիշ և հանդես են գալիս որոշակի տերմինահամակարգերում՝ ի հակադրություն դարձվածաբանական միավորների, որոնք հանդես են գալիս ընդհանուր բառապաշարում:

Բառակապակցական տերմիններն ընդհանրություններ ունեն միաբառ տերմինների հետ: Ակադ. Վ. Վինոգրադովը բառակապակցությունը սահմանում է. «Բառակապակցությունը բարդ անվանումն է (именование)»<sup>5</sup>: Այն կատարում է նույն անվանողական դերը, ինչ բառը:

Մասնագետների մեծամասնությունը գտնում է, որ բառակապակցական տերմինները պետք է դիտել որպես բառային մակարդակի առանձին միավորներ՝ չնույնացնելով դրանք ո՛չ ազատ բառակապակցությունների, ո՛չ դարձվածաբանական միավորների և ո՛չ էլ միաբառ տերմինների հետ<sup>6</sup>:

Կրոնակեղեցական տերմինահամակարգում որոշակի քանակ են կազմում բառակապակցական տերմինները: Դրանք հիմնականում երկանդամ կառույցներ են՝ բաղկացած երկու բաղադրիչից՝ միջուկային տերմինից (միջուկից) և ծավալիչից<sup>7</sup> (կարող են լինել նաև բազմանդամ): Երկանդամ կապակցական տերմինի բաղադրիչներից մեկը՝ միջուկը, արտահայտվում է գոյականով, իսկ մյուս բաղադրիչը՝ ծավալիչը, կարող է լինել գոյական, ածական և այլն:

Կրոնակեղեցական տերմինահամակարգում հանդիպող բառակապակցական տերմիններ՝ *աջանման մասանց պահարան* (դրանց մեջ պահվում են սրբերի մասունքներ), *առաջնորդ ընծայման* (կնքահայր), *երիցանց երեց* (քահանայապետ), *երկնքի արքայություն*, *Երկնային թագավոր*, *ընծայոց սեղան* (եկեղեցու պահարան, որտեղ պահում են ընծաները), *թուղթ ընծայության* (ընծայական գիր, հավատարմագիր), *կոչումն ընծայության* (ընթերցվածագիր՝ ընթերցվածներ պարունակող գիրք)՝ ընթերցված-հատված Ա.Գրքից, որ տվյալ օրը կարդացվում է եկեղեցում), *լուսո հրեշտակ*, *հոգեառ հրեշտակ*, *պահապան հրեշտակ*, *թիվ պատարագ* (առանց երգեցողության պատարագ, որ քահանան կատարում է լուսայմբ), *կից պատարագ* (առավոտյան ժամերգությունից հետո կատարվող պատարագ), *ճաշու պատարագ* (կատարվում է ճաշի ժամին), *սրբոց տուն*, *պատճառի տունից* (տոնապատճառ), *սրբություն սրբոց* (վկայության խորանի ներքին մասը, որտեղ պահվում էր Ուխտի տապանակը, փխբ.՝ ամենասուրբ), *տերունական տուն* (եկեղեցի), *տերունական օր* (կիրակի) և այլն:

<sup>5</sup> В.Виноградов, Русский язык (Грамматическое учение о слове), М.-Л., 1947, с. 8.

<sup>6</sup> Այս մասին տե՛ս **Լ.Շ.Ղազանյան**, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային քննություն, Լեզվի և ոճի հարցեր, Ե., 1977, էջ 292-302:

<sup>7</sup> **Է.Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1987, էջ 342:

## СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЙ АНАЛИЗ АРМЯНСКИХ РЕЛИГИОЗНО-ЦЕРКОВНЫХ ТЕРМИНОВ

СИЛЬВА ПАПИКЯН

Словообразовательный анализ армянских религиозно-церковных терминов позволяет выявить наиболее продуктивные модели и закономерности терминообразования. В этой области терминами в основном становятся имена существительные. Армянские религиозно-церковные термины по образованию подразделяются на однословные и словосочетания. Однословные термины, в свою очередь, подразделяются на корневые, производные, сложные и сложно-производные. Выделяются терминологические и морфологические модели сложных религиозно-церковных терминов. Термины-словосочетания выражают соотношение определение-определяемое.

**Ключевые слова** – религиозно-церковные термины, имена существительные, сложные слова, терминологические модели, морфологические модели, словосочетания.

## THE WORD-BUILDING ANALYSIS OF ARMENIAN RELIGIOUS-ECCLESIASTICAL TERMS

SILVA PAPIKYAN

The word-building analysis of Armenian religious-ecclesiastical terms enables us to identify the patterns of term formation, the most productive models of this subsystem. In this field, terms are mainly coined from nouns. They are divided into single-word, or synthetic terms, and word combinations. The former are in turn subdivided into root, derivative, compound, and compound-derivative terms. Distinguished are terminological and morphological models of compound religious-ecclesiastical terms. The components of terms-collocations relate as attributes and definable words.

**Key words** – religious-ecclesiastical terms, nouns, derivative, terminological models, morphological models, collocations.

---

# ՀՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ КОНВЕРГЕНТНОЙ ЖУРНАЛИСТИКИ ВО ФРАНЦИИ И ВЕЛИКОБРИТАНИИ

АРТУР ХАЧАТРЯН

Франция и Великобритания традиционно входят в число стран, где конвергентная журналистика развивается наиболее динамично. Однако процесс медиаконвергенции в этих странах протекает разнонаправленно и имеет специфические черты. Они вызваны как объективными, так и субъективными причинами. Прежде всего следует подчеркнуть установленные законодательством ограничения, которые не только корректируют, но по сути определяют вектор развития конвергентной журналистики. Во Франции доминирующее положение в общей системе медиа имеют больших холдинги и именно в рамках этих холдингов и протекает процесс конвергенции. В Великобритании же конвергентная журналистика сформировалась на базе газет и онлайн-ресурсов.

**Ключевые слова** – Конвергентная журналистика, Великобритания, Франция, конвергентная редакция, ньюзрум, онлайн-журналистика, Интернет.

Французская конвергентная журналистика, как все медийное поле данной страны, имеет свои особенности развития. Первый, наиболее важный фактор, влияющий на процесс сближения, слияния СМИ – это наличие Закона о свободе коммуникации и концентрации СМИ. Долгие годы в западноевропейской стране идут дискуссии об угрозах, которые несут свободе слова различные медиакомпании, установившие контроль над медиа. Во Франции действует специальное ведомство-регулятор, которое следит за развитием медийного поля и имеет право вмешиваться в процессы.

В 2015 году французская газета «Le Monde» представила интересную инфографику о медиахолдингах, контролирующих львиную долю французского рынка<sup>1</sup>. Вот как охарактеризовал французский рынок СМИ историк Патрик Эвено: «Как и все состоявшиеся рынки, медиарынок также находится в руках определенного круга лиц, и это приводит к изменению структуры

---

<sup>1</sup> [http://www.lemonde.fr/actualite-medias/article/2015/09/07/150-postes-menaces-par-un-plan-social-au-sein-du-groupe-altice-media\\_4748222\\_3236.html](http://www.lemonde.fr/actualite-medias/article/2015/09/07/150-postes-menaces-par-un-plan-social-au-sein-du-groupe-altice-media_4748222_3236.html)

ландшафта СМИ»<sup>2</sup>. Французские эксперты также отмечают, что начавшийся в последние годы процесс концентрации и перераспределения медиарынка еще не закончился.

Процесс концентрации различных видов СМИ многие французские специалисты связывают с кризисом французских печатных СМИ. Газеты «France Soir», «Politis», «Liberation», «Le monde» в последние годы столкнулись с серьезными финансовыми проблемами. Зачастую решение проблемы заканчивается продажей газеты медиакорпорации. Например, приобретение «Altice Media Group» в 2015 году газеты «Liberation» и нескольких журналов, а также известной общественно-политической газеты «L'Express»<sup>3</sup>. Сделка была одобрена властями Франции, а регулятор не стал ей препятствовать. «Altice Media Group» является крупнейшей французской медиагруппой, в которую входят телеканалы, радиостанции, газеты и журналы, а также электронные ресурсы. Благодаря последним приобретениям компания стала способна конкурировать с такими французскими гигантами французского медиарынка, как «Le monde» и «Lagardère Active».

Таким образом, во Франции процесс сближения и слияния СМИ происходит на всех возможных уровнях: телевидение, радио, онлайн ресурс и мобильные приложения. Этим французский медиарынок отличается от британской и американской, однако если в США и Великобритании собираются постепенно отказываться от данного пункта закона, то во Франции все больше вопросов вызывает тот факт, что данный пункт закона не всегда функционирует и не способен остановить процесс концентрации СМИ.

Подводя промежуточные итоги, следует подчеркнуть следующее: во Франции закон о перекрестном владении СМИ и действующий специальный орган-регулятор, который призван контролировать рынок медиа в данной стране, играют символическую роль. Как показывают вышеприведенные примеры, французская конвергентная журналистика не сталкивается с серьезными ограничениями со стороны регулятора. Таким образом, в данной стране нет субъективных причин, препятствующих развитию конвергентной журналистики.

---

<sup>2</sup> [http://www.lemonde.fr/actualite-medias/article/2015/07/28/drahi-bollere-comment-les-medias-francais-se-recomposent\\_4702073\\_3236.html](http://www.lemonde.fr/actualite-medias/article/2015/07/28/drahi-bollere-comment-les-medias-francais-se-recomposent_4702073_3236.html)

<sup>3</sup> <https://news.rambler.ru/business/30415505-vlasti-frantsii-razreshili-patriku-drai-kupit-gazetu-lib-ration/>

Второе важное замечание: конвергентная журналистика во Франции развивается в условиях тотального контроля медиарынка со стороны медиахолдингов. Монополия французского медиарынка долгие годы вызывает дискуссии и протесты в среде журналистского сообщества. Монополистические группы обычно владеют сразу несколькими видами СМИ.

Разберем структуру нескольких французских медиахолдингов для лучшего понимания французского медийного рынка. «Altice Media Group» является одной из крупнейших медиagrupp, владельцем которой – Патрик Драи – в 2015 году начал скупать ряд французских СМИ. Такие известные французские медиа, как «L'Express», «Liberation», «BFM TV», радио «RMC» являются частью данной структуры. Всего данный медиахолдинг объединяет 56 СМИ. Все они так или иначе связаны друг с другом, хотя бы на уровне владельца.

Примечательно, что сближение и слияние французских СМИ происходит уже внутри медиахолдинга. Яркий пример – это группа «NextRadioTV», который также является частью «Altice Media Group». «NextRadioTV» включает в себя телеканалы, радиостанции и онлайн ресурсы. Наиболее приверженным к канонам конвергенции СМИ в группе является телерадиокомпания BFM, который состоит из нескольких телеканалов (BFM TV, BFM Business, BFM Paris), радиостанции (BFM Radio), а также нескольких сетевых СМИ. «BFM» является одним из крупнейших телеканалов Франции, который себя позиционирует как «первый информационный канал Франции». Как отмечает ведущий «BFM» Филипп Блош, «будучи первым информационным французским телеканалом, BFM первым среди конкурентов запустил HD вещание для устройств iPad, что позволило телеканалу набрать ценные очки»<sup>4</sup>.

Как отмечают французские теоретики, концепция «глобального медиа» заключается в том, чтобы объединить редакции в одном большом пространстве, создать что-то вроде командно-диспетчерского пункта. «Ньюзрум» принимает всю информацию, поступающую от журналистов: фото, видео, аудио, текст. Затем данная информация редактируется и выпускается для каждого отдела: текст и изображения для газеты. Звук для радио. Текст, звук, изображение и видео для электронного ресурса. Данную модель можно назвать классическим вариантом современной конвергентной журналистики, хотя мно-

---

<sup>4</sup> <http://toutvamaal.philippebloch.com/PDF/la-lettre-de-l-expansion.pdf>



гие топ-менеджеры СМИ полагают, что более эффективной является горизонтальная интеграция.

Поскольку ключевой задачей «глобального медиа» является удержание и увеличение аудитории, в данной модели наибольшее значение уделяется созданию различных платформ для достижения вышеотмеченной цели. Но наличие нескольких платформ не предполагает наличие нескольких редакций. Преимущество конвергентной редакции заключается в том, что на место события нужно отправлять одну «съёмочную» группу или одного журналиста, который может обеспечить информацией весь ньюзрум, меж тем раньше каждая редакция отправляла своего журналиста или группу журналистов. Таким образом, происходит оптимизация совместной работы нескольких редакций.

Во Франции одним из первых к практике совместного производства контента с другими платформами приступила французская общественная телерадиокомпания «France Télévisions», которая входит в группу «France Télévisions Interactive (FTVI)». Редакция, состоящая из порядка тридцати человек, производила информацию для сайтов всех каналов. Часть персонала вышла из служб телетекста, так как была необходимость не в профессионалах с аудиовизуальными навыками, а в людях, которые могли писать текст. Видеосюжеты делались командой телевизионных новостей.

Очевидно, что как во Франции, так и в других странах эволюция и развитие конкретного СМИ вписывается в общую логику развития всей медиасистемы. Однако французские СМИ индивидуально выбирают свой вариант конвергенции и организации работы редакции. Разумеется, в будущем команда классического телеканала – журналисты, монтажники, редакторы – будет сокращаться. Классические телевизионные редакции будут постепенно разрушаться, уступая место универсальным журналистам, которые могут писать, снимать, монтировать и выложить свой материал в Сеть, но «традиционные телевизионные редакции могут быть объединены с редакциями веб-издания, могут сотрудничать между собой, а могут быть разделены. Нет универсальной модели»<sup>5</sup>, - констатирует Лорен Джеффрой, сотрудник «Гринвич Консалтинг». «В каждом конкретном СМИ это зависит от множества факторов:

---

<sup>5</sup> <http://www.ina-expert.com/e-dossier-de-l-audiovisuel-les-metiers-de-l-audiovisuel-a-l-heure-du-media-global/le-journalisme-s-adapte-a-la-convergence-des-medias.html>

распределения обязанностей, тематической направленности, от менеджмента, от желания акционеров»<sup>6</sup>. На примере французских СМИ можем сделать вывод, что у каждого конкретного СМИ своя степень конвергенции, степень сближения и слияния. Исходя из различных факторов, топ-менеджеры индивидуально выбирают свой вариант развития. Таким образом, наблюдается разная степень конвергенции.

Говоря о конвергентных редакциях и конвергентной журналистике в Великобритании, прежде всего нужно упомянуть о действующих в данной стране на законодательном уровне ограничениях перекрестного владения СМИ, которые определяют вектор развития всей конвергентной журналистики в стране. В Великобритании данный пункт закона более строгий, чем в других европейских странах, и предполагает запрет на получение лицензии на аналоговое наземное телевидение и радиовещание, если тираж принадлежащей собственнику газеты составляет 20% или более от общенационального газетного тиража.

В стране проводятся строгие проверки показателей продаж газет для того, чтобы не допустить превышения установленного лимита. В Великобритании развитие конвергентной журналистики осуществляется посредством интеграции печатной и интернет-платформы. В этом заключается главная специфика конвергентной журналистики в данной стране.

Великобритания традиционно остается в числе стран-лидеров по уровню доступа населения к Интернету и количеству пользователей сети. Согласно последним данным Международного союза электроники (International Telecommunication Union)<sup>7</sup>, по индексу развития информационно-коммуникационных технологии (ИКТ) в период 2010-2015 гг., Великобритания занимает 4 место, уступая только Республике Корея, Дании и Исландии. Согласно данным 2015 года, на острове Интернетом пользуется порядка 85% населения. Данные показатели позволяют прийти к выводу, что даже при наличии жесткого закона о регулировании перекрестного владения СМИ, в Великобритании есть серьезный потенциал для развития конвергентной журналистики, прежде всего на основе интеграции печатного и электронного СМИ.

---

<sup>6</sup> См. там же

<sup>7</sup> <http://www.itu.int/ITU-D/ict/statistics/material/excel/2010/InternetUsersPercentage00-10.xls>

В Великобритании, наряду с вышеуказанными видами СМИ, активно развивается мобильная платформа, которая считается перспективным направлением, так как здесь мобильная индустрия также развивается очень динамично. Все ведущие британские газеты, в числе которых “The Times”, “The Telegraph”, “The Daily Express”, “The Sun”, запустили свои iPad приложения, что создает возможности для охвата более широких слоев населения.

Проводя промежуточные итоги, можем сказать, что британская конвергентная журналистика имеет свой строго очерченный законодательством вектор развития – интеграция происходит на платформе печатной прессы путем слияния или же сближения газеты, интернет-издания, а также различных приложений для гаджетов, посредством которых журналистский материал (мобильная версия газет, электронная бумага и т.д.) доставляется пользователю. Данное явление имеет и субъективные причины, связанные с экономической развитостью страны, высоким уровнем благосостояния страны, что делает возможным пользование различными информационными технологиями и техникой.

Ведущие британские газеты, в числе которых «The Times», «The Guardian», «The Independent», «The Sun», обладают серьезной технической базой, что и позволяет создавать электронные ресурсы, соответствующие всем основным канонам мультимедиа. Электронные версии вышеуказанных британских ресурсов активно используют тематические водкасты и подкасты. Это означает, что все они уделяют большое внимание таким составным частям мультимедиа, как видео и аудио.

Особенность британских электронных ресурсов заключается в том, что они не стремятся конкурировать с телевидением и ставят перед собой иные цели. Прежде всего для ведущих британских газет приоритетным является не качество видеоматериала, а скорость его доставки пользователю. Видеоматериалы не являются основной частью журналистского материала, а лишь сопровождают и дополняют его. Поэтому, средний хронометраж таких видеоматериалов – это 15-20 сек., что позволяет пользователю составить визуальное представление о явлении.

Таким образом, британская конвергентная журналистика, несмотря на серьезные ограничения на законодательном уровне, имеет довольно широкий радиус распространения. Развивается она как на уровне общенациональной

прессы, так и региональной, что создает конкурентную среду. В этих условиях британские СМИ должны быть максимально бдительны, дабы не упустить из виду важнейшие тенденции. К таким приоритетным направлениям относятся новые медиаплатформы (мобильная платформа, e-paper, kindle, приложения для различных операционных систем).

Британский мобильный рынок выделяется практически стопроцентным охватом населения. Объем британского мобильного рынка в 2006 году достиг цифры в 1,3 млрд. долларов. С увеличением объема рынка британские СМИ стали серьезно рассматривать мобильную платформу как один из основных векторов развития. Именно в это время британские СМИ начали разрабатывать и запускать свои мобильные версии. Свои мобильные версии запустили «The Telegraph», «The Times», «The Financial Times», «The Mirror», то есть все лидеры британской печатной журналистики.

Время показало, что менеджеры ведущих газет не ошиблись, сделав ставку на мобильную платформу. Благодаря новому направлению развития британские печатные СМИ получили дополнительную возможность «выйти» на пользователя, а также платформу для рекламы. Таким образом, интеграция или слияние британских СМИ происходит на трех основных платформах: пресса, онлайн ресурс и мобильное приложение.

Подводя итоги, следует подчеркнуть, что конвергентная журналистика во Франции и Англии развивается разнонаправленно. Особенностью французской конвергентной журналистики является ее развитие в рамках медиахолдингов. Несмотря на наличие общественного регулятора, в этой стране нет субъективных причин, препятствующих концентрации медиа в рамках одной структуры. В Англии Закон перекрестного владения СМИ действует неукоснительно, а потому в этой стране четко прослеживается вектор развития конвергентной журналистики, и протекает данное развитие на основе сближения газет и онлайн-ресурсов. В этих условиях медиасообществу приходится искать новые платформы для распространения контента. Именно по этой причине в Великобритании получили широкое распространение мобильные приложения.

### **Список использованной литературы**

1. Амзин А. Новостная интернет-журналистика [Электронный ресурс]. – Москва, 2013. – 136 с. URL: <http://alex-alex.ru>

2. Баранова Е.А. Конвергентная журналистика. Теория и практика. Учебное пособие для бакалавриата и магистратуры. – М.: Издательство Юрайт
3. Баранова Е.А. Конвергенция СМИ глазами российских журналистов-практиков
4. Вартамова Е.Л. Конвергенция как неизбежность. О роли технологического фактора в трансформации современных медиасистем // От книги до Интернета. Журналистика и литература на рубеже нового тысячелетия / Под ред. Я.Н. Засурского и Е.Л. Вартамовой. М., изд-во Моск. Ун-та, 2000.
5. Луканина М.С. Текст средств массовой информации и конвергенция [Электронный ресурс] // Политическая лингвистика, 2006.\
6. Пустовалов А. В. Мультимедийность как фактор успеха: интернет-СМИ Пермского края // Журналистика в 2013 году.
7. <https://news.rambler.ru/business/30415505-vlasti-frantsii-razreshili-patriku-draikupit-gazetu-lib-ration/>
8. <http://www.itu.int/ITU-D/ict/statistics/material/excel/2010/InternetUsersPercentage00-10.xls>
9. <http://www.ina-expert.com/e-dossier-de-l-audiovisuel-les-metiers-de-l-audiovisuel-a-l-heure-du-media-global/le-journalisme-s-adapte-a-la-convergence-des-medias.html>
10. <http://toutvamaal.philippebloch.com/PDF/la-lettre-de-l-expansion.pdf>
11. [http://www.lemonde.fr/actualite-medias/article/2015/09/07/150-postes-menaces-par-un-plan-social-au-sein-du-groupe-altice-media\\_4748222\\_3236.html](http://www.lemonde.fr/actualite-medias/article/2015/09/07/150-postes-menaces-par-un-plan-social-au-sein-du-groupe-altice-media_4748222_3236.html)

**ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՎ ՄԵԾ  
ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ**

**ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Կոնվերգենցիա լրագրությունը Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում զարգանում է առավել արագ տեմպերով: Սակայն այս երկրներից յուրաքանչ-յուրում մեդիականվերգենցիան ունի իր զարգացման առանձնահատկությունները, որոնք կրում են օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթ: Կարևոր է մատնանշել որոշակի օրենսդրական «սահմանափակումներ», որոնք ոչ միայն ազդում, այլև ձևավորում են կոնվերգենցիա լրագրության զարգացման ուղղությունները նշված երկրներում: Ֆրանսիական մեդիա ոլորտում գերիշխող տեղ ունեն մեդիահոլդինգները, և մեդիականվերգենցիան ընթանում է հենց այդ կառույցների շրջանակներում, իսկ Մեծ Բրիտանիայում կոնվերգենցիա լրագրությունը ձևավորվել է թերթերի և առցանց լրագրության հիման վրա:

***Բանալի բաներ*** – Կոնվերգենցիա լրագրություն, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, առցանց լրագրություն, համացանց:

## DEVELOPMENTAL PECULIARITIES OF CONVERGENT JOURNALISM IN FRANCE AND THE UK

ARTHUR KHACHATRYAN

France and the UK are among those countries where convergent journalism is developing rapidly. However, the process of media convergence in these countries evolves in different directions and has distinctive features, which are triggered by both objective and subjective factors. First, we would like to underline the limitations set by the legislature, which do not only adjust, but actually set a vector for the development of convergent journalism. In France, the media system is dominated by big holdings, and the process of convergence occurs within the framework of those holdings, whereas in the UK, convergent journalism has been formed based upon newspapers and online resources.

**Key words** – Convergent process, multimedia, convergent editions, digital journalism, social networks.

---

# ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՔՅԱՆ (2003 Թ.) ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՁ

### ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Նպատակ է դրվել ուսումնասիրելու արաբական միասնության շուրջ խնդիրները 2003 թ. ԱՄՆ-ի՝ Իրաք ներխուժման ինչպես նախօրեին և ընթացքում, այնպես էլ պատերազմի ավարտից հետո: Վերլուծության է ենթարկվել Մերձավոր Արևելքի ազդեցիկ արաբական երկրների վերաբերմունքն իրաքյան ճգնաժամին: Սիրիայի, Հորդանանի, Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի և մյուս արաբական երկրների միջև առկա էին խոր հակասություններ պատերազմին արաբական մասնակցության շուրջ: Ամփոփ ուսումնասիրվել է նաև Արաբական պետությունների լիգայի ակտիվությունը տվյալ ժամանակահատվածում: Հատուկ ուշադրության է արժանացել նաև Իրանի մասնակցությունը պատերազմին: 2003թ. իրաքյան պատերազմը խախտեց տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը, ու Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական նոր իրավիճակ ստեղծվեց:

**Բանալի բաներ** – միջարաբական տարածայնություններ, Սադդամ Հուսեյն, Մերձավոր Արևելք, հակաիրաքյան կոալիցիա, Հոսնի Մուբարաք, Ֆահդ թագավոր, Աբդուլլահ 2-րդ, Բաշար Ասադ, շեյխ Ջայեդ, միասնության բացակայություն, ուժերի հավասարակշռության խախտում:

Հոդվածի նպատակն է վերլուծել 2003 թ. պատերազմին նախորդող ու հաջորդող ժամանակաշրջանում արաբական աշխարհում տիրող իրավիճակը և բացահայտել արաբական երկրների միջև համագործակցության տապալման պատճառները:

2002 թ. նոյեմբերին Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը հարցազրույց տվեց իր վաղեմի ընկեր, AI-Սեսու ամսագրի թղթակից, եգիպտացի Սայիդ Նասսարին: Նա նշեց, որ Բաղդադից հետո հերթը կհասնի նաև Դամասկոսին ու Կահիրեին, և որ ԱՄՆ-ը գործում է Իսրայելի շահերից ելնելով: Ըստ Սադդամ Հուսեյնի՝ Սաուդյան Արաբիային վիճակված է մասնատվել, Մերձա-

վոր Արևելքում չի լինի տարածքով ավելի մեծ պետություն, քան Իսրայելը, իսկ արաբական երկրների նավթը կվերահսկվի ամբողջությամբ ԱՄՆ-ի կողմից: «Իրաքն, ըստ էության, միայնակ է պայքարում այս ծրագրերի դեմ, քանի որ մյուս արաբական երկրները դեռևս չեն հասկանում սպառնալիքը: ԱՄՆ-ի ու Իսրայելի համար բոլոր արաբները նույնն են: Ինչն այսօր ծրագրվում և տեղի է ունենում մեզ հետ, վաղը կծրագրվի ու տեղի կունենա նաև մյուս արաբական երկրների դեմ», - նշեց Սադդամ Հուսեյնը<sup>1</sup>:

Ամերիկյան պաշտոնական օղակները տեղեկացրին Իսրայելին, Թուրքիային ու դաշնակից արաբական վարչակարգերին, որ ռազմական գործողությունները կսահմանափակվեն միայն Սադդամ Հուսեյնի վարչակարգի տապալումով<sup>2</sup>:

2003 թ. մարտին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ձևավորված կոալիցիոն ուժերը մտան Իրաք: ԱՄՆ-ի կողմից հրապարակված 48 դաշնակից երկրների ցանկում էր նաև Քուվեյթը: Մինչև պատերազմը Իրաքի նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցներից մեծապես օգտվում էին հենց Քուվեյթն ու Սաուդյան Արաբիան<sup>3</sup>:

Ապրիլ ամսին Սադդամ Հուսեյնը արդեն պարտություն կրեց: Հատուկ նշվեց իրաքյան ուժերի ոչ մարտունակ լինելը: Իրաքյան զինվորները մասսայաբար գերի էին հանձնվում<sup>4</sup>: 2003 թ. պատերազմը բացառություն չկազմեց արաբական միասնության առումով: Տեղի ունեցավ սկզբունքների, շահերի ու հետաքրքրությունների անհամաձայնություն:

Մի շարք հեղինակներ նշում են, որ դեռևս մինչև պատերազմի սկսվելը Եգիպտոսը պատրաստ էր միանալու Իրաքին Իսրայելի դեմ ծավալված պայքարում: Այդ իսկ պատճառով Եգիպտոսում 2002 թ. վերջին սկսվեցին «Թահիրի» («ազատագրում») զինավարժությունները: Նմանատիպ զինավարժություններ տեղի էին ունեցել նաև մինչև 1973 թ. Յոմ Կիպուրի պատերազմը:

<sup>1</sup> **Yossef Bodansky**, *The Secret History of The Iraq War*, USA, 2004, 570 pages, pp. 78-80.

<sup>2</sup> Նույն տեղում, p. 39:

<sup>3</sup> Ахмед Али Нур Сахаб. Война в Ираке: Основные причины и предпосылки. Ученые записки УО «ВГУ им. П.М.Машерова» Том 9. 210. стр 119-125. էջ 122

Youssef Bassil, *The 2003 Iraq War: Operations, Causes and Consequences*, Beirut, Lebanon, (JHSS), IOSR Journal of Humanities and Social Science, Volume 4, Issue 5 (Nov. - Dec. 2012), PP 29-47 Connie Veillette, "CRS Report for Congress", 10 February 2005.

<sup>4</sup> **Նիկոլայ Հովհաննիսյան**, Արաբական երկրների պատմություն, 3-րդ հատոր, Երևան, 839 էջ, էջ 547:

Yossef Bodansky. նշվ. աշխ., էջ 46:



Այդ գինավարժությունների նպատակն էր ստուգել եգիպտական բանակի ռազմական պատրաստվածության աստիճանը: Զորավարժությունների անմիջական ղեկավարն էր Եգիպտոսի պաշտպանության նախարար Մուհամմեդ Հուսեյն Տանտաուի<sup>5</sup>: ԱՄՆ-ը ևս ակնկալում էր Եգիպտոսի աջակցությունն Իրաքի դեմ հնարավոր պատերազմում: Դա պայմանավորված էր Մուբարաքին տրամադրվող միլիարդավոր ամերիկյան դոլլարներով<sup>6</sup>:

Դժվար իրավիճակում հայտնվեց նաև Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդը: 2002 թ. ամռանը երկրի ներսում իրավիճակը սրվեց այն աստիճան, որ Ֆահդը ապաստան գտավ Ժնևում: Ֆահդ թագավորը փորձեց իսլամիստներին իր կողմը գրավել՝ խիստ հակաամերիկյան դիրքորոշում որդեգրելով: Նա Ժնևում հանդիպեց Եգիպտոսի նախագահ Մուբարաքին ու ԱՄԷ-ի նախագահ շեյխ Ջայեդ բին Սուլթան ալ-Նահայանին: Հանդիպումից հետո Մուբարաքը տեղեկացրեց ամերիկյան կողմին, որ չի պատրաստվում վերջինիս որևէ ռազմական օժանդակություն ցուցաբերել Սադդամ Հուսեյնի դեմ պատերազմում<sup>7</sup>:

ԱՄԷ-ի նախագահ շեյխ Ջայեդը հետագայում հայտարարեց, որ իրենք ամեն կերպ փորձել են կանխել պատերազմը, սակայն իրաքյան կառավարությունն ուշադրություն չի դարձրել հորդորներին: ԱՄԷ-ն նաև խորհուրդ է տվել Սադդամ Հուսեյնին ինքնական հրաժարական տալ: Այդպիսով, ըստ ԱՄԷ-ի իշխանությունների, հնարավոր կլիներ խուսափել վերջին երկու տասնամյակում արդեն իսկ երրորդ պատերազմից<sup>8</sup>:

Մուբարաքն ամեն կերպ փորձեց թույլ չտալ ամերիկամետ վարչակարգի հաստատում Իրաքում: Ամերիկամետ Իրաքը կարող էր լրջորեն խախտել ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: Ամերիկյան զեներալ Թոմմի Ֆրենչըը նույնիսկ այցելեց Կահիրե՝ իրաքյան պատերազմում Եգիպտոսի մասնակցության հարցը քննարկելու համար: Եգիպտոսը 2002 թ. նոյեմբերին հրաժարվեց ԱՄՆ-ին հատուկ իրավունքներ շնորհելուց Սուեզի ջրանցքով ռազմական նավեր փոխադրելու հարցում: Այդպիսով, Եգիպտոսն ազդակներ

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 37, 38:

<sup>6</sup> [http://www.cfr.org/egypt/strengthening-us-egyptian-relationship-cfr-paper/p8666\(20/01/2017\)](http://www.cfr.org/egypt/strengthening-us-egyptian-relationship-cfr-paper/p8666(20/01/2017))

<sup>7</sup> **Yossef Bodansky**, նշվ. աշխ., p. 20-22.

<sup>8</sup> United Arab Emirates Yearbook 2004, Abu Dhabi, 319 pages, p. 68.

ուղարկեց արաբական երկրներին, որ չի պատրաստվում մասնակցել Իրաքի դեմ պատերազմին<sup>9</sup>:

Սաուդյան Արաբիայի ղեկավարությունը ևս ակտիվ մասնակցություն չունեցավ Իրաքի դեմ պատերազմում: Դա հիմնականում պայմանավորվեց երկրում արմատական իսլամիստական տրամադրությունների ակտիվացմամբ: Բացի դրանից, Սաուդյան Արաբիայի արքայական դինաստիան վախենում էր մեկ այլ արաբական երկրի վարչակարգի տապալմանը մասնակցելուց, քանի որ այն կարող էր «դոմինոյի էֆեկտ» ունենալ: Ֆահդ թագավորն անհանգստացած էր նաև ամերիկամետ Իրաքի ստեղծման գաղափարից: Այդպիսով, կրնններ Սաուդյան Արաբիայի կարևորությունը Վաշինգթոնում: Սաուդյան Արաբիայի արքայազն Աբդալլահը կողմնակից էր ԱՄՆ-ին հակառակվելուն: Ներպետական իրավիճակը կրկին սրվեց, և Ֆահդ թագավորը տեղափոխվեց այս անգամ Մարբեյլա: Նա չէր կարողանում վերջնական որոշում ընդունել՝ թույլատրել՝ ԱՄՆ-ին օգտվել իր տարածքից Իրաքի դեմ հարձակվելու համար, թե՞ ոչ: Երկրի բնակչությունը կտրականապես դեմ էր որևէ արաբական երկրի դեմ գործելուն՝ ի շահ Արևմուտքի: Հոկտեմբերին կրկին պայթյուններ հնչեցին Էլ-Ռիադում: Սաուդյան Արաբիայի վերնախավն ահաբեկված էր իսլամիստների կողմից: Նոյեմբերի 16-ին Էլ-Ռիադի Ալ-Շաֆաա արվարձանում բախումներ տեղի ունեցան կառավարական ուժերի ու արմատականների միջև<sup>10</sup>:

1999 թ. Հորդանանի գահին բարձրացած Աբդուլլահ 2-րդը ևս հայտարարեց Իրաքի դեմ պատերազմին չմասնակցելու մասին: Սակայն մամուլում լուրեր շրջանառվեցին, թե, պաշտոնապես Իրաքի դեմ զինված հարձակմանը դեմ արտահայտվելով, վարչակարգը գաղտնի բանակցություններ է վարել հարձակումն իր տարածքից իրականացնելու շուրջ: Ի վերջո Հորդանանը չմիացավ կոալիցիային, սակայն պատերազմի ընթացքում Հորդանանն ակտիվորեն դաշնակցեց ԱՄՆ-ի ու Իսրայելի հետ: Հորդանանյան Ռուշաիդ բնակավայրից պարբերաբար նորանոր ուժեր էին հասնում Արևմտյան Իրաք<sup>11</sup>: Դա հիմնականում պայմանավորվեց ԱՄՆ-ի, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի ու

<sup>9</sup> Yossef Bodansky, նշվ. աշխ., p. 61, 62.

<sup>10</sup> Նույն տեղում, p. 62-64.

<sup>11</sup> Նույն տեղում, p. 55-60.

The Guardian, 10 July 2002, <https://www.theguardian.com/international> (03/01/2017)  
Curtis R. Ryan, “Jordan First”: Jordan’s Inter-Arab Relations and Foreign Policy under King Abdullah 2nd, Institute of Arab studies, 2004 pp. 55.

Ծոցի մյուս նավթով հարուստ արաբական պետությունների հետ Հորդանանի ունեցած հարաբերություններով: Ինչպես պետությունների մեծ մասի, այնպես էլ Հորդանանի տնտեսությունը հիմնված էր նավթի վրա: Նավթը Հորդանանի տնտեսության թիվ մեկ հիմնախնդիրն էր: Մինչև 2003 թ. պատերազմը Հորդանան եկող նավթն ամբողջությամբ Իրաքից էր գալիս: Այնուամենայնիվ, հորդանանա-իրաքյան հարաբերությունները չէին հիմնվում միայն նավթի վրա: Նավթը խթան հանդիսացավ բազմակողմ հարաբերությունների զարգացման համար: Իրաքն ապահովում էր Հորդանանի նավթի որջ պաշարը 100 տոկոսով: Սակայն հատկանշական է, որ ամբողջ մատակարարվող նավթի կեսն անվճար էր տրամադրվում, իսկ մյուս կեսը սովորաբար կես գնով: Այս իսկ պատճառով 2003 թ. Հորդանանը մտահոգված էր. արդյոք կհայտնվի՞ որևէ այլ պետություն, ով կհամաձայնի նման պայմաններով նավթ մատակարարել: Հենց այդ դրդապատճառներից ելնելով՝ Հորդանանը սկսեց հարաբերություններ վերականգնել «նավթային թագավորությունների»՝ Ծոցի արաբական երկրների հետ<sup>12</sup>:

Հարաբերությունները ԱՄՆ-ի և Հորդանանի միջև այնքան էին ջերմացել 1990-ականների վերջին 2000-ականների սկզբին, որ ԱՄՆ-ի Կոնգրեսը կողմ քվեարկեց երկու երկրների միջև ազատ առևտրի պայմանագրին: Դա դարձավ ԱՄՆ-ի առաջին նմանատիպ պայմանագիրն արաբական երկրի հետ: Մեծացավ նաև ԱՄՆ-ից եկող վարկի չափը՝ Հորդանանը դարձնելով ԱՄՆ-ից ամենամեծ վարկ ստացող չորրորդ երկիրը (Իսրայելից, Եգիպտոսից և Կոլումբիայից հետո)<sup>13</sup>: ԱՄՆ-ը նաև սկսել էր ֆինանսավորել ամերիկա-հորդանանյան համատեղ զինավարժությունները հորդանանա-իրաքյան սահմանին գտնվող Ռոշաիդ բնակավայրում 2002 թ. սեպտեմբերից: Շուրջ 4.000 ամերիկյան զինվորականներ ժամանեցին Հորդանան<sup>14</sup>:

Ե՛վ ամերիկացիները, և՛ Սադդամ Հուսեյնը վստահ էին, որ Հորդանանն

---

<sup>12</sup> **Kamel S. Abu Jaber**, “Jordan and the Gulf War” in Tareq Y. Ismael and Jaqueline S. Ismael, “The Gulf War and the New World Order” (Gainesville, Florida: University Press of Florida, 1994), pp. 366-382.

**Mustafa B. Hamarneh**, “Jordan Responds to the Gulf Crisis” in Phyllis Bennis and Michel Moushabeck, eds., “Beyond the Storm: A Gulf Crisis Reader” (Edinburgh: Canongate, 1992) pp.228-240.

**Barbara Nimri Aziz**, “Iraq and Jordan – A Partnership Restored”, Middle East International, 2 May 1997, pp. 18, 19.

<sup>13</sup> **Curtis R. Ryan**, նշվ. աշխ., p. 54.

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 33:

աջակցություն կցուցաբերի իրենց, սակայն Հորդանանը, այնուամենայնիվ, հավատարիմ մնաց իր պետական գաղափարախոսությանը՝ «Առաջնահերթ Հորդանանի պետական շահը»<sup>15</sup>:

Մի շարք աղբյուրների համաձայն՝ Սադդամ Հուսեյնի որդուն՝ Քուսային, հրահանգ էր տրված նախապատրաստելու Սիրիայի ու Հորդանանի տարածքով ներխուժումը դեպի Իսրայել: Քուսային համոզված էր, որ Հորդանանում հաստատված պաղեստինցիները ոտքի կկանգնեն ու կմասնակցեն ռազմական գործողություններին նույնիսկ Հորդանանի թագավորի սպառնալիքների դեպքում: Վերջինիս անկայուն պահվածքի արդյունքում չէր բացառվում նաև Հորդանանում իշխանափոխությունը<sup>16</sup>:

Իրաքյան պաշտոնատար անձանց տեղեկություններով Աբու-Քարմին՝ Սադդամ Հուսեյնի մտերիմն ու անձնական խորհրդականը, պատասխանատու էր Քուվեյթի, Կատարի ու Հորդանանի դեմ հնարավոր հարձակման համար: Սադդամ Հուսեյնը նրան լիազորել էր ցանկացած տեսակի զենք, նույնիսկ զանգվածային ոչնչացման, կիրառել վերը նշված արաբական երկրների նկատմամբ, եթե ԱՄՆ-ը շարունակեր հարձակումներ գործել նրանց տարածքից<sup>17</sup>:

2003թ. պատերազմի արդյունքում Սիրիան վերջնականապես հակադրվեց ԱՄՆ-ին և որպես այլընտրանք սկսեց համագործակցել Ռուսաստանի ու Չինաստանի հետ<sup>18</sup>: Սիրիան, Եմենը և մի շարք հյուսիսաֆրիկյան արաբական երկրներ ձեռնամուխ եղան Իրաքին զենք մատակարարելուն: Մասնավորապես Սիրիայի պաշտպանության նախարար Մուսթաֆա Թլասսի որդին՝ Ֆիրասը, համակարգեց սիրիական գործակալների ծավալած գործունեությունը Արևմտյան Եվրոպայում: Գործակալների նպատակն էր զենք հայթայթել արևմտաեվրոպական երկրների սև շուկաներում<sup>19</sup>: Հենց նույն Ֆիրասը նաև ակտիվ մասնակցություն ունեցավ պատերազմի ընթացքում իրաքյան նավթի գաղտնի վաճառքի գործում: Այդպիսով, Իրաքին ֆինանսական հնարավորություն տրվեց վճարելու մատակարարվող զինամթերքի դիմաց: Նավթի գաղտնի իրացումից ձեռք բերված եկամուտները բաժանվեցին Սիրիայի նախագահ

<sup>15</sup> Curtis R. Ryan, նշվ. աշխ., p. 53.

<sup>16</sup> Yossef Bodansky, նշվ. աշխ., p. 73.

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 78:

<sup>18</sup> Frederic Wehrey, Dalia Dassa Kaye, Jessica Watkins, Jeffrey Martini, Robert A. Guffey. The Iraq Effect. The Middle East after the Iraq War. USA. 2010. 187pages. p. 73

<sup>19</sup> Yossef Bodansky, նշվ. աշխ., p. 22.

Բաշար Ասադի, իր եղբոր՝ Մահերի ու խորթ եղբոր՝ Ասսաֆ Շաուքաթի միջև<sup>20</sup>: Սադդամ Հուսեյնին ցուցաբերվող սիրիական օգնությունը որոշ հեղինակներ կապում են դեռևս 1990-ականներից վերջինիս որդիներ Ուդայի ու Քուսայի հետ Բաշար Ասադի ունեցած սերտ ընկերական հարաբերություններով<sup>21</sup>:

Պատերազմի նախօրեին և ընթացքում տեղի են ունենում մի շարք հանդիպումներ Սիրիայի ու Իրանի պաշտոնյաների միջև: Իրանի ու Սիրիայի պաշտոնատար անձինք նաև հանդիպումներ ունեցան Հեզբոլլահի առաջնորդ շեյխ Հասսան Նասրալլահի ու Պաղեստինի իսլամական ջիհադի ղեկավար Ռամադան Շալահի հետ: Հանդիպումներում հստակեցվում էր համատեղ գործողությունների պլանը՝ Իրաքի դեմ ամերիկյան հարձակման դեպքում<sup>22</sup>:

Ըստ մի շարք հեղինակների՝ Սադդամ Հուսեյնը տեղափոխել է զանգվածային ոչնչացման զենքերը Սիրիայի տարածք: Իսրայելական հետախուզության տվյալներով Սադդամը պատրաստվում էր միջուկային զենք տրամադրել նաև պաղեստինցիներին՝ Իսրայելի դեմ օգտագործելու համար<sup>23</sup>: Քադդաֆին հետագայում տեղեկացրեց, որ Լիբիան ևս 1990-ականներին իր տարածքում է թաքցրել իրաքյան զանգվածային ոչնչացման զենքերը: Սակայն հայտնի ռուս դիվանագետ Ե. Պրիմակովը մեջ է բերում հատվածներ Սադդամ Հուսեյնի հարցաքննությունից: Դրանում վերջինս նշում է, որ ոչ մի զանգվածային ոչնչացման զենք չի ունեցել, և որ դա ուղղակի խաղ էր՝ Իրանին վախեցնելու համար<sup>24</sup>:

Սիրիայում ու Իրանում հասկանում էին, որ հնարավոր ռազմական գործողություններում Իսրայելի ներգրավվածությունը կդրդի նույնիսկ Եգիպտոսին ու Սաուդյան Արաբիային (տեղի տալով բնակչության տրամադրություններին) միջամտել պատերազմին: Այդ իսկ պատճառով հենց Խոմենեյի իրահանգով Իսրայելում սկսեցին ահաբեկչական հարձակումներ իրականացնել՝ փորձելով դրդել Իսրայելին լուրջ ռազմական քայլերի գնալ<sup>25</sup>:

Իրաքում սիրիա-իրանական ազդեցության մասին է վկայում նաև ԱՄՆ-ում ստեղծված Բեյքեր-Համիլթոն հատուկ հանձնաժողովը: Այն պահան-

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>23</sup> Yossef Bodansky, նշվ. աշխ., p. 42.

<sup>24</sup> Евгений Примаков, Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами, Москва, 2016г, 415стр., стр. 321. <http://top-news.am/7/4/news/67955.html> (02/10/2016)

<sup>25</sup> Yossef Bodansky, նշվ. աշխ., p. 43.

ջեց հարաբերությունների անհապաղ կարգավորում Սիրիայի ու Իրանի հետ: Նրանց միջոցով էր միայն հնարավոր դիտվում իրավիճակի բարելավումը Իրաքում<sup>26</sup>:

Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ը փորձեց արաբական երկրներից ստեղծել հակաիրանական կոալիցիա: Սակայն արաբական ոչ բոլոր երկրների համար էր Իրանը հավասարապես վտանգ ներկայացնում: Սաուդյան Արաբիան իր հերթին փորձեց վերահսկողություն հաստատել Ծոցի արաբական միապետությունների նկատմամբ: Դա առաջ բերեց սաուդների մենիշխանության մշտական մրցակից Եգիպտոսի հակազդեցությունը<sup>27</sup>:

Արաբական միապետերն այնուհետև սկսեցին շահարկել Իրաքում տիրող քաոսային իրավիճակը՝ իրենց վարչակարգերի դերը բարձրացնելու համար: Բահրեյնի ղեկավար շրջանակներում հայտարարվեց, որ առանց «իշխող դինաստիայի (ալ-Խալիֆաների) երկիրը կնմանվի Իրաքին»<sup>28</sup>:

Պատերազմի ավարտից հետո ակտիվացան ահաբեկչական հարձակումներն ինչպես Հորդանանում, այնպես էլ Սաուդյան Արաբիայում՝ ի պատասխան պատերազմի ընթացքում ԱՄՆ-ին ցուցաբերած աջակցության<sup>29</sup>:

2004թ.-ից ԱՄՆ-ը և ՄԱԿ-ը սկսեցին քննարկել Իրաքում Հաշիմյան դինաստիայի վարական գնման գաղափարը: Այդ գաղափարն առաջ քաշեցին Ալփրի արտաքին գործերի նախարար ու ՄԱԿ-ում Իրաքի հարցերով հանձ-

<sup>26</sup> Евгений Примаков, նշվ. աշխ., стр. 341.

<sup>27</sup> Gaballah Khalifa, “Experts: Iran Mapping the Future of the Region Together with Saudi Arabia in the Absence of an Egyptian Role,” Al-Misri Al-Yawm (in Arabic), March 9, 2007., p.4. <https://books.google.am/books?id=i3LAlfW7DIC&pg=PA167&dq=Gaballah+Khalifa+%2B+March+9,+2007&hl=hy&sa=X&ved=0ahUKEwizubuzuvQAhWBmhQKHSh7DxAQ6AEIjAB#v=onepage&q=Gaballah%20Khalifa%20%2B%20March%209%2C%202007&f=false> (11/12/2016) Dalia Dassa Kaye; Frederic M. Wehrey, “A Nuclear Iran: the Reactions of Neighbors,” Survival: Global Politics and Strategy Summer 2007, pp. 111–128. Vol. 49.

<sup>28</sup> Interview with Bahraini government official, Manama, Bahrain, November 2006. [https://books.google.am/books?id=N71kAgAAQBAJ&pg=PA234&lpq=PA234&dq=Interview+with+Bahraini+government+official+%2B+Manama+%2B+Bahrain+%2B+November+2006&source=bl&ots=I8MG5Y3xE\\_&sig=7QRi5RjijVfKj-Or8m7n-iok&hl=hy&sa=X&ved=0ahUKEwjXwp7Hz-vQAhWHzxQKHR0zAxAQ6AEIGzAA#v=onepage&q=Interview%20with%20Bahraini%20government%20official%20%2B%20Manama%20%2B%20Bahrain%20%2B%20November%202006&f=false](https://books.google.am/books?id=N71kAgAAQBAJ&pg=PA234&lpq=PA234&dq=Interview+with+Bahraini+government+official+%2B+Manama+%2B+Bahrain+%2B+November+2006&source=bl&ots=I8MG5Y3xE_&sig=7QRi5RjijVfKj-Or8m7n-iok&hl=hy&sa=X&ved=0ahUKEwjXwp7Hz-vQAhWHzxQKHR0zAxAQ6AEIGzAA#v=onepage&q=Interview%20with%20Bahraini%20government%20official%20%2B%20Manama%20%2B%20Bahrain%20%2B%20November%202006&f=false) (11/12/2016).

<sup>29</sup> Yossef Bodansky, նշվ. աշխ., էջ 526:

Frederic Wehrey, Dalia Dassa Kaye, Jessica Watkins, Jeffrey Martini, Robert A. Guffey. նշվ. աշխ., էջ 7:

նակատար Լախդար ալ-Իբրահիմին և Արաբական լիգայի գլխավոր քարտուղար եգիպտացի Ամր Մուսան<sup>30</sup>:

Հետագայում արաբական մի շարք երկրներ ձևականորեն սկսեցին իրաքամետ քաղաքականություն իրականացնել: 2005 թ. փետրվարի 15-ին Քուվեյթում տեղի ունեցավ Իրաքի սահմանակից երկրների ներկայացուցիչների հանդիպում: Հանդիպման արդյունքում պահանջվեց կոալիցիոն ուժերի դուրսբերում Իրաքից<sup>31</sup>:

Պատերազմից հետո ստեղծված Իրաքյան կառավարական խորհուրդը (ժամանակավոր կառավարություն) 2003 թ. վերջին մի քանի անգամ պատվիրակություն ուղարկեց ԱՄԷ: Շեյխ Ջայեդը հավաստիացրեց Խորհրդի նախագահ Իբրահիմ Ալ Ջաաֆարիին, որ կարող է ազդել Բաղդադի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականության վրա<sup>32</sup>:

2003 թ. իրաքյան պատերազմի արդյունքում խախտվեց ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: Սուննի-շիա հարաբերություններում նոր տեղաշարժեր եղան: Իրանը սկսեց միջամտել նույնիսկ այնպիսի ավանդական միջարաբական խնդրի, ինչպիսին է Պաղեստինի հիմնախնդիրը<sup>33</sup>: Մինչև 2003 թ. պատերազմը տարածաշրջանում ուժերի հարաբերակցության պահպանմանը մշտապես մասնակցում էին արաբական երկրներ: Պատերազմից հետո այլևս արաբական երկրները կորցրին իրենց երբեմնի ազդեցությունը տարածաշրջանում՝ տեղը զիջելով միջազգային ուժերին, Իրանին ու որոշակիորեն նաև Թուրքիային: Իրաքի հեռացումով խաղաղաշտից Իրանը հնարավորություն ստացավ ուղղակիորեն միջամտելու Լիբանանում ու Գազայում տեղի ունեցող իրադարձություններին:

ԱՄՆ-ի դերը տարածաշրջանում խաղաղության հաստատման հարցերում բավականին թուլացավ: Արաբական պետությունները սկսեցին խաղաղության հաստատման ինքնուրույն փորձեր կատարել: Գազայում հրադադարի պահպանման հարցում մեծացավ Եգիպտոսի, Ֆաթիի ու Համասի միջև հաշտեցման հարցերում՝ Եմենի, իսկ Լիբանանում՝ Կատարի ազդեցությունը<sup>34</sup>:

<sup>30</sup> **Nemir Kirdar**, *Saving Iraq. Rebuilding a Broken Nation*, London, 2009, p.221.

**Yossef Bodansky**, նշվ. աշխ., էջ 527:

<sup>31</sup> **Frederick M. Wehrey**, Dalia Dassa Kaye, Jessica Watkins, Jeffrey Martini, and Robert A. Guffey, նշվ. աշխ.:

<sup>32</sup> *United Arab Emirates Yearbook 2004*, Abu Dhabi, 319pages, p. 68.

<sup>33</sup> **Евгений Примаков**, նշվ. աշխ., стр. 343.

<sup>34</sup> **Youssef Bassil**, նշվ. աշխ., p. 29-47.

Իրաքյան շուրջ 2մլն փախստականների ներկայությունը Սիրիայում ու Հորդանանում առաջ բերեց լուրջ սոցիալ-տնտեսական ճգնաժամ: Օրինակ՝ 2005 թ. Ամմանում տեղի ունեցած ահաբեկչության կազմակերպիչներ հայտարարվեցին իրաքյան մի շարք փախստականներ<sup>35</sup>:

2008 թ. մարտին Մարոկկոյում, Եգիպտոսում, Հորդանանում, Լիբանանում, Սաուդյան Արաբիայում ու ԱՄԷ-ում անցկացվեցին հարցումներ: Դրանց արդյունքում արաբների 81%-ը կարծիք հայտնեց, որ Իրաքի արաբների վիճակը շատ ավելի է վատացել ամերիկյան օկուպացիայից հետո: Արաբների 42%-ը իրաքյան պատերազմի հետևանք էր համարում ուշադրության շեղումը պաղեստինյան հիմնախնդրից<sup>36</sup>:

Արաբների վերաբերմունքն իրաքյան պատերազմին կարելի է բաժանել երկու մասի՝ կառավարության ու ժողովրդի: 1991 թ. Ծոցի պատերազմից հետո նավթով հարուստ արաբական երկրներում մեծացել էր ամերիկյան ազդեցությունը ռազմական ու տնտեսական առումներով: Իհարկե, արաբական երկրները ևս օգուտ էին ստանում նման հարաբերություններից՝ ստանալով քաղաքական աջակցություն ու տնտեսական օգնություն (Արժույթի միջազգային հիմնադրամում ԱՄՆ-ի ունեցած ազդեցության շնորհիվ): Նավթով հարուստ արաբական երկրները հիմնականում կողմնակից էին ամերիկյան ռազմական արշավին, սակայն չէին կարող իրենց տեսակետը բացահայտ հայտարարել: Չնայած Սադդամ Հուսեյնի հետ ունեցած հակասություններին՝ վարչակարգի փոփոխության գաղափարը վախեցնում էր մյուս արաբական երկրներին: Արաբական լիգայի՝ 2003 թ. մայիսի 1-ի գագաթնաժողովում արաբական երկրները որևէ ընդհանուր հայտարարի չեկան: Ամերիկյան օկուպացիայի պայմաններում արաբական երկրներն այդպես էլ միակարծիք չեղան Իրաքից եկող սպառնալիքների ու պատերազմին դեմ լինելու հարցերի շուրջ: Ծոցի արաբական միապետությունները փաստացի վայելում էին ամերիկյան ռազմական աջակցությունը, Եգիպտոսը տարեկան շուրջ 200մլն ամերիկյան

---

**Frederick M. Wehrey**, Dalia Dassa Kaye, Jessica Watkins, Jeffrey Martini, and Robert A. Guffey, նշվ. աշխ., p. 216.

<sup>35</sup> **Frederic Wehrey**, Dalia Dassa Kaye, Jessica Watkins, Jeffrey Martini, Robert A. Guffey. նշվ. աշխ., p. 41.

**Nemir Kirdar**, նշվ. աշխ., p. 265.

**Youssef Bassil**, նշվ. աշխ., p. 29-47.

<sup>36</sup> 2008 Annual Arab Public Opinion Poll, Survey of the Anwar Sadat Chair for Peace and Development at the University of Maryland, [http://www.brookings.edu/~media/events/2008/4/14%20middle%20east/0414\\_middle\\_east\\_telhami/](http://www.brookings.edu/~media/events/2008/4/14%20middle%20east/0414_middle_east_telhami/).



դոլլարի վարկ ու օգնություն էր ստանում ԱՄՆ-ից<sup>37</sup>, Հորդանանը 1991 թ. հետո չէր պատրաստվում կրկին հակադրվել ԱՄՆ-ին, Ալժիրի ռազմական վարչակարգը ստանում էր ամերիկյան աջակցություն իր գոյության պահպանման համար<sup>38</sup>, Քադդաֆին ուղիներ էր փնտրում Արևմուտքի հետ հարաբերությունները սերտացնելու համար և այլն: Լրիվ հակառակ իրավիճակում էր հայտնվել Սիրիան<sup>39</sup>: Դամասկոսում հասկանում էին, որ Մերձավոր Արևելքը վերափոխելու ամերիկյան հայտարարությունները վաղ թե ուշ ուղղվելու են Սիրիայի դեմ:

Որպես եզրակացություն կարելի է նշել, որ արաբական աշխարհում գերիշխող տարածայնությունները ևս մեկ անգամ ցույց տվեցին աշխարհին, որ արաբական երկրները չեն կարող ինքնուրույն լուծել առաջացած խնդիրները, ինչպես դա եղավ Պաղեստինում և շարունակվեց Իրաքում: Իրաքյան պատերազմը հանգեցրեց արաբական աշխարհի մասնատմանն ու թուլացմանը<sup>40</sup>: 2003 թ. իրաքյան պատերազմը խախտեց տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը, ու Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական նոր իրավիճակ ստեղծվեց: Այդ պատերազմը հանգեցրեց արաբական աշխարհի մասնատմանն ու թուլացմանը<sup>41</sup>: Դրա արդյունքում ուժեղացան հարևան վարչակարգերը, սակայն ոչ պետությունները<sup>42</sup>:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Yossef Bodansky. The Secret History of the Iraq war. USA. 2004. 570 pages.
2. United Arab Emirates Yearbook 2004, Abu Dhabi, 319pages

<sup>37</sup> <http://www.csmonitor.com/2004/0412/p07s01-wome.html> (20/01/2017).

<sup>38</sup> [https://en.wikipedia.org/wiki/Algeria%E2%80%93United\\_States\\_relations](https://en.wikipedia.org/wiki/Algeria%E2%80%93United_States_relations) (20/01/2017).

<sup>39</sup> **Raymond Hinnebusch**, The Iraq War and International Relations: Implications for Small States, Cambridge Review of International Relations, University of St Andrews, Volume 19, Number 3, September 2006, pp. 452-463 [https://www.st-andrews.ac.uk/media/school-of-international-relations/mecacs/workingpapers/iraq\\_war\\_ir\\_theory\\_implications\\_small\\_states.pdf](https://www.st-andrews.ac.uk/media/school-of-international-relations/mecacs/workingpapers/iraq_war_ir_theory_implications_small_states.pdf) (11/12/2016).

<sup>40</sup> **Ռուբեն Կարապետյան**, Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում (1946-2000 թթ.), Կահիրե, 2008 թ., 352 էջ, էջ 287:

<sup>41</sup> **Ռուբեն Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 287:

<sup>42</sup> **Frederic Wehrey**, Dalia Dassa Kaye, Jessica Watkins, Jeffrey Martini, Robert A. Guffey, The Iraq Effect. The Middle East after the Iraq War, USA, 2010, 187 pages, p. 101.

3. Curtis R. Ryan, "Jordan First": Jordan's Inter-Arab Relations and Foreign Policy under King Abdullah 2<sup>nd</sup>, Institute of Arab studies, Arab Studies Quarterly , Vol. 26, No. 3, 2004, pp. 43-62
4. Frederic Wehrey, Dalia Dassa Kaye, Jessica Watkins, Jeffrey Martini, Robert A. Guffey. The Iraq Effect. The Middle East After The Iraq War. USA. 2010. 187pages
5. Youssef Bassil, The 2003 Iraq War: Operations, Causes and Consequences, Beirut, Lebanon, (JHSS), IOSR Journal of Humanities and Social Science Volume 4, Issue 5 (Nov. - Dec. 2012), PP 29-47 Connie Veillette, "CRS Report for Congress", 10 February 2005.
6. Gaballah, Khalifa, "Experts: Iran Mapping The Future of the Region Together with Saudi Arabia in the Absence of an Egyptian Role," Al-Misri Al-Yawm (in Arabic), March 9, 2007
7. Nemir Kirdar. Saving Iraq. Rebuilding a Broken Nation. London. 2009. 294 pages.
8. al-Shaiji, 'Abdullah Khalifa, "al-'Iraq wa Amn Mintaqat al-Khalij al-'Arabi: Tada'iyat al-Wadh'a al-Amni fi al-'Iraq 'ala Majlis al-Ta'awin al-Khaliji [Iraq and the Security of the Arab Gulf Region: Consequences of the Security Situation in Iraq on the Gulf Cooperation Council States]," Arab Journal of Political Science (in Arabic), No. 18, Spring 2008
9. Tareq Y. Ismael, Jacqueline S. Ismael, "The Gulf War and the New World Order", University Press of Florida, International Relations of the Middle East, 1994, 593 pages, Kamel S. Abu Jaber, "Jordan and the Gulf War" pp. 366-382
10. Phyllis Bennis and Michel Moushabeck "Beyond the Storm: A Gulf Crisis Reader" (Edinburgh: Canongate, 1992) pp.228-240
11. Raymond Hinnebusch, The Iraq War and International Relations: Implications for Small States, Cambridge Review of International Relations, University of St Andrews, Volume 19, Number 3, September 2006
12. Евгений Примаков. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами. Москва. 2006г. 415 стр
13. Ахмед Али Нур Сахаб. Война в Ираке: Основные причины и предпосылки. Ученые записки УО «ВГУ им. П.М. Машерова» Том 9. 210 стр
14. Նիկոլայ Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, 3-րդ հատոր, 839 էջ:
15. Ռուբեն Կարապետյան, Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում (1946-2000 թթ.), Կահիրե, 2008 թ., 352 էջ:
16. Interview with Bahraini government official, Manama, Bahrain, November 2006. [https://books.google.am/books?id=N71kAgAAQBAJ&pg=PA234&lpg=PA234&dq=Interview+with+Bahraini+government+official+%2B+Manama+%2B+Bahrain+%2B+November+2006&source=bl&ots=l8MG5Y3xE\\_&sig=7QRi5RjfljVfKkj-0r8m7n-iok&hl=hy&sa=X&ved=0ahUKEwjXwp7Hz-vQAhWHzQKHR0zAxAQ6AEIGzAA#v=onepage&q=Interview%20with%20Bahraini%20government%20official%20%2B%20Manama%20%2B%20Bahrain%20%2B%20November%202006&f=false](https://books.google.am/books?id=N71kAgAAQBAJ&pg=PA234&lpg=PA234&dq=Interview+with+Bahraini+government+official+%2B+Manama+%2B+Bahrain+%2B+November+2006&source=bl&ots=l8MG5Y3xE_&sig=7QRi5RjfljVfKkj-0r8m7n-iok&hl=hy&sa=X&ved=0ahUKEwjXwp7Hz-vQAhWHzQKHR0zAxAQ6AEIGzAA#v=onepage&q=Interview%20with%20Bahraini%20government%20official%20%2B%20Manama%20%2B%20Bahrain%20%2B%20November%202006&f=false) (11/12/2016)
17. <http://www.wnd.com/2002/07/14450/> (11/12/2016)

## МЕЖАРАБСКИЕ РАЗНОГЛАСИЯ В ПЕРИОД ВОЙНЫ В ИРАКЕ (2003г.)

АНДРАНИК АРАКЕЛЯН

Иракская война, или Третья война в Персидском заливе, длилась с 20 марта 2003 по 15 декабря 2011 года. Военный конфликт начался с вторжения американских и союзных сил в Ирак с целью свержения режима Саддама Хусейна. Арабские государства не сумели скоординировать свои действия ни до начала, ни в течение войны. Некоторые из них даже поддерживали союзные войска. Так, Катар и Кувейт дали разрешение на базирование американских войск на своих территориях. Кувейт был включен в число 48-и союзных государств против Ирака. К моменту вторжения США в Ирак военно-политическая обстановка в районе Персидского залива постоянно обострялась. Межгосударственные, межэтнические и межконфессиональные противоречия, внутривполитическая обостренность в ряде стран, милитаризация, активная деятельность исламских фундаменталистов, различного рода экстремистских организаций и группировок создавали обстановку повышенной конфликтности, что, в свою очередь, создавало благоприятные условия для внешнего вмешательства.

**Ключевые слова** – межарабские различия, Саддам Хусейн, Ближний Восток, анти-иракская коалиция, Хосни Мубарак, король Фахд, Абдулла 2<sup>ой</sup>, Башар Асад, Шейх Заид, отсутствие единства, нарушение баланса сил.

## INTER-ARAB DISAGREEMENTS ON IRAQ WAR (2003)

ANDRANIK ARAKELYAN

The Iraq War, or the Third Gulf War, began on March 20, 2003, with the military invasion of Iraq by the United States of America and its allies to put an end to the Baath Party of Saddam Hussein, the fifth President of Iraq and a prominent leader of the Baath party in the Iraqi region. It lasted through December 15, 2011. The main cause of the war was the Global War on Terrorism, declared by George W. Bush in response to the September 11 attacks. The war proved to be brutal and severe for both parties, as it resulted in the defeat of the Iraqi army and the overthrow and execution of Saddam Hussein, let alone the thousands of casualties

and the expenditure of billions of dollars. This paper discusses the lack of trust and the conflicting interests between the Arab states. The latter's inability to coordinate their actions entailed irretrievable consequences.

**Key words** – inter-Arab disagreements, Saddam Hussein, Middle East, the anti-Iraqi coalition, Hosni Mubarak, King Fahd, King Abdullah II, Bashar Assad, Sheikh Zayed, lack of unity, power balance.

# ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԼԵՊԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1203-1206 ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄԸ

## ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆ ԴՅԱՆ

Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումից հետո Լևոն Ա-ը մեծ ջանքեր գործադրեց իր եղբոր թոռանը՝ Ռայմոնդ-Ռուբենին Անտիոքի գահին բազմեցնելու համար: Տրիպոլիսի կոմս Բոհեմունդ IV-ը ուժով տիրացել էր Անտիոքին՝ գահից զրկելով օրինական ժառանգին: Սակայն Կիլիկյան Հայաստանի կողմից Անտիոքը վերահսկելու հեռանկարը հայոց թագավորության դեմ դուրս բերեց իր երեք հարևան պետություններին, որոնք շուտով ձևավորեցին հակակիլիկյան մի դաշինք:

Ամենայն հավանականությամբ, արդեն 1201 թ. Հալեպի սուլթանության և Կիլիկիայի հայկական թագավորության զորքերի միջև սկսվեցին առաջին զինաբախումները, սակայն պատերազմական գործողություններն առավել ակտիվ բնույթ ստացան 1203 թ. վերջերից՝ վերաճվելով ռազմական հակամարտության: Այն թեև «Անտիոքյան պատերազմի» բաղկացուցիչ մասն է, բայց կարող է դիտվել նաև որպես առանձին պատերազմ:

Երկու հակառակորդների (Անտիոք-Տրիպոլիսի կոմսություն և Հալեպի Այյուբյան սուլթանություն) դեմ միաժամանակ պայքարելը կարող էր ծանր հետևանքներ ունենալ Կիլիկիայի համար: Թերևս այդ է պատճառը, որ Լևոն Մեծագործը որոշում է ժամանակավորապես դադարեցնել Բոհեմունդ IV-ի դեմ պայքարը և ասպարեզից հեռացնել նրա ամենամոտ դաշնակցին՝ ալ-Մալիք ալ-Չահիրին:

Այս պատերազմի մասին հայ պատմիչները (բացառությամբ Կիրակոս Գանձակեցու) գրեթե ոչինչ չեն հաղորդում: Ուսումնասիրողները ևս կամ անտեսել, կամ խիստ հպանցիկ են անդրադարձել դրան: Փոխարենը այդ մասին առատ տեղեկություններ են պարունակում արաբ պատմիչների (Իբն ալ-Ադիմ, Իբն Վասիլ, Իբն ալ-Ասիր, Աբու Շամա, Իբն ալ-Ֆուրաթ) երկերը: Նրանց տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ թեև ռազմական գործողությունները հայոց թագավորության համար ընդհանուր առմամբ հաջող էին ընթանում, և Լևոն Ա-ը հաղթանակներ էր տանում, սակայն թե՛ Այյուբյան «համադաշնության» մեջ և թե՛ նրանից դուրս հակակիլիկյան համախմբումն այնքան մեծ էր, որ Լևոն Ա-ը ստիպված էր որոշ զիջումներով հաշտություն ստորագրել ութ տարի ժամկետով: Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության միջև 1203-1206 թթ. եռամյա պատերազմը, ամենայն հավանականությամբ, չհանգեցրեց տարածքային փոփոխությունների: Բաղդասը մնաց հայերի, իսկ Դարպասկը՝ Այյուբյանների ձեռքում:

Հետագայում՝ արդեն 1208-ին, Լևոն Մեծագործը բարեկամական հարաբերություններ հաստատեց Մերձավոր Արևելքի հզոր տիրակալի՝ Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի հետ, որը գերագահ էր համարվում բոլոր Այյուբյանների մեջ: Վերջինս երկու անգամ (1208, 1216) միջամտեց «Անտիոքյան պատերազմին»՝ պար-

տադրելով եղբորորդուն՝ ալ-Մալիք ալ-Չահիրին, ձեռնպահ մնալ Կիլիկյան Հայաստանի դեմ թշնամական գործողություններից:

**Քանայի բաներ** - Կիլիկիայի հայկական թագավորություն, Կիլիկյան Հայաստան, Հալեպի Այյուբյան սուլթանություն, Եգիպտոսի Այյուբյան սուլթանություն, Անտիոք-Տրիպոլիսի կոմսություն, Անտիոքյան պատերազմ, Լևոն Մեծագործ, Ռայմոնդ-Ռուբեն, Բոհեմունդ IV, ալ-Մալիք ալ-Չահիր, ալ-Մալիք ալ-Ադիլ, Կիրակոս Գանձակեցի, Իբն ալ-Ադիմ, Իբն Վասիլ, Իբն ալ-Ասիր, Աբու Շամա, Իբն ալ-Ֆուրաթ, Ամլ լիճ, Բաղրաս, Դարպասակ:

Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումից հետո Լևոն Ա-ը մեծ ջանքեր գործադրեց իր եղբոր թոռանը՝ Ռայմոնդ-Ռուբենին Անտիոքի գահին բազմեցնելու համար: Վերջինիս հորեղբայրը՝ Տրիպոլիսի կոմս Բոհեմունդ IV-ը, ուժով տիրացել էր Անտիոքին՝ գահից զրկելով օրինական ժառանգին: Սակայն Կիլիկյան Հայաստանի կողմից Անտիոքը վերահսկելու հեռանկարը հայոց թագավորության դեմ դուրս բերեց իր երեք հարևաններին՝ Անտիոք-Տրիպոլիսի կոմսությանը, Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը և Հալեպի Այյուբյան սուլթանությանը, որոնք շուտով ձևավորեցին հակակիլիկյան մի դաշինք:

Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Կիլիկիայի թագավորության զորքերի միջև առաջին զինաբախումները սկսվեցին 1201 թ.: Այս մասին տեղեկանում ենք Ինոկենտիոս III-ին Լևոն Ա-ի հղած նամակից: Հայոց արքան Հռոմի քահանայապետին խնդրում է միջնորդ լինել իր և Բոհեմունդ IV-ի միջև, քանի որ վերջինս դաշինքի մեջ էր Իկոնիայի սուլթան Ռուբեն ալ-Դինի (1196-1204) հետ, և նրանք փորձում էին երկու կողմից հարձակվել Կիլիկիայի վրա: Ամենայն հավանականությամբ, նույն թվականին Հալեպի սուլթանությունը ևս օժանդակել է Բոհեմունդին<sup>2</sup>: Արդեն հիջրայի 599 թ. (1202 թ. սեպտեմբեր-1203 թ. սեպտեմբեր) տակ Իբն Վասիլ պատմիչն արձանագրել է. «Այս տարում Իբն Լավունը՝ Հայոց տերը, արշավեց դեպի Ջիսր ալ-Հադիդ՝ Անտիոքի ժողովրդի հետ պատերազմելու նպատակով»: Հայկական ուժերն ավերել են

<sup>1</sup> **Acta Innocentii PP. III (1198-1216)**, E. registris Vaticanis aliisque Eruit, introductione auxit, notisque illustravit P. Theodosius Haluščynskyj hieromonachus ordinis Basiliani S. Iosaphat E pontificia commissione ad redigendum C.I.C.O., Fontes series III, vol. II, Vaticanis, 1944, էջ 559-562:

<sup>2</sup> Տե՛ս **Cahen Cl.**, La Syrie du Nord et la principaute franque d'Antioche, Institut Francais de Damas, Geuthner, Paris, 1940, էջ 600, 601:

երկիրը, կտրել Անտիոքի «պարենային կապը» Հալեպի հետ<sup>3</sup>: Պատերազմական գործողություններն առավել ակտիվ շարունակվել են 1203 թ. վերջերից:

Այդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հայկական մի զորախումբ գրավում է Անտիոքի մոտակա գյուղերը, ապա պաշարում քաղաքը: Լևոն Ա-ը փորձում է իրեն և Ռայմոնդ-Ռուբենին համախոհ լատին պատրիարքի միջոցով խաղաղ ճանապարհով տիրել քաղաքին, սակայն դա նրան չի հաջողվում: Տաճարական ասպետները և Բոհեմունդի մյուս կողմնակիցները հուժկու դիմադրում են հայկական զորախմբին և միաժամանակ աղավափոստով նամակ ուղարկում Հալեպի սուլթանին՝ կանչելով օգնության<sup>4</sup>:

Այսպես, Իբն Վասիլը հիջրայի 600 թվականի տակ գրում է. «Այս տարվա Ռաբի I ամսի 27-ին (1203 թ. դեկտեմբերի 4) Իբն Լավունը՝ Հայոց արքան, հարձակվեց Անտիոքի վրա, այն պաշարման մեջ առավ և սկսեց ճնշել: Ալ-Մալիք ալ-Ջահիրը դուրս եկավ Հալեպից և ճամբարեց Հարիմում: Այս իմանալով՝ Իբն Լավունը թողեց Անտիոքը, իսկ ալ-Մալիք ալ-Ջահիրը վերադարձավ Հալեպ»<sup>5</sup>: Ըստ նույն հեղինակի՝ Լևոն Անտիոքը գրավելու ևս մի փորձ կատարեց մոտ 20 օր անց՝ Ռաբի II ամսի 17-ին (դեկտեմբերի 24): Այս անգամ նա նամակագրություն է հաստատել Անտիոքի բնակչության հետ՝ երաշխավորելով նրանց ունեցվածքի անձեռնմխելիությունը: Հետո, սակայն, անակնկալ թիրախել է Անտիոքը և «պրինցին» խուճապի մատնել: Վերջինս դիմադրել է մոտ մեկ ժամ, որից հետո ապաստան է գտել միջնաբերդում և «աղավաճու փոստով» օգնության կանչել ալ-Մալիք ալ-Ջահիրին: Վերջինս զորք

<sup>3</sup> Տե՛ս **Ibn Wāsil**, Mufarriğ al-kurūb fi alḥbār banī Ayyūb, v. III, խմբ. Ġamāl al-Dīn al-Šayyāl, al-Qāhira, 1957, էջ 140 և հմտ. **Al-Dahabī**, Tārīḥ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-a'lām, խմբ. 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, v. 42, Bayrūt, 1997, էջ 50; **Ibn al-Furāt**, Tārīḥ al-Duwal wa l-Mulūk, vol. 4.1, խմբ. Ḥasan Muḥammad Šammā', Baṣra, 1967, էջ 247-248 (բնագրում Ibn Lāwūn-ի փոխարեն գրչական սխալով Ibn Lāwūk է: Այնուամենայնիվ, հավելյալ տեղեկություն կա, թե իբր Լևոնի արշավանքի մասին տեղեկացումը Հալեպ է ուղարկել (599 թ. Սաֆար ամիս/ 1202 թ. հոկտեմբեր-նոյեմբեր) Սահյուն բերդ-ամրոցի տերը):

<sup>4</sup> Տե՛ս **Cahen Cl.**, La Syrie du Nord, էջ 604; **Eddé A.-M.**, La Principauté Ayyoubide d'Alep (579/1183 – 658/1260), Stuttgart, Franz Steiner Verlag, 1999, էջ 80:

<sup>5</sup> **Ibn Wāsil**, Mufarriğ al-kurūb, v. III, էջ 154, ինչպես նաև՝ **al-Dahabī**, Tārīḥ al-Islam, v. 42, էջ 52:

է հավաքել և Հալեպից ճանապարհ ընկել դեպի Անտիոք: Այս լուրն առնելով՝ Լևոնը կրկին թողել է քաղաքի պաշարումը և վերադարձել Կիլիկիա<sup>6</sup>:

Անտիոքի պաշարման մասին հաղորդումը պահպանել է նաև Իզզ ալ-Դին Իբն Շադդադը (մահ. 1285 թ.)<sup>7</sup> ամենայն հավանականությամբ հենվելով Իբն Վասիլի պատումի վրա: Նա նաև մեջբերում է Իբն ալ-Ադիմի պատումը<sup>8</sup>:

Այս զորաշարժերի մասին Իբն ալ-Ադիմի պատումը զգալիորեն տարբերվում է Իբն Վասիլի հաղորդումից, ավելին՝ 600 թ. փոխարեն սխալմամբ թվագրված է 601 թվականի Մուհարրամ ամսով (1204 թ. օգոստոսի 29-սեպտեմբերի 27): Ընդ որում, ըստ այս հեղինակի՝ հակառակորդ բանակների միջև զինված բախումներ են եղել, որոնցում իբր Լևոնը կորուստներ է կրել և նահանջել: Հետաքրքիր է, որ պատմիչը զուգահեռ է անցկացնում Անտիոքի համար Լևոնի ու ալ-Մալիք ալ-Ջահիրի պայքարի և Հալեպի Համդանյան ամիր Սայֆ ալ-Դաուլայի ու Բյուզանդիայի հայազգի զորապետ Վարդաս Փոկասի միջև մոտ մեկուկես դար առաջ տեղի ունեցած բախումների միջև: «[Հիջրայի] 601 թ. Մուհարրամ ամսին հայոց արքա Իբն Լավունը, որը Բարդաս ալ-Ֆուկկասի զարմից էր, ով Անտիոքի տեր Սայֆ ալ-Դաուլայի ժամանակակիցն էր, հարձակվեց Անտիոքի վրա: Ալ-Մալիք ալ-Ջահիրը Հալեպից զորքեր ուղարկեց՝ նրա տեր *պրինցիպ* օգնելու նպատակով: Եվ երբ հասան ալ-Ասի (Օրոնտես) գետին, Իբն Լավունը թույլ գտնվեց նրանցից, [ուստի] ելան նրա դեմ և դուրս քշեցին այնտեղից՝ սպանելով մեծ թվով նրա զինակիցներից: Ապա Հալեպի բանակը հետ դարձավ»<sup>9</sup>: Իբն ալ-Ադիմի հաղորդման շարունակությունը կարծես թե վերաբերում է արդեն հենց 1204 թ. տեղի ունեցած իրադարձություններին, ուստի դրան կվերադառնանք ներքևում:

Լևոնի կողմից Անտիոքի պաշարման մասին 1202-1203 թթ. ներքո խոսում է նաև Անանուն Եդեսացին՝ կարծես թե անտեղյակ այս իրադարձություններում Հալեպի սուլթանի դերին: Նա գրում է. «Նույն տարվա մեջ Կիլիկիայի իշխանը (իմա՝ «արքան») պաշարեց Անտիոքը և, սաստիկ նեղելով

<sup>6</sup> **Ibn Wāsil**, Mufarrig al-kurūb, v. III, էջ 154-155, ինչպես նաև **al-Dahabī**, Tārīḥ al-Islam, v. 42, էջ 52:

<sup>7</sup> Չփոթել Սալահ ալ-Դինի կենսագիր Բահա ալ-Դին Իբն Շադդադի հետ:

<sup>8</sup> **'Izz al-Dīn Ibn Šaddād**, Al-A'lāq al-Ḥaṭīra fī ḡikr umarā' al-Šām wa-l-Ġazīra, v. 1.2, խմբ. Yaḥyā Zakarīyā 'Abbāra, Dimašq, 1991, էջ 405-406:

<sup>9</sup> **Kamāl al-Dīn Ibn al-Adīm**, Zubdat al-ḥalab fī tāriḥ Ḥalab, t. III, Institut Français de Damas, Damas, 1968, էջ 156:



նրան, կերավ ու փչացրեց նրա բերքը: Հաջորդ տարի նա ավելի ևս ուժեղացրեց ճնշումը քաղաքի վրա և, հարձակվելով արևմտյան կողմից, ներխուժեց քաղաք ու տիրեց նրան, բայց նա ճողոպրեց ու փախավ և կարողացավ դուրս պրծնել: Նրան հետապնդեցին, բայց չհասան: Քաղաքը փրկվեց»<sup>10</sup>:

Ահա այսպես, 1203 թ. վերջին Կիլիկիայի թագավորության և Հալեպի սուլթանության միջև սկսվում է ռազմական հակամարտություն: Այն թեև «Անտիոքյան պատերազմի» բաղկացուցիչ մասն է, բայց կարող է դիտվել նաև որպես առանձին պատերազմ:

Երկու հակառակորդների դեմ միաժամանակ պայքարելը կարող էր ծանր հետևանքներ ունենալ Կիլիկիայի համար: Թերևս այդ է պատճառը, որ Լևոն Մեծագործը որոշում է ժամանակավորապես դադարեցնել Բոհեմունդ IV-ի դեմ պայքարը և ասպարեզից հեռացնել նրա ամենամոտ դաշնակցին՝ ալ-Մալիք ալ-Ջահիրին:

Այս պատերազմի մասին հայ պատմիչները (բացառությամբ Կիրակոս Գանձակեցու) գրեթե ոչինչ չեն հաղորդում: Ուսումնասիրողները ևս կամ անտեսել, կամ խիստ հպանցիկ են անդրադարձել դրան: Փոխարենը այդ մասին առատ տեղեկություններ են պարունակում արաբ պատմիչների (Իբն ալ-Ադիմ, Իբն Վասիլ, Իբն ալ-Ասիր, Աբու Շամա, Իբն ալ-Ֆուրաթ) երկերը, որոնց հիման վրա հնարավորինս մանրամասն կանդրադառնանք հիշյալ պատերազմի ռազմական գործողություններին, դրա պատճառներին, արդյունքներին ու հետևանքներին:

Մի քանի անգամ հաջողություն չունենալով՝ Լևոնը չի հուսահատվում և շուտով կրկին անցնում է ակտիվ գործողությունների: Ըստ Իբն ալ-Ադիմի՝ հիջրայի 601 թ. (1204/1205 թթ.) Լևոն Ա-ը «...ջեղարկում է զինադադարը և հարձակվում Ամկի շրջանի վրա: Նա քշում տանում է անասունների հոտերը, ինչպես նաև ձեռնամուխ լինում մի ավերակ լեռնային բերդի վերակառուցմանը, որ գտնվում էր Դարպասակից ոչ հեռու, որպեսզի [այնտեղից] անընդհատ ճնշի նրան»<sup>11</sup>:

Պետք է նշել, որ այս իրադարձությունների մասին արաբ պատմիչների պատումները որքան էլ հաճախ լրացնում են իրար, նույնքան հաճախ էլ նշանակալի տարբերություններ են պարունակում: Իբն ալ-Ադիմի հաղորդածին

<sup>10</sup> Անանուն Եղեսազի, Ժամանակագրություն, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, թարգմ. Լ. Տեր-Պետրոսյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1982, էջ 166:

<sup>11</sup> Ibn al-Adim, Zubdat al-halab, t. III, էջ 157:

կարող ենք լրացումներ անել Իբն Վասիլի երկից, որն այս անցքերի մասին պատմում է հիջրայի 602 թ. (1205/1206) ներքո: Պարզվում է, որ Լևոնի տիրացած անասունների հոտերը պատկանում էին թուրքմեններին, որոնք այդ ժամանակ իջևանել էին Նահիր ալ-Ասվադի (Սև գետ) մոտ: Նա նրանցից անհաշիվ քանակությամբ անասուններ է խլել: Ապա շարժվել է Դարպասակ և կրակի տվել նրա արվարձանը, որից հետո վերադարձել է իր երկիր<sup>12</sup>:

Պատմիչը շարունակում է, որ այս մասին իմանալով՝ ալ-Մալիք ալ-Ջահիրն իր զորավարներին ուղարկում է Հարիմ, իսկ ինքն էլ իր զորքով շարժվում է Մարջ Դաբիկ՝ իր շուրջը հավաքելով նաև մի խումբ թուրքմենների: Լևոն Ա-ը նամակ է հղում Հալեպի սուլթանին՝ պատրաստակամություն հայտնելով վերադարձնել այն, ինչ խլել է, միայն թե դեսպան է պահանջում, որի հետ կարող էր բանակցություններ վարել: Ալ-Մալիք ալ-Ջահիրն ուղարկում է Սաադ ալ-Դին իբն Ֆախիրին, որի հետ բանակցություններ են վարվում հաշտության շուրջ: Ի վերջո, հայոց արքան վերադարձնում է թուրքմեններից խլածը, և հաշտությունը կայանում է<sup>13</sup>: Պատմիչը շարունակում է. «Երբ Իբն Լավոնը շահեց ժողովրդի հանգստությունը, ուղղվեց դեպի Հարիմ և վաղ առավոտյան հարվածեց այնտեղ կայանած զորքին և մի մեծ խմբի սպանեց ու գերության քշեց նրանց, ովքեր [այդ ժամանակ] զորքի շուկայում (սուկ ալ-ասքար) էին հետևակայինների և նրանց հետ, ովքեր չէին կարող կռվել»<sup>14</sup>: Ապա վերադառնում է իր երկիրը:

Ըստ Իբն Վասիլի, երբ Հալեպի սուլթանը Հարիմ է հասնում և Լևոնի գործածի սարսափելի հետևանքները տեսնում, ճամբարում է Ջիսր ալ-Հադիդում և Բոհեմունդից մի զորախումբ պահանջում: Պայմանավորվածություն է կայանում, որ ֆրանկները 10 հազար հետևակայինով Անտիոքի կողմից, իսկ ալ-Մալիք ալ-Ջահիրն իր տրամադրության տակ եղած զորքերով Կուրիսի կողմից միաժամանակ թիրախեն հայոց թագավորությունը: Այս մասին իմանալով՝ Լևոնն իբր տեղի է տվել և հնազանդվել՝ վերադարձնելով իր մոտ եղած գերիներին: Ալ-Մալիք ալ-Ջահիրն ընդունում է Լևոնի հաշտության առաջարկը և իր զորավարին ուղարկում է բերելու գերիներին, որոնց թիվը պատկառելի էր: Այսպես Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության հակամարտությունը կրկին հարթվում է<sup>15</sup>:

<sup>12</sup> **Ibn Wāṣil**, Mufarrig̃ al-kurūb, v. III, էջ 170:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 170, 171:

Այժմ շարունակելով Քամալ ալ-Դին Իբն Ալ-Ադիմի՝ վերևում կիսատ թողած պատումը՝ նշենք, որ, ըստ հալեպցի պատմիչի, առաջին անգամ սուլթանի հետ զինադադար կնքելուց հետո հայոց արքան գրոհել է Անտիոքը և ավերել շրջակայքը, ինչի պատճառով մեծ թանկություն է եղել քաղաքում: Ալ-Մալիք ալ-Ջահիրը, որ հայոց արքայի հետ կնքած զինադադարով պարտավորվել էր չմիջամտել Անտիոքի գահի շուրջ ծավալված պայքարին, բավարարվում էր Անտիոքի ժողովրդին պարեն մատակարարելով<sup>16</sup>:

Ըստ Իբն ալ-Ադիմի՝ հիջրայի 602 թ. Ջումադա առաջին ամսում (1205 թ. դեկտեմբեր-1206 թ. հունվար) Լևոն թագավորն իր բանակով հասնում է Դարպասկ ամրոց և երկար ժամանակ կռվում վերջինիս արվարձաններում ամրացած մուսուլմանների բանակի դեմ: Ապա հայ զինվորները տարածվում են Ամկ լճի շրջակայքում և կողոպտում այնտեղի թուրքմեն ցեղերին<sup>17</sup>:

Կիլիկյան Հայաստանի զինուժը 1205 թ. ամռանից մինչև 1206 թ. ամառ բազմիցս արշավում է ալ-Մալիք ալ-Ջահիրին ենթակա երկրամասեր՝ հարձակման վտանգի մեջ պահելով տեղական կայազորները<sup>18</sup>: Իբն ալ-Ասիրն այդ մասին գրում է. «Այդ տարում կիրճերի տեր հայազգի Լևոնի որդին (Իբն Լալուն ալ-Արմանի)<sup>19</sup> մի քանի անգամ արշավեց Հալեպի նահանգի վրա, կողոպտեց, հրկիզեց, գերեց ու գերեվարեց»<sup>20</sup>: Հալեպի շրջակայքի վրա Լևոնի արշավանքների մասին խոսում են նաև Սիբտ իբն ալ-Ջաուզին և Աբու Շաման<sup>21</sup>:

Լևոն Ա-ի հաղթանակներն առավել սերտացրին Անտիոք-Տրիպոլիսի, Իկոնիայի և Հալեպի սուլթանությունների դաշնակցությունը, որին, ինչպես որոշակի արձանագրված է Պապին հայոց արքայի հասցեագրած նամակից, միացել էին նաև Տաճարական միաբանության ասպետները<sup>22</sup>: Ըստ Լևոն Ա-ի՝

<sup>16</sup> **Ibn al-Adīm**, Zubdat al-halab, t. III, էջ 156:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> **Al-Dahabi**, Tārīḥ al-Islam, v. 42, էջ 189:

<sup>19</sup> Խոսքը Լևոն Ա Մեծագործի մասին է:

<sup>20</sup> **Իբն ալ-Ասիր**, թարգմ., առաջաբան և ծանոթագր. Արամ Տեր-Ղևոնդյանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 285:

<sup>21</sup> Տե՛ս **Sibt ibn al-Gawzi**, Mirāt al-zamān fi tāriḥ al-a'yān, v. VIII, (ed. with introduction by J. R. Jewett, The University of Chicago Press, Chicago, 1907), էջ 342-343; **Abū Šāma**, Kitāb al-Rawḍatayn fi aḥbār al-dawlatayn al-Nūrīyya wa-l-šalāḥīyya, vol. V, Bayrūt, 2002, էջ 79, 80, ինչպես նաև **նույնի՝** Tarāğim riğāl al-qarnayn al-sādis wa-l-sābi'(Dayl 'alā al-rawḍatayn), Dār al-Ğil, Bayrūt, 1974, էջ 53:

<sup>22</sup> **Acta Innocentii PP. III (1198-1216)**, էջ 584:

դա էր պատճառը, որ ինքը Տաճարականներից խլել էր Կիլիկյան Հայաստանում գտնվող նրանց տիրույթները: Կիլիկիո արքան Պապին կրկին հիշեցնում է, որ մուսուլմանների հետ Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Տաճարականների կնքած դաշինքն ամբողջովին հակառակ է խաչակրության գաղափարին, քանզի նրանք ոչ թե թշնամու, այսինքն՝ մուսուլմանների, այլ «քրիստոնյաների արյուն թափեցին՝ արհամարհելով կրոնական միաբանությունը»<sup>23</sup>:

Ինչպես պարզորոշ երևում է Պապի պատասխան նամակներից, նա անարձագանք է թողել Լևոն Ա-ի հավաստիացումները Մերձավոր Արևելքի խաչակրաց իշխանությունների և տեղի մուսուլմանական պետությունների միջև գոյացած հակակիլիկյան, իսկ ըստ Կիլիկիո արքայի՝ հակաքրիստոնեական դաշինքի վերաբերյալ: Ավելին, Պապն ամեն կերպ ջանացել է Տաճարականների ու կիլիկյան իշխանությունների միջև առկա կնճիղը լուծել հոգուտ առաջինների՝ հայոց արքային բազմիցս հորդորելով վերադարձնել նրանցից առգրավված տիրույթներն ու ունեցվածքը: Դիտելի է, որ ասպետական միաբանությունների հանդեպ Լևոնի վերաբերմունքը թագավորության հռչակումից հետո և հատկապես Անտիոքի գահաժառանգման խնդրի սրացման ժամանակ նկատելիորեն փոխվել էր: Նույնն էր դիրքորոշումը նաև Հռոմի եկեղեցու գերագահությունն ու այդ եկեղեցու դավանանքն ընդունելու վերաբերյալ, քանզի Լևոնի տված «հավաստիացումները» մնացել էին թղթի վրա<sup>24</sup>:

Կրկին դառնանք Իբն Ալ-Ադիմի պատումին: Ըստ նրա՝ Հալեպի սուլթանը ստիպված մեծ զորք է հավաքում և օգնության կանչում «այլ թագավորների»: Իբն ալ-Ադիմը հայտնում է, որ, ի թիվս մուսուլմանական այլ տիրակալների, ալ-Ջահիրին օգնել է Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլը: Ըստ նրա՝ «ստանալով ալ-Մալիք ալ-Ադիլի և այլ մահմեդական տիրակալների օգնությունը...»<sup>25</sup>՝ ալ-Ջահիրը հարձակվեց Լևոնի վրա:

Դժվար է ասել, թե ինչու էր ալ-Մալիք ալ-Ադիլն օգնում իր երեկվա թշնամուն, որի տիրույթների հանդեպ հավակնություններ ուներ: Թերևս նա նպատակ ուներ խոչընդոտել Կիլիկյան Հայաստանի հետագա հզորացումը, մանավանդ որ 1205-1206 թթ. արշավանքների ընթացքում հայերը բավական խորացել էին Հյուսիսային Ասորիքում՝ տիրելով մինչև անգամ Կիլիկիայի սահ-

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> **Brocardus**, Directorium ad Passagium Faciendum, in: Recueil des Historiens des Croisades, Documents latins et français relatives a l'Arménie, t. II, Paris, էջ 488, 489:

<sup>25</sup> **Ibn al-Adim**, Zubdat al-halab, t. III, էջ 157:

մաններից բավական հեռու գտնվող Հարիմ ամրոցին:

Ինչ վերաբերում է «...և այլ մուսուլմանական տիրակալների» օգնությանը, ապա դրանք հավանաբար Կենտրոնական Ասորիքի կամ Վերին Միջագետքի ամիրներն էին:

Հավատակից երկրների օգնությամբ համալրված՝ Հալեպի սուլթանության բանակը Մայմուն ալ-Կասրիի հրամանատարությամբ պաշարում է Հարիմը, իսկ Հալեպի սուլթանի մի ուրիշ ջոկատ՝ Թիզինը (Հալեպի շրջակայքի բերդ է)<sup>26</sup>: Ըստ Իբն ալ-Ադիմի՝ Լևոն Ա-ի բանակը գտնվում էր Բաղրասում, իսկ մուսուլմանների զորքը՝ Դարպասկում<sup>27</sup>: Լևոն Մեծագործն այստեղ, թերևս առավել, քան որևէ այլ պատերազմում, ցուցաբերեց դրվատելի ռազմավարական հմտություններ: Տեղեկանալով թշնամու տեղաշարժերի ու տեղաբաշխման մասին՝ հայկական զորքը գիշերով շրջանցեց Ամկ լիճը և առավոտյան անսպասելի հայտնվեց դրա հարավային կողմում և հանկարծակիի բերելով Մայմուն ալ-Կասրիի զինված ուժերին՝ փախուստի մատնեց<sup>28</sup>:

Նույն ճակատամարտը փոքր-ինչ այլ կերպ է նկարագրում Իբն ալ-Ասիրը<sup>29</sup>: Ըստ նրա՝ տեղեկանալով, որ Մայմունի բանակի մի մասն անջատվել էր դեպի Դարպասկ առաքվող ռազմամթերքին ուղեկցելու համար, հայկական բանակը Լևոն Ա-ի գլխավորությամբ նախ պարտության է մատնում Մայմուն ալ-Կասրիի զորքին, ապա՝ զինամթերք տանողներին և մեծ ավարով վերադառնում Կիլիկիա<sup>30</sup>:

Արաբ պատմիչների տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ թեև ռազմական գործողությունները հայոց թագավորության համար ընդհանուր առմամբ հաջող էին ընթանում, և Լևոն Ա-ը հաղթանակներ էր տանում, սակայն թե՛ Այյուբյան «համադաշնության» մեջ և թե՛ նրանից դուրս հակակիլիկյան համախմբումն այնքան մեծ էր, որ Լևոն Ա-ը ստիպված էր որոշ զիջումներով հաշտություն ստորագրել: Ըստ այդ հաշտության՝ Լևոն Ա-ը պետք է քանդեր Դարպասկի մոտ իր ամրակառուցած բերդը, վերադարձներ մուսուլմաններից խլված ավարը, գերիներին և չհարձակվեր Անտիոքի վրա<sup>31</sup>:

<sup>26</sup> **Yāqūt al-Ḥamawī**, Mu'ğam al-buldān, vol. II, Dār Šādir, Bayrūt, 1977, էջ 66:

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 158:

<sup>29</sup> Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 286:

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>31</sup> Տե՛ս **Ibn al-Adīm**, Zubdat al-halab, t. III, էջ 158: Հմմտ. '**Izz al-Dīn ibn Šaddād**, al-A'īmaq al-ḥaṭīra, v. 1.2, էջ 406:

Հաշտությունը կնքվում էր ութ տարի ժամկետով: Լևոն Մեծագործի համար ձեռքբերումը հենց խաղաղությունն էր, որ նա ստանում էր գոնե մի ճակատի վրա:

Կիրակոս Գանձակեցին նշում է, որ ջախջախելով Հալեպի սուլթանի զորքին՝ Լևոն թագավորը հարկ է պահանջում նրանցից<sup>32</sup>: Այս տեղեկությունն այնքան էլ համոզիչ չէ, քանի որ Կիլիկյան Հայաստանը, ռազմական առումով բավականաչափ հզոր լինելով հանդերձ, չէր կարող միայնակ պատերազմել ֆրանկ-մուսուլմանական դաշինքի դեմ, որոնց համատեղ ուժերը ցանկացած պահի կարող էին ներխուժել Կիլիկիա: Ահա թե ինչու նա համաձայնվում է ալ-Մալիք ալ-Ջահիրի պայմաններին:

Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության միջև 1203-1206 թթ. եռամյա պատերազմը, ամենայն հավանականությամբ, չհանգեցրեց տարածքային փոփոխությունների: Բաղրասը մնաց հայերի, իսկ Դարպասկը՝ Այյուբյանների ձեռքում: Պատերազմի կարևոր արդյունք կարելի է համարել այն, որ Հալեպի սուլթանությունը դադարեցրեց ռազմական գործողություններն ընդդեմ Կիլիկիայի և շուրջ երկու տարի զինաբախումների մեջ չմտավ հայոց թագավորության հետ, չնայած պայմանագիրը կնքված էր ութ տարվա վաժերականությամբ:

Դրանից հետո՝ արդեն 1208-ին, Լևոն Մեծագործը բարեկամական հարաբերություններ հաստատեց Մերձավոր Արևելքի հզոր տիրակալի՝ Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի հետ, որը գերագահ էր համարվում բոլոր Այյուբյանների մեջ, ինչը նրան օգնեց Անտիոքի գահաժառանգման համար մղվող հետագա ծանր պայքարում:

## **ВОЙНА 1203-1206 ГГ. МЕЖДУ КИЛИКИЙСКИМ АРМЯНСКИМ ЦАРСТВОМ И АЛЕППСКИМ СУЛТАНАТОМ**

ВААН ТЕР-ГЕВОНДЯН

После провозглашения Киликийского армянского царства Левон I приложил большие усилия для того, чтобы возвести на трон Антиохии своего внучатого племянника Раймонда-Рубена. Дело в том, что Граф Триполи Бозмунд IV, силой завладев Антиохией, лишил трона законного наследника.

<sup>32</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 160-162:

Однако перспектива того, что Антиохия могла оказаться под контролем Киликийской Армении, испугала три соседние с ней государства, и они вскоре образовали антикилийский альянс.

Первые стычки между войсками Алеппского султаната и Киликийского армянского царства начались, по всей вероятности, уже в 1201г., однако лишь к концу 1203г. военные действия вошли в активную фазу, вылившись в серьезное военное противостояние. Фактически являясь составной частью «Антиохийской войны», оно, тем не менее, может рассматриваться как отдельная война.

Одновременные военные действия против двух неприятелей (графства Антиохии-Триполи и Алеппского Айюбидского султаната) могли иметь тяжелые последствия для Киликии. Скорее всего исходя из этих опасений Левон Великий решил приостановить борьбу против Боэмунда IV и сосредоточиться на его ближайшем союзнике ал-Малик ал-Захире.

Армянские историки, за исключением Киракоса Гандзакеци, практически ничего не сообщают об этой войне. Исследователи также либо обходили ее стороной, либо касались очень поверхностно. В противовес им, средневековые арабские источники (Ибн ал-Адим, Ибн Васил, Ибн ал-Асир, Абу Шама, Ибн ал-Фурат) изобилуют информацией об этой войне.

Почерпнутые нами сведения позволяют заключить, что, несмотря на в целом успешные военные действия Левона I, антикилийская консолидация как внутри, так и вне Айюбидской «конфедерации» была так велика, что Левон I был вынужден пойти на определенные уступки и заключить восьмилетний мирный договор. По всей вероятности, Трехлетняя война 1203-1206гг. не привела к территориальным изменениям: Баграс остался в руках армян, а Дарбасак – у Айюбидов.

В дальнейшем, в 1208г., Левон Великий установил дружественные отношения с могущественным владыкой, Египетским Айюбидским султаном ал-Малик ал-Адиллом, считающимся главным среди Айюбидов. Султан дважды (1208, 1216 гг.) вмешивался в ход «Антиохийской войны», заставляя племянника ал-Малик ал-Захира воздержаться от военных действий против Киликийской Армении.

**Ключевые слова** – Киликийское армянское царство, Киликийская Армения, Алеппский Айюбидский султанат, Египетский Айюбидский султанат, Графство Антиохия-Триполи, Антиохийская война, Левон Великий, Раймонд-Рубен, Боэмунд IV, ал-Малик ал-Захир, ал-Малик ал-Адил, Киракос Гандзакеци,

Ибн ал-Адим, Ибн Васил, Ибн ал-Асир, Абу Шама, Ибн ал-Фурат, озеро Амк, Баграс, Дарбсак.

## THE WAR BETWEEN THE ARMENIAN KINGDOM OF CILICIA AND THE ALEPPO SULTANATE IN 1203-1206

VAHAN TER-GHEVONDIAN

After the proclamation of the Armenian Kingdom of Cilicia, Levon I made great efforts to raise Raymond-Ruben, the grandson of his brother, to the throne of Antioch. Previously, the Count of Tripoli Bohemund IV had seized Antioch, depriving the legitimate heir from the throne. However, the thought that Antioch could fall under the control of Cilician Armenia, scared her three neighboring countries so that they shortly created an anti-Cilician alliance.

Most probably, the first skirmishes between the troops of the Aleppo Sultanate and the Cilician Armenian Kingdom started back in 1201. However, only by the end of 1203, the armed encounters became more frequent and turned into a full-fledged military conflict. Despite the fact that this confrontation was part of the “Antiochian War”, it can be viewed as a separate war.

Waging two simultaneous wars – against the County of Antioch-Tripoli and the Ayyubid Sultanate of Aleppo – could entail dire consequences for Cilicia. Most probably, it was this apprehension that caused Levon the Great to temporarily stop the military actions against Bohemund IV in order to neutralize the latter’s closest ally al-Malik al-Zahir.

The Armenian historians (apart from Kirakos of Gandzak) report nearly nothing about this war. The researchers, too, either ignored the issue in question, or barely referred to it. The medieval Arab historians (Ibn al-Adim, Ibn Vasil, Ibn al-Athir, Abu Shama, Ibn al-Furat), on the contrary, offer abundant information about these events.

Based on the information gleaned from these sources, we can conclude that the military actions were successful for the Armenian kingdom, and Levon I was mostly victorious. Yet both within and outside the Ayyubid “confederation”, the anti-Cilician forces consolidated so that Levon I was forced to sign an eight-year peace agreement, having made certain concessions. Most likely, the three year war of 1203-1206 didn’t bring any territorial gains. Baghras stayed under Armenian control, and Darbsak – under the control of the Ayyubids.

Later, in 1208, Levon the Great established friendly relations with the powerful Middle Eastern leader, Sultan al-Malik al-Adil of Egypt, who was



considered to be the senior ruler among the Ayyubids. The Sultan intervened in the “Antiochian War” twice (1208, 1216), forcing his nephew al-Malik al-Zahir to refrain from military actions against Cilician Armenia.

**Key words** – Cilician Armenian Kingdom, Cilician Armenia, Ayyubid Sultanate of Aleppo, Ayyubid Sultanate of Egypt, County of Antioch-Tripoli, War of Antioch, Levon the Great, Raymond-Ruben, Bohemund IV, al-Malik al-Zahir, al-Malik al-Adil, Kirakos of Gandzak, Ibn al-Adim, Ibn Vasil, Ibn al-Athir, Abu Shama, Ibn al-Furat, Lake Amk, Baghras, Darbsak.

---

---

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**НЕОБХОДИМОСТЬ ФОРМИРОВАНИЯ НОВОЙ ПОЛИТИЧЕСКОЙ  
ПАРАДИГМЫ И ПЕРСПЕКТИВЫ РЕГИОНАЛЬНЫХ  
ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЕКТОВ**

НОРАЙР ДУНАМАЛЯН

Рассматривается проблема поиска новой политической парадигмы в условиях глобальной социально-политической трансформации и возможности построения эффективных трансрегиональных интеграционных союзов с целью разрешения кризиса глобализации. Целью статьи является обоснование глубинных причин современного институционального кризиса и попытки нахождения путей выхода из сложившейся ситуации с помощью создания многоуровневой системы реагирования на глобальные вызовы.

**Ключевые слова** - институциональный кризис, парадигма, трансрегиональная интеграция, проект, глобализация.

В работе «К вечному миру» Иммануил Кант продолжил поиск формулы «вечного мира», который был одной из центральных идей эпохи Просвещения, что стало основой для формирования многих объяснительных схем международных отношений уже в XX веке. До Канта, в XVII веке, чешский гуманист Ян Амос Коменский написал «Всеобщий совет об исправлении дел человеческих», в котором обосновывал необходимость реформы общества, что стало основой современного взгляда на мир. С XVII века берет свое начало идея о глобальном мире, механизмы существования которого должны быть сформулированы и объяснены. «В соответствии с разумом в отношениях государств между собой не может быть никакого другого способа выйти из свободного от закона состояния постоянной войны, кроме как отречься подобно отдельным людям от своей дикой (не основанной на законе) свободы, приспособиться к публичным принудительным законам и образовать таким путем (разумеется, постоянно расширяющееся) государство народов (ci vitas

gentium), которое в конце концов охватит все народы земли»<sup>1</sup>. Концепции Новейшего времени начали рассматривать «дикую природу» человека с разных ракурсов, что отразилось в формировании концепций политического реализма и идеализма (или модернизма) в исследовании международных отношений.

В работах многих западных исследователей в основе поиска оптимальных вариантов выхода из глобального кризиса ставятся старые концептуальные модели, которые были сформулированы в рамках иных социально-политических, экономических и других условий. Проблема концептуальной преемственности идеологически нагруженного материала выливается в довольно абстрактные схемы будущих проектов, которые, в конце концов, приводят к новому кризису. В данном случае, конечно, не стоит принижать роль концептуальной разработанности политологических дисциплин и эвристического потенциала в анализе современных западных политических процессов, но «концептные натяжки» привели к низкой познавательной ценности западных научных моделей в других регионах мира, о чем мы уже упоминали. Проблема построения нового миропорядка и новой системы международных отношений еще больше ощущается в атмосфере дестабилизации, разрыва прежних социальных и политических отношений как внутри государств, так и между ними, что предоставляет современным исследователям возможность предлагать новые модели развития будущих обществ и государств.

Дискуссия между идеалистами, реалистами, неолибералами или, так называемыми, модернистами касается общей картины международных отношений и основных механизмов взаимодействия основных акторов (при этом акторы мировой политики различны в зависимости от концепции), но взгляды сторонников различных школ существуют в контексте общей модели. Окончание холодной войны и распад СССР показали уровень влияние практических политических решений на теорию международных отношений, когда теория начинает подстраиваться под реальную политику.

Термин «глобализация» впервые был использован К. Марксом для обозначения интенсивного роста торговых связей между государствами<sup>2</sup>. С этого времени модели и элементы глобализации подвергались постоянным транс-

---

<sup>1</sup> Кант И. К вечному миру. [http://www.civisbook.ru/files/File/Kant.K\\_vechnomu\\_miru.pdf](http://www.civisbook.ru/files/File/Kant.K_vechnomu_miru.pdf)

<sup>2</sup> См. Аттали Ж. Карл Маркс. Мировой дух. М., 2008. С. 192.

формациям. Последний период глобализации как процесса распространения общей модели социальных, политических, экономических и культурных отношений был сопряжен с попыткой формирования однополярной системы международных отношений, но в XXI веке международная ситуация в различных сферах стала резко меняться, что привело к необходимости поиска новых объяснительных схем международной политики.

Для понимания современного кризиса процесса глобализации нужно обратиться к понятию «рациональности» в его формальном смысле, охарактеризованном М. Вебером как способности осуществления расчета в рамках принятия экономического решения<sup>3</sup>. Э. Дюркгейм утверждал в работе «О разделении общественного труда», что мировая цивилизация имеет тенденцию становиться более рациональной вместе с усилением взаимозависимости в мире, а также синтеза и секуляризации культуры, ведущих к уничтожению разобщенности<sup>4</sup>. Теории рациональности уходят корнями в идеи XIX века об отношении человека к природе и обществу и представляют собой развитие концепций прогресса, возникших в эпоху Просвещения. Несмотря на философское обоснование, эти теории получили практическое воплощение в развитии промышленности и в войнах как ключевого принципа построения основных этапов процесса. Соотношение представлений о глобализации и рациональности лежат в некоторой другой плоскости, огражденной от философского осмысления данных концептов. В случае глобализации рациональность, получая определенную направленность и потенциал влияния на практические политические, экономические и другие решения, предстает в форме рационализации. Различие между этими двумя схожими понятиями состоит в статичности рациональности, то есть характеристики знания в рамках модернистского мышления, и направленности данного знания на формирование общего стандарта мышления и поведения во всем мире. Рациональность вне философского дискурса служит поиску оптимальных вариантов максимизации экономических результатов и производства, что, проникая в другие сферы жизнедеятельности человека, создает предпосылки установления политической власти технократических элит в будущем. «Задача превратилась в средство, которое стало самодовлеющим. Технократия утвердилась потому,

---

<sup>3</sup>См. **Кравченко А. И.** Социология Макса Вебера: труд и экономика. М, 1997. С. 139.

<sup>4</sup>См. **Дюркгейм Э.** О разделении общественного труда. М., 1996.

что она сфокусирована на эффективности – производства, программ, решения текущих вопросов»<sup>5</sup>.

Влияние идей политического проекта Модерна на глобализационные процессы заключается в попытке рационализации мирового пространства с помощью внедрения «производственного» типа мышления, где понятие «эффективность» распространялось бы также и на ценностные установки и идеологические аспекты. Идеология в данном случае становилась средством достижения глобальной унификации, поэтому ценностные и материальные аспекты глобализации, имея под собой идеологическую основу и претендуя на объективность в построении новых социальных и политических отношений, основывались, прежде всего, на понимании эффективности капиталистической системы, которая не сводится к идеологическому измерению проблемы. Как отмечал М. Вебер, «в высшей степени смешно приписывать современному развитому капитализму... эту «неизбежность» нашего экономического развития, а именно – родство с «демократией» или даже со «свободой»»<sup>6</sup>. Таким образом, как мы уже отмечали в предыдущих главах, миропроjekt Модерна направлен на оправдание и поддержание жизнеспособности мировой капиталистической системы в ее различных формах, составляющих мировоззренческие ориентиры современного человека и общества вне зависимости от идеологических оснований.

Почему же существует кризисная ситуация? Концептуальное осмысление формирования и развития современных политических институтов, модели которых перенимаются в незападных государствах, несет на себе след западной государственной и общественной моделей. Навязывание этих моделей, а также во многих случаях приверженность идеям, противоречащим западным концепциям и ценностям, привело к негативной реакции со стороны незападных обществ. Поэтому современный глобализационный процесс перешел в режим стагнации, заставляя державы, претендующие на региональное лидерство, изолироваться внутри своей «сферы влияния». В этом случае речь идет об отрицании неолиберальных ценностей, но не о выходе из кризиса Модерна.

Отсутствие определенных новых моделей развития государства и

---

<sup>5</sup> Белл Д. Грядущее постиндустриальное общество. М., 1999. С. 438

<sup>6</sup> Mommsen, W. J. Max Weber and the Regeneration of Russia // The Journal of Modern History. 1997. PP. 63-64.

общества сохраняют значимость модернистского проекта для человечества, так как «эффективность» остается одной из главных ценностей политических и, прежде всего, экономических отношений. В данном случае проблема конфликта идеологий уходит на второй план, так как выход из глобального кризиса требует более глобальных усилий. В этом контексте важно ответить на вопрос: является ли региональная интеграция продолжением процесса глобализации или попыткой создания альтернативы с целью реагирования на глобальные вызовы со стороны союза государств? Региональная интеграция является частью общего процесса глобализации, очищенного от идеологических наслоений. В современных условиях на смену идеологического обоснования глобальных проектов приходит пересмотр мировоззренческих основ, так как развитие человечества зависит, прежде всего, от его готовности к изменению основ современного общества с целью выхода из институционального кризиса.

Евразийский интеграционный проект может стать площадкой для создания альтернативной «политической» картины мира, если политическая и экономическая тематики не будут покрывать все пространство интеграционных процессов, препятствуя культурному, образовательному, ценностному и другому сотрудничеству. Следование ситуативным политическим интересам в рамках взаимодействия государств-партнеров ЕАЭС или ОДКБ (как основных средств интеграции) соответствует технократическим стремлениям политических элит постсоветского пространства, в то время как союзы государств должны иметь под собой особое видение социальных, политических и других отношений как внутри политической системы, так и на международной арене. «Крепок ли союз, основанный только на противодействии? Конечно же, нет! Интеграция, которая является всего лишь защитной реакцией на определенные внешние воздействия, не может быть эффективной и долгосрочной. Она будет эффективной только в том случае, если опирается на определенные конструктивные унифицирующие начала»<sup>7</sup>. Обеспечение экономической интеграции и коллективной безопасности связано с потерей доверия к неолиберальным рецептам государственного строительства, но не к модернистскому типу мышления. Отсутствие долгосрочной цели союза государств ведет к

---

<sup>7</sup> Саркисян О.Л. Осмысление победы в Великой Отечественной войне в контексте современных интеграционных процессов.//Вестник РАУ. 2015. №1. С. 13-14.

встраиванию государств полупериферии (в терминологии И. Валлерстайна) в глобальную систему Модерна в условиях мировой дестабилизации, то есть противостояние на уровне политического и экономического противоборства недостаточно. Кризис глобализации и дестабилизация в некоторых государствах выдвинули на первый план проблему безопасности, которая включает в себя целый комплекс мер для обеспечения защиты государства. Дрейф в сторону авторитарного правления происходит во всех странах мира без исключения, так как идеологические доктрины не так ощутимы для социальной и политической практики как вопросы безопасности. Это означает, что, ставя перед собой цель обеспечения безопасности и забывая об иных особенностях общественного развития, государства и их объединения идут по пути краткосрочных перспектив и дальнейшего развала. Пример Европейского Союза показывает эффективность построения экономического и политического союза, но в атмосфере противостояния и навязывания целей внешними силами политическое объединение сталкивается с кризисной ситуацией. Политическое событие должно быть оправдано возможными последствиями политических решений, что обусловлено существованием определенного замысла и проекта данных действий. «Народы никогда не живут в совместности просто так... Группы сосуществуют не потому, что живут по соседству, а для свершения какого-то совместного деяния»<sup>8</sup>.

Общее будущее в рамках трансрегионального интеграционного проекта нуждается в теоретическом обосновании и практическом применении идей, имеющих глобальный характер, так как структура современных процессов создает взаимосвязанную картину рисков, которые возникают при реализации политических решений. Одним из возможных решений глобального противостояния «старой» и «новой» картины политической реальности может стать разработка концепции регионов-медиаторов, представляющих собой слабые звенья международных отношений, существующих под давлением различных мировых центров силы. В то же время под регионом-медиатором можно понимать определенную территориальную единицу, обладающую особым статусом и способную влиять на сопредельные территории на уровне социального, политического, культурного и экономического взаимодействия. Предпосылкой для создания подобных регионов-посредников может стать расширение полно-

---

<sup>8</sup> Ортега-и-Гассет Х. Бесхребетная Испания. М., 2003. С. 16

мочий самоуправляемых административно-территориальных единиц, региональных образований внутригосударственного и межгосударственного уровней и т. д.. Таким образом, ставится проблема создания жизнеспособной системы глобального многоуровневого управления с целью гармонизации культурных и цивилизационных особенностей различных регионов при помощи создания концепции регионов-медиаторов, включающих в себя те территориальные акторы, которые участвуют в формировании уникальных межкультурных центров по всему миру, охватывающих средние и большие города, регионы различного уровня и отдельные государства, находящиеся на стыке цивилизаций. Нужно отметить, что в этом случае подразумевается создание эффективной системы глобального многоуровневого управления с целью гармонизации мирового пространства, а не унификации и технологизации международных процессов, направленных на повторение различных процедур и поиска эффективности процесса как такового. Примерами таких регионов-медиаторов могут быть современные мегаполисы, ассоциирующиеся с особой социокультурной атмосферой, южные территории США, Дальний Восток и Калининградская область РФ, страны Магриба и Ближнего Востока и другие территории. В рамках евразийского интеграционного проекта также важно выработать механизмы построения политики эффективного взаимодействия с другими интеграционными проектами по всему миру при помощи стран-посредников.

Восприятие интеграционных процессов через призму межгосударственных отношений может стать препятствием для понимания необходимости более глобального видения роли регионов в будущих международных отношениях. Приграничные города и регионы могут предстать в роли основных медиаторов интеграции в будущем, так как обобществление политических процессов и возрастание связей между государством и обществом станут основой увеличения роли негосударственных акторов. Последние, в свою очередь, нуждаются в создании более глобальных инструментов управления, так как успех отдельно взятого региона в современных условиях зависит от большого количества факторов, влияющих на структурное становление интеграционных проектов. «Конкуренция государств за участие в глобальном управлении приводит и будет приводить к формированию многоуровневого глобального управления, сочетающего глобальные, региональные и локальные компоненты



его общей системы»<sup>9</sup>. Таким образом, роль регионов и городов возрастает не из-за глобализационной тенденции «стирания границ», а по причине кризиса института государства в современных условиях и становления трансрегиональных интеграционных проектов, противостоящих универсализации, так как будущее зависит от уровня гармонизации социальных, политических, культурных и экономических отношений в рамках всего человечества.

**ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՁԵՒԱՎՈՐՄԱՆ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ  
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

**ՆՈՐԱՅՐ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ**

Հոդվածում դիտարկվում է գլոբալ հասարակական-քաղաքական վերափոխման պայմաններում նոր քաղաքական հարացույցի որոնման խնդիրը, ինչպես նաև արդյունավետ անդրտարածաշրջանային ինտեգրացիոն միությունների ստեղծման հնարավորությունը համաշխարհայնացման ճգնաժամից դուրս գալու նպատակով: Հոդվածի նպատակն է խորը վերլուծել արդի ինստիտուցիոնալ ճգնաժամի պատճառները և որոշակի քայլերի հիմնավորումը, որոնք կապված են գլոբալ մարտահրավերներին արձագանքման բազմամակարդակ համակարգի ստեղծման հետ:

***Բանալի բաներ*** - ինստիտուցիոնալ ճգնաժամ, հարացույց, անդրտարածաշրջանային ինտեգրացում, նախագիծ, գլոբալացում:

**THE NEED FOR A NEW POLITICAL PARADIGM AND THE PROSPECTS OF  
REGIONAL INTEGRATION PROJECTS**

**NORAYR DUNAMALYAN**

The article addresses the problem of finding a new political paradigm in the conditions of global socio-political transformation and the possibility of building effective transregional integrative alliances, aiming to resolve the crisis of globalization. The goal of the article is to study the underlying causes of the

---

<sup>9</sup> **Сморгунов Л. В.** Управляемость в условиях неопределенности. [http://russiancouncil.ru/inner/?id\\_4=2560#top-content](http://russiancouncil.ru/inner/?id_4=2560#top-content)

current institutional crisis, and to attempt to find ways for solving the situation by creating a multilevel system of responding to global challenges. The scientific and practical significance of the work consists in the theoretical understanding of the contemporary political and social processes in the light of potential integration of non-Western states, and the creation of prerequisites for theoretical development of practical recommendations in the sphere of transregional policy activation.

**Key words** - institutional crisis, the paradigm, transregional integration, project, globalization.

**ՀՀ-ՆԱՏՕ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ  
(2005-2015ԹԹ.)**

**ԳՈՒ ԹՈՎԱՄԱՅԱՆ**

Հոդվածում հակիրճ ներկայացվել են ՀՀ-ՆԱՏՕ փոխգործակցության արդյունքները՝ սկսած 2005 թ. դեկտեմբերից: 2005-2015 թթ. ընտրությունը պայմանավորված է առաջին ԱԳԳԾ-ի ուժի մեջ մտնելուց մինչև երկրորդ պաշտպանության ռազմավարական վերանայումն ընկած ժամանակահատվածով: Համագործակցային անվտանգության համատեքստում ներկայացվել է ՀՀ-ՆԱՏՕ ռազմական համագործակցության դերի կարևորությունը պաշտպանական բարեփոխումների հարցում: Պաշտպանական բարեփոխումների մի շարք բնագավառների օրինակով որոշակի ցույց է տրվել փոխգործակցության ազդեցությունը:

**Բանալի բառեր** – ՆԱՏՕ, միջազգային ռազմական համագործակցություն, անվտանգային միջավայր, պաշտպանական բարեփոխումներ, պաշտպանական քաղաքականություն:

Փոքր պետությունների սահմանման համար վարքագծային մոդելի կիրառումը ելնում է այն կանխադրույթից, որ տվյալ պետության կառավարող էլիտան գիտակցում է, որ պետության ընդհանուր ռեսուրսների սահմանափակության պատճառով անվտանգության ապահովման խնդիրը պետք է լուծվի միջազգային և տարածաշրջանային անվտանգության համակարգերում արդյունավետ ներգրավվածություն ապահովող արտաքին քաղաքականության և հատկապես դրա բաղադրիչ համարվող պաշտպանական քաղաքականության միջոցով: Մերօրյա համաշխարհայնացված մոլորակում առանձին մարտահրավերներ գրեթե չկան<sup>1</sup>, հետևաբար՝ այս համատեքստում Հայաստանի Հանրապետության համար համագործակցային անվտանգության կարևորությունը դառնում է առանցքային: Մասնավորապես ռազմական անվտանգության համաչափ և անհամաչափ սպառնալիքներին հակազդելու համար համընդ-

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ նախագահի ելույթը Հարվարդի Քենեդու անվան կառավարման դպրոցում <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/03/30/President-Serzh-Sargsyan-speech-at-Harvard-university-speech/>:

գրկուն լուծումներ գտնելու հարցում միջազգային ռազմական համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ, որը Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչներից մեկն է<sup>2</sup>, վերջինիս համար ապահովում է բավականաչափ լայն գործիքակազմով: Մինչև այդ գործիքակազմին անդրադառնալը, նպատակահարմար ենք գտնում նախ ընդհանուր գծերով ուրվագծել այն համատեքստը, որի շրջանակներում ընթանում է գործիքակազմի կիրարկումը:

Սառը պատերազմի ավարտից հետո Եվրատլանտյան տարածաշրջանում և հատկապես Մեծ Բրիտանիայում սկսվեց մի գործընթաց, որի վերջնանպատակը պաշտպանական քաղաքականության և պաշտպանական դիվանագիտության ավանդական էության վերանայումն էր: Սա հանգեցրեց նրան, որ արևմտյան ռազմաքաղաքական ղեկավարությունը հետզհետե եկավ այն եզրակացության, որ զինված ուժերի դասական գործառույթը՝ հավանական հակառակորդի նկատմամբ ուժ կամ ուժի սպառնալիք կիրառելը, զսպելը, կարելի է մեկտեղել այլ գործառույթի հետ՝ նոր պաշտպանական դիվանագիտության կիրառմամբ պաշտպանական համագործակցության միջոցով առավել լայն սպեկտրի պաշտպանական-անվտանգության խնդիրներ լուծելու համար<sup>3</sup>: 1994 թ. Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդրդի կողմից<sup>4</sup> «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանառության մեջ դնելը մեր կարծիքով բխում է հենց նոր պաշտպանական դիվանագիտության տրամաբանությունից: Այս նոր գործընթացը պետք է ծառայեր հիմնականում որպես հարթակ՝ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի նախկին խորհրդային պետությունների հետ քաղաքական երկխոսության եզրեր գտնելու և պաշտպանական համագործակցությամբ քաղաքական ազդեցությունն ընդլայնելու համար: Սկզբնական խնդիրը կատարելուց հետո և 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությանը հաջորդած հակաահաբեկչական գործողությունների համատեքստում Հյուսիսատլանտյան դաշինքի ուշադրությունը սևեռվեց Հարավկովկասյան և Կենտրոնասիական տարածաշրջանների վրա,

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ նախագահի՝ 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագիրը « ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը» հաստատելու մասին, <http://www.arlis.am>:

<sup>3</sup> Տե՛ս Andrew Cottey and Anthony Forster, Reshaping Defence Diplomacy: New Roles for Military Cooperation and Assistance, The International Institute for Strategic Studies 2004, p. 6.

<sup>4</sup> Հիմնադրվել է 1991 թ., 1997 թ. վերանվանվել է Եվրատլանտյան գործընկերության խորհուրդ:

որոնք հայտարարվեցին ռազմավարական նշանակության շրջաններ<sup>5</sup>: Գործընկերություն հանուն խաղաղության գործընթացը լրացվեց «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր» գործընկերային գործիքով<sup>6</sup>, որը գործընկեր պետությունների համար պետք է հանդիսանար իրենց առաջնահերթություններից բխող քաղաքական հանձնառություններ ստանձնելու հստակ մեխանիզմ: Այսինքն՝ այս ծրագրի շրջանակում ընթացող համագործակցության հիմքում ընկած է համագործակցային անվտանգությունը:

1994թ. միանալով Գործընկերություն հանուն խաղաղության(ԳՀԽ) ծրագրին՝ Հայաստանն աստիճանաբար խորացրեց ՆԱՏՕ-ի և իր եվրատլանտյան գործընկերների հետ համագործակցությունը: 2002թ. միացավ ԳՀԽ «Պլանավորման և վերանայման գործընթացին» և օգտագործելով «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր», «Պաշտպանական հաստատությունների կառուցման գործընկերության գործողության ծրագրի» ընձեռած հնարավորությունները՝ Հայաստանի Հանրապետությունը նախաձեռնեց և այժմ էլ շարունակում է իրականացնել պաշտպանական և անվտանգության ոլորտի համակարգային բարեփոխումներ: Բարեփոխումները ներառում են պաշտպանական և անվտանգության հաստատությունների դերի հստակեցման, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկման, պաշտպանական պլանավորման, անձնակազմի կառավարման, սահմանների պաշտպանության և Հայաստանի Հանրապետության ԶՈՒ-ի՝ միջազգային խաղաղապահական գործողությունների իրականացման համար հատկացվող ստորաբաժանումների փոխգործունակության ապահովման բնագավառները<sup>7</sup>: Ընդ որում պաշտպանական համակարգի առանցքը համարվող զինված ուժերի բարեփոխումներն ընթանում են ՆԱՏՕ-ի անդամ-երկրների համար մշակված ընդհանուր ստանդարտների հիման վրա: Հայաստանի Հանրապետությունն այդ ստանդարտներին լիովին համապատասխան կազմավորում է խաղաղապահ բրիգադ, իսկ մյուս ոլորտներում ստեղծում է միայն փոխգործակցելիության հնարավորություններ՝ առանց տվյալ ստանդարտներին լիովին անցնելու:

<sup>5</sup> Տե՛ս Պրահայի գագաթնաժողովի հոչակագիրը, [http://www.nato.int/cps/en/natolive/official\\_texts\\_19552.htm#ipap](http://www.nato.int/cps/en/natolive/official_texts_19552.htm#ipap).

<sup>6</sup> <http://mfa.am/hy/international-organisations/NATO/>.

<sup>7</sup> Տե՛ս Հ. Քոթանջյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, էջ 172:

Մինչև պաշտպանական բարեփոխումների փուլերին և առանձին բնագավառներին անդրադառնալը, նշենք, որ մինչև օրս Հայաստանի Հանրապետությունն իրականացրել է երեք ԱԳԳԾ, վերջին չորրորդը՝ ԱԳԳԾ 2014-2016 թթ., հաստատվել է 2014 թ. մայիսին և ներկայումս իրականացման փուլում է<sup>8</sup>: Առաջին ԱԳԳԾ-ով Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառությունների շարքում կցանկանայինք առանձնացնել ազգային անվտանգության ռազմավարություն մշակելու պարտավորությունը<sup>9</sup>, քանի որ հայկական իրականության մեջ առաջին անգամ այդ բնագավառում մշակվելու էր ռազմավարական տրամաչափի փաստաթուղթ: Համաշխարհային փորձի հաշվառմամբ այն պետք է արտացոլեր «համընդգրկուն անվտանգության» գաղափարը, որը ենթադրում է քաղաքական կառուցվածքի հիմնական տարրերի՝ անհատի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունը ներքին և արտաքին բնույթի հնարավոր սպառնալիքներից<sup>10</sup>: Դրանով նախանշվելու էր նաև հետագա պաշտպանական բարեփոխումների ընթացքը: Հետևաբար՝ պաշտպանական բարեփոխումների ծրագրային գործընթացը բաժանվեց 3 փուլի՝ 1. հայեցակարգային մոտեցումների և համապատասխան փաստաթղթերի մշակում՝ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթների հստակեցման նպատակով (2007-2008 թթ.), 2. պաշտպանության ռազմավարական վերանայում՝ զինված ուժերի առկա հնարավորությունների և արդիականացման անհրաժեշտությունների, պահանջվող բարեփոխումների ծավալների որոշման և պլանավորման նպատակով (2008-2010 թթ.), 3. գործնական բարեփոխումների իրականացում՝ զինված ուժերի համար մատչելի ազգային ու միջազգային հնարավորությունների կիրառմամբ (2010-2015 թթ.)<sup>11</sup>:

Միջգերատեսչական մշակման արդյունքում «Ազգային անվտանգության ռազմավարությունը» 2007 թ. փետրվարի 7-ին հաստատվեց ՀՀ նախագահի կողմից, իսկ նույն թվականի դեկտեմբերի 25-ին հաստատվեց ՀՀ «Ռազ-

<sup>8</sup> <http://mfa.am/hy/international-organisations/NATO/>.

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ պարտավորությունները ՆԱՏՕ-ի հետ ԱԳԳԾ շրջանակներում, <http://www.mil.am/media/2015/07/857.pdf>.

<sup>10</sup> Տե՛ս **Հ. Քոթանջյան**, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, Երևան, 2010, էջ 491:

<sup>11</sup> Տե՛ս **Դ. Տոնոյան**, Պաշտպանական բարեփոխումների իրականացումը ռազմական համագործակցության շրջանակներում, Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ «Հայկական բանակ» հանդես, 4(58), 2008թ., էջ 48:

մական դրկտրինը», որը բխում է ազգային անվտանգության ռազմավարության դրոյթներից: Այս փաստաթղթերի հաստատումը հնարավորություն տվեց զինված ուժերի հետագա բարեփոխման և զարգացման համար ընդունելու համապատասխան օրենսդրական դաշտ<sup>12</sup> և մեկնարկային ծրագրեր: Դրան զուգահեռ՝ 2008 թ.-ից «Վաշտպանության նախարարությունը սկսեց պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը, որը շարունակվել է մինչև 2011 թ. մարտ ամիսը<sup>13</sup>: Ռազմավարական վերանայումն առաջին հերթին անհրաժեշտ էր «Վ զինված ուժերի բարեփոխումները ճիշտ ուղղորդելու, արդիականացման և զարգացման հեռանկարը ծրագրելու համար: Այսինքն՝ պաշտպանության ռազմավարական վերանայման միջոցով պետք է «Վ զարգացման առաջնահերթությունների և պաշտպանական բարեփոխումների համատեքստում որոշվեին մեր երկրի ռազմական պաշտպանության համար զինված ուժերի առկա կարողություններն ու կարիքները և ըստ այդմ հստակեցվեին բարեփոխումների նպատակները<sup>14</sup>: Վերանայման արդյունքներով մշակված «Վ ՁՈՒ զարգացման մինչև 2015 թ. միջնաժամկետ պլանը, որը երաշխավորում էր ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության հիման վրա պաշտպանության կառավարումը, հիմք դրեց ծավալուն պաշտպանական բարեփոխումների շարունակական զարգացման հարցում գործնական քայլերի կատարմանը:

Ի գիտություն ընդունելով, որ պաշտպանական բարեփոխումների գործընթացը շարունակական բնույթ ունի, հետազոտության նպատակներից ելնելով՝ հարկ ենք համարում ըստ բնագավառների հակիրճ անդրադառնալ պաշտպանական բարեփոխումների գործընթացում մինչև երկրորդ պաշտպանության ռազմավարական վերանայման<sup>15</sup> սկսման ժամանակահատվածը արձանագրված ձեռքբերումներին: Մասնավորապես պաշտպանական համակարգի արդյունավետ կառավարման նպատակով կատարվել է Պաշտպանու-

<sup>12</sup> Տե՛ս «Պաշտպանության մասին» «Վ օրենքը, <http://parliament.am/legislation.php?sel=alpha&itype=3&lang=arm#24>.

<sup>13</sup> Տե՛ս «Վ ՊՆ-ի կողմից ներկայացված «Պաշտպանության ռազմավարական վերանայման 2011-2015 թթ. ծրագիրը» (հանրային օգտագործման համար), [www.mil.am](http://www.mil.am).

<sup>14</sup> Տե՛ս **Ս. Օհանյան**, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. Երկրորդ փուլ, Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ «Հայկական բանակ» հանդես, 2-3(56-57), 2008 թ., էջ 13:

<sup>15</sup> Տե՛ս «Վ նախագահի՝ 2013 թ. դեկտեմբերի 5-ի կարգադրությունը «Վ Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին», <http://www.irtek.am/views/act.aspx?aid=73139>;

թյան նախարարության և գլխավոր շտաբի գործառույթների հստակ տարանջատում: Պաշտպանության նախարարությունն իր ստորաբաժանումներով հանդերձ վերածվել է գլխավոր պետական ռազմաքաղաքական հաստատության, իսկ գլխավոր շտաբը՝ զորային կառավարման կենտրոնական մարմնի: Այսինքն՝ այս համադասման արդյունքում ամբողջ Պաշտպանության նախարարությունը պետք է զբաղվի պաշտպանական քաղաքականությամբ, որը «պետության քաղաքականության բաղկացուցիչ մասն է և նպատակաուղղված է հավանական արտաքին թշնամուց պետության, նրա բնակչության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պաշտպանությանը»<sup>16</sup>, իսկ գլխավոր շտաբը՝ ռազմական քաղաքականության գործադրման մասով՝ ծրագրում, իրականացում և այլն:

Պաշտպանական բարեփոխումների՝ ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողության բնագավառի իրավական հիմքը ՀՀ սահմանադրության 8.2 հոդվածն է, համաձայն որի՝ զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո<sup>17</sup>: Չինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն սահմանելու առաջին լուրջ քայլերից էր պաշտպանության նախարարի պաշտոնը քաղաքացիական պաշտոն դարձնելը, որով պաշտպանության նախարար նշանակվեց արդեն քաղաքացիական անձ: Հաջորդ կարևոր քայլը «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումն էր<sup>18</sup>: Քաղաքացիական հատուկ ծառայությունը ներդրված է այն ստորաբաժանումներում, որոնք անմիջականորեն չեն զբաղվում ռազմական գործունեությամբ, այլ որոշակիորեն առնչվում են ժողովրդավարական վերահսկողության խնդիրներին<sup>19</sup>: Այս խնդիրների արդյունավետ լուծմանն էր նպատակաուղղված նաև ՀՀ ՊՆ «Հանրային իրազեկման հայեցակարգի» ընդունումը, որն ապահովում է պաշտպանական քաղաքականության թափանցի-

<sup>16</sup> Տե՛ս Հ. Քոթանջյան, Դ. Չիլինգարյան, Վ. Ավետիսյան, Ա. Մինասյան, Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք, Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ «Հայկական բանակ» հանդես, 1-2(59-60), 2009, էջ 10, 11:

<sup>17</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության փոփոխությունները 27.11.2005թ., [www.president.am/hy/constitution-2005/](http://www.president.am/hy/constitution-2005/):

<sup>18</sup> Տե՛ս «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 28.11.2005թ., <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=3156&lang=arm>:

<sup>19</sup> Տե՛ս Տ. Քոչարյան, ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, էջ 237:



կությունը և հանրությանը հաշվետու լինելու հարցում միասնական տեղեկատվական քաղաքականության իրականացումը: Վերջինիս ընդունումը մեծապես կարևորվում է բանակ-հասարակություն փոխհամագործակցության ամրապնդման, անվտանգության և պաշտպանության ոլորտի ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթերի մշակման ծրագրերին հանրության մասնակցության առումով:

Ինչ վերաբերում է պաշտպանական բարեփոխումների կրթական բաղադրիչին, պետք է նշել, որ այս ուղղությամբ զգալի դրական տեղաշարժեր են եղել: Նախ՝ ընդունվել է ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը, որով նախանշվում են գործող համակարգի բարեփոխումների ուղղությունները, մասնավորապես ռազմական կրթության շարունակականությունը, եռաստիճան կրթական համակարգի ներդրումը, փոխհամագործակցությունն ազգային և միջազգային ուսումնական հաստատությունների հետ, գիտական կադրերի պատրաստումը և այլն<sup>20</sup>: Բացի այդ դեռևս 2005 թ. դեկտեմբերին ուժի մեջ մտած առաջին ԱԳԳԾ-ով Հայաստանը հանձնառություն էր ստանձնել՝ զարգացնելու «Դրաստամատ Կանայան» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հետազոտական և վերլուծական կարողությունները<sup>21</sup>: Ընդհանուր առմամբ այս ինստիտուտի դերը շատ մեծ է պաշտպանական կրթության բարեփոխումների հարցում:

Այսպիսով, պաշտպանական բարեփոխումների մի շարք ուղղությունների՝ մեր կողմից հակիրճ ներկայացված վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք բխում են ՀՀ-ՆԱՏՕ ռազմաքաղաքական համագործակցության արդյունքում ընդունված ԳՀԽ-ի անհատական գործընկերության գործողությունների ծրագրերից: Ի հավելումն վերոնշյալի, 2010 թ. նոյեմբերին Լիսաբոնում ընդունված Հյուսիսատլանտյան դաշինքի նոր ռազմավարական հայեցակարգի<sup>22</sup> վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ համագործակցային անվտանգության հետագա ամրապնդումն այդ դաշինքի առաջնահերթություններից մեկն է: Պաշտպանական համագործակցության միջոցով

---

<sup>20</sup> Տե՛ս ՀՀ «Ռազմական կրթության հայեցակարգ», ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 7-ի նիստի N 9 արձանագրային որոշման հավելված 1, [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2012/03/MAR9-18\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR9-18_1.pdf)

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ պարտավորությունները ՆԱՏՕ-ի հետ ԱԳԳԾ շրջանակներում, <http://www.mil.am /media/2015/07/857.pdf>:

<sup>22</sup> Տե՛ս NATO's Strategic Concept 2010 [http://www.nato.int/nato\\_static\\_fl2014 /assets/pdf/pdf\\_publications/20120214\\_strategic-concept-2010-eng.pdf](http://www.nato.int/nato_static_fl2014 /assets/pdf/pdf_publications/20120214_strategic-concept-2010-eng.pdf):

համընդհանուր անվտանգության միջավայրն առավել կայուն դարձնելուն ուղղված քայլերի ամբողջությունը, որն ընկած է հենց համագործակցային անվտանգության հիմքում, միանշանակ բխում է Հայաստանի անվտանգության շահերից, քանի որ վերջինիս ռազմական անվտանգության ապահովման միջազգային երաշխիքը միջազգային անվտանգության համակարգերի շրջանակներում և առանձին պետությունների հետ դաշնակցային ու գործընկերային հարաբերությունների հաստատումն ու շարունակական զարգացումն է: Ելնելով սրանից՝ Հայաստանի Հանրապետությունը ՆԱՏՕ-ի հետ հետագա ռազմական համագործակցության շրջանակում շարունակելու է մեծապես կարևորել միջազգային առաջատար փորձի ձեռքբերումն ու ներդրումը, զինված ուժերի արդիականացման գործում օժանդակության կիրառումը, փոխգործակցության կարողությունների ընդլայնումը, արդի ռազմական գիտության, ռազմատեխնիկական առաջընթացի և գործնական փորձի ձեռքբերումների ուսումնասիրման հիման վրա անհրաժեշտ ուժերի, միջոցների ստեղծումը<sup>23</sup> կրելով այդ փոխգործակցության ազդեցությունը:

## ВЛИЯНИЕ СОТРУДНИЧЕСТВА АРМЕНИЯ-НАТО НА ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РА (2005 -2015)

ГОР ТОВМАСЯН

В статье анализируются основные результаты партнерства Армении с НАТО с начала декабря 2005 г. Особое внимание уделяется ключевым событиям, имевшим место после вступления в силу Индивидуального плана партнёрства с НАТО в 2005 г. до Второго стратегического пересмотра обороны РА. Партнерство Армении с НАТО рассматривается в контексте более широкого спектра сотрудничества в сфере безопасности; особое внимание уделяется влиянию сотрудничества на реформы в области обороны Армении. В статье проанализированы результаты партнерства в нескольких сферах оборонных реформ.

**Ключевые слова** – НАТО, международное военное сотрудничество, безопасностная среда, оборонные реформы, оборонная политика.

<sup>23</sup> Տե՛ս ՀՀ նախագահի՝ 2007 թ. դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագիրը ՀՀ «Ռազմական դոկտրինը» հաստատելու մասին, <http://www.arlis.am>:

## THE IMPACT OF ARMENIA-NATO PARTNERSHIP ON THE DEFENCE REFORMS OF RA (2005-2015)

GOR TOVMASYAN

The article analyzes the major outcomes of Armenia-NATO partnership initiated in early December 2005. Special attention is paid to the key events that had taken place between the year 2005, when the Individual Partnership Action Plan came into force, and the second Strategic Defence Review in 2015. Armenia-NATO military cooperation has been examined in the broader framework of security cooperation. Its significance for defence reforms in Armenia is underscored. The results of the partnership in several areas of defence reforms are analyzed.

**Key words** – NATO, international military cooperation, security environment, defence reforms, defence policy.

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՊՐԻԼՅԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

## ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՈՅԱՆ

Ինչպես հարաբերական խաղաղ ժամանակ, այնպես էլ ապրիլյան ագրեսիայի օրերին Ադրբեջանը վարել և անկասկած շարունակելու է վարել տեղեկատվական պատերազմ իրեն հասու ձևերով ու մեթոդներով: Այդօրինակ պատերազմում հակառակորդի (ԼՂՀ և ՀՀ) և իր պետության մեջ հասարակական կարծիքները դիտվում են որպես կարևորագույն ռազմական-ռազմավարական ներուժ. առաջինը՝ տեղեկատվական-հոգեբանական ներգործության նպատակակետ, երկրորդը՝ ռազմավարական բնույթի էներգետիկ աղբյուր:

Ադրբեջանի վարած ռազմաշունչ քաղաքականության բովանդակային հիմքում հստակ դրսևորվում է հայկական էթնոսի նկատմամբ ցեղասպանության շարունակական իրականացման հիմնադրույթը, որի համար տեղեկատվական բաղադրիչներ են հայատյացությունը և դրա ազատ քարոզչությունը հոգեբանական ճնշման բոլոր հնարավոր ձևաեղանակների կիրառությամբ:

**Բանալի բառեր** - տեղեկատվական պատերազմ, տեղեկատվական պատերազմի օբյեկտ, տեղեկատվական-հոգեբանական ազդեցության ձևաեղանակ, հոգեբանական ճնշում, ռազմական-ռազմավարական ներուժ, տեղեկատվական բաղադրիչ, քարոզչություն, հայատյացություն, ցեղասպանություն, էթնոս:

Տեղեկատվական պատերազմը (ՏՊ) կամ տեղեկատվական-հոգեբանական պատերազմը (ՏՀՊ) կոչված է բարոյահոգեբանական առումով քայքայիչ ազդեցություն ունենալու հակառակորդ պետության խաղաղ բնակչության և զինված ուժերի (ԶՈՒ) անձնակազմի վրա: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր պետություն ամեն կերպ ձգտում է իր ԶՈՒ-ին ու խաղաղ բնակչությանը զերծ պահել այդպիսի ազդեցությունից<sup>1 2 3</sup>: Ըստ էության ՏՊ-ն կամ

---

<sup>1</sup> **Օհանյան Ա., Մալքոջյան Ա.**, Տեղեկատվական պատերազմները որպես ազգային անվտանգության սպառնալիք //21-րդ դար, №4(56), 2014 թ., էջ 120-124 /Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2014թ.:

<sup>2</sup> **Իկիլիկյան Ա., Քինակցյան Ա.**, Տեղեկատվական հոսքերի ազդեցությունը երիտասարդության վրա //21-րդ դար, №4(22), 2008 թ., էջ 81/Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2008 թ.:

<sup>3</sup> **Борисов М. А., Заводцев И. А., Чижов И. В.**, Основы программно-аппаратной защиты информации: учебное пособие.- М., кн. дом «Либроком», 2012г., стр. 15-22.

ՏՀՊ-ն տեղեկատվական գործողությունների ամբողջություն է կամ համալիր ներգործություն հակադիր կողմի ռազմաքաղաքական ղեկավարության, պետական և ռազմական կառավարման համակարգի նկատմամբ, ինչը խաղաղ ժամանակաշրջանում կարող է հանգեցնել տեղեկատվական ներգործության սուբյեկտի համար բարենպաստ որոշումների ընդունման, իսկ զինված բախումների ժամանակաշրջանում՝ լիովին կամ մասնակիորեն խափանել հակառակորդի կառավարման համակարգի գործունեությունը<sup>4</sup>: ՏՊ, որ սրվում է ռազմաքաղաքական իրադրությունը խաղաղից պատերազմականի անցնելիս, կազմակերպվում և իրականացվում է նպատակային տեղեկատվական-հոգեբանական գործողությունների միջոցով՝ հակառակորդի որոշումների ընդունման շարժառիթների վրա հուզական, հոգեբանական ազդեցություն թողնելու, միևնույն ժամանակ ակտիվ միջոցառումների՝ ռադիոէլեկտրոնային պայքարի (ՌԷՊ) ձևերի, հետախուզական և դիվերսիոն կազմավորումների անմիջական քայքայիչ գործողությունների և դրանց հետևանքների քարոզչությամբ, ինչպես նաև կեղծիքի և ապատեղեկատվության տեխնոլոգիաների կիրառությամբ<sup>5 6</sup>:

Տեղեկատվական-հոգեբանական պայքարը, որն ընդունված է որպես խաղաղ ժամանակաշրջանի ՏՊ, կամ ՏՊ-ի սկզբնական և երկարատև փուլ, խնդիր ունի ձևավորելու իր ռազմական-ռազմավարական նպատակներին ձեռնտու հակառակորդ կողմի հասարակության համապատասխան կարծիք, այսինքն՝ ՏՊ վարելու հաջորդ փուլի հաջող իրականացման համար նպաստավոր իրավիճակ: Ընդհանուր առմամբ, ՏՊ-ն թե՛ խաղաղ ժամանակաշրջանի տեղեկատվական-հոգեբանական պայքար է, թե՛ պատերազմական ժամանակաշրջանի տեղեկատվական-հոգեբանական ազդեցություն, հոգեբանական գործողությունների ամբողջություն, որի վերջնական նպատակը հասարակական կարծիքի և վարքի ձևավորումն է հոգեբանական գործողությունների կազմակերպիչների կամ սուբյեկտների նպատակներին և խնդիրներին համապատասխան<sup>7 8 9 10 11</sup>: Վերը նշված տեղեկատվական-հոգեբանական

<sup>4</sup> **В. М.**, Современная международная безопасность: учебное пособие. – М., КНОРУС, 2012, стр. 18.

<sup>5</sup> **Աթոյան Վ.**, Ազգային անվտանգության հիմնախնդիրները /Երևան, «Տնտեսագետ», 2014թ., էջ 39, 116:

<sup>6</sup> **ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ** /ՀԲ ռազմագիտական հանդեսի «Աշխատանքային տետրեր» հավելվածի հատուկ թողարկում, 2009թ., էջ 102:

<sup>7</sup> **Расторгуев С. П.**, Информационная война: проблемы и модели. Экзистенциальная математика. – М., 2006г., стр.23, 24.

բնույթի քայքայիչ բովանդակության և գործելակերպի ռազմավարություն է որդեգրել իր ագրեսիվ քաղաքականությունն ընդդեմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) իրագործելու ձգտող հարևան Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ), ինչն էլ պարզորոշ դրսևորվեց ԼՂՀ-ի հետ մարտական շփման գծի արևելյան օպերատիվ ուղղության գրեթե ողջ երկարության վրա 2016 թ. ապրիլի 2-5-ը սանձազերծած նոր ռազմական գործողությունների ընթացքում (1994 թ. զինադադարից հետո ԱՀ-ի կողմից առաջին լայնամասշտաբ ռազմական գործողությունները սանձազերծվել էին 2014 թ. օգոստոս ամսին):

Աշխատանքի նպատակը 2016 թ. ապրիլ ամսվա սկզբին ԼՂՀ-ի նկատմամբ Ադրբեջանի ռազմական ագրեսիային ուղեկցող տեղեկատվական պատերազմի վերլուծությունն է այդպիսի պատերազմի փուլերի համառոտ նկարագրով, տեղեկատվական-հոգեբանական ազդեցության վերաբերյալ համապատասխան եզրահանգումով: Աշխատանքի շրջանակներում վերլուծության առարկա է տեղեկատվական-հոգեբանական պայքարը, տեղեկատվական պատերազմը, բերված է տեղեկատվական պատերազմի օբյեկտ հասկացությունը և այդ օբյեկտի վրա տեղեկատվական-հոգեբանական ազդեցության մեթոդաբանությունը: Վերլուծության տեղեկատվական հիմքում ՏՊ-ի ժամանակագրությունն է՝ ըստ տեղեկատվության տարբեր բաց աղբյուրներից վերցրած տեղեկույթի՝ ռազմական գործողությունների վարման ընթացքում և հետո (մինչև 15.04.2016թ. ներառյալ):

**Ադրբեջանի ապրիլյան ռազմական ագրեսիային ուղեկցող տեղեկատվական պատերազմի բովանդակությունը.** տեղեկատվական-հոգեբանական պայքարի հիմնական ձևերը տարաբնույթ եղանակներով տարվող քարոզչությունն է, տեղեկատվական կեղծիքը և ապատեղեկատվությունը<sup>12 13 14</sup>:

<sup>8</sup> Տե՛ս հղում №2, էջ 87, 88:

<sup>9</sup> Տե՛ս հղում №1, էջ 131-141:

<sup>10</sup> **Աթոյան Վ.**, Գլոբալ տեղեկատվական միջավայրի ձևավորման հարցերը և մարտահրավերները //21-րդ ԴԱԸ, №6(52), 2013թ., էջ 78-95/Երևան, «Նորավանք» ԳԿԸ, 2013թ.:

<sup>11</sup> **Зелинский С.**, Информационно-психологические войны (современные психотехнологии манипулирования) /<https://psyfactor.org/lib/zin3>. html .

<sup>12</sup> Տե՛ս հղում №2, էջ 87:

<sup>13</sup> Տե՛ս հղում №7, նույն տեղում:

<sup>14</sup> **Պողոսյան Ի. Բ.**, Հոգեբանական պատերազմ. հիմնական գործոնները /Երևան, «Զանգակ-97», 2009թ., էջ 150, 182-185:

Խաղաղ ժամանակաշրջանի համար նախատեսված այս գործողությունները պատերազմական ժամանակաշրջանում ուժեղացվում և խորացվում են՝ խոցման ուժգնության մեծացման նպատակով, և բացի դրանցից, կիրառվում է նաև ՌԷՊ զինանոցը, ինչպես նաև հետախուզական կենտրոնների և դիվերսիոն կազմավորումների անմիջական քայքայիչ գործողությունները՝ ուղղված խաղաղ բնակչության նորմալ կենսագործունեության խաթարմանը, պետական-քաղաքական կառավարման համակարգի կազմալուծմանը, ՋՈՒ կապի և կառավարման համակարգերի գործունեության գոնե ժամանակավոր խափանմանը, ինչպես նաև ՋՈՒ անձնակազմի բարոյալքմանը<sup>15 16 17 18 19</sup>:

ՏՊ-ի այսպիսի գործելաճ էր հիմնականում ցուցաբերել Ադրբեջանը ապրիլյան ռազմական ագրեսիայի ժամանակահատվածում: Սակայն ԼՂՀ-ի և ՀՀ-ի դեմ վարած ՏՊ-ի ընթացքում տարբեր ձևերով ու եղանակներով տարված քարոզչությունը չնպաստեց ԼՂՀ-ի տարածքի օկուպացմանը՝ դրանից բխող բոլոր կանխատեսելի և անկանխատեսելի հետևանքներով: Ադրբեջանի ՏՊ-ի գործողություններում առանձնացնենք հետևյալ առանցքային կետերը:

**ՏՊ օբյեկտը՝** ԼՂՀ-ի և ՀՀ-ի խաղաղ բնակչություն, ՋՈՒ-ի անձնակազմ, ինչպես նաև հասարակական կարծիքի, միջազգային հանրային կարծիքի ձևավորում՝ ապատեղեկատվության, նպատակային քարոզչության և տեղեկատվական կեղծիքի միջոցով:

**ՏՀՊ ներգործության օբյեկտը՝** ԼՂՀ-ի և ՀՀ-ի հասարակությունների զանգվածային գիտակցություն: Կիրառված ձևաեղանակները՝ հայատյացության լայն քարոզչություն, ապատեղեկատվություն լայնամասշտաբ ռազմական գործողությունների հաջողությունների մասին, համեմված կիրառելի ահուսարսափի ագիտացիայով՝ ՋՈՒ-ի անձնակազմի շարքերում խուճապային տրամադրություն ստեղծելու, ինչպես նաև դասալքության համար պարարտ հող նախապատրաստելու նպատակով:

**Սպասվելիք արդյունքը.** ԼՂՀ-ի և ՀՀ-ի իշխանությունների հանդեպ հա-

<sup>15</sup> **Department of Defense.**, Dictionary of Military and Associated Terms. Joint Publication 1-02.12, April, 2001(As amended through April, 2010), p. 406 /www.fas.org/irp./doddz /dod/jp1-02-april2010.pdf.

<sup>16</sup> Տե՛ս հղում №3, էջ 15-22:

<sup>17</sup> **Пашков В.**, Информационная безопасность США /ЗВО, № 10, 2010г., стр. 3-13.

<sup>18</sup> **Иванов И.**, Некоторые аспекты деятельности сил психологических операций вооружённых сил США /ЗВО, №11, 2010г., стр. 29-34.

<sup>19</sup> **Колесов П.**, Введение Соединёнными Штатами информационных войн. Концепция «Стратегических коммуникаций» /ЗВО, №6, 2010г., стр. 9-14.

վատի կորուստ, նրանց վարած քաղաքական կառավարման համակարգի նկատմամբ անվտանգություն և խոր հիասթափություն, պետությունների (ԼՂՀ և ՀՀ) և նրանց ռազմական կառույցների ղեկավարման, կառավարման և օպերատիվ գործունեության կատարյալ անհաջողության և անելանելիության զգացում, հետևաբար՝ պարտվողական դիրքորոշում՝ ԼՂՀ-ի տարածքի հանձնումով:

Սակայն ագրեսիան զուտ ռազմական գործողություններով չի սահմանափակվել. Ադրբեջանը, ինչպես հարաբերական խաղաղ ժամանակ, այժմ էլ վարում է ՏՊ իրեն հասու ձևերով ու մեթոդներով, կիբեռնոարձակումներով: Դինամիկ զարգացման տեսանկյունից ՏՊ-ն կարելի է բնութագրել փուլային գործողություններով՝ նախապատրաստական, սրացման, ակտիվ: Նախապատրաստական փուլն ընդունված է անվանել տեղեկատվական-հոգեբանական պայքար, որին բնորոշ են հարաբերական խաղաղ ժամանակաշրջանի գործողությունները: Դրանք ուղեկցվում էին Ադրբեջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական բնույթի հաջողություններով (միջազգային ասպարեզում հեղինակության աճ՝ խաղաղարար գործընթացներում, տնտեսական համագործակցության և մշակութային համակարգերում ինտեգրվելու նախաձեռնություններ, աճող բյուջե, ազգային անվտանգության ապահովման համար ռազմական ներդրումների աճ և այլն): Նախապատրաստական փուլի բուն նպատակը ՀՀ-ի և ԼՂՀ-ի հասարակության շրջանում Ադրբեջանի աննախադեպ հաջողությունների մասին դրական կարծիքի ձևավորումն էր կամ ելակետային դիրքերի նվաճումը, ինչը գովազդվում էր ժամանակակից սպառազինություն գնելով, ընդ որում անթաքույց, ցուցադրաբար, ՀՀ-ի միակ ռազմավարական դաշնակցից՝ Ռուսաստանի Դաշնությունից (ՌԴ)՝ հասկացնելով հակառակորդ պետությանն ու նրա հասարակությանն այդ սպառազինությունը գործնականում կիրառելու նկատառումների մասին (նախապատրաստական փուլի ավարտ կարելի է համարել մինչև 2014 թ.): ՏՊ-ի սրացման փուլը նշանավորվում է հակառակորդ պետության քաղաքական կառուցվածքի, սահմանակարգերի գործունեության կարգի, նորմերի և հասարակության հոգեբանական կայունությունն ապահովող արժեհամակարգի խարխլմանն ուղղված գործընթացով: Այս փուլի բնականոն իրագործումն ապահովող հիմնական միջոցառումը պետք է ուղեկցվեր արդեն ոչ թե առանձին տեղամասերում, այլ շփման գծի գրեթե ողջ երկայնքով ռազմական գործողությունների վերականգնումով, ծանր սպառազինության և մարտական տեխնիկայի կիրառությամբ, ինչն էլ տեղի ունեցավ 2014 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում: Ռազմա-



կան գործողությունն իր տեղեկատվական բաղադրիչով հանդերձ օպերատիվ-մարտավարական բնույթի էր, հետապնդում էր զորային-հետախուզական տիպի մարտավարություն, հիմնականում տանկերի և ռեակտիվ-հրթիռային համակարգերի գործնական փորձարկումով՝ նշանակետեր ընտրելով, բացի ՀՀ ՁՈՒ-ի առաջապահ դիրքերից, սահմանամերձ բնակավայրերը նույնպես: Երրորդ, ակտիվ փուլը 2016 թ. ապրիլի 2-5-ը Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողությունն էր ԼՂՀ-ի դեմ՝ միաժամանակ հարվածելով նաև ՀՀ հյուսիս-արևելյան սահմանագծի երկայնքով, նպատակ ունենալով զրկել ԼՂՀ-ի բանակը ռազմական օժանդակությունից:

Այս վերլուծությամբ գալիս ենք հետևյալ եզրահանգման:

ԼՂՀ-ին և ՀՀ-ին հանկարծակիի բերելու նպատակով ԱՀ-ի կողմից 2016 թ. ապրիլյան ռազմական գործողություններն ուղեկցվել են հարձակողական մարտավարությամբ, գրեթե ողջ ներուժի գործադրմամբ, այսպես կոչված «բլից-կրիգ» կամ «արագընթաց մարտ» ռազմավարության կիրառմամբ, որի առաջնահերթ խնդիրը նպաստավոր դիրքեր, բնագծեր, շրջաններ ու տարածքներ գրավելն էր՝ հետագա գրոհների կազմակերպման և հաջող անցկացման համար: Ռազմական գործողությունները հետապնդում էին հիմնականում երկու քաղաքական նպատակ՝ կոտրել հայկական կողմի պաշտպանունակությունը, մարտական-բարոյական ոգին, համախմբվածությունը: ԱՀ-ի տեղեկատվական գրեթե բոլոր աղբյուրների ընձեռած տեղեկույթը կառուցված էր PR-տեխնոլոգիաների, կեղծիքի և ապատեղեկատվության վրա խարսխված գործողությունների վրա<sup>20</sup>: Դժվար չէ նկատել, որ Ադրբեջանի վարած ՏՊ-ում առկա են սեփական կեղծ հաջողությունների մասին գովազդման տեխնոլոգիաները համատեղ: Իհարկե, Ադրբեջանի վարած ՏՊ-ում իր կարևոր տեղն ունի ռազմական գործողությունների վերաբերյալ ապատեղեկատվությունը՝ զուգորդված հակառակորդ կողմի ազգաբնակչության և ՁՈՒ-ի անձնակազմի համար նախատեսված սարսափի, խուճապի, տագնապի մթնոլորտ ձևավորելուն ուղղված գործողություններով: Քարոզչության սուբյեկտը խոսքային բաց քարոզչության եղանակով ձգտել է խորացնել թվացյալ ահուսարսափի մթնոլորտը՝ ենթատեքստում ունենալով ԹՀ-ի ռազմաքաղաքական և ռազմատնտեսական ներուժը՝ ի նպաստ թուրք-ադրբեջանական քաղաքականության իրականացման: Հիշյալ սուբյեկտը փորձ է արել ազդելու միջազգային հանրության գիտակցության վրա՝ հույս ունենալով հուզականության աճի շնորհիվ

<sup>20</sup> Տե՛ս հղում N<sup>2</sup>14, էջ 102-112:

հասնել դիրքորոշումների ցանկալի փոփոխության: Դատելով ահուսարսափի տեսարանների մասին քարոզչությունից, որ նպատակ ունի հակառակորդ կողմի (<< և ԼԴՀ) համար հոգեբանական սթրեսային իրավիճակ ստեղծել, նկատելի է նաև Իսլամական Պետության մարտիկների ձեռագիրը՝ սահմանափակ տեսանելիության պայմաններում դիվերսիոն ներթափանցում, անզեն ու անօգնական քաղաքացիների սպանություն, դիակների խոշտանգում, կատարածի տեսագրում և գովազդում:

Ադրբեջանի կողմից ամեն տեսակի սադրիչ գործողություն, ներառյալ լայնամասշտաբ ռազմական գործողությունները ՏՊ-ի տեխնոլոգիաների կիրառությամբ <<-ի և ԼԴՀ-ի դեմ ունի գաղափարախոսական հենք, որի օրրանը Թուրքիան է: Էրդողանի հայտարարությունները Մեծ Օսմանյան կայսրության վերականգնման մասին զուրկ չեն գաղափարախոսական հիմքից: Իսկ թուրքական ազգային գաղափարը պանթուրքիզմն է, շարժիչ ուժը՝ պանիսլամիզմը<sup>21</sup>: Չի բացառվում, որ ոչ հեռու ապագայում թուրք-ադրբեջանական կոալիցիան սկսելու է գործել ժամանակի լավ փորձություն անցած զենքով՝ մահմեդական արմատականության գաղափարախոսությամբ, որով փորձ է արվելու ճանապարհի հարթել դեպի Միջին Ասիա և Արևելյան Ասիայի երկրներ, ընդհուպ մինչև Խաղաղովկիանոսյան տարածաշրջան, քանի որ դրա համար թուրք-ադրբեջանական միության ընդհանուր ներուժը չի բավականացնի ռուսական գործոնը չեզոքացնելու համար, և ՆԱՏՕ-ն էլ միշտ չէ, որ կանաչ լույս է վառում Էրդողանի հեռահար, հաճախ չկշռադատված, քաղաքական ծրագրերի իրագործման համար<sup>22</sup>: Կրոնական հողի վրա ՏՊ վարելու տեխնոլոգիան միշտ բարդ հետևանքներ է ունենում, երբ կրոնաբարոյական հայացքները փոխադրվում են կրոնական-ծայրահեղական գաղափարներով քողարկված ահաբեկչական նորահայտ կազմակերպությունների հանցավոր գործունեության մեջ: Հետևաբար՝ միջնաժամկետ ապագայում Ադրբեջանը, ունենալով իր ավագ եղբայր Թուրքիայի բացահայտ աջակցությունը, դիմելու է մահմեդական աշխարհի միջամտությանը՝ դարաբաղյան թնջուկին կրոնական աստառ տալու և հիմնախնդիրն իր օգտին լուծելու ակնկալիքով: Նման ռազմավարությամբ Ադրբեջան-Թուրքիա տանդեմը փորձելու է մեկ կրակոցով երկու նպատակով խփել. առաջին՝ դարաբաղյան հիմնախնդրի վերջնական

<sup>21</sup> Գաղափարադաստիարակչական պատրաստության և հասարակական-պետական պատրաստության ձեռնարկ /Երևան, << ՊՆ, 2010թ., էջ 186-192:

<sup>22</sup> Տե՛ս հղում №14, էջ 141, 142:

լուծում իրենց օգտին, երկրորդ՝ ՀՀ-ՌԴ ռազմավարական դաշնակցության կազմաքանդում՝ տարածաշրջանում ԹՀ-ի հեգեմոնիայով: Իսկ ինչ վերաբերում է ՌԴ-ին, նա ոչ մի կերպ չի հրաժարվի կամ գոնե առայժմ չի հրաժարվում իր ազդեցության ոլորտում պահելուց հարավկովկասյան տարածաշրջանը, ընդ որում նաև ժամանակակից սպառազինության վաճառքով պայմանավորված քաղաքական ու տնտեսական շահերին հետամուտ լինելով:

Ադրբեջանական ռազմական ագրեսիան, զուգակցված ՏՊ-ի գործողություններով, առաջացրեց միջազգային հանրության շրջանում սպասվածին ճիշտ հակառակ ռեակցիա. միջազգային հանրահայտ ՋԼՄ-ները քննադատեցին Ադրբեջանի ագրեսիվ նկրտումներն ու հատկապես պատերազմական ռճրագործությունները՝ որպես միջազգային մարդասիրական իրավունքի ոտնահարում: Միջազգային հանրության ուշադրությունը շեղելու նպատակով ադրբեջանական հատուկ ծառայությունների սարքած ապատեղեկատվությունը՝ «պաշտոնական հայտարարությունների» ձևով, առ այն, որ «Հայկական աննախադեպ ագրեսիայի» մասին ադրբեջանական կողմը բազմիցս իրազեկել է միջազգային տարբեր լրատվամիջոցներին, ընդ որում վարպետորեն փոխարինելով ագրեսիայի օբյեկտը «հայկական կողմ» անորոշ տեղի պարագայով՝ անհիմն մեղադրելով Հայաստանին շփման գծի ողջ երկայնքով հրադադարի ռեժիմի բազմակի խախտումների համար, սպասված արդյունքը չունեցավ:

Հակառակորդի սպասումները՝ հայ երիտասարդության՝ որպես տեղեկատվական-հոգեբանական ազդեցության հիմնական օբյեկտներից մեկի կողմից իշխանությունների վարած ռազմաքաղաքական կուրսին ընդդիմանալու, զորահավաքային ներուժ կազմելուց և ՋՈՒ անձնակազմի շարքերը համալրելուց բացահայտ խուսափելու, մարտական դիրքերում գտնվողների կողմից դասալքելու սպասումները հօդս ցնդեցին՝ հանդիպելով նրանց ցուցաբերած մարտական-կամային հատկանիշների և բարոյահոգեբանական ու հայրենասիրական որակների դրսևորմանը<sup>23</sup> <sup>24</sup>: Փաստորեն տեղի ունեցավ հակառակ էֆեկտը. ռազմական ագրեսիան բերեց հայկական ուժերի համախմբման:

Թեև վերոհիշյալ ապրիլյան ռազմական ագրեսիայից ու դրան ուղեկցած ՏՊ-ից անցել է արդեն մեկ տարի, սակայն հարևան ԱՀ-ն չի դադարեցնում զինադադարի ռեժիմի խախտումները, ամեն կերպ խոչընդոտում է միջազգային մոնիթորինգի անցկացումը, շարունակում է ինտենսիվորեն վարել

<sup>23</sup> [https://hy.wikipedia.org/wiki/Կապիտան\\_Ուրֆայան](https://hy.wikipedia.org/wiki/Կապիտան_Ուրֆայան):

<sup>24</sup> <http://razm.info/81520/ՊԲ> - հայկական կողմը խոցել է թշնամու ուղղաթիռը:

ՏՀՊ ընդդեմ ՀՀ-ի և ԼՂՀ-ի իրեն հասու եղանակներով, մեթոդներով ու տեղեկատվական-հոգեբանական ճնշման ձևաեղանակների կիրառումով: Եվ որքան էլ ժամանակի ընթացքում տեսանելի է դառնում հակառակորդի ագրեսիվ գործողությունների հետևում թաքնված ենթատեքստը, այն է՝ հայ ազգի կանխամտածված ֆիզիկական բնաջնջման շարունակական քաղաքականությունը՝ համեմված հայատյացության ազատ քարոզչությամբ, միևնույնն է, հայությունն իր հնադարյան պատմությամբ ապացուցել է դաժան փորձություններին հերոսաբար դիմակայելու և այդ փորձությունները հաղթահարելու իր ունակությունը:

## ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА В ХОДЕ АПРЕЛЬСКОЙ ВОЕННОЙ АГРЕССИИ СО СТОРОНЫ АЗЕРБАЙДЖАНА

ГАГИК ХАЧАТРЯН

Գրաբարից աշխարհաբարին անցնելու հարցում լուսավորականները միակարծիք էին և առանց երկմտելու կրկնում էին նույնը՝ կոչ անելով անցնել այնպիսի լեզվի, որով առավել արդյունավետ կլիներ հայ ժողովրդին հաղորդակից դարձնել ազգի, հայրենիքի, անկախության գաղափարներին և դրանց միասնության շնորհիվ պետականության ձեռքբերմանը: Չտալով որակական գնահատական բուն գրաբար լեզվին և նրա միակ իրավունքը համարելով գեղեցկությունը՝ լուսավորականները շեշտադրում են աշխարհաբարի օգտագործման արդյունավետությունը. «Փոխանակ հրաժարվել հին դասական լեզուներին յատուկ, բարձր մուտք, խրթին ձևերից և ճառական ոճերից և մտցնել պարզ խօսակցութեան թեև անտաշ ոճերը մենք շարունակեցինք ժողովրդի համար անհասկանալի կերպով գրել, սրբապղծութիւն համարելով փոփոխութիւններ անել դարերով օրինացված ձևերի մեջ»<sup>5</sup>: Այս կոչի պատասխանն էր Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, որը վավերացրեց աշխարհաբարը նաև որպես գրի լեզու՝ սկիզբ դնելով աշխարհաբարի գործածությանը:

Նախքան դասը, առաջ անցնելով վերոնշյալ փաստարկներից, հին լեզվի կիրառման մեջ է տեսնում նաև մատենագրության բացակայությունը: Չունենալ մատենագրություն նույնն է, թե զրկված լինել բանականությունից: Չէ՞ որ մատենագրությունը բանականության պահարանն է, իսկ մինչ աշխարհաբարին անցնելը հայոց մատենագրությունը եղել է արեղայական<sup>6</sup>: Լուսավորականների մեկնաբանությամբ արեղայական մատենագրության գոյությունը համարժեք է վերջինիս չգոյությանը: Հատկապես երբ մեկ ազգի պատմությունը նախևառաջ բանականության, այլ կերպ գիտակցության պատմություն է, ապա այս մեկնաբանության համատեքստում հին լեզվի կիրառումն արգելակում է հայ ժողովրդի առաջընթացը, զրկում նրան բանականությունից: Միակ ելքը նորը կերտելն է՝ նոր մատենագրություն, նոր պատմություն, նոր գիտակցություն: Հին լեզվի դերի մասին նախքան դասական մեկնաբանությունը հստակ սահմանագիծ է անցկացնում մինչլուսավորական հայ մշակույթի, պատմական հիշողության և լուսավորական ժամանակաշրջանի միջև:

Լեզուն, անշուշտ, մտածողություն է, գոյության կերպ, մշակույթ և պատ-

<sup>4</sup> Տե՛ս Արծրունի Գր., նշվ. աշխ., էջ 150:

<sup>5</sup> «Մշակ», Թիֆլիս, 1872, թիւ 14:

<sup>6</sup> Տե՛ս Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1947, էջ 146:

մական հիշողություն: Նոր մտածողությունը ենթադրում էր նոր համակարգ՝ իր հերթին հաղթահարելով լեզվական ավանդապաշտությունը: Թեև, ի հակակշիռ նալբանդյանական ծայրահեղականության, աշխարհաբարին անցնելու լուսավորականների առաջադրած փաստարկերը սին էին համարում պահպանողական թևի ներկայացուցիչները: Նրանցից ամենամարտնչողներն ու ծայրահեղականները Հ. Տերոյենցը և Գ.Այվազովսկին էին: Լինելով պահպանողական թևի ներկայացուցիչ՝ Տերոյենցը քննադատում է լուսավորականություն երևույթն ինքնին՝ դրա առանձին դրսևորումները ենթարկելով խիստ և անզիջում քարկոծման: Մասնավորապես անդրադառնալով գրաբարից աշխարհաբարին անցնելու անհրաժեշտությանը՝ Տերոյենցը խստորեն քննադատում է լուսավորականներին՝ նրանց այդ նախաձեռնությունը համարելով անընդունելի: Հավատը նորոգողները, ըստ նրա, փորձում են նորոգել նաև լեզուն<sup>7</sup>: Այս տեսակետի ներկայացուցիչները համարում են, որ լեզուն և միտքը, լինելով փոխկապակցված, անմիջականորեն անդրադառնում են ազգային ինքնության կառուցվածքի վրա, և լեզվի փոփոխությունն անխուսափելիորեն հանգեցնում է աշխարհայացքային փոփոխությունների, ինչը բացասաբար է ազդում ազգային ինքնության պահպանման վրա: Ինչպես նշում է լեզվաբաններից մեկը. «Մի ազգ, մոռանալով իր մայրենի լեզուն, կորցնում է իր բնական միջոցներից մեկը, ուրեմն կպակասի, կնուազի նորա բնական զարգացման, նորա անհատական յատկությունների, նորա ինքնուրոյնութեան, ուրեմն նորա հասարակաց օգտի համար արդիւնաբերութեան ոյժը»<sup>8</sup>: Անդրադառնալով գրաբարին և աշխարհաբարին՝ հատկանշական է պահպանողական թևի ներկայացուցիչների այն դիտարկումը, որ կարելի է գրքեր գրել նաև գրաբարով և դրանք հասու դարձնել ժողովրդին, ինչին լուսավորականները հակադրվում են այն փաստարկով, որ այդ գրքերը կմնան գրադարակին և ոչ ավելի:

Այս երկու ծայրահեղ կարծիքների մեջտեղում են Ս. Տյուսաբի դիտարկումները գրաբարից աշխարհաբարին անցնելու առնչությամբ: Վերջինս քննարկում է արդեն իրողություն դարձած աշխարհաբարի թերությունները: Տյուսաբը պահանջում է ստեղծել աշխարհաբարի կանոնադրություն, այլապես գրաբարից անցումն աշխարհաբարին դատապարտված է վերածվելու հետընթացի: Նա իրավացիորեն նշում է. «... ամեն ոք իր անձնական ճաշակին հետևելով լեզուին մեծածաւալ դաշտին մէջ չքնաղ մտաւորական ծաղիկներ

<sup>7</sup> Տե՛ս **Տերոյենց Հ.**, Բանադատ, Ի Կոստանդնուպօլիս, 1860, էջ 60:

<sup>8</sup> «Մշակ», Թիֆլիս, 1872, թիւ 11:

սփռեց աստ և անդ, առանց փունջ մը կազմելու ներդաշնակությամբ միատրեալ»<sup>9</sup>: Տյուսաբը, այսպիսով, շեշտում է աշխարհաբարից գրաբարին ոչ սահուն անցումը և այդպիսի պարագայում լեզվի լրդացող համակարգի առկայությունը: Նավ, որը չուներ նավավար, ուրեմն և զարգանում էր անկանոն: Այլ էր աշխարհաբարի կարգավիճակը՝ որպես առօրյա խոսակցական լեզու, և լրիվ այլ էր վերջինիս կարգավիճակը՝ որպես գրի լեզու: Իսկ այդ առումով այն հղկելու և համակարգելու անհրաժեշտություն ուներ, քանի որ իր կառուցվածքով պարզ էր և դյուրին, իսկ քերականորեն այն պետք է լիներ համակարգված: Բացի այդ, գրաբարից աշխարհաբարին անցնելով՝ արագորեն լեզվական համակարգ ներառվեցին օտարաբանություններ, որոնք հայացնելու, թարգմանելու անհրաժեշտությունը ևս համարվեց իրեն սպառող և ժամանակավրեպ մեթոդ: Ինչ պարտադիր է եզրույթները հայերեն դարձնել, եթե կարելի է դրանք օգտագործել բուն լեզվով: Մաքրախոսությունը երբեմն վերածվում է մթնախոսության՝ բուն եզրույթի իմաստը դարձնելով անըմբռնելի<sup>10</sup>: Նման մոտեցմամբ առաջնորդվելը հայոց լեզուն հարստացրեց օտարաբանություններով և չթարգմանված եզրույթներով, ինչին առնչակից ենք մինչև այժմ:

Հատկանշական է դիտարկել նաև լեզվի հիմնահարցը պատմական հիշողության տեսանկյունից և անդրադառնալ նաև այլ տեսաբանների: Հ. Սրվաճյանը, Հ. Ասատրյանն աշխարհաբարին անցումը քննարկում են բացառապես պատմական հիշողության և ազգային ինքնության տեսանկյունից: Հ. Սրվաճյանը նշում է. «Անցյալը մեռավ, նախնիք ալ մեռան, դժբախտաբար անոնց խոսած լեզուն ալ մեռավ, չհուսանք, որ մեռելը կենդանանա: Աշխարհիս վրա, մինչև այսօր, ոչ մի մարդ մը տեսվեցավ, որ մեռնելեն ետև բնական կերպով հարություն առնե, ոչ մեռյալ լեզու մը նմանապես, որ կենդանանա: Լեզու մը պետք է անշուշտ ազգի մը, անկարելի է և գրաբարը մեր ազգին լեզու ընել, ուզենք չուզենք աշխարհաբարն է իր լեզուն և պիտի ըլլա»<sup>11</sup>: Եվ իրոք, գրաբարից աշխարհաբարին անցումը թեև ժամանակաշրջանի պահանջն էր, սակայն այն իր գոյությամբ ոչ այնքան խնդիրներ լուծեց, որքան ստեղծեց: Այս մասին փաստում է նաև Հ. Ասատրյանը. «...19-րդ դարում սկսած մեր վերածնությանը, չկարողացաւ յօգուտ գիտական-իմաստասիրական մտածման արդիւնքների որդեգրման՝ մի ուղեփոխութիւն առաջ բերել: Միա կողմից՝ հենց

<sup>9</sup> Տիխաբ Ա., Աշխարհաբար հայ լեզուն, Կ. Պոլիս, 1880, էջ 11:

<sup>10</sup> Տե՛ս Նազարյան Ստ., Հանդէս նոր հայախօսութեան, Մոսկվա, Առաջին մաս, 1857, էջ դ-ե:

<sup>11</sup> Սրվաճյան Հ., Հրապարակախոսական հատընտիր, Եր., 1960, էջ 474:

նոյն վերածնության շնորհիւ, ասպարէզից վտարած գրաբարի հետ, հների ստեղծած արժէքներն էլ դարձան, գրեթէ, մեռեալ տառ »<sup>12</sup>:

Հայկական ինքնության արդիականացման համատեքստում լեզվական գործոնի արծարծումը և փոխակերպումը, սակայն, հղի էին մեկ այլ վտանգով: Իսկ ի՞նչ կարգավիճակ պետք է ունենա մինչ այդ ապրող պատմական հիշողությունը: Պետք է այն անտեսվի՞, թե՞ պետք է թողնել գրադարակին՝ որպէս հուշարձան: Չէ՞ որ պատմական հիշողությունը պահպանվել էր գրաբարով, և դրա դարակներում էին անթելված հայ ժողովրդի անցած պատմությունը, առասպելները, մշակույթը: Աշխարհաբարը վավերացնելու պարագայում ո՞րն էր լինելու նախորդող պատմությանը, գրական հուշակոթողներին հաղորդակից դառնալու միջոցը: Թերևս լուսավորականների ապագայամետ նախագիծն իր բնույթով սպառում է այս հարցադրումները և որևէ կերպ դեպի անցյալ տանող ուղի չի թողնում: Չէ՞ որ լուսավորականության իդեալն ապագան էր, իսկ անցյալը նրանց համար դեռևս անցյալ չէր, քանի որ լինելով պատմական ընթացքի մեջ և հաղորդակից դառնալով անցյալի հայ մշակույթին՝ նրանք ինչ-որ չափով դրա կրողն էին, և լինելիության մեջ դրա բացակայության մասին մտածելը թերևս անտեղի էր: Իսկ մեր՝ XXI դարից հետոհայացք նետող հայի համար անցյալն անընթեռնելի է, և դրան կարող ենք միայն հաղորդակից դառնալ թարգմանչի միջոցով, ում գրական ճաշակին էլ պետք է ապավինենք հայ ժողովրդի պատմական հիշողությանը հաղորդակից դառնալը: Ներկայումս գրաբարը միայն նեղ մասնագետների լեզու է և իրականություն դրա դիակ լինելու փաստը: Եվ այն հարցին, թե ինչ պետք է անեին լուսավորականները, եթե լեզուն ինքնին բնականորեն գործածությունից դուրս էր եկել և բնորոշվում էր անկենսունակությամբ, մնում է պատասխանել հին և նոր ինքնության երկընտրանքի հարցադրմամբ: Ի՞նչ գրական ժառանգություն է ստեղծվել մինչլուսավորական շրջանում և լուսավորական շրջանից սկսած: Բացի այդ, վերլուծելով արևմտահայերենը և արևելահայերենը, ակնհայտ են դառնում տարբերությունները: Արևմտահայերենում գրաբարի հենքի պահպանմամբ է փոխվել լեզվի կառուցվածքը, և այդ լեզվական համակարգում գրեթե բացակայում են օտարաբանությունները, ի տարբերություն արևելահայերենի, որի պարագայում գրաբարից ոչինչ չի պահպանվել, և այն հարուստ է բազում օտարաբանություններով:

<sup>12</sup> Ասատրյան Հ., Արթնացի՛ր, հա՛յ մարդ, Եր., 1998, էջ 10:

## ПРОБЛЕМА ЯЗЫКА В ПРОСВЕТИТЕЛЬСКОМ ПРОЕКТЕ МОДЕРНИЗАЦИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ

НАНЕ МОВСИСЯН

В статье обсуждается проблема языка в период армянского просветительства, переход от грабара к ашхарабару. В частности, выдвигаются два противоречащих друг другу мнения по поводу перехода от грабара к ашхарабару, аргументы и контраргументы. Представители просветительского крыла объясняют упомянутый переход отсутствием жизнеспособности старой языковой системы, в то время как представители консервативного крыла акцентируют связь между языком и мышлением, ее влияние на сохранение национальной идентичности. При обсуждении проблемы языка в контексте национальной идентичности подчеркивается также аспект национальной памяти.

**Ключевые слова** – язык, мышление, грабар, ашхарабар, национальная память, национальная идентичность.

## THE ISSUE OF THE LANGUAGE IN THE CONTEXT OF THE ENLIGHTENMENT PROJECT OF MODERNIZATION OF ARMENIAN IDENTITY

NANE MOVSISYAN

The article discusses the issue of the language, particularly, the transition from literal to modern Armenian during the Armenian Enlightenment. Two contradictory views, arguments and counterarguments to the transition from literal to modern Armenian are put forward. The supporters of the enlightenment wing come up with the idea of anachronism and non-viability of the old language system, while the representatives of the conservative wing emphasize the link between language and reason and its influence on the preservation of national identity. When discussing the issue of language in the context of national identity, the aspect of historical memory is highlighted too.

**Key words** – language, reason, literal language, modern language, historical memory, national identity.

# ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### ՍՅՈՒՋԱՆՆԱ ՆԱԶԻՆՅԱՆ

Հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկել է սահմանադրության և գործող օրենսդրության փոխհարաբերակցության հիմնախնդիրները:

**Բանալի բառեր** - սահմանադրություն, օրենսդրություն, օրենսդրական ակտեր, իրավունքի համակարգ, փոխհարաբերակցություն, իրավունքի աղբյուրներ:

ՀՀ սահմանադրության նախաբանն ունի կարևոր իրավաբանական նշանակություն: Նրա մեջ, ըստ էության, կանխագծված է Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգի իրավական կարգավորման ռազմավարությունը: Հիմնական օրենքում ամրագրված նպատակները որոշիչ նշանակություն ունեն օրենսդրության, օրենքների կատարման, սահմանադրական արդարադատության ոլորտներում սահմանադրության և նրա նորմերի իրագործման համար: Նրանք ոչ միայն սոցիալ-քաղաքական և բարոյական, այլև իրավաբանական ուղենիշներ են, համապատասխան որի պետք է իրականացվի օրենսդրական, գործադիր և դատական իշխանության մարմինների գործունեությունը: Դա փաստորեն շարադրում է պետության և նրա մարմինների այնպիսի կարևորագույն պարտավորությունների, ինչպիսիք են մարդու իրավունքների ու ազատությունների սոցիալական և միջազգայնական խաղաղության ու համերաշխության ապահովումը, հակազդեցությունն անջատողական միտումներին, Հայաստանի Հանրապետության անվտանգությունը և ազգային շահերի պահպանումը:

Սահմանադրության նախաբանի մեջ արտահայտված են ժողովրդի և քաղաքացիների հանդեպ, երկրի ժողովրդավարական զարգացման ապահովման վերաբերյալ պետության որոշ պարտավորություններ և այլն: Նախաբանի քառասունչորս բառերը ելակետ են ժողովրդի իրական կամքին համա-



պատասխան սահմանադրության մեկնաբանման համար: Խորհրդարանը չի կարող օրենքներ ընդունել, իսկ գործադիր իշխանությունը՝ հրապարակել ակտեր, որոնք խախտում են մարդու իրավունքները և ազատությունները կամ կարող են խախտել քաղաքացիական խաղաղությունն ու համերաշխությունը, խարխլել ազգային պետականության ժողովրդավարական հիմքերը:

Անհրաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել և մեկ ոչ ճիշտ նախադրույթի վրա, համաձայն որի սահմանադրության նորմերն իրագործվում են միայն այնքանով, որքանով նրանք որոշակիացված են ճյուղային օրենսդրության մեջ: Իսկապես, սահմանադրության նպատակների մեջ չի մտնում հասարակական հարաբերությունների մանրագնին կարգավորումը, այն հասարակության կազմակերպման և նրա կառույցների փոխգործողության առավել կամ նվազ չափով կատարյալ մանրատիպար է, նախանշում է մարդու տեղն այդ հասարակության մեջ: Այս հիմնավորմամբ, սակայն, չի կարելի եզրակացնել, որ սահմանադրությունը միմիայն ընդհանուր սկզբունքների շարադրում է ու չի պարունակում սահմանադրական-իրավական հարաբերությունների սուբյեկտների որոշակի իրավունքներ ու պարտականություններ: Այդպիսի ընկալումը չի համապատասխանում իրավական՝ դրան բնորոշ սահմանադրականության ռեժիմով պետության ձևավորմանը, ինչպես չի համապատասխանում նաև « սահմանադրության առայժմ դեռ սահմանափակ կիրառման պրակտիկային: Բուն այդ տեսակետն էլ, թերևս, պայմանավորված է նրանով, որ առաջներում մենք չենք ունեցել սահմանադրական նորմերի կիրառման ձևավորված և բավականաչափ տարածված պրակտիկա:

Վերևում ասվածն ամենևին չի ժխտում հիմնական օրենքի նորմերի որոշակիացման հնարավորությունը: Առավել ևս փոփոխված սահմանադրությունը նախատեսում է մի շարք օրենքների ընդունում ի լրումն սահմանադրական հիմնադրույթների: « սահմանադրությունը պարունակում է մի քանի տասնյակից ավելի հղումներ ու օրենքների հիշատակումներ, նախատեսում է մի շարք սահմանադրական և սովորական օրենքների ընդունում:

Դա սահմանադրական կարգավորման արդյունավետության բարձրացման կարևոր պայման է: Առանց ընթացիկ օրենսդրության մեջ սահմանադրական նորմերի որոշակիացման, առանց դատավարական ձևերի, որոնց շրջանակներում պետք է կատարվի « սահմանադրության դրույթների իրագործումը<sup>1</sup>:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Ряховская Т.И.** Система обеспечения прямого действия конституции

Հենց սահմանադրության անբավարար իրավական պաշտպանությունն է պատճառ դառնում երբեմն պատշաճ իրավաբանական գնահատում չստացող սահմանադրության բազում խախտումների<sup>2</sup>:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հաշվի առնել սահմանադրական կարգավորման և դրա մեթոդների առանձնահատկությունը, շնորհիվ որի այս կամ այն նորմն ընդհանրապես չի պահանջում հատուկ որոշակիացում օրենսդրական ակտերի միջոցով: Ինչպես հայտնի է, իրավունքի ընդհանուր տեսության մեջ իրավական կարգավորման մեթոդների համակարգում տարբերակում են արգելքը, իշխանային հրամանը, լիազորումը, դիսպոզիտիվ և հանձնարարական մեթոդները: Ինչ վերաբերում է ՀՀ սահմանադրությանը, ապա սահմանադրական կարգավորման մեթոդների համակարգում արգելքների, իշխանական հրահանգների և այլնի հետ մեկտեղ օգտագործվում է նաև հիմնական օրենքի հիմնադիր հատկանիշներով պայմանավորված հարաբերությունների (պետական մարմինների համակարգի, ազգային-պետական կառուցվածքի և այլն) ձևավորված կարգի փաստումը: Համապատասխան սահմանադրական նորմերը սուբյեկտների վրա որևէ որոշակի պարտականություն չեն դնում, սակայն հենց այդ պարտականություններից է բխում սահմանադրական (և ընդհանուր առմամբ իրավական) կարգավորումը:

Սահմանադրության մեջ ամրագրված նպատակների ու խնդիրների իրականացման գործիք հանդիսացող մյուս բոլոր մեթոդները բխում են այդ հարաբերությունների պահպանման, զարգացման ու կատարելագործման շահերից: Սահմանադրության հիման վրա հրապարակվող օրենսդրական ակտերը զարգացնում և հավելում են նրա դրույթները, օժտում են նրանց որոշակիությամբ, ինչը հատկապես կարևոր է իրավակիրառման գործընթացում, սակայն դա ամենևին չի զրկում սահմանադրությունը և նրա նորմերն ուղղակի գործողության բնույթից:

Ասվածը, սակայն, չի նշանակում սահմանադրական նորմերի անմիջական իրագործման թեզի բացարձակում: Իրավունքների, ազատությունների ու պարտականությունների մասին ՀՀ սահմանադրության նորմերի իրագործման այդ ձևի մասին ուռճացված պատկերացումը կամա թե ակամա բերում է սահմանադրության և ընթացիկ օրենսդրության միջև անքակտելի կապի

Российской федерации. М., 2015, Антоненко В.М. Прямое действие конституции Российской федерации. М., 2014.

<sup>2</sup> **Хабриева Т.Я.** Толковая Конституции Российской федерации. Дисс...д-ра юрид. наук. М., 1997.

անտեսմանը և կարող է թյուրիմացություն մտցնել իրավաբանական պրակտիկայի մեջ:

Սահմանադրությունը սկսում է գործել նրա գործողության մեջ մտցնելու հայտարարության պահից, և հենց այդ պահից են նրա պահանջներն ու դրույթները պարտադիր դառնում իրավունքի բոլոր սուբյեկտների համար: Այն ընդգրկում է պետության ամբողջ տարածքը, այդ տարածքում գտնվող իրավաբանական ու ֆիզիկական անձանց, ինչպես նաև արտասահմանում գտնվող այդ պետության քաղաքացիներին: Սահմանադրության գործողության ստատիկ կողմն է դա, սակայն սահմանադրության գործողությունն ունի նաև դինամիկ կողմ:

Ինչ վերաբերում է սահմանադրության գործողության դինամիկ կողմին, ապա այն « սահմանադրության մեջ նշվում է «ուղղակի գործողություն» հասկացությամբ, որը հիմնական օրենքի տեքստում ամրագրված է 3-րդ հոդվածում՝ կապված մարդու իրավունքների հետ: Ըստ այդմ, սահմանադրության մեջ նա պարունակում է ցուցում ուղղակի գործողության բովանդակային բնութագրման վերաբերյալ:

Այսպիսով, ցանկացած սահմանադրական նորմ, անկախ սահմանադրության մեջ իր գրաված տեղից և գործառույթներից, ինչպես նաև հետապնդող նպատակներից, ուղղակի գործողության իրավական նորմ է: Սահմանադրությունն օրենսդրության մաս է, և դա հենց այն մասն է, որը կարգավորիչ ուղղակի ազդեցություն է գործում հասարակական հարաբերությունների վրա:

Այլ կերպ ասած՝ սահմանադրական նորմերի գործողություն ասելով առաջին հերթին հասկացվում է սահմանադրության՝ հասարակական հարաբերությունների վրա կարգավորիչ բուն ազդեցությունը: Այն կարող է իրականացվել անմիջականորեն՝ միմիայն սահմանադրական միջոցներով կամ էլ համատեղ իրավական այլ նորմերի հետ, որոնք տվյալ դեպքում գլխավորապես նշում են հիմնական օրենքի նորմերի իրականացման ընթացակարգը: Սահմանադրական նորմերի գործողությունը կարող է լինել նաև միջնորդավորված այլ օրենսդրական ակտերում նրանց նախապես որոշակիացումից հետո:

Բնականաբար, սահմանադրության գործողությունը չի սահմանափակվում միայն կարգավորմամբ: Այն շատ ավելի լայն է ու ներառում է հասարակական հարաբերությունների վրա ներազդման և այլ ձևեր, օրինակ՝ ինֆորմատիվ, արժեքակողմնորոշիչ, սակայն դինամիկայում սահմանադրական նորմերի իրագործման ընթացքում դիտվող սահմանադրական կարգավորումն է

կազմում հիմնական օրենքի ուղղակի գործողության կորիզը: Այդուհանդերձ, ինչպես արդեն նշվել է, որոշ դեպքերում հասարակական հարաբերությունների կարգավորման համար բավական է զուտ սահմանադրական նորմը, մեկ այլ դեպքում սահմանադրական նորմը պահանջում է որոշակիացում:

Այս կապակցությամբ հնարավոր է ու անհրաժեշտ ՀՀ սահմանադրության անմիջական և միջնորդավորված գործողության տարանջատումը: Այդպիսի տարանջատման հիմքում ընկած են սահմանադրական իրավահարաբերությունների կարգավորման տարբեր մակարդակներ, երբ որպես այդ իրավահարաբերությունների սուբյեկտներ հանդես են գալիս պետություններ, պետական ու հասարակական մարմիններ ու կազմակերպություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, պաշտոնատար անձինք կամ քաղաքացիներ և այլն: Եվ եթե ավելի բարձր մակարդակներում սահմանադրական կարգավորման համար, որպես կանոն, բավականացնում են սահմանադրական նորմերը, ապա այլ մակարդակներում, երբ սահմանադրական իրավահարաբերություններում մասնակցում են մարդիկ, առավել հաճախ պահանջվում է ձևական որոշակիության շատ ավելի մեծ որոշակիություն՝ նրանց իրավունքներն ու պարտականությունները որոշելու համար: Պետությունն ապահովում է դա վարչական, քաղաքացիական, քրեական և իրավունքի այդ ճյուղերի նորմերի շնորհիվ: Վերջին դեպքում սահմանադրական նորմերը, որոշակիացված լինելով իրավունքի համապատասխան ճյուղերի նորմերում, գործում են միջնորդավորված:

Սահմանադրական դոկտրինայի մեջ կարող ենք առանձնացնել համատեղ կիրառման ընթացքում սահմանադրության և ընթացիկ օրենսդրության հարաբերակցության մի քանի գլխավոր հատկանիշներ:

Առաջինը սահմանադրության ազդեցությունն է երկրում իրականացվող նորմատետիվ գործընթացի վրա: Կարելի է խոսել իրավական համակարգի վրա հիմնական օրենքի իրավակազմողական աճող ազդեցության մասին: Սահմանադրությունն ուղղակիորեն նախատեսում է մի շարք օրենսդրական ակտերի ընդունում:

Փոլի հատկանշական առանձնահատկությունն է սահմանադրական և սովորական օրենքների զուգահեռ և փոխկապակցված նորացումը:

Երկրորդը օրենսդրության համակարգում սահմանադրության տեղի հարցն է, նրա իրավաբանական ուժի հարցը: Լինելով օրենսդրության մաս՝ սահմանադրությունը դրա մեջ խաղում է առաջատար դեր: Այն «օրենքների օրենքն» է, որն օժտված իրավաբանական ուժով և իրավաբանական բազա է

ընթացիկ ամբողջ օրենսդրության համար: Այստեղից տրամաբանորեն բխում է պետական և հասարակական մարմինների, ֆիզիկական և իրավաբանական բոլոր անձանց, որոնց վրա տարածվում է պետության տարածքային և անձնական գերակայությունը, պարտականությունը՝ պահպանել և պաշտպանել հիմնական օրենքը: Դա է սահմանադրական օրինականության, ընդունվող նորմատիվ ակտերի՝ սահմանադրությանը, նրա տաղին ու ոգուն համապատասխանելու երաշխիքներից մեկը. սահմանադրական վերահսկողության կազմակերպչական ձև է Սահմանադրական դատարանը, որն օժտված է բավականաչափ լայն իրավասություններով:

Երրորդը հասարակական հարաբերությունների կարգավորման գործում սահմանադրության, սահմանադրական և սովորական օրենքների փոխգործողության հարցն է: Ազգային ներպետական իրավունքն ամբողջական համակարգ է, որի օղակները բաժանված չեն պատու: Այն առաջատար դերը, որն այդ համակարգում գրավում են սահմանադրական իրավունքը և դրա հիմնական աղբյուրը՝ սահմանադրությունը, նախորոշում ու պայմանավորում են այն գործառույթները՝ դրված իրավունքի այլ ճյուղերի վրա, որոնք կոչված են նախատեսելու և ապահովելու սահմանադրական նորմերի իրագործման համար անհրաժեշտ և հուսալի գործիքները: Հասարակական հարաբերությունների ոլորտում չկա այնպիսի բնագավառ, որտեղ չարտահայտվի սահմանադրական նորմերի կարգավորիչ ազդեցությունը: Սակայն այդ հարաբերությունները կարգավորվում են նաև իրավունքի համապատասխան վարչական, աշխատանքային, քաղաքացիական, քրեական և այլ ճյուղերի նորմերով:

Ինչ խոսք, դա չի նշանակում ո՛չ սահմանադրության ուղղակի և անմիջական գործողության բնույթի, ո՛չ էլ իրավունքի այդ ճյուղերի արժեքի և դերի նսեմացում: Մենք ընդգծում ենք այն միտքը, որ սահմանադրական նորմերի իրագործման մեխանիզմը սահմանվում է ոչ միայն սահմանադրության և ընդհանրապես պետական իշխանության կողմից, այլև ճյուղային օրենսդրությամբ, ինչն իր հերթին անխուսափելիորեն հարց է ծնում այդ մեխանիզմների սահմանների մասին:

Հիմնական օրենքի իրագործման սահմանադրական մեխանիզմը գործում է դրանց սուբյեկտների միջև հարաբերությունների բնականոն զարգացման ժամանակ: Շեղումների առաջացման դեպքում գործի է դրվում, կախված դրանց բնույթից, նաև իրագործման ճյուղային մեխանիզմը (խախտված իրավունքի վերականգնում, պարտականության կատարման ապահովում և այլն):

Սահմանադրության խնդրի մեջ չի մտնում բոլոր հասարակական հարաբերությունների կարգավորումը: Այն ամրագրում է սահմանադրական քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպման և գործունեության հիմունքները, ամրագրում պետական կառուցվածքը, ինչպես նաև պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման համակարգը: Սահմանադրությունն այն հիմքն է, որի վրա կառուցվում է ազգային օրենսդրության ամբողջ շենքը: Այն կատարում է իր սեփական գործառնությունը և չի կարող ու չպետք է փոխարինի ճյուղային օրենսդրությանը:

Ամփոփելով արդյունքները՝ կարելի է ձևակերպել հետևյալ եզրահանգումները՝ կապված սահմանադրություն-օրենսդրություն-իրավակարգավորում փոխհարաբերակցության հետ:

1. Արդի սահմանադրականության, սահմանադրական պրակտիկայի տեսանկյունից սահմանադրությունը, սահմանադրական կարգավորումը, օրենսդրության համակարգի և իրավական կարգավորման առաջնային, գլխավոր նորմն է:

2. Սահմանադրությունը՝ որպես կարգավորման համակարգ, իր պատմական և փաստացի զարգացման մակարդակով գործիք է, որից կախված է ոչ միայն այս կամ այն երկրի, այլև երկրների խմբի կամ բլոկի իրավական կարգավորման ճակատագիրը:

3. Իրավակարգավորումների ոլորտում սահմանադրությունից հետո խիստ կարևորվում են օրենսդրության՝ սահմանադրական և սովորական օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նորմատիվ կարգավորման դերն ու նշանակությունն անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության, իրավաօրինականության ապահովման և իրավակարգի ամրապնդման գործում:

Օրենսդրության համակարգում իրավունքի բացերի լրացման, իրավական անորոշակիության պարզման և իրավական հակասությունների շտկման, ինչպես նաև սահմանադրական և օրենսդրական ակտերի նորմերի բովանդակության ճիշտ ու համարժեք մեկնաբանությունների համար զգալի նշանակություն ունեն << վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, որոնք նաև «կենդանի ուժ» են տալիս վերացական իրավական նորմերին:

**КОНСТИТУЦИЯ И ДЕЙСТВУЮЩЕЕ ЗАКОНОДАТЕЛЬСТВО  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

СЮЗАННА НАЗИНЯН

В настоящей статье автор обстоятельно рассмотрел проблемы взаимоотношения конституции и действующего законодательства.

**Ключевые слова** - конституция, законодательство, законодательные акты, система права, взаимоотношение, источники права.

**THE CONSTITUTION AND THE ACTING LEGISLATION OF THE  
REPUBLIC OF ARMENIA**

SYUZANNA NAZINYAN

In this article, the author covers the problems of relationship of the Constitution and the acting legislation.

**Key words** – constitution, legislation, legislative acts, system of law, relationship, sources of law.

---

# ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՆՏԵՐԻԵՐԻ ԴԻԶԱՅՆԸ

### ԱՆԻ ԱՃԱՌՅԱՆ

Հոդվածում ներկայացված է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ինտերիերի դիզայնի վերլուծությունը: Այստեղ ցուցակագրված են թանգարանի թեմատիկ ցուցադրությունները՝ ըստ դրանց հատակագծային բաժանումների: Հանգամանորեն ներկայացված են թանգարանի ինտերիերի դիզայնի ցուցադրության, գունային, լուսավորության, կահավորման, հատակագծային լուծումները: Թանգարանի արդիականության վերաբերյալ ամբողջական տպավորություն ստանալու համար ներկայացված են նաև նմանօրինակ միջազգային թանգարանների զուգահեռները:

**Բանալի բառեր** – Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, հուշային թանգարաններ, թանգարանային գոտևորում, ինտերակտիվ ցուցադրություն:

Կոմիտասի թանգարանը եզակի է իր բնույթով Հայաստանի թանգարանների շարքում: Նախ և առաջ նշենք, որ Կոմիտասի անունն անգնահատելի է յուրաքանչյուր հայի համար: Նրա ներդրումը համաշխարհային երաժշտության ուսումնասիրության մեջ չափազանց մեծ է: Կոմիտասի մասին խոսելիս ակամա յուրաքանչյուրի մեջ առաջանում է սրբության, զրկանքի ու ցեղասպանության ահասարսուռ վերհուշի արթնացումը, որն անմիջականորեն արտահայտված է հենց նրա անունը կրող թանգարան-ինստիտուտում: Այստեղ ներկայացված են Կոմիտասի կյանքն ու գործունեությունը՝ հանրահռչակելով նրա բազմակողմանի երաժշտական ժառանգությունը: Թանգարանի նպատակն է կոմիտասագիտության զարգացումը, Կոմիտասի ստեղծագործական ժառանգության հետազոտումը և տարածումը<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Կոմիտասի թանգարան-ինստիտուտի պաշտոնական կայք -<http://komitasmuseum.am/museum/%D5%B4%D5%B7%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/> (հասանելի է 14.01.2017):



Կոմիտասի թանգարան-ինստիտուտն իր դռներն է բացել այցելուների առաջ 2015 թ. հունվարի 29-ին: Այն կառուցվել է 2014-2015 թթ. համանուն զբոսայգում գտնվող՝ ճարտարապետ Կորյուն Հակոբյանի կողմից նախագծված նախկին մշակույթի պալատի հիման վրա: Թանգարանի ներկայիս նախագծի հեղինակն ու ճարտարապետն Արթուր Մեսչյանն է, ինտերիերի դիզայնը պատկանում է Ալբերտո Տորսելլոյին, իսկ ցուցադրության համադրումը կազմակերպված է Վարդան Կարապետյանի կողմից:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գաղափարական մտահղացումը կոչված է ներկայացնելու և մատուցելու Կոմիտասի կյանքին ու գործունեությանը նվիրված ամենատարբեր նմուշները՝ միաժամանակ ընկղմելով սրբազան միջավայրի մեջ, արտահայտելու Վարդապետի հոգևոր մաքրությունն ու հավատքի ներուժը, որը վեհության և վերասլացության գաղափարն է ոգեկոչում: Վարդապետի կյանքն ու գործունեությունը, երաժշտական ժառանգությունն ամփոփված են թանգարանի ութ սրահների մշտական ցուցադրության մեջ: Ընդ որում 8 սրահների ինտերիերը մշակված է որպես մեկ ամբողջություն: Ստորև սկզբում ցուցակագրությամբ ներկայացված է թանգարանի ենթասրահների ցուցադրության բովանդակային հաջորդականությունը: Հաջորդաբար կմեկնաբանվեն միասնական ինտերիերի ստեղծագործական սկզբունքները.

- Առաջին սրահի ցուցադրության թեման է Կոմիտասի կենսագրական ժամանակագրությունը:
- Երկրորդ սրահում ներկայացված են Կոմիտասը և իր ժամանակակիցները:
- Երրորդ սրահում ոգեկոչվում է Կոմիտասի միտքը՝ ներկայացնելով նրա աշխատությունները, անձնական օգտագործման իրերը, վկայականները:
- Չորրորդ սրահի ցուցադրության թեման է Կոմիտասի բանահավաքչական գործունեությունը, սրահում ներկայացված են Գևորգյան ճեմարանում ուսանելու տարիների նրա նոտագրության դրվագները:
- Հինգերորդ սրահում Կոմիտասը ներկայացված է որպես կոմպոզիտոր. այստեղ նրա ստեղծագործությունները՝ հեղինակային մեղեդիներն են:
- Վեցերորդ սրահի ցուցադրության թեման Կոմիտասը և հոգևոր երաժշտությունն են. այստեղ ներկայացված է հայ եկեղեցական երա-

ժըշտությունը, որը Վարդապետի ամբողջ գործունեության էական մասն է կազմում:

- Յոթերորդ արահում ներկայացված են Կոմիտասի ելույթները, որպես հայ երգի քարոզչի գործունեություն՝ համերգներն ու դասախոսությունները, որոնցով հանդես է եկել Փարիզում, Լոզանում, Ալեքսանդրիայում, Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում և այլուր:
- Ութերորդ արահի ցուցադրության թեման է «Կոմիտասից հետո»․ այստեղ շարժանկարի ժապավենի նման անցնում է Կոմիտասի կյանքը:

Վերոհիշյալ ցուցակագրությունը վկայում է թանգարանի միջավայրի ծրագրային կազմակերպման մասին, որի արդյունքում ընդհանուր մակերեսի գոտևորումն իրականացված է՝ ոգեկոչելու դրա հիմնական ստեղծագործական մտահղացումը: Այսպիսով, կարելի է ասել, որ Կոմիտասի թանգարան-ինստիտուտը եզակի է իր բնույթով: Այստեղ ընդարձակ ցուցասրահներում լավագույնս են ամփոփված Վարդապետի կյանքին առնչվող նյութական ժառանգության նմուշները, որոնք արտացոլում են հոգեբանական տառապանքն ու հավատքի լույսը:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի մասին խոսելիս վստահաբար կարելի է ասել, որ միջազգային զուգահեռներ անցկացնելիս բավականին դժվար է գտնել նմանօրինակ թանգարան: Գաղափարական առումով Կոմիտաս վարդապետը եզակի կերպար է համաշխարհային երաժշտության ասպարեզում, բացի այդ ցեղասպանության անդրադարձը նրա կյանքին, միաժամանակ հոգևորի լուսապսակը գլխին առաջնորդվող սրբազան վեհությունը կրող այս թանգարանը չի կարող գտնել իր միջազգային օրինակը: Սակայն կարելի է դիտարկել մի քանի մեծ ճանաչում ունեցող այնպիսի թանգարաններ, որոնք նվիրված են հայտնի երաժիշտներից մի քանիսին: Այսպիսի թանգարաններից են Ֆերենց Լիստի հուշ-թանգարանը Հունգարիայում, Ֆ. Շոպենի թանգարանը Վարշավայում, Մոցարտի թանգարանը Ավստրիայում և այլն: Հատկանշական է, որ վերոհիշյալ թանգարանների մեծ մասը հուշային են, և ինտերիերի դիզայնն ամբողջությամբ պահպանում է նրանց ժամանակի շունչը: Ժամանակակից դիզայներական լուծումներով և ինտերակտիվ սարքավորումներով է հագեցած Ֆ. Շոպենի թանգարանը Վարշավայում: Այստեղ այցելուներին են մատուցվում ոչ միայն երաժշտի կյանքին և գործունեությանը վերաբերող նմուշներ, այլև տան ինտերիերի դրվագներ և ինտերակտիվ շփման հնարավորություն, որով այցելուին ինքն է կողմնորոշվում և ընտրում, թե

որոշակի որ գործն է ուզում լսել կամ ուսումնասիրել: Ինտերիերի գունապնակում գերիշխում են ծանր տոները, որոնց հակադրվում են հուշային ինտերիերների ամբողջական լուսավոր կտորները<sup>2</sup>: Այսպիսով, կարելի է ասել, որ Կոմիտասի թանգարանի ինտերիերի դիզայնը համաշխարհային նմանօրինակ թանգարանների շարքում չի զիջում իր նախագծային լուծումներով և կազմակերպված է համապատասխան իր բովանդակության:

*Ցունկցիոնալ գոյությունը (տե՛ս նկար 1-2):* Թանգարանն ունի երկու մուտք, դրանցից առաջինը բացվում է ճակատից՝ որպես գլխավոր, և տանում է դեպի դահլիճ, իսկ երկրորդը բարձրանում է երկար ձգվող վերելքով, որից փոքր երկփեղկ փայտե փորագրությամբ դուռ է բացվում դեպի թանգարանի ցուցասրահներ: Վերոհիշյալ երկարաձիգ, նեղ, վերասլաց ուղին ասես հիշեցնում է Դեր-Չորի ճանապարհը, որով ժողովրդին միայն հավատքն ու հույսն էին առաջնորդում: Ընդհանուր հարթակից 5 աստիճանները բարձրանում են դեպի կամարապատ կենտրոնական մուտքը, որի երկփեղկ փայտյա դուռը տանում է դեպի նախասրահ: Տվյալ նախասրահից մուտք է բացվում դեպի դահլիճ, անվտանգության սրահ, սանհանգույց: Երկրորդ մուտքից ներս՝ նախամուտքում, զետեղված է հանդերձարանի և հուշանվերների վաճառքի գոտին, որին հաջորդում են ցուցասրահները: Դրանց ընդհանուր հատակագծային լուծումները ծավալվում են՝ ուղղորդելու մարդկային հոսքը ժամանակաբովանդակային հաջորդականությամբ: Ցուցասրահների պատերը մեծ մասամբ գոտևորվում են ընդհանուր գալարվող սպիտակ գիպսաստվարաթղթե շերտերով՝ դրանով իսկ թելադրելով մարդկային հոսքի ուղին: Թանգարանի նախագծում հետաքրքրական են նեղ ուղղորդող միջանցքները, որոնք ևս, ինչպես դեպի մուտք տանող երկարաձիգ թեքահարթակը, հիշեցնում են Դեր-Չորի անվերջանալի ուղին: Հատկանշական են նաև վերոհիշյալ ուղիներին ընդառաջ պատերի մեծածավալ գրվածքները, որոնք Կոմիտասի բանաստեղծություններից տողեր են, որոնք անզուգական ամբողջացնում են ինտերիերի հորինվածքը: Ցուցասրահների միջև անցումները բավականին սահուն և փափուկ են կազմակերպված, որի բացատրությունը մեկ բովանդակային ուղղորդվածությունն է: Սակայն գունային լուծումների, ցուցափեղկերի դասավորության, լուսավորության շնորհիվ այն ճանճրալի և միապաղաղ չի դիտվում: Ընդհանուր վեհության զգացողությունը ստեղծվում է բաց, ընդար-

<sup>2</sup> Շոպենի թանգարանի պաշտոնական կայք - <http://chopin.museum/en/about/us> (հասնելի է 14.01.2017):

ծակ սրահների միջոցով և բարձր առաստաղների առկայությամբ:

Ինտերիերի դիզայնի տեսանկյունից Կոմիտասի թանգարանում յուրաքանչյուր տարր նախագծված է ընդհանուր միջավայրին համապատասխան, ուստի կարելի է ասել, որ գաղափարաբովանդակային ամբողջությունը լավագույնս է ներկայացված այստեղ:

*Տեսողական հաղորդակցություն:* Կոմիտասի թանգարանում տեսողական հաղորդակցությունն արտահայտվում է ինչպես պատերին՝ որպես ուղղորդիչ տարրեր, այնպես էլ ցուցափեղկերի վրա և դրանց ներսում՝ որպես մակագրություններ և ծանոթագրություններ: Դրանք ոճային առումով ընդհանրական են և շատ պարզ, մատչելի և հասանելի՝ ընկալման համար: Հիմնականում առանձին սպիտակ, դեպի դիտողի տեսողական հորիզոնն ուղղված թեք մակերեսի վրա, սև պարզ տառերով գրվածքներն ամենամատչելի ձևով փոխանցում են ցուցանմուշների վերաբերյալ տեղեկատվությունը:

*Ինտերիերի կոմպոզիցիոն սկզբունքները:* Թանգարանի ընդհանուր միջավայրն ունի կենտրոնական հորինվածք, որը ծավալվում է բաց բակի շուրջ: Այն գտնվում է թանգարանի կենտրոնում և բոլոր կողմերից ունի դիտման հնարավորություն: Այսպիսի հորինվածքը պայմանավորված է խորհրդանշական չինարի ծառի առկայությամբ, որն ասես, դրսում գտնվելով հանդերձ, ինտերիերի անբաժանելի մասն է կազմում: Ցուցասրահում ցուցափեղկերի և պատերին ագուցված նկարների դասավորությունը նախատեսված է հաջորդական դիտման համար՝ ստեղծելով յուրօրինակ հաջորդական ռիթմ: Ռիթմիկ ուղղորդումը կազմակերպվում է նաև պատերի գալարվող պտույտներով, ինչպես նաև միջանկյալ արհեստական պատերի ընդհատումներով: Թանգարանային միջավայրում կոմպոզիցիոն գազաթնակետը վերասլաց զանգակատունն է, որն ասես եզրափակում է ցուցադրությունը:

*Ինտերիերի գունային և տեքստուրայի համադրումները (տե՛ս նկար 3):* Ցուցասրահի ընդհանուր գունային գամման սպիտակի, մոխրագույնի, դարչնագույնի, երբեմն նաև խոր կապույտի համադրումն է, բայց դրան լրացնելու են գալիս կառույցի տրավերտինե, մարմարե և ապակու մեծ մակերեսները: Հետաքրքիր համադրություն են ստեղծում փայլատ և փայլուն մակերեսները, որոնք լուսավորության համապատասխան շեշտադրմամբ է՛լ ավելի են սրում մթնոլորտը: Հատակը մուգ մոխրագույն գորգ է, որը պատերի հետ հատման մասում գոտևորվում է փայլուն մարմարե եզրերով: Կարևորվում են նաև ընդհանուր մուգ մոխրագույն հատակին տեղադրված սպիտակ ցուցափեղկերը, որոնք սևեռում են ուշադրությունը դեպի դրանց վրա տեղադրված ցուցա-

նմուշները: Դրանք թեև գունային առումով ընդհանրական են, բայց ցուցանմուշներից կախված ունեն տարաբնույթ մակերես և ծածկ: Նույն մտահղացումն է հետապնդում նաև դարչնագույն պատերի վրա ոլորվող սպիտակ գիպասատվարաթղթե մակերեսների առկայությունը, որոնց վրա կախված են նկարներ, տպագրված նյութեր, ինտերակտիվ էկրաններ: Տարաբնույթ նյութերի համադրումը ստեղծում է տեքստուրալ յուրօրինակ կոմպոզիցիա, որով շեշտվում է թանգարանի գոտևորումը:

*Լուսավորությունը (տե՛ս նկար 4):* Թանգարանի որոշ հատվածներում առկա են լուսամուտների մեծ մակերեսներ, որոնք երբեմն նույնիսկ ամբողջական պատերի են վերածվում: Ցուցադրության հիմնական սրահներում լուսավորությունն արհեստական է: Այն իրականացվում է կարկասային ուղղորդված և ընդհանրական լուսավորմամբ: Դա հնարավորություն է տալիս ընդհանուր մեղմ մթնոլորտում շեշտելու ցուցանմուշների կարևորությունը: Այստեղ նաև հետաքրքրական է արհեստական առաստաղի խորշերով արտահայտված խաչաթև լուսավորությունը, որն իր բովանդակային հաջորդականությունն է ստանում պատերին ազուցված կրկին խաչաթև դեկորատիվ լուսատուներով: Դահլիճում՝ անմիջապես բեմի հետնամասում ևս առկա է ապակյա պատ, որը տեսարան է բացում դեպի ներքին բակ, որտեղից էլ երևում է չինարի ծառը:

*Եզրակացություն:* Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները՝ կարելի է հանգել եզրակացության, որ Կոմիտասի թանգարան-ինստիտուտը եզակի է իր նշանակությամբ և գաղափարախոսությամբ: Կառուցվելով 2015 թ.՝ այն արդիական է և համապատասխանում է ժամանակակից թանգարանների բոլոր պահանջներին: Ֆունկցիոնալ նպատակահարմարության առումով թանգարանի ինտերիերի դիզայնը կազմակերպված է հատուկ հատակագծային լուծումներով նախագծված առանձին շինության ներքո, հենց որպես թանգարան, որը չափազանց կարևոր երևույթ է ինտերիերի դիզայնի կազմակերպման մեջ:

## ДИЗАЙН ИНТЕРЬЕРА МУЗЕЯ-ИНСТИТУТА КОМИТАСА

АНИ АЧАРЯН

В статье анализируются основные черты дизайна интерьера Музея-института Комитаса. В систематическом порядке представлены тематические экспозиции музея по планам. Детально показаны также освещение, цветковые

соотношения, обстановка, экспозиционное планирование интерьера. Чтобы создать полное представление о дизайне интерьера Музея-института Комитаса в наши дни, для сравнения приводятся примеры зарубежных однотипных музеев.

**Ключевые слова** – Музей–институт Комитаса, мемориальные музеи, зонирование интерьеров музеев, интерактивные экспозиции.


## INTERIOR DESIGN OF THE KOMITAS MUSEUM-INSTITUTE

ANI ACHARYAN


The article analyzes the main features of the interior design of the Komitas Museum-Institute. In classified order presented are themed expositions of the Museum by layouts. The lightning, color, furnishing and expositional planning of the interior are discussed in details. To give a full impression of the interior design of the Komitas Museum-Institute in our times, examples of identical museums abroad are shown for comparison.

**Key words** – Komitas museum – institute, memorial museums, museum interior design zones, interactive exhibitions.


### ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ



Նկար 1



Նկար 2



Նկար 3



Նկար 4

**ԼԵԿՈՆ ՉԱՌԻՇՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ՝  
(նվիրվում է ծննդյան 70-ամյակին)**

**ԼԻԼԻԹ ԱՐՏԵՄՅԱՆ**

Կոմպոզիտոր, դաշնակահար, հասարակական գործիչ, Հայկական երաժշտական համաժողովի նախագահ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լևոն Չաուշյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում ծավալվել է երեք հիմնական ուղղություններով՝ ստեղծագործական, հասարակական և մանկավարժական:

1994 թ. Լ.Չաուշյանը հիմնադրել և առ այսօր ղեկավարում է Հայկական երաժշտական համաժողովը՝ հասարակական կազմակերպություն, որի նպատակը հայ ժամանակակից դասական երաժշտության զարգացումն ու տարածումն է Հայաստանում և արտասահմանում: Համաժողովը համերգային գործունեություն է ծավալել Հայաստանում, Բելգիայում, Վրաստանում, Հունգարիայում, Բուլղարիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, թողարկել է 9 խտասալիկ, հրատարակել ավելի քան 30 ժողովածու:

***Քանալի բառեր*** – Լևոն Չաուշյան, Հայկական երաժշտական համաժողով, կոմպոզիտոր, դաշնակահար, հասարակական գործիչ:

Կոմպոզիտոր, դաշնակահար, հասարակական գործիչ, Հայկական երաժշտական համաժողովի նախագահ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լևոն Ալեքսանդրի Չաուշյանի<sup>2</sup> գործունեությունը ՀՀ անկախության շրջանում ծավալվել է երեք հիմնական ուղղություններով՝ ստեղծագործական, հասարակական և մանկավարժական:

**1.Ստեղծագործական գործունեություն**

Ակտիվ ստեղծագործական գործունեության մեջ, որտեղ կոմպոզիտորը հավատարիմ է մնացել իրեն բնորոշ կոմպոզիտորական ուրույն գրելաոճին,

---

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 16YR-6E045 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> Լ. Չաուշյանի մասին տեղեկություններ քաղել ենք Մ. Ռուխյանի «Ստեղծագործություններ հայկական կոմպոզիտորների» մենագրությունից: **Րուխյան Մ.** Ստեղծագործություններ հայկական կոմպոզիտորների, լեզ. «Ուրույն», Երևան, 2009, ժողովածու, էջ 10-53:



գերակշռում են կամերային երաժշտության ժանրերը, այդ թվում՝ լարային չորրորդ (1994), հինգերորդ (2012) և վեցերորդ (2015) կվարտետները, Տրիոն՝ դաշնամուրի, ջութակի և թավջութակի համար (2000), Սոնատը՝ մենակատար ջութակի համար (1997), «Երկխոսություն» պիեսը՝ դաշնամուրի և ալտի համար (2008), Սոնատը՝ կլառնետի և դաշնամուրի համար (1996), «Երկխոսություն» պիեսը՝ դաշնամուրի և թավջութակի համար (2011):

Սիմֆոնիկ երաժշտության ժանրը ներկայացնում է Զուբակի կոնցերտի երկրորդ խմբագրությունը (2011) և «Տոնական շեփորներ» նախերգանքը սիմֆոնիկ նվագախմբի համար (2003): Խմբերգային ժանրի ստեղծագործություններն են a cappella խառը երգչախմբի համար գրված Պոեմը՝ ըստ Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության» «Ի խորոց սրտի խոսք Աստծո հետ ՁԹ» (2003), «Տաղ ծննդյան» և «Տաղ խաչի վերցման» (2005) խառը երգչախմբերի համար գրված խմբերգերը: Ի դեպ, լարային վեցերորդ կվարտետը, որն առաջին անգամ հնչել է Կոմիտասի անվան պետական լարային քառյակի կատարմամբ, և «Սրբազան Հայաստան» վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունը (2014) նվիրվել են Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Վերջինս հնչել է ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում՝ Բոստոնում, Ռետրոյթում, Նյու Յորքում, Պրովիդենսում:

Դաշնակահար-կոմպոզիտորի ստեղծագործական հետաքրքրությունների կենտրոնում է շարունակում մնալ դաշնամուրային երաժշտությունը: Այս շրջանին են վերաբերում դաշնամուրային երրորդ՝ «Պատկերներ առանց ցուցահանդեսի» (2004) սոնատը և Երկրորդ սոնատի երկրորդ խմբագրությունը (2014), «Urbis et Orbit» (1997) և «Deja-vu» (2008) դաշնամուրային պիեսները: Ի դեպ, «Պատկերներ առանց ցուցահանդեսի» ծրագրային դաշնամուրային երրորդ սոնատը, որն արդեն ունի կատարողական հարուստ կենսագրություն և քանիցս կատարվել է հայ դաշնակահարների կողմից, բոլորովին վերջերս՝ Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած՝ ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված հայ ժամանակակից երաժշտության երրորդ՝ «Պրեմիերա» փառատոնի առաջին կամերային համերգի ժամանակ, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հնչեց մեր մեկնաբանությամբ<sup>3</sup>: Միամաս սոնատում կոմպոզիտորն ուշադրություն է դարձրել ոչ այնքան նոր

<sup>3</sup> **Ասատրյան Ա.**, Կոմպոզիտորական դպրոցը լավ հերթափոխ ունի. ժամանակակից երաժշտության «Պրեմիերա» փառատոնը կատարեց իր առաքելությունը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, թիվ 82 (6364), 6 մայիսի 2016թ.:

տեխնիկայի, որքան կերպարայնության համար նոր ձևերի ներմուծմանը: Սոնատում կիրառվել են դիսոնանսի առավելագույն ազատության հետ կապված արտահայտչամիջոցներ: Իսկ ինչպես հայտնի է, դիսոնանսը՝ որպես ակուստիկ երևույթ, ընդունակ է երաժշտական ընթացայնության մեջ հաղորդելու ծայրահեղ արտահայտչականություն: Երբեմն կիրառվել է նաև սոնորային գրելաճ՝ ռեպետիտիվ շարադրանքի համակցությամբ: Պատկերները որևէ կտավի հետ զուգորդական (ասոցիատիվ) նմանություններ չեն կրում: Ըստ էության կոմպոզիտորը ստեղծել է հոգեբանական երաժշտական պատկերներ՝ օգտվելով տոնայնական և ատոնալ գրելաճի տարաբնույթ հնչյունային հատկանիշներից: «Անհրապույր պատկերներ»<sup>4</sup>, որոնք ցուցադրության կարիք չունեն: Կատարող դաշնակահարի առաջնային խնդիրն է գեղարվեստական առումով համոզիչ ներկայացնել հակադրվող կերպարների ռեյնեֆային ցուցադրումը՝ ճշգրտորեն նկատի ունենալով ստեղծագործության դրամատուրգիան:

Կոմպոզիտորի ստեղծագործությունները պարբերաբար հնչում են թե՛ Հայաստանում, թե՛ միջազգային հեղինակավոր բեմահարթակներում՝ Ռուսաստանում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Վրաստանում և այլուր:

## **2. Հասարակական գործունեություն**

1994թ. Լ. Չառույանը հիմնադրել է առ այսօր ղեկավարում է Հայկական երաժշտական համաժողովը՝ հասարակական կազմակերպություն, որի ամենակարևոր նպատակը հայ ժամանակակից դասական երաժշտության զարգացումն ու տարածումն է ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Համաժողովը բաղկացած է ինչպես կոմպոզիտորներից և երաժշտագետներից, այնպես էլ կատարողներից: Կազմավորման առաջին փուլում այն համախմբել և միավորել է երաժիշտ - համախոհների՝ կոմպոզիտորներ Լևոն Չառույանին, Մարտին Վարդազարյանին, Վահրամ Բաբայանին, Երվանդ Երկանյանին, Ռուբեն Սարգսյանին և երաժշտագետ Մարգարիտա Ռուֆսյանին: Հետզհետե կազմակերպությունը համալրվել է նորանոր ստեղծագործող անհատներով: Նրանց թվում են կոմպոզիտորներ Էդվարդ Միրզոյանը, Կոնստանտին Օրբեյանը, Կոնստանտին Պետրոսյանը, Սուրեն Չաբարյանը, Արմենուի Կարապետյանը, դաշնակահարներ Անահիտ Ներսիսյանը և Ռուզաննա Եսայանը, ջութակահար Վիկտոր Խաչատրյանը, երաժշտագետ Ալիսա Սարգսյանը: Համաժողովի հետ սերտ համագործակցել են Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, կոմպոզիտորներ Դավիթ

<sup>4</sup> «Անհրապույր պատկերներ» բնորոշումը տվել է հենց ինքը՝ կոմպոզիտորը:

Սաքոյանը և Վարդան Աճեմյանը, դաշնակահարներ Հայկ Մելիքյանը և Արուս Աճեմյանը:

Համաժողովը սկզբնավորման առաջին տարիներից առ այսօր ծավալել է բուռն համերգային գործունեություն ոչ միայն Հայաստանում, այլև Բելգիայում (1999), Վրաստանում (2001), Հունգարիայում (2004), Բուլղարիայում (2009), ԱՄՆ-ում (2003), Ռուսաստանում, մի կողմից՝ քարոզելով հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները, մյուս կողմից՝ մշակութային երկխոսություն ստեղծելով վերոնշյալ երկրների ու հայ երաժիշտների միջև: Համերգային գործունեությանը զուգահեռ նաև ակտիվ գործունեություն է ծավալել մրցույթների կազմակերպման գործում: Այսպես, 1996թ. բելգիահայ «Ամադեուս» կազմակերպության հետ համատեղ կազմակերպել է Ա. Խաչատրյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական մրցույթը, Ա. Բաբաջանյանի անվան երիտասարդ կոմպոզիտորների մրցույթը և Ա. Խաչատրյանի ծննդյան 95-ամյակին նվիրված «Ամադեուս-98» մրցույթը (1998), Լ. Չիլինգիրյանի անվան երիտասարդ ջութակահարների առաջին ազգային մրցույթը (2000), Լ. Չիլինգիրյանի երկրորդ համահայկական մրցույթը՝ ջութակի, ալտի և թավջութակի համար (2001), Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը (2001), Երիտասարդ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործությունների մրցույթը (2013) և Երիտասարդ կոմպոզիտորների խմբերգային ստեղծագործությունների համահայկական մրցույթը (2016):

Համաժողովը կազմակերպել է նաև հանրապետական և միջազգային փառատոներ, այդ թվում՝ Արամ Խաչատրյանի 95-ամյակին նվիրված (1998), ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված (2011), Ա. Խաչատրյանի 100-ամյակին նվիրված փառատոները (2003):

Ի դեպ, համաժողովը տևական համագործակցության մեջ է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ: Հայկական երաժշտական համաժողովի նախագահ Լևոն Չաուշյանի նախաձեռնությամբ Արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքում Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում կազմակերպվել է խմբերգային երաժշտության համերգ՝ միջազգային մրցույթների դափնեկիր «Սպեղանի» երգչախմբի կատարմամբ (գեղարվեստական ղեկավար ու խմբավար՝ Սարինա Ավթանդիլյան): Համերգի ընթացքում հնչել են Գ. Հենդելի, Վ. Մոցարտի, Լ. Չաուշյանի, Ե. Երկանյանի, Ե. Ուզալդեի, Դ. Սաքոյանի, Ա. Սպադավեկիայի, Ռ. Ռոջերսի, Լ. Կոմպանենցի, Վ. Սավելևի, Ս. Լուսիկյանի խմբերգային ստեղծա-

գործությունները<sup>5</sup>: Իսկ 2009թ. լույս է տեսել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, երաժշտագետ Մարգարիտա Ռուխկյանի «Портреты армянских композиторов» մենագրությունը, որտեղ ներկայացվել են կազմակերպության հիմնադիր անդամների ստեղծագործական դիմանկարները:

Լ. Չաուշյանի ջանքերով թողարկվել է բացառապես հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների ձայնագրություններից բաղկացած 9 խտասալիկ: Համաժողովի գործունեության կարևորագույն ուղղություններից է ստեղծագործությունների լույսընծայումը. հրատարակվել է ավելի քան 30 ժողովածու:

### **3. Մանկավարժական գործունեություն**

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ամբիոնի պրոֆեսոր Լևոն Չաուշյանը զբաղվում է կադրերի պատրաստման գործով. նրա ստեղծագործական դասարանում են որպես կոմպոզիտորներ ձևավորվել հայ կոմպոզիտորական դպրոցի երիտասարդական թևը ներկայացնող մի շարք ստեղծագործողներ (Արսեն Բաբաջանյան, Տիգրան Ասլանյան, Արփինե Կալինինա և ուրիշներ), ովքեր հաջողությամբ շարունակում են ստեղծագործական ակտիվ գործունեություն ծավալել ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում: Լ. Չաուշյանի սաները բազմաթիվ միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիրներ են, իսկ երիտասարդ կոմպոզիտոր Արփինե Կալինինան արժանացել է Ռուսաստանի Դաշնության համազգային «Տրիումֆ» մրցանակին և ոսկե մեդալի (2010): Հավատարիմ մնալով միրզոյանական դասավանդման ավանդույթներին՝ Լ. Չաուշյանի ստեղծագործական դասարանում նույնպես գերիշխում է անհատականության հանդեպ սկզբունքային դրսևորումը: Դասավանդման մեթոդաբանությունն առանձնանում է յուրաքանչյուր ուսանողի հանդեպ անհատական մոտեցմամբ, ինչը հնարավորություն է ընձեռում գտնելու ստեղծագործողի ուրույն ոճը և ընդգծելու անհատականությունը:

2016 թ. հոբեյանական է նաև Լ. Չաուշյանի համար. մայիսի 10-ին լրացել է նրա ծննդյան 70-ամյա հոբեյանը: Շնորհավորում ենք կոմպոզիտորին՝ մաղթելով քաջառողջություն և նորանոր ստեղծագործական ձեռքբերումներ:

<sup>5</sup> Ասատրյան Ա., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ-50, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 13:

## ДЕЯТЕЛЬНОСТЬ ЛЕВОНА ЧАУШЯНА В ПЕРИОД НЕЗАВИСИМОСТИ РА<sup>6</sup>

ЛИЛИТ АРТЕМЯН

Деятельность композитора, пианиста, общественного деятеля, председателя Армянской музыкальной ассамблеи, профессора кафедры композиции Ереванской государственной консерватории имени Комитаса, Заслуженного деятеля искусств РА Левона Чаушяна в период независимости РА развивалась в трех основных направлениях: творческом, общественном и педагогическом.

Л. Чаушян является основателем (1994) и бессменным руководителем общественной организации *Армянская музыкальная ассамблея*. Деятельность Ассамблеи направлена на развитие и распространение армянской современной классической музыки в Армении и за рубежом. Ассамблея организовала и провела гастрольные концерты в Армении, Бельгии, Грузии, Венгрии, Болгарии, США, России, выпустила 9 компактных дисков, опубликовала более 30 сборников.

**Ключевые слова** – Левон Чаушян, Армянская музыкальная ассамблея, композитор, пианист, общественный деятель.

## LEVON CHAUSHYAN'S CAREER IN THE YEARS OF INDEPENDENCE OF RA<sup>7</sup>

LILIT ARTEMYAN

The career of the composer, pianist, public figure, President of the Armenian Music Assembly, Honored Figure of Arts of Armenia, Professor of the Chair of Composition at Yerevan Komitas State Conservatory Levon Chaushyan evolved in three areas: creative work, public activity and teaching.

---

<sup>6</sup> Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № 16YR-6E045.

<sup>7</sup> This work was supported by the RA MES State Committee of Science, in the frames of the research project № 16YR-6E045.

Prof. Chaushyan founded in 1994 and has been heading since the Armenian Music Assembly non-governmental organization, whose aim is to promote contemporary Armenian classical music in Armenia and abroad. The Assembly organized and gave guest concerts in Armenia, Belgium, Georgia, Hungary, Bulgaria, USA, Russia; issued 9 CDs; published over 30 collections.

**Key words** – Levon Chaushyan, Armenian Music Assembly, composer, pianist, public figure.

## НЕКОТОРЫЕ КОМПОЗИЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ СОНАТЫ ДЛЯ ВИОЛОНЧЕЛИ И ФОРТЕПИАНО ГЕГУНИ ЧИТЧЯН<sup>1</sup>

АННА ТАМИРОГЛЯН

В данной научной статье рассмотрены композиционные особенности Сонаты Гегуни Читчян, ансамблевые взаимоотношения между виолончелью и фортепиано, основанные на непосредственной передаче внутренних душевных переживаний. Это типично романтическое произведение.

Տեսությունների կտրվածքով հարկ է նշել, որ յուրաքանչյուր ազգ բարձր է գնահատում իր ինքնությունն ու առանձնահատկությունը և փորձում է առավելագույնս պահպանել այն: Հետևաբար՝ յուրաքանչյուր ազգի գիտնականները, քննելով հասարակությունը, համայնքը, մարդկանց և մշակույթը, փորձում են հեշտացնել պահպանման գործընթացը՝ միջոցառումներ ձևավորելու միջոցով, տալով այդ միջոցառումներին փիլիսոփայական հիմքեր<sup>3</sup>: Գիտնականները և նրանց տեսությունները համարվում են ընդհանրական: Այնուամենայնիվ, հուշարձանապահպանության համար պոտենցիալ են բազմաթիվ միջազգային մասնագետների ամփոփված ինտերվենցիոն մոտեցումները: Դա փորձառության խնդիր է: Այդ հեղինակների թվում են Ջոն Ռասկին (1848), Կամիլո Բոիտոն (1883), Ռեգիոնգուառա Կամիլլո Սիտտեն (1889), Պատրիկ Գեդդեսը (1915), Լուիս Մամֆորդը (1938), Ռոբերտ Վենտուրին և այլք: Քննարկելով տարբեր գիտնականների տարբեր տեսությունները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության, որ վերջիններիս տարամետ ճաշակն ու տրամաբանությունն արտացոլում են այն մշակույթի առանձնահատկություններն ու բազմազանությունը, որին նրանք պատկանում են: Փաստորեն, ուսումնասիրելով յուրաքանչյուր ազգին և նրա ուրույն պատմությունը, կարելի է եզրակացնել, որ գիտնականների առաջարկած տեսությունը խնդիրների հայելի է,

---

<sup>3</sup> Bianca, S., Introduction: A Comprehensive Vision of Urban Rehabilitation, Geneva, 2001, P.38.

որ ժողովուրդը հանդիպել է վերակենդանացման գործընթացում: Այդ տեսությունները, հետևաբար, կարող են կիրառվել նաև ժողովուրդների վրա, որոնք ունեն նույն հիմնախնդիրը վերակենդանացման գործընթացում, թեև այդ տեսությունները չեն կարող բացարձակապես լուսաբանել վերակենդանացման և բոլոր հնարավոր խնդիրների հայեցակարգերը:

Ակնհայտ է, որ պահպանման գործողությունների պահանջը միշտ էլ խնդիր է եղել ողջ աշխարհում: Իրականում պահպանման գործողություններն աճել են ազգերի՝ իրենց եզակիության ու մշակութային ինքնության պահպանման ցանկությանը համահունչ, ինչը կապված է միջազգային կոնվենցիաների ընդունման հետ: Այս կոնվենցիաները գրվել են, որպեսզի ապահովեն մշակույթի պահպանման սկզբունքների ընդունումը միջազգային մակարդակով, այնպես որ եզակիության ցանկությունը կարելի լիներ կառավարել գլոբալ հիմքի վրա: 1972թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի ընդունման սկզբից ի վեր ուշադրության կենտրոնում այն էր, որ «մշակութային կամ բնության ժառանգության ցանկացած օբյեկտի վնասումը կամ անհետացումը հանգեցնում է աշխարհի բոլոր ազգերի ժառանգության կործանարար աղբատացմանը»<sup>4</sup>: Այս խնդիրը համաշխարհային ժառանգության գրանցման ռեգիստրում ներառելու համար, համաշխարհային սկզբունքների հիմքի վրա, վայրերը գնահատելու անհրաժեշտության հետ միասին բերել է այն համոզմունքին, որ պահպանումը պետք է նույն կերպ որոշել համաշխարհային սկզբունքներով: Սա էլ իր հերթին հանգեցրել է կոնվենցիաների թվի աճին: Այս կոնվենցիաների հետևում միակ ամենաշատ դրդող և ուղղորդող սկզբունքը, ըստ Վենետիկի կոնվենցիայի (1964), եղել են քաղաքակրթության խորհրդանիշները «իրենց ողջ հարստությամբ» պահպանելու պատասխանատվությունը և պարտքը: Ինչևէ, կոնվենցիաներն արժեքավոր են իրենց կետերով և վերջիններիս վերաբերող մանրամասներով՝ որպես պահպանման միջազգային մոդելներ: Միջազգային կանոնադրությունների ամենակարևոր դերը պահպանման միջազգային համաձայնեցված կանոնները ներկայացնելն է: Թեև այս կանոններից յուրաքանչյուրն ընդգծում է հայեցակարգ՝ ըստ դրանց ժամանակակից պայմանների և հանգամանքների, դրանց ներդրումը չպետք է անտեսել, որ դրանք ապահովում են ընդհանուր շրջանակ և պատշաճ հեռանկարներ մշակութային ժառանգության և կոթողների վերաբերյալ, որոնք պետք է պահպանվեն: Բոլոր փորձերը, որոնք կատարվել են որպես պահ-

<sup>4</sup> World heritage convention (UNESCO), Paris, 1972.



պանման աշխատանքներ ամբողջ աշխարհում, ներկայացնում են, որ իշխանությունները և մասնագետներն արել են ամեն ինչ՝ ստեղծելու համապատասխանություն օրենսդրության և ընդունված պահպանության կանոնների և պահպանման միջոցառումների միջև: Վերանայելով այդ փորձերը՝ կարելի է ընդունել, որ չնայած համապատասխան քաղաքները տարբեր են, պահպանման աշխատանքները կատարելիս խոչընդոտները և խնդիրները գրեթե նույնն են: Այդ գործողությունները հիմնականում հասնում են հաջողության՝ մի կողմից ներգրավելով կառավարությանը և պետական աջակցությունը, մյուս կողմից՝ բնակչության հետ համագործակցությունը: Այսպիսով, կանոնադրությունների շեշտադրումը դրվում է պատմության, ինքնության, իսկության, սոցիալ-տնտեսական սեփականության, կրթության, ֆիզիկական ցուցանիշների, ժամանակի պահանջներից բխող բնապահպանության վրա:

Այսպիսով, ռևիտալիզացիան պատմական միջավայրի զուգակցական պահպանման և արդի օգտագործման ժամանակակից մեթոդ է: Ռևիտալիզացիան շատ հարմար է կիրառել Շիրազի պատմական կենտրոնի դեպքում: Փաստորեն այն տալիս է ազատ ընտրության հնարավորություն հուշարձանների պահպանման համար, նրանց ժամանակակից կիրառման և փոփոխությունների, ըստ տեղական վերաբերմունքի, մշակույթի, ժողովրդագրության, սոցիալական, փիլիսոփայության և այլ առումներով: Ռևիտալիզացման մեթոդները պետք է հիմնված լինեն նշված տարածքում հուշարձանների դասակարգման վրա՝ կիրառելով կառուցվածքային վերլուծության մեթոդը, որը ներառում է տիպաբանությունը, բաղադրության տեսությունը, շինարարական տեխնիկայի պայմանները:

Շիրազ քաղաքի պատմական կենտրոնի համար ընտրված տարակարգերը հետևյալն են. ա) սուրբ մզկիթի և դամբարանների անաստիլոգ պահպանումը, բ) ֆունկցիոնալ օգտագործման որոշակի ազատություն պարունակող մեթոդների համապատասխանեցում, գ) փոփոխությունների արդիականացում և անցումների վերականգնում, դ) թույլտվություն՝ ավելացնելու ժամանակակից կյանքի որոշ ենթակառուցվածքներ, ե) անհրաժեշտ տարածքների շրջակա միջավայրի՝ անցումների, մայթերի և տանիքի որոշ մասերի վերականգնում: Վերոհիշյալ ուսումնասիրությունները կարող են իրականացվել միայն տեղական, բնապահպանական, սոցիալ-ժողովրդագրական, մշակութային պայմաններում և այլն: Այստեղ պաթոլոգիան ներկայացված է որպես իրականացվող քայլեր, որոնք Շիրազի պատմական ուսումնասիրության արդյունք են:

## ГОРОДСКАЯ ПАТОЛОГИЯ И РЕВИТАЛИЗАЦИЯ ИСТОРИЧЕСКОГО ЦЕНТРА (БЕЙНОЛ ХАРАМЕЙН) ГОРОДА ШИРАЗ

АЛИРЕЗА ХОЛИНЕЖАД ПИРБАЗАРИ (ИРАН)

Исторический центр (Бейнол Харамейн) города Шираз является архитектурным комплексом мирового значения. Его сохранению придается большое значение. Возрождение исторического образа и атмосферы Шираза будет осуществлено путем ревитализации. Ревитализация – новейший метод сохранения и современного использования исторической местности – вполне приемлем для возрождения исторического центра города Шираз.

**Ключевые слова** – город Шираз, исторический центр Бейнол Харамейн, ревитализация, патология, теории, нормативно-правовые акты, конвенции.

## THE PATHOLOGY AND REVITALIZATION OF THE HISTORIC CITY CENTER (BEYNOL HARAMEIN) OF SHIRAZ

ALIREZA GHOLINEJAD PIRBAZARI (IRAN)

The historic center (Beynol Haramein) of the city Shiraz is considered to be an architectural complex of global significance. Its preservation is a matter of great importance. The revival of the historical center and atmosphere of Shiraz will be carried out by way of revitalization. Revitalization is an advanced method of preservation and actual utilization of a historic environment. As such it is quite applicable for the reconstruction of the historic center of Shiraz.

**Key words** – city of Shiraz, Beynol Haramein historic centre, revitalization, pathology, theories, regulations, conventions.

**ՇԻՐԱԶ ՔԱՂԱՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՆՈՐԱՑՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

ԱԼԻՌԵԶԱ ՂՈԼԻՆԵԺԱԴՐ ՓԻՐԲԱԶԱՐԻ (ԻՐԱՆ)

Աշխարհագրական և պատմական փաստերի, կանոնների ու սկզբունքների, պատմական քաղաքների վերաբերյալ տեսություններից և կանոնադրություններից ձեռք բերված փորձերին համապատասխան ձևակերպել Շիրազի պատմական հնագույն հատվածի ունիտարիզացիոն նախագծի նպատակները: Նման ծրագիրն իր մանրակրկիտ դրոյթներով անհրաժեշտ է Շիրազի պատմական կենտրոնի ունիտարիզացիայի, պահպանման և նորացման հիմնահարցերի սահմանման համար:

**Քանալի բառեր** – Շիրազ քաղաք, հնագույն պատմական հատված, ունիտարիզացիա, պահպանում, նորացում, նախագիծ:

Աշխարհում պատմական ժառանգության պահպանմանն ուղղված բոլոր փորձերը, միջոցառումներն ու աշխատանքները, որոնք կատարվել են մի շարք հնագույն քաղաքներում (օրինակ՝ Ֆեզ, Դամասկոս, Ջաբիդ, Վիլնյուս և այլն), հավաստում են, որ իշխանություններն ու մասնագետներն արել են ամեն ինչ՝ օրենսդրության, ընդունված պահպանության կանոնների ու պահպանման միջոցառումների միջև համապատասխանություն ստեղծելու ուղղությամբ: Ուսումնասիրելով այդ փորձերը՝ կարելի է ընդունել, որ չնայած քաղաքները տարբեր են, բայց և այնպես պահպանման աշխատանքների իրականացման համատեքստում խոչընդոտներն ու խնդիրները գրեթե նույնն են: Խնդրի կտրվածքով իրականացվող գործողությունները հիմնականում հասնում են հաջողության՝ մի կողմից ներգրավելով կառավարությանը, ստանալով պետական աջակցություն, իսկ մյուս կողմից՝ բնակչության հետ համագործակցությունը:

Դիտարկելով համաշխարհային տեսաբանների գաղափարները, միջազգային կանոնադրությունները, հռչակագրերն ու օրենքները, ինչպես նաև ձեռք բերած միջազգային փորձը և դրանց արդյունքները՝ կարելի է այս առումով ճշգրիտ ընտրություն կատարել<sup>1</sup>: Պահպանմանն ուղղված կանոնադրություն-

---

<sup>1</sup> Charter for the Conservation of Historic Towns and Urban Areas, Adopted by ICOMOS General Assembly in Washington, DC, October 1987.

ների հիմնադրույթների կտրվածքով ազգերի ներդրած ջանքերն ուղղված են իրենց ինքնատիպության ու ինքնության պահպանմանը: Ցանկացած վայրում առկա պատմական ժառանգության կոնսերվացիայի համատեքստում ազգերը փորձել են մեծացնել ու կատարելագործել դրան ուղղված գործողությունները՝ պահպանելու համար իրենց անցյալի, պատմության և ինքնության խորհրդանիշները:

Այս համատեքստում ուշարժան է Իրանի Իսլամական Հանրապետության Շիրազ քաղաքի վերականգնման ու պահպանման փորձերի և հնարավոր ուղիների ուսումնասիրությունը: Չնայած պատմական բոլոր անբարենպաստ իրադարձություններին՝ իսլամական Շիրազ քաղաքի հնագույն պատմական կենտրոնն այդ հանգամանքներում նվազագույն փոփոխություններ է կրել՝ քաղաքի վաղ ձևավորման ժամանակներից հանդիսանալով հանրային և կրոնական փոխազդեցությունների կենտրոն<sup>2</sup>: Ուստի ռևիտալիզացիայի համար քաղաքի պատմական կենտրոնը պետք է ենթարկվի հետևյալ վերականգնման քայլերին, դիրեկտիվներին և ծրագրերի իրականացմանը:

1. Այն պետք է լուծի բնապահպանական, սոցիալական, մշակութային, տնտեսական, անվտանգության և պաշտպանության, ղեկավարման գոյություն ունեցող բոլոր հարցերը: Եվ քանի որ իսլամական քաղաքի և դրա բոլոր բաղադրիչների կյանքը սկսվում է հենց քաղաքի պատմական կենտրոնից, նրա ռևիտալիզացիան կարող է սկսվել հենց այս վայրից: Ուստի քաղաքի այս մասի ֆիզիկական հատկանիշների բնորոշումը հատուկ նշանակություն ունի:

2. Շիրազ քաղաքի կենտրոնի պաթոլոգիան դիտարկելու համար անհրաժեշտ է քաղաքի նշված հատվածի հատակագիծը: Այլ կերպ, պաթոլոգիան հարկավոր է սկսել պիլոտային հատակագծի ապահովումից, որտեղ ամրակայված կլինեն կարևորագույն մշակութային արժեքները:

3. Քաղաքային կյանքի ինֆրաստրուկտուրայի ապահովումը պետք է ընդգրկի հետևյալ ասպեկտները. ա) Շիրազն էկոլոգիապես վտանգված է՝ ուժեղ երկրաշարժերի պատճառով: Ջրահեռացման և կոյուղային համակարգերի խնդիրներն առաջացնում են ջրի աղտոտում: Բնակիչների անիրագելության պատճառով քաղաքում կանաչ տարածության պակաս է առաջացել: բ) Հասարակական-ժողովրդագրական, սոցիալական տեսանկյունից քաղաքի

<sup>2</sup> Anvari, Z., Dadvar. B., The economical, social and cultural profile of the city of Shiraz, The Management and Planning Organization of Fars Province Publication, Shiraz, 2000, P. 18.

այս հատվածում չկա բնակչության վերահսկողություն կյանքի պայմանների բարելավման և անկանոն ներգաղթի կանխման համար: Տեղական բնակչության արտագաղթի պատճառով նորաբնակները փոխարինում են հներին, որոնք անտարբեր են պատմական արժեքների հանդեպ: Նկատվում է թուլացում հանրային ներդրման և համագործակցության նախաձեռնության հարցերում: Մարդկային ռեսուրսների տեխնիկական հմտությունների և գիտելիքի պակաս կա բնակչության շրջանում: Առկա են բնակչության բարձր խտություն, ինչպես նաև աճի բարձր մակարդակ: գ) Մշակութային տեսանկյունից կան շատ քիչ թվով ՀԿ-ներ, որոնք կարող են նպաստել քաղաքի և մարդկանց մշակութային վիճակի բարելավմանը: դ) Տնտեսական տեսանկյունից պատմական կառույցների վերականգնման հարցում կան շատ քիչ հետաքրքրված կողմեր, ինչն առաջացնում է ֆինանսական ներդրման պակաս: ե) Ղեկավարման տեսակետից չկան բազմակողմանի ծրագրեր և կանոններ արժեքավոր հատվածների ռևիտալիզացիայի համար, որոնք պետք է ապահովել: զ) Հարմարությունների և ենթակառուցվածքների առումով, համեմատած քաղաքի մյուս հատվածների հետ, այստեղ կառույցների քաղաքային ծառայությունների ոլորտը շատ թույլ է ներկայացված: Չկա կեղտաջրերի հեռացման պատշաճ համակարգ, որը կկարգավորի անձրևաջրերի հեռացումը հետիոտնային անցումներից: Կառույցների սահմանափակ հասանելիության և կայանատեղիների պակասության պատճառով գործում է ծառայությունների ցածր մակարդակ: Իհարկե, կան ծառայությունների բազմաթիվ գործոններ կառույցներում, բայց դրանք գտնվում են կառույցներից դուրս և ոչնչով չեն նպաստում կառույցի ներքին հատվածին: Չկան արդյունավետ և ֆունկցիոնալ ծառայություններ պատմական կառույցների ներսում: Բնակիչները մշակութային և սանիտարական ոլորտներում ունեն վերապատրաստման կարիք: Անցուղիները նեղ են: է) Իրավական և օրենսդրական տեսանկյունից գործող օրենքները շատ անիրական են, ուստի որոշ սկզբունքներ և օրենսդրություններ, կապված կառուցվածքային պլանավորման և քաղաքաշինության հետ, չեն համապատասխանում տարածքային տվյալներին, հետևաբար՝ շատ հաճախ այդ սկզբունքները խախտվում են: ը) Ֆիզիկական խնդիրների տեսանկյունից տեղի է ունենում շինությունների, ինչպես նաև պատմական կառույցների լայնամասշտաբ քայքայում և ժանգոտում: Կառույցների տարրերը փչանում են շրջակա ժանգոտած հին կառույցների պատճառով: Չկա ծրագրված և սահմանված կաղապար՝ պատմական կառույցների կառուցվածքը բարելավելու համար: Պետք է հիշել, որ քանի դեռ տարածքի հիմնական խնդիրներն արմատավորված են ոչ ֆի-

զիկական խնդիրներում, համապատասխան ռազմավարությունն արդյունավետ չի լինի, եթե հաշվի չառնվեն հասարակական, մշակութային, տնտեսական, ղեկավարման ասպեկտների ոչ ֆիզիկական լուծումները:

4. Հարկավոր է մշակել ուսումնական նպատակները. ա) պատմական և մշակութային ոգու պահպանում՝ շինությունների ու պատմական և մշակութային կառույցների պահպանման միջոցով: Քաղաքային զարգացում և ուսումնական մշակութային արժեքների և սահմանված տարածքում կյանքի ոգին վերականգնելու համար: բ) Պատմական նշանակություն ունեցող շենքերի և այգիների պահպանում և կանաչ տարածքների համալրում՝ հաշվի առնելով սահմանված տարածքի ավանդական մոդելները: Սահմանել և հաստատել ուսումնական նախագծի նպատակները՝ աշխարհագրական և պատմական փաստերի, կանոնների և սկզբունքների, պատմական քաղաքների վերաբերյալ տեսություններից և կանոնադրություններից ձեռք բերված փորձերին համապատասխան: Նման ծրագիրը մեզ կողողողի ուսումնասիրվող տարածքի, տվյալ դեպքում՝ Շիրազի պատմական կենտրոնի, ուսումնական կառուցման հիմնահարցերի սահմանման գործում: Այս կերպ գործողությունների ուժեղ և թույլ կողմերը բնորոշելիս կբացահայտվի ձեռք բերված հաջողությունների և վերջնական նպատակի միջև տարբերությունը:

5. Անհրաժեշտ է կայացնել վերլուծության ուսումնական մեթոդը: Պաթալիզացիայից հետո հարկ է օգտագործել այնպիսի մի մեթոդ, որի արտաքին և ներքին համակարգերը վերլուծելիս առաջնորդում է դեպի բազմակողմանի ռազմավարություն՝ այդպիսով ճանապարհի հարթելով հետագա փուլի համար: Հետևաբար՝ SWOT մեթոդը հնարավոր լավագույն տարբերակն է: Այս մեթոդի հիման վրա ցանկացած առանցքի SWOT մատրիցայով կուսումնասիրվեն նախագծի տարածքի խնդիրները և բնորոշելով դրանց ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ կարելի է ապահովել տվյալ տարածքի պահպանման և վերականգնման խնդիրների պատշաճ լուծումներ: Ուստի փորձելով ներկայացնել որոշ ռազմավարություններ՝ հարկ կլինի օգտագործել բոլոր հնարավորությունները՝ թույլ կողմերը վերացնելու և վտանգները կառավարելու համար:

6. Ձեռնարկել ուսումնական ուղեցույցների և նախագծերի մշակումը մշակութային, տնտեսական, իրավական, ղեկավարման, նյութական ժառանգության օգտագործման բոլոր ասպեկտներում: Շիրազի աշխարհագրական, պատմական և քաղաքային կառուցվածքի առանձնահատկությունները, վիճա-

կազրական տվյալները, ինչպես նաև փորձառությունների, օրենքների և միջազգային կանոնակարգերի, մասնավորապես Վաշինգտոնյան կանոնակարգի (1987) և Նոր Ջեյմսդեյվի կանոնակարգի (1992), այլ ասպեկտների պատմական նշանակություն ունեցող քաղաքների ու հիտալիզացիայի հետ կապված փորձագետների և գիտնականների տեսությունները և փորձերը բնորոշելուց և պարզաբանելուց հետո ներկայացնել տվյալ տարածքում առկա պաթոլոգիան:

7. Գոյություն ունեցող շինությունների պահպանության կատեգորիաների սահմանումը:

8. Ապահովել քաղաքի պատմական կենտրոնի վերականգնման, կոնսերվացման, ռեգեներացիոն և նոր ինֆրաստրուկտուրայի նախագծերի իրականացումը: Նշված նախագծերի համար ընդհանուր կանոններն են. ա) վերակառուցվող շինությունների թույլատրելի առավելագույն բարձրությունը 7,5 մ է, բ) եթե նոր շենքը կառուցվում է որևէ հին շինության կողքին, ապա նրա բարձրությունը չպետք է գերազանցի հին կառույցի բարձրությանը, գ) շինարարության նյութն աղյուսն է, դ) պատվանդանները տեղական կրաքարից են, ե) խրախուսվում է օգտագործել կենտրոնական գավիթ, զ) վերականգնման աշխատանքներից և ոչ մեկում, բացառությամբ կոմերցիոն նպատակ ունեցող շինությունների, օրինակ՝ շուկաները և առևտրային կենտրոնները չեն կարող ունենալ պատուհաններ դեպի անցումները: Լուսավորությունն ապահովվում է ապակեպատ տանիքի միջոցով: է) վերակառուցված շենքերի բարձրությունը պետք է ներդաշնակ լինի կից շենքերի բարձրությանը՝ կառույցի ընդհանուր ուրվագիծը չխախտելու համար, ը) ճակատամասի համար պատուհանների տարածքներն ամբողջ շենքի հիսուն տոկոսից քիչ չպետք է լինեն (հիմնված տիպաբանական ուսումնասիրության վրա):

9. Պահանջներ: ա) Այստեղ խոսքը վերաբերում է ազգային ռեգիստրում գրանցված արժեքավոր շինությունների շրջակայքին: բ) Լայնածավալ վերանորոգման աշխատանքներից պետք է խուսափել, նույնիսկ ոչ արժեքավոր շինությունների դեպքում: գ) Բոլոր արժեքավոր շինությունների ու հիտալիզացիոն ծրագրերը պետք է լինեն Մշակութային ժառանգություն կազմակերպության կողմից հաստատված ծրագրերի հիման վրա: դ) Առաջնահերթ են գրանցված շինությունների և դրանց շրջակայքի հետ կապված կանոններն ու օրենսդրությունները:

10. Ճարտարապետական նախագծեր: Ոչ արժեքավոր շինությունների և ամայի հողատարածքների համար նախատեսվող ճարտարապետական նախագծերը պետք է լինեն Մշակութային ժառանգություն կազմակերպության

կողմից հաստատված ծրագրի հիման վրա (ավանդական, մշակութային, սոցիալական և տնտեսական արժեքներն ամրապնդելու նպատակով):

11.Քաղաքային ծրագրեր. Շիրազի պատմական կենտրոնի ավտոկայանատեղիների նախագծեր:

Կանոններին հետևելու և իրականացնելու համար անհրաժեշտ է ընդունել թեմատիկ պլաններ: Օրինակ՝ ուսումնասիրվող տարածքում երթևեկության հարցերը և կայանատեղիների համար նախատեսված տարածքներն անհրաժեշտ է ծրագրել վերևում բերված կանոնների հիման վրա: Տվյալ տարածքի համար նախատեսված սահմանափակումների համաձայն՝ բնորոշվել են մի շարք կայանատեղիներ՝ նպատակ ունենալով, բացի հասարակական կայանատեղիներից, որոնք տվյալ տարածքի բնակիչների պահանջներին են համապատասխանում, ստեղծելու մշակութային, բնակելի և առևտրային գործունեության համալիրներ և խրախուսելու այդ կայանատեղիների օգտագործումը: Այդ համալիրներից կայանատեղիների առավելագույն հեռավորությունը կազմում է տասը տուն:

12.Երթևեկության ծրագիրը Շիրազի պատմական կենտրոնում: Հուշարձանների մոտակայքում արժեք չունեցող շինությունները և անցումները, որոնք պետք է ընդլայնվեն մինչև 4,5 մետր, պետք է այնպես օգտագործվեն, որ առաջին օգնության ծառայությունների, օրինակ՝ շտապօգնության, հրշեջ ծառայության մուտքը տվյալ տարածք դյուրին լինի:

Այսպիսով, տարածքում խնդիրների բնորոշումից, այդ խնդիրների համար ծրագրերի քննարկումից ու վերլուծությունից հետո համապատասխանեցվել են նպատակները, ընդունվել են ուղեցույցները՝ թույլատրվող գործնական աշխատանքները բնորոշելու համար: Դեռ ավելին, այս ուղեցույցների հիման վրա սահմանվել է սոցիալական, մշակութային, տնտեսական և ֆիզիկական յուրաքանչյուր ոլորտի թույլատրվող գործունեություն: Այս ամենը նպաստում է ռևիտալիզացիոն ծրագրին: Հաշվի առնելով մեր ուսումնասիրության տարածքը՝ Շիրազի պատմական կենտրոնի հատվածը, ապա թույլատրվող գործունեության համապատասխան մոտեցումներն ընդունելից հետո և ներկայացնելով պահանջվող ծրագրերը՝ առաջարկվել են ֆիզիկական և կառուցվածքային լուծումներ: Ներկայացված ամենակարևոր ծրագրերից են արժեքավոր տարրերի հաստատման, վերակառուցման և վերազնահատման ծրագրերը, երթևեկության խնդիրների լուծումը, ավտոկայանատեղիների նախատեսումը, ռևիտալիզացիոն կանոնների ներկայացումը, ինչպես նաև ճար-



տարապետական նախագիծը սահմանված շրջանում թույլատրվող ուկրտա-իզացիոն գործնական լուծումների վերաբերյալ:

## **ВОЗМОЖНЫЕ ПУТИ И НЕОБХОДИМЫЕ МЕРОПРИЯТИЯ ПО РЕВИТАЛИЗАЦИИ, СОХРАНЕНИЮ И РЕКОНСТРУКЦИИ ДРЕВНЕЙ ИСТОРИЧЕСКОЙ ЧАСТИ ГОРОДА ШИРАЗ**

АЛИРЕЗА ХОЛИНЕЖАД ПИРБАЗАРИ (ИРАН)

Сформулированы цели ревитализационного проекта древней исторической части города Шираз в соответствии со знаниями, приобретёнными из географических и исторических фактов, с правилами и принципами, теориями и уставами относительно исторических городов. Подобный проект со своими детальными положениями необходим для определения проблем ревитализации, сохранения и реконструкции исторического центра Шираза.

**Ключевые слова** – город Шираз, древняя историческая часть, ревитализация, сохранение, реконструкция, проект.

## **THE POSSIBLE WAYS AND NECESSARY MEASURES FOR REVITALIZATION, PRESERVATION AND RECONSTRUCTION OF THE OLD HISTORIC PART OF THE CITY OF SHIRAZ**

ALIREZA GHOLINEJAD PIRBAZARI (IRAN)

The goals of the revitalization project of the old historic part of Shiraz are formulated based on the knowledge gleaned from geographical and historical facts, laws and principles, theories, charters and regulations on historical cities. Such a project with detailed provisions is necessary to define the issues of revitalization, preservation and renovation of the historic center of the city of Shiraz.

**Key words** – the city of Shiraz, old historic part, revitalization, preservation, renovation, project.

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ 1901-1910ԹԹ.

### ԴԱՎԻԹ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հեղինակը ներկայացնում է XX դարի առաջին տասնամյակում Կայսերական Ռուսաստանի կազմում գտնվող գավառական Երևան քաղաքի երաժշտական կյանքը: Հոդվածում խոսվում է Երևան քաղաքում այդ տարիներին հանդես եկած հայ, ինչպես նաև այլազգի երաժիշտների համերգների և Երևան քաղաքի ընդհանուր մշակութային մակարդակի մասին: XX դարի սկզբի հայալեզու և ռուսալեզու հեղինակավոր պարբերականներում տեղ գտած նյութերից բերված են ուշագրավ տեղեկություններ քաղաքի մշակութային կյանքի վերաբերյալ:

**Քանալի բառեր** – Երևան, «Русская музыкальная газета», «Театр и искусство», Երևան, «Մշակ», Ա.Կոստանյան, Ս.Դեմուրյան, Կոմիտաս, Հ.Նալբանդյան, Վ.Բունիաթյան, իտալական օպերային խումբ:

XX դարի առաջին տասնամյակում Երևանը Ռուսական Կայսրության Երևանի նահանգի վարչական կենտրոնն էր, որի 30.000-ի հասնող բնակչության կազմում էին մեծամասամբ հայեր և կովկասյան (ադրբեջանական) թաթարներ, ինչպես նաև փոքր թվով ռուսներ, վրացիներ, հրեաներ և այլք: Չէր կարելի այդ տարիների Երևանն անվանել զարգացած քաղաք, սակայն հարկավոր է նշել, որ այստեղ գործում էին արական և օրիորդաց գիմնազիաները, թեմական հոգևոր դպրոցը, 7 քաղաքային ուսումնարան և 8 մասնավոր ուսումնական հաստատություններ: Գործում էր Երևան-Թիֆլիս երկաթուղին<sup>1</sup>:

Անցնելով XX դարի առաջին տասնամյակի՝ Երևանի երաժշտական-մշակութային կյանքին՝ պետք է սկսենք «Русская Музыкальная Газета»-ում տպագրված մի ուշագրավ հոդվածից, որում հեղինակը (Ա.Ե.) նկարագրում է քաղաքի փոքր-ինչ աշխուժացած երաժշտական կյանքը՝ ի տարբերություն նախորդ տարիների. «Въ жизни нашего медвежьяго уголка настоящий годъ представляет из себя приятное исключение среди целого ряда летъ, не оставившихъ по себе никакого следа в воспоминании. Я говорю о сфор-

---

<sup>1</sup> Ф.А.БРОКГАУЗЪ, И.А.ЕФРОНЪ, ЭНЦИКЛОПЕДИЧЕСКІЙ СЛОВАРЬ. СПб., 1890—1907, 82 г.

мировании и учреждении въ этомъ году у насъ музыкальнаго общества, функции котораго, если не столь пока почтенны, то все-же позволяютъ надеяться на лучшее будущее...»: 1901-ին հիմնվում է Երևանի երաժշտական ընկերությունը, որն ավելի շուտ ակումբ էր՝ ժամանցի տարբեր տեսակներով (բիլիարդ, թղթախաղեր): Այս ակումբի՝ «Երևանի երաժշտական խմբակ»-ի առանձնահատկությունն այն էր, որ նրա մասնակիցների շարքերում ներգրավված էին թատերասեր և երաժշտասեր անձինք, որոնք պետք է ապահովեին ակումբի այցելուների և մյուս մասնակիցների պատշաճ մշակութային ժամանցը: Բնականաբար նորաստեղծ երաժշտական ընկերությունն իր տնօրինության տակ ուներ խիստ սահմանափակ երաժշտական ուժեր, սակայն ժամանակ առ ժամանակ այստեղ կազմակերպվում էին հասարակական համերգներ հրավիրված երաժիշտների մասնակցությամբ: 1901 թ. ընթացքում այստեղ ելույթներ են ունեցել ռուս օպերային երգչուհի Օ.Դ. Բոտյանովսկայան, ապրիլի 4-ին և 6-ին փայլուն ելույթներով հանդես են եկել Թիֆլիսի կայսերական ուսումնարանի դասախոսներ դաշնակահար Քեսները և ջութակահար Սերբուլովը: Համերգներն ունեցել են մեծ հաջողություն<sup>2</sup>: Այս ելույթների մասին «Театр и искусство» շաբաթաթերթը գրեց. «...Г.Сербуловъ, обративший на себя вниманіе музыкальныхъ критиковъ во время участія в парижскихъ концертахъ Ламуре в качестве солиста и приобревший себе почтенную известность виртуоза в Тифлисе по участию в квартетныхъ собранияхъ, сразу-же, съ перваго своего появленія на эстраду, произвел на эриванскую публику прекрасное впечатленіе. У него прекрасный тонъ, красивый ударъ и превосходное туше; техника вообще недюжинная. Въ передаче заметно заботливое стремленіе къ изяществу, начиная съ внешнихъ манеръ и кончая фразировкой. Г.Кеснер нашъ старый знакомый. Требования повтореній слышались после всякаго исполненнаго ими номера...»<sup>3</sup>: Արտիստները սիրահոժար բավարարում էին ստեղծագործությունները նորից ու նորից կրկնելու հանդիսատեսի անզուսպ պահանջները:

1901-1910 թթ. ընթացքում Երևանի երաժշտական կյանքին իրենց մասնակցությունն են ունեցել Ստեփան Դեմուրյանը, Կոմիտասը, Հովհաննես Նալբանդյանը, Արշակ Կոստանյանը և այլք:

1902 թ. մարտի 27-ին Երևանի ակումբի դահլիճում թեմական դպրոցի

<sup>2</sup> **Ա.Բ.**, Զրիվան. Музыка въ провинции, “Русская музыкальная газета” N17, СПб., 1901, стр. 508.

<sup>3</sup> **Люсь**, Музыка в провинции, “Театр и искусство”, N13, СПб., 1901г.

իր ղեկավարած երգչախմբով հանդես է գալիս կոմպոզիտոր, խմբավար Ստեփան Դեմուրյանը (1872-1934): Համերգը, որի ընթացքում հնչում են Ս.Դեմուրյանի, Կարա-Մուրզայի հայկական ժողովրդական երգերի մշակումներից, գրավել էր մեծ թվով հանդիսականներ: «Մշակ» նկատեց, որ «...քաղաքային կլուբի դահլիճում թեմական դպրոցի երգեցողության ուսուցիչ պ. Դեմուրեան տուեց իր պատրաստած քառաձայն խմբի կօնցերտը: Կօնցերտը գրաւել էր բաւական թւով հանդիսականներ: Մեծ պահանջներ անել մի նոր երիտասարդ մարդուց, որը դեռ նոր փորձելով իր ոյժերը եւ ահագին դժուարութիւններին յաղթելով՝ կարճ ժամանակում պատրաստում եւ բեմ է դուրս բերում քառաձայն խումբ, այնքան էլ իրաւունք չունենք...»<sup>4</sup>: Դժվարությամբ էր հաջողվել կազմակերպել այս համերգը. «...խմբի պակասությունը ծայների անհամաչափ լինելու նկատմամբ պէտք է վերագրել մասնակցողների սակաւութեան, մանաւանդ այն բանին, որ հոգաբարձութիւնը, իսկապէս նրա մի մասը եւ առանձնապէս Սուքիաս Եպիսկոպոսը մերժեցին թոյլ տալ մասնակցելու արդէն վարժված աշակերտներին, մինչեւ անգամ խնայեցին դպրոցի ֆիս-հարմօսիան մի քանի օրով նրան տալ...»<sup>5</sup>: Չնայած համերգի ընթացքում առկա թերություններին՝ հողվածում ընդգծվում է Դեմուրյանի կատարած աշխատանքի կարևորությունը և շարունակության մեջ ասվում. «...պ. Դեմուրյանի կօնցերտը մի մխիթարական երևոյթ էր մեր գաւառական լճացած կեանքում: Կարա-Մուրզայից յետոյ՝ Երեւանը բեմի վրայից լսում է իր ժողովրդական երգերը շնորհիւ Դեմուրեանի...»<sup>6</sup>:

Երևանում Ս.Դեմուրյանի հաջորդ համերգը տեղի է ունենում նույն տարվա հունիսի 3-ին. «...ամսիս 3-ին քաղաքային ժողովարանի դահլիճում թեմական դպրոցի երգեցողության ուսուցիչ պ. Դեմուրեանը տուեց երկրորդ կօնցերտը: Այժմ, երբ այլ ես չը կայ մեր ժողովրդական երգերի շնորհալի ղեկավար Կարա-Մուրզան եւ նրա տեղը բաց է մնում, մի առանձին կարեւորութիւն ստանում է պ. Դեմուրեանը, որպէս հետետող Կարա-Մուրզայի... Երեւանի թեմում տրված երկու կօնցերտների փորձը ցոյց տուեց, որ Դեմուրեանը ընդունակ է քառաձայն խմբեր կազմել եւ հրապարակ հանել մեր ժողովրդական այնքան կեանքով լի, իմորով հարուստ երգերը, բայց նրան դեռ շատ բան է պակասում այնպէս հեղինակատր կերպով իշխելու խմբի վրա,

<sup>4</sup> Ներքին լուրեր, «Մշակ», N73, Թիֆլիս, 1902 թ.:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

որպես մուզիկայի խիստ կանօններին հետետող խմբապետ: Գուցէ այդ նրանից է, որ Դէմուրեան երիտասարդ է եւ իր ոյժերը նոր փորձող մարդ է, բայց եւ այնպէս, երկու կանօններ անհրաժեշտ է չը մոռանալ. նախ՝ կարգապահութիւնը եւ երկրորդ՝ ծրագրից չը շեղվելը... Այս անգամ քառաձայն խումբը անհամեմատ լաւ էր պատրաստված առաջինից եւ երգեց մի քանի երգեր շատ աջող, մանաւանդ «Եղսօ-Ջան»-ը: Դէմուրեանը ժամանակով կունենայ կրկնակի աջողութիւն, որովհետեւ գիտէ գործել...»<sup>7</sup>: Եվ կրկին շեշտվում է Երևանում նման համերգներ կազմակերպելու կարևորությունը, որոնք նպաստում էին մշակութային կյանքից հետ մնացած քաղաքում երաժշտական միջավայրի ստեղծմանը. «...Դէմուրեանը կենդանութիւն է առաջ բերել մեզանում, օրիորդների եւ երիտասարդների համախմբումն ու ժողովրդական նոր-նոր մօտիվների քաղցր ելեւէջները լսելի են շատերի բերանում...»<sup>8</sup>:

Ս.Դեմուրյանից հետո թեմական դպրոցի երգչախմբի ղեկավարությունը ստանձնել էր Կոմիտասի աշակերտ Եղիշե Բաղդասարյանը, ում նախաձեռնությամբ 1903 թ. ապրիլի 26-ին տեղի է ունենում թեմական դպրոցի աշակերտներից բաղկացած երգչախմբի համերգը: Ի տարբերություն նախորդ տարվա՝ Ս.Դեմուրյանի ղեկավարած համերգի՝ այս անգամ թեմական դպրոցը նպաստել էր համերգի հաջող անցնելուն, այնինչ նախորդ տարի արգելել էր մի խումբ աշակերտներ դուրս բերել բեմ և նույնիսկ հատկացրած ֆիսհարմոնը հետ էր վերցրել: Կատարման առումով այս համերգը փոքր-ինչ թերի էր, ինչի պատճառը, հավանաբար, ղեկավարի անփորձությունն էր. «Այսօր էլ նոյն բեմի վրա թեմական դպրոցի երգեցողութեան ուսուցիչ Բաղդասարեան՝ իր կազմած քառաձայն խմբով տուեց մի կօնցերտ՝ բաղկացած 24 ժողովրդական և այլ երգերից... Յիշեալ ուսուցիչը Կոմիտաս վարդապետի աշակերտն է և իսկապէս Կոմիտաս վարդապետը եղել է կազմողը այն խմբի... Նրա գործը մեր աչքում այնքան բարձր է, որ չենք կարող մեր գոհունակութիւնը չը յայտնել... Կոմիտաս վարդապետը ճեմարանում այժմ ունի կազմած մի քառաձայն խումբ, որը պատիւ է բերում նրան: Նա ճեմարանի աշակերտներից պատրաստում է երգեցողութեան ուսուցիչներ, ինչպէս է և վերը յիշված Բաղդասարեանը... Գալով այսօրվայ կօնցերտին, նա չը թողեց սպասած տպաւորութիւնը, եթէ չը հաշիւենք մի երկու ժողովրդական երգերը: Եթէ պ. Բաղդասարեանը լաւ ուսուցիչ է թեմական դպրոցում, այդ դեռ ևս չէ նշանակում, որ նա կարող է բեմի վրա էլ

<sup>7</sup> Բ.Վ., Նամակ Երեանից, «Մշակ», N124, Թիֆլիս, 1902թ.:

<sup>8</sup> Նույն տեղում:

լաւ քառաձայն խումբ կառավարել: Այս դիտողութիւնը աւելի կարևոր է Կոմիտաս վարդապետին մանաւանդ այն տեսակէտից, որ նա մեծ շնորհք ունի իր գործի մէջ, նրա ճեմարանի խումբը գեղեցիկ երգում է, իսկ նրա կազմած մի այլ խումբ դեռ ևս անփորձ աշակերտ-ուսուցչի ղեկավարութեամբ թոյլ տպաւորութիւն է թողնում ժողովրդի վրա: Յանկայի էր, որ Կոմիտաս վարդապետը ինքը իր խմբով դուրս գար բեմ՝ ցոյց տալու իր շնորհքը...»<sup>9</sup>:

Երևանում Կոմիտասի 80-հոգանոց երգչախմբի համերգը տեղի է ունենում 1908 թ. փետրվարի 22-ին քաղաքային ակումբի դահլիճում: Համերգը կրում էր «Հայ ժողովրդական երգեր ու նվագներ» խորագիրը: Իբրև մենակատարներ հանդես են գալիս Կոմիտասը և երգիչ Վահան Տեր-Առաքելյանը: Նվագակցում էր դաշնակահար Խոսրով Փախչանյանը: Համերգին կատարվում են Կոմիտասի երգերն ու մշակումները<sup>10</sup>:

1904 թ. փետրվարին Երևանի հանդիսատեսին առաջին անգամ ներկայացվում են օպերաներ: Փետրվարի 2-ից 8-ը Երևանում հանդես է գալիս իտալական օպերային խումբը: Մեկ շաբաթվա ընթացքում ներկայացվում է 7 օպերա՝ «Ռիգոլետտո», «Տրավիատա», «Ֆաուստ», «Տրուբադուր», «Էռնանի», «Գեղջկական պատիվ», «Կարմեն»: Թեպետև քաղաքային ակումբը չունէր օպերա բեմադրելու համար անհրաժեշտ բոլոր պայմաններն ու հարմարությունները, ներկայացումներն անցնում են մեծ հաջողությամբ. «Չը նայած որ այս տարի բարեկենդանի օրերը շատ կարճ էին և շուտ վրայ հասաւ Մեծպասը, բայց մենք, երևանցիներս, այս տարի շատ ուրախ, զարճալից և օգտակար կերպով անցկացրինք: Մեզ մօտ հիւր էին եկել մի խումբ իտալուհի և իտալացի օպերային երգիչներ, որ բարեկենդանի ամբողջ շաբաթը, երկուշաբթւանից մինչև կիրակէ, յաջորդաբար երգեցին կլուբի դահլիճում «Ռիգոլետտո», «Գիւղական պատիւ», «Տրուբադուր», «Տրավիատա», «Ֆաուստ», «Կարմեն» և «Էրնանի» օպերաները. – եօթ օրը – եօթ պիէս: Չը նայած որ խումբը երգում էր անհասկանալի լեզուով – իտալերէն, չը նայած որ մեր շարժական բեմը չէր ներկայացնում բեմական շատ յարմարութիւններ, այնուամենայնիւ հէնց առաջին ներկայացումից խումբը իր ղեկավար պ. Ժ.Գօնսալեցի կառավարութեամբ գրաւեց հանդիսատէսի համակրութիւնը. այնպէս որ դահլիճը միշտ լի էր լինում, իսկ «Ֆաուստի» և «Կարմէնի» օրերին նոյնիսկ տոմսակ չէր ճարում: Երևանը առաջին անգամն էր օպերա տեսնում, մէկ էլ որ

<sup>9</sup> Ա.Ղօ, Ներքին տեսութիւն, Նամակ Երեւանից, «Մշակ», N90, Թիֆլիս, 1903 թ.:

<sup>10</sup> Մազմանյան Ռ., Հայ երաժշտական կյանքի տարեգրություն, Երևան, 2006, էջ 142:

այդ խումբը, մօտ 25 հոգուց բաղկացած, ներկայացնում էր իր կազմութեամբ, ծայների և օրկեստրի ընդունակութեամբ մի համեստ ներդաշնակութիւն, որ այնքան մեծ և կարևոր դեր է կատարում երաժշտական և երգեցողական արեստի մէջ: Խումբը, ունենալով իր մէջ տղամարդկանց երկու շատ յաջող ծայներ - բարիտօն և տենօր, հմուտ և վարժ օրկեստր, տանում էր գործը այնպէս յաջող, որ կանացի կարևոր ծայների բացակայութիւնը չէր նկատում, թէև մէկ-մէկ նրանցից ոմանք բարձր նօտաները երգում էին «խզալով», սակայն կանացի խմբական երգերը անցնում էին շատ յաջող և դուր էին գալիս հասարակութեանը, որ իր հրճանքը արտահայտում էր բուռն ծափահարութիւններով և «բիսերով»: Գեղարեստը հասկացող և գնահատող հասարակութիւնը գոհ էր մանաւանդ, որ մուտքի-արդիւնքի կողմից ևս խումբը աջողութիւն ունեցաւ, որովհետև հակառակ դէպքում մեզ մօտ այլ ևս լաւ երգիչներ և օպերային խումբ չէին գալ...»<sup>11</sup>:

1907 թ. ապրիլի 4-ին Երևանի ակումբի դահլիճում տեղի է ունենում թանահար Վարդան Բունիաթյանի համերգը՝ մասնակցությամբ արևելյան գործիքների անսամբլի և 45 հոգուց բաղկացած երգեցիկ խմբի: Իր թիֆլիսյան հյուրախաղերի ընթացքում Երևան է այցելում հայտնի մենակատար-ջութակահար Հովհաննես Նալբանդյանը. նա ելույթ է ունենում 1907թ. ապրիլի 12-ին<sup>12</sup>:

1910 թ. Ռուսաստանից համերգային այցով Բաքու է գալիս Միլանի, Վենետիկի, Ֆլորենցիայի և իտալական այլ քաղաքների օպերային թատրոններում հանդես եկած հայազգի անվանի երգիչ Արշակ Կոստանյանը, ով մինչև այնտեղից էլ Թիֆլիս մեկնելն այցելում է նաև Երևան: Մայիսի 8-ին կայանում է Ա.Կոստանյանի համերգը Երևանի քաղաքային ակումբի դահլիճում. «...Կօնցերտը ունեցաւ մեծ աջողութիւն և եղան առաջարկութիւններ, որ երգիչը մնայ այնտեղ դարձեալ մի կօնցերտ տալու, բայց նա շտապեց վերադառնալ...»: Բացի օպերային հատվածներից և ռոմանսներից, Ա.Կոստանյանը կատարեց նաև հայերեն «Լոնց», «Մի լար, բլբուլ», «Սիրուն գարուն», «Կռունկ» երգերը<sup>13</sup>:

XX դարի սկզբին մոտ 30.000 բնակչություն ունեցող գավառական

<sup>11</sup> Գ.-Կ., Երեան, «Տարագ», N7, Թիֆլիս, 1904 թ.:

<sup>12</sup> Մազմանյան Ռ., նշվ. աշխ., էջ 126, 127:

<sup>13</sup> Թատրոն եւ երաժշտութիւն, Ա.Կոստանեանի կօնցերտները, «Մշակ», N100, Թիֆլիս, 1910 թ.:

Երևան քաղաքը փաստորեն չուներ մշտական հարմարեցված դահլիճ համերգային, ինչպես նաև թատերական ներկայացումների համար: Որոշ ժամանակ դրանք անց էին կացվում արական գիմնազիայի դահլիճում, սակայն տնօրինությունը շուտով արգելեց օգտագործել դահլիճն այդ նպատակով: Մշակութային միջոցառումները մեծամասամբ տեղ էին գտնում քաղաքային ակումբի պատերի ներքո. «...Прежде всего надо заметить, что временная, на скоро сколоченная, сцена нашего клуба не может вполне удовлетворять, никаким самым примитивным, требованиям искусства...»<sup>14</sup>: Թեպետև այդ տարիներին Երևանը մշակութային կյանքի զարգացման մակարդակով զգալիորեն զիջում էր Թիֆլիսին, Բաքվին, Շուշիին, այնուամենայնիվ ժամանակ առ ժամանակ Երևանի հասարակությունն առիթ էր ունենում գնահատելու հայ, ինչպես նաև այլազգի երաժշտական գործիչների արվեստը:

## МУЗЫКАЛЬНАЯ ЖИЗНЬ В ЭРИВАНИ В 1901-1910 гг.

ДАВИД МЕЛКОНЯН

В статье представлена музыкальная жизнь в Эривани в первом десятилетии XX века. Автор пишет как об отдельных концертах, выступлениях и прочих музыкальных мероприятиях, так и об общем музыкально-культурном уровне города тех лет. В статье приводятся интересные сведения о культурной жизни Эривани из авторитетных армяно- и русскоязычных периодических изданий начала XX века.

**Ключевые слова** – Эривань, «Русская музыкальная газета», «Театр и искусство», Ереван, «Мшак», А.Костанян, С.Демуриян, Комитас, И.Налбандян, В.Буниатян, итальянская оперная труппа.

## MUSICAL LIFE IN ERIVAN IN 1901-1910

DAVID MELKONYAN

The article presents interesting particulars about the concerts and other musical events which took place in Erivan during the first decade of the 20<sup>th</sup>

<sup>14</sup> Провинциальная летопись - Эривань, "Театр и искусство", N10, СПб., 1901г.



---

century. The research is based on the information gathered from the respected Armenian- and Russian-language periodicals of the time.

**Key words** – Erivan, Yerevan, «Russian Music Journal», «Theater and Arts», «Mshak», A.Kostanyan, S.Demouryan, Komitas, H.Nalbandyan, V.Buniatyan, Italian opera troupe.

## ՄԻՀՐԱՆ ՍՈՍՈՅԱՆԻ ԳՐՔԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

### ՆՈՒՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

Հայկական գրքային գրաֆիկայի ասպարեզում նշանակալից դեր է խաղացել Միհրան Սոսոյանը (1928–1992), ով իր ողջ ստեղծագործական կյանքը նվիրել է գրքի ձևավորմանը: Նրա աշխատանքների շարքում առանձնանում են Մ. Տվենի «Թում Սոյերի արկածները» (1953), Հ. Թումանյանի «Գիքորը» (1955), Է. Հեմինգուեյի «Ծերունին և ծովը» (1957), Մ. Սարգսյանի «Տիրամոր պատկերի առջև» (1965), Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» (1967), Ն. Չարյանի «Սասունցի Դավիթ» (1968), Հ. Խաչատրյանի «Էրեբունի» (1968) և այլ գրքերի ձևավորումները: Յուրաքանչյուր պատկերազարդման համար նկարիչն ընտրել է տվյալ ստեղծագործության համար բնորոշ ուրույն ոճական մոտեցում: Նա կարողանում է ապրել գրական երկի ժամանակաշրջանով, կերպարների հույզերով ու մտորումներով: Ուսումնասիրելով Միհրան Սոսոյանի բազմաթիվ և բազմաբնույթ աշխատանքները՝ կարող ենք որոշակի պատկերացում կազմել XX դարի երկրորդ կեսի հայ գրքարվեստի, նրա գեղագիտական սկզբունքների մասին:

***Քանալի բառեր*** – Միհրան Սոսոյան, գրքարվեստ, գրքային ձևավորումներ:

Հայկական գրքային գրաֆիկայի ասպարեզում նշանակալից դեր է խաղացել Միհրան Սոսոյանը (1928–1992), ով իր ողջ ստեղծագործական կյանքը նվիրել է գրքի ձևավորմանը: Ծնվելով Վանից գաղթած ընտանիքում՝ նա դեռևս պատանի տարիքից հրապուրվել է արվեստով և ուսանել Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում: Այստեղ նրան դասավանդել է հայկական գրաֆիկայի մեծագույն ներկայացուցիչ Հակոբ Կոջոյանը: Երևի հենց սա էլ ազդել է ապագա նկարչի մասնագիտական կողմնորոշման վրա: Դեռևս մանկությունից Մ. Սոսոյանն ապրում էր գրքերի միջավայրում և արդեն ուսանողական տարիներին կատարեց գրքի ձևավորման իր առաջին փորձերը:

Այսպես, 1948 թվականին որպես դիպլոմային աշխատանք ընտրելով Հովհաննես Թումանյանի «Գիքորը» պատմվածքի ձևավորումը, քսանամյա պատանին կարողացել է հաղորդել գրական երկի անմիջականությունը և քնարականությունը: Հետագայում այս ստեղծագործությանը Մ. Սոսոյանն անդրադարձել է ևս մի քանի անգամ, այդ թվում՝ նաև գեղարվեստաթատերական ինստիտուտում սովորելու տարիներին՝ ամեն հաջորդ ձևավորում լրացնելով նոր հնչերանգներով:

Ուսումն ավարտելուց հետո նկարիչն աշխատակցել է տպագիր մամուլին, ներառյալ «Պիոներ կանչ» թերթը: Գնահատելով երիտասարդ արվեստագետի տաղանդը՝ նրան շուտով աշխատանքի են հրավիրում տարբեր հրատարակչություններ: Հետագայում նա եղել է «Հայաստան» հրատարակչության, ապա Հայիրատպետկոմի գլխավոր նկարիչը:

Երկարատև ստեղծագործական կյանքի ընթացքում Մ. Սոսոյանը ձևավորել է մոտ վեց հարյուր գիրք, որոնց թվում՝ թե՛ հայ, թե՛ համաշխարհային դասական գրականության ստեղծագործություններ: Նրա ձևավորումների շարքում են Մ. Տվենի «Թոմ Սոյերի արկածները» (1953), Հ. Թոմանյանի «Գիքորը» (1955), Է. Հեմինգուեյի «Ծերունին և ծովը» (1957), Մ. Սարգսյանի «Տիրամոր պատկերի առջև» (1965), Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» (1967), Ն. Զարյանի «Սասունցի Դավիթ» (1968), Հ. Խաչատրյանի «Էրեբունի» (1968) և այլ գրքեր: Ընդ որում, յուրաքանչյուր ձևավորման համար նկարիչն ընտրել է տվյալ ստեղծագործության համար բնորոշ նոր ոճական մոտեցում: Նա կարողանում էր ապրել գրական երկի ժամանակաշրջանով, կերպարների հույզերով ու մտորումներով:

Այսպես, Մ. Տվենի «Թոմ Սոյերի արկածները» գիրքը նկարագարողելիս նկարիչը հմտորեն է կառուցում հորինվածքը՝ զծի միջոցով բացահայտելով կերպարների բնավորությունն ու տրամադրությունը: Նույնիսկ հետևից պատկերված չարաճճի Թոմը հանդես է գալիս որպես ամբողջական կերպար՝ իր խառնվածքով և տրամադրությամբ:

1964 թվականին Մ. Սոսոյանը ձեռնարկում է Մ. Շոլոխովի «Մարդու ճակատագիրը» երկի ձևավորումը: Խորհրդային տարիներին մեծ ճանաչում ստացած այս պատմվածքը պատկերագարողել էին բազմիցս՝ Կուկրինիքսները, Ա. Գլուխովցևը, Վ. Անդրուշկևիչը և այլք: Դժվար էր գտնել նոր լուծումներ, սակայն նկարիչը ներկայացնում է պատմվածքի իր ընկալումը: Աշխատելով լինոփորագրության տեխնիկայով՝ Մ. Սոսոյանը դրսևորում է նոր մոտեցում: Նրա պատկերագրողումներն աչքի են ընկնում խոշոր ծավալներով և ընդհանրացումներով: Ընտրելով առանցքային դրվագները՝ նկարիչն իր ուշադրությունը կենտրոնացնում է գլխավոր հերոսի կերպարի, նրա հույզերի և ապրումների վրա: Պատկերի մնացած տարրերը սուկ լրացնում են այն:

Սոկոլովի գերի ընկնելու տեսարանը կառուցված է շրջված եռանկյունու ձևով: Կծկված վիրավոր հերոսը, ձեռքերով ծածկելով գլուխը, կարծես փորձում է պաշտպանվել շներից: Ուշագրավն այն է, որ կերպարը ներկայացված է գլխիվայր, և տպավորություն է ստեղծվում, որ նա գտնվում է անելանելի վի-

ճակում: Տպավորությունն ավելի է սրվում պատկերի վերնամասում նկարված երեք ֆաշիստների ֆիգուրների շնորհիվ:

Սրանից հետո պատկերվող իրադարձությունների ընթացքում Սոկոլովի կերպարը ստանում է աստիճանական զարգացում՝ ամեն անգամ ներկայանալով բնավորության նոր գծերով:

Հորինվածքային առումով առավել հետաքրքիր է լուծված հարցաքննության տեսարանը: Այստեղ նկարի ողջ տարածությունը զբաղեցնում է Սոկոլովի ֆիգուրը, որը պատկերված է մեջքից (նկ.1): Հետին պլանը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հորիզոնական մասի: Վերին մասը լուծված է լոկալ սևով, որի հենքին առավել հստակ է գծագրվում հերոսի կերպարը: Ներքևի մասում սպիտակ ֆոնի վրա, ֆաշիստների չորս կերպարներն են, որոնցից մեկը պատկերված է Սոկոլովի ոտքերի արանքում: Ընդ որում այս ֆիգուրների կերպարներում զգացվում է անհանգստություն, նույնիսկ խառնաշփոթ: Տպավորություն է ստեղծվում, որ չնայած գլխավոր կերպարը պետք է գտնվի ընկճված վիճակում, այն գերիշխում է թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես:



**Նկ.1.** Մ. Շոլտսովի «Մարդու ճակատագիրը», նկարագարողում 1964, թուղթ, լինոփորագրություն, 39x26/51x38,5, ՀԱՊ:

Առավել հուզիչ է վարորդական խցիկում հերոսի և երեխայի զրույցի տեսարանը: Այստեղ ակնհայտորեն զգացվում է համանուն ֆիլմի (1959 թ., ռեժիսոր՝ Ս. Բոնդարչուկ) ազդեցությունը: Սահմանափակ տարածությունը կարծես ավելի է մերձեցնում կերպարները՝ ստեղծելով մեկ ամբողջություն:

Հաջորդ տարի լույս է տեսնում Մ. Սարգսյանի «Տիրամոր պատկերի առջև» պատմվածքը: Նկարիչն այստեղ աշխատում է այլ տեխնիկայով՝ կավճաթուղթ, տուշ, խազում: Սա փոխում է նաև ձևավորման կառուցվածքը: Եթե նախորդ աշխատանքներում գերակշռում էր սևը, ապա այժմ պատկերների համար ֆոն է ծառայում սպիտակը, զճերը դառնում են ավելի նուրբ և դինամիկ: Այս ձևավորման մեջ ևս հորինվածքները լուծված են գլխավոր հերոսի շուրջ: Սայաթ-Նովան մասնակից է դառնում ժողովրդի կյանքին (օրինակ՝ «Մաճկալը», «Խոյերի կռիվը» տեսարաններում):

Սուպերշապիկը ձևավորման ամենահետաքրքիր թերթերից է: Այն լուծված է որպես ամբողջական պատկեր, որը լրացված է տեքստային մասով: Այստեղ գունային առումով հակադրվում են կնոջ և տղամարդու կերպարները: Հակադրությունն ավելի է շեշտվում այն բանի շնորհիվ, որ կնոջ կերպարը դիմացից է և անշարժ, իսկ տղամարդունը՝ կողքից և շարժուն (նկ.2): Այս մոտեցումն է՛լ ավելի է շեշտում պատկերի հուզականությունը: Նույն տրամադրությամբ է ստեղծված նաև սկզբնականարը, որում ծալապատիկ նստած Սայաթ-Նովայի ֆիգուրն է՝ քամանչան ձեռքին: Ձեռքերը համեմատաբար մեծ են, ինչը դիտողի ուշադրությունը կենտրոնացնում է գործիքի՝ որպես զգացմունքների գազաթնակետի վրա:



**Նկ.2.** Մ.Սարգսյանի «Տիրամոր պատկերի առջև» գրքի սուպերշապիկ, 1965, կավճաթուղթ, տուշ, սպիտականերկ, խազում, 26,7 x 34,7, ՀԱԳ:

Հովհաննես Շիրազի «Սիրանամե» գրքի ձևավորումներում (1967), օգտագործելով ջրաներկ, մատիտ և ֆլումաստեր, նկարիչն աշխատում է երանգային սկզբունքով՝ սևի և մոխրագույնի երանգներով: Շապիկի նկարը հենց սկզբից պատկերացում է տալիս ժամանակաշրջանի, միջավայրի և հիմնական կերպարների մասին: Հմտորեն համադրելով պատկերն ու տեքստը՝ նա գրքի վերնագիրը տեղադրում է դռան բացվածքի մեջ (նկ.3), որը հիանալի ֆոն է ծառայում սպիտակ տառերի համար և միաժամանակ տալիս է խորության պատրանք:



**Նկ.3.** Հ.Շիրագի «Սիրանամե» գրքի շապկանկար, 1967, թուղթ, ջրաներկ, մատիտ, ֆլումաստեր, 48 x 32, ՀԱՊ:

Նկարիչը մեծ ուշադրություն է դարձրել գլխավոր հերոսների կերպարներին: Թամարի և ճորտի ֆիգուրները բոլոր տեսարաններում խիստ փոխկապակցված են ու միևնույն ժամանակ այքի են ընկնում վառ անհատականությամբ: Շապիկի նկարի հետին պլանում կանգնած արքայադուստրը գտնվում է հոգեկան ծանր ապրումների մեջ՝ հայացքը հառած իր հեռացող սիրեցյալին: Վերջինս պատկերված է առաջին պլանի ստորին մասում՝ մինչև կուրծքը: Հետ չնայելով՝ գլխավոր հերոսը վիրավորված հայացքն ուղղել է դիտողին: Այս պատկերում ամփոփված է լեզենդի ողջ գաղափարը՝ սիրո և սոցիալական անհավասարության հակասությունը:

Ձևավորման մյուս պատկերները պոեմի գլխավոր դրվագներն են: Կերպարների փոխհարաբերության առումով հետաքրքիր է Թամարին և ճորտին պատկերող տեսարանը: Իրար մոտ կանգնած ֆիգուրները լուծված են մոխրագույնի երանգներով, սակայն նրանց դեմքերը, շնորհիվ սև ուրվագծերի, ուշադրությունը կենտրոնացնում են իրենց վրա: Բազեն ձեռքին վերադարձած երիտասարդը սիրով ու հույսով նայում է արքայադուստրը, ով, սակայն, հիշում է հոր խոսքերը և վախենում է նայել երիտասարդի այքերին: Նկարիչը մեծ ուշադրություն է դարձնում հագուստին, որը հավաստի պատկերացում է տալիս հերոսների կարգավիճակի և սոցիալական դրության մասին: Ֆոնն այստեղ պայմանական է՝ լուծված մի քանի վրձնահարվածի միջոցով:

Վերջին պատկերն ամենաազդեցիկն է ձևավորման մեջ: Այն կառուցված է անկյունագծային սկզբունքով, որի առանցքն է մահացած Թամարի ֆիգուրը: Ի տարբերություն մյուս տեսարանների՝ այստեղ պատկերված է երեք կերպար, սակայն երրորդ՝ հոգևորականի ֆիգուրը, որը ներկայացված է կիսատ, կարծես կատարում է ֆոնային դեր՝ լրացուցիչ դրամատիկություն հաղորդելով տեսարանին: Առաջին պլանում՝ աջից, ճորտի կերպարն է, որի տանջահար հայացքն ուղղված է դեպի մահացած սիրեցյալը: Նրա ընկճվածությունն ավելի են շեշտում կրծքին ծալված ձեռքերը:

Մ. Սոսոյանը հաճախ դիմում է նաև միջնադարյան մանրանկարների ավանդույթներին: Մասնավորապես Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» գրքի ձևավորման մեջ (1979) նկարիչն օգտագործել է հեղինակի գունավոր դիմանկարը՝ վերցված բուն ձեռագրից<sup>1</sup>: Ձևավորման մնացած տարրերն արված են ոսկեգույնի, սևի և սպիտակի համադրությամբ: Ոսկեգույն են յուրաքանչյուր էջի շրջանակը կազմող քառակուսիները և գլխազարդերը, որոնք ռճավորված խորանագարդերն են հիշեցնում:

Նույն սկզբունքով է ձևավորված նաև Նահապետ Քուչակի «Հազար ու մեկ հայրեն» գիրքը (1979): Այստեղ ևս օգտագործվել է հեղինակի մանրանկար դիմապատկերը: Հիմնվելով ավետարանիչների պատկերագրության վրա՝ Մ. Սոսոյանն ստեղծել է XVI դարի բանաստեղծի բավական ինքնատիպ դիմանկարը: Այս ձևավորման վերաբերյալ շատ ճիշտ մեկնաբանություն է արել Լև Օզերովը. «Սկզբից մինչև վերջ պահպանված է հայ միջնադարյան մանրանկարչության ոճը: Լավ է գտնված կազմաշապիկը՝ հոգևորական գրիչի կերպարով: Նույն ոճով, մեծ անկեղծությամբ ու սիրով են մշակված յուրաքանչյուր ծաղկատառը, յուրաքանչյուր գլխազարդն ու վերջնազարդը: Խավթաթուղթը մշակված է այնպես, որ կարծես ինչ-որ վանքում երկար պահպանված մագաղաթ լինի... Այս ամենը, մինչև գրքի ընթերցումը, ստեղծում է Քուչակի առաջիկա ընկալման մթնոլորտը»<sup>2</sup>:

«Հայ դասական քնարերգություն» երկհատոր պատկերային ձևավորման մեջ (1986) նկարիչը որպես հիմք օգտագործել է խորաններն ու լուսանցազարդերը: Բուն պատկերն առանձնացնելու համար վերջիններս զետեղվել են բացվածքների աջ և ձախ մասերում՝ հնացած մագաղաթի ֆակտուրան

<sup>1</sup> **Գրիգոր Նարեկացի**, «Մատյան ողբերգության», 1173 թ., ծաղկող՝ Գրիգոր Միհրանցի, Մատենադարան, դ. 1568:

<sup>2</sup> Մեջբերումն ըստ՝ **Աթաբեկյան Ն.**, Որպես ճշմարիտ գրիչ ու ջանադիր ծաղկող // «Հայաստան», 2013, թթ. 4–6, էջ 31:

հիշեցնող ուղղանկյունու ֆոնին: Գրքի առանձին բաժիններն սկսվում են նույն հենքին նկարված խորանաձևերով և գլխազարդերով, որոնց մեջ ներգծված են վերնագրերը: Նկարիչը յուրովի միավորել է միջնադարյան ձեռագրերի և ժամանակակից տպագրության սկզբունքները. 1960-1980-ական թվականներին հայկական գրատպությունը, ցավոք, ուներ որոշակի դժվարություններ գունաբաժանման ասպարեզում, և այդ է պատճառը, որ մանրանկարչական զարդաձևերը հաճախ պարզեցվում էին:

Ոճական այլ սկզբունքով է ձևավորված Մ. Գորկու «Մրրկահավի երգը» գիրքը, որում ամփոփված են ռուս գրողի հինգ երկերը՝ «Մակար Չուդրա», «Պառավ Իգերգիլը», «Բազեի երգը», «Չելկաշը», «Մրրկահավի երգը»: Նշենք, որ այս ստեղծագործությունները բազմիցս հրատարակվել և ձևավորվել են տարբեր երկրներում, տարբեր նկարիչների կողմից և տեխնիկայի տարբեր տեսակներով: Մ. Սոսոյանի պատկերազարդումները, սակայն, իրենց ուրույն տեղն են գրավում այս շարքում:

Ձևավորումը բաղկացած է ութ էջային պատկերից, հեղինակի դիմանկարից, տիտղոսաթերթից, շապիկից և սուպերշապիկից:

Սուպերշապիկի վրա պատկերված է «Պառավ Իգերգիլը» պատմվածքի հերոս Դանկոն: Նկարը լուծված է երեք գույնով՝ սպիտակն իբրև ֆոն, սև և նարնջագույն: Պատկերը բավականին դինամիկ է: Հորինվածքի բոլոր տարրերը ձգտում են դեպի վեր, որտեղ Դանկոյի ձեռքին արևի պես փայլատակող նարնջագույն սիրտն է, որից տարածվում են սև և նարնջագույն շողեր: Դանկոյի՝ ցավից ու ոգևորությունից այլայլված դեմքը կառուցված է սահուն ուրվագծի և զուգահեռ շտրիխների միջոցով: Պատկերն ամբողջացնում են դեպի սիրտը ձգտող չորս ձեռքերը՝ յուրաքանչյուրն իր լուծմամբ, ինչը բազմակիության տպավորություն է թողնում:

Նշենք, որ գրքի ներսում նույն տեսարանը ներկայացված է բոլորովին այլ կերպ: Եթե սուպերշապիկի պատկերը կրում է խորհրդանշական բնույթ, ապա տեքստայինը կատարված է պատմողական եղանակով և սև ու սպիտակ գույներով: Այստեղ գլխավոր հերոսից բացի առկա են ևս երեք կերպար՝ տարբեր դիրքերով: Առաջին պլանի ֆիգուրը նստած է գետնին, մեջքով դիտողին և կարծես հետևում է գործողությանը: Աջ կողմի քայլող ֆիգուրը ձգտում է առաջ, մինչնույն ժամանակ շրջվելով նայում է գլխավոր հերոսին, գոչելով ոգևորում նրան: Մնացած կերպարները ձեռքերն ուղղել են դեպի այրվող սիրտը, ընդ որում կան նաև կերպարներ, որոնց միայն ձեռքերն են երևում: Նկարա-



զարդումը կառուցված է խոշոր շտրիխների միջոցով, որոնք կազմակերպում են միջավայրը:

Ոսկեգույն կայծակի ֆոնին սպիտակ մրրկահավ ենք տեսնում գրքի շապկանկարում: Այս գույներն առավել ակտիվ են հնչում օգտագործված կանաչի հարևանությամբ: Մինիմալիստական այս ձևավորումը տարբերվում է մյուս պատկերներից և դարձյալ կրում խորհրդանշական բնույթ:

Մնացած պատկերներից յուրաքանչյուրը նվիրված է մեկ պատմվածքի: Դրանց հերոսների կամ հիմնական դրվագների ներկայացման միջոցով բացահայտվում է գրական երկի գաղափարը: Շտրիխները լայն են, ազատ և լրացնում են թղթի ողջ ծավալը: Հորինվածքները զարգանում են հակադիր ուղղություններով, ինչի շնորհիվ հաճախ դառնում են կենտրոնախույս: Հետաքրքիր է լուծված «Բազեի երգը» պոեմի ձևավորումը, որտեղ բազեի և օձի կերպարները պատկերված են տարբեր մակարդակների վրա, իսկ որպես ֆոն հանդես է գալիս արևը: Սակավ շտրիխներով արվեստագետը կարողանում է կերտել ամբողջական տեսարան:

Այլ կառուցվածք ունի Հ. Խաչատրյանի «Էրեբունի» պատմավեպի նկարազարդումը (նկ.4): Յուրաքանչյուր պատկեր այստեղ լուծված է որպես առանձին գրաֆիկական թերթ: Սոսոյանի ձևավորումներում հստակ զգացվում է Հակոբ Կոջոյանի գրաֆիկայի ազդեցությունը, թեև դրանք կատարված են այլ տեխնիկայով և առավել մոնումենտալ են:



**Նկ.4.** Հ. Խաչատրյանի «Էրեբունի» պատմավեպի շապիկը, 1968, ստվարաթուղթ, գուաշ, սպիտականերկ, 39,3 x 49,5, 24,5 x 44, ՀԱՊ:

1968 թվականին Մ. Սոսոյանը ձևավորում է «Սասունցի Դավիթ» էպոսը: Նշենք, որ խորհրդահայ կերպարվեստում էպոսին առաջինն անդրադարձել է Հակոբ Կոջոյանը դեռևս 1922 թվականին: Նրա երեսունհինգ դրվագից բաղկացած գրաֆիկական կոմպոզիցիան հիմք հանդիսացավ հետագայում ստեղծված բազմաթիվ հորինվածքների համար: 1939 թվականին էպոսի ռուսերեն հրատարակության համար Հովսեփ Օրբելու պատվերով նկարազարդումներ ստեղծեց Երվանդ Քոչարը: Դրանք, ինչպես հայտնի է, լուծված

են ոճավորման սկզբունքով և նմանակում են բարձրաքանդակներ՝ քարի ծակոտկեն ֆակտուրայով: Առհասարակ Սասունցի Դավթի կերպարին անդրադարձել են բազմաթիվ արվեստագետներ, այդ թվում՝ Գ. Գյուրջյանը, Ա. Մամաջանյանը, Մ. Աբեղյանը, Ս. Ալեքսանյանը, Ա. Ռաշմաճյանը, Է. Իսաբեկյանը և այլք<sup>3</sup>:

Մ. Սոսոյանի ձևավորումները տարբերվում են այլ հեղինակների աշխատանքներից թե՛ ոճական, թե՛ կառուցվածքային առումով: Նա համատեղում է մուգ ֆոնը և սպիտակ գծերը, չի որոշակիացնում միջավայրը, իսկ կերպարներն ստանում են դեկորատիվ բնույթ՝ հիշեցնելով հունական սևաֆիգուր սափորանկարչությունը: Սա հատկապես ցայտուն է զգացվում առյուծի երախը պատռող Մեծ Միերին ներկայացնող դրվագում:

Իր գրքային ձևավորումներում Մ. Սոսոյանը չի անտեսել նաև մանուկ ընթերցողներին: Որպես օրինակ նշենք բազմիցս վերահրատարակված «Այրբենարան»- ները հայկական և ոչ հայկական դպրոցների համար (1971, 1973, 1976, 1981) և այլն: Դասագրքերում նկարիչը ցուցաբերում է բոլորովին այլ մոտեցում՝ կիրառելով պարզ միջոցներ և վառ գույներ:

Ուսումնասիրելով Մ. Սոսոյանի գրքային գրաֆիկան՝ մենք կարող ենք պատկերացում կազմել XX դարի երկրորդ կեսի հայ գրքարվեստի մասին, քանի որ նկարիչն իր բազմաթիվ և բազմաբնույթ աշխատանքներով ներկայանում է որպես ժամանակի տրամադրություններն ու զեղարվեստական տարբեր սկզբունքները կիրառող մեծատաղանդ արվեստագետ:

## КНИЖНЫЕ ОФОРМЛЕНИЯ МИГРАНА СОСОЯНА

### НУНЕ МИНАСЯН

Мигран Сосоян (1928–1992) сыграл значительную роль в армянской книжной графике. Всю свою долгую творческую жизнь художник посвятил оформлению книги как армянских, так и зарубежных авторов. В числе его работ – «Приключения Тома Сойера» М. Твена (1953), «Гикор» Ов. Туманяна (1955), «Старик и море» Э. Хемингуэя (1957), «Перед образом Богоматери» М. Саркисяна (1965), «Неистовые толпы» Е. Чаренца (1967), «Давид Сасунский» Н. Зарьяна (1968), «Эребуни» А. Хачатряна (1968) и другие, общим числом около 600 книг. Для каждого цикла иллюстраций М. Сосоян

<sup>3</sup> Սասունցի Դավթի, Նկարագարը այլում, Երևան, 1939:

находил наиболее близкий данному произведению стилистический подход. Он умел перемещаться в эпоху и обстановку иллюстрируемого произведения, переживать и мыслить вместе с героями. Книжная графика М. Сосояна позволяет составить некоторое представление об искусстве армянской книжной графики второй половины 20-го века, о ее эстетических принципах.

**Ключевые слова** – Мигран Сосоян, книжная графика, книжная иллюстрация, книжное оформление.

## MIHRAN SOSOYAN'S BOOK ILLUSTRATIONS

NUNE MINASYAN

Mihran Sosoyan (1928-1992) played a significant role in Armenian graphic arts, particularly in book design. He devoted his long creative life to illustrating books – totaling roughly six hundred works authored by Armenian and international writers. M. Sosoyan was able to find the approach and style that were most appropriate for each particular literary work. M. Sosoyan's illustrations provide some insight into the aesthetic principles of Armenian book graphics of the second half of 20<sup>th</sup> century.

**Keywords** – Mihran Sosoyan, book illustration, book graphics, book design.

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (ՀՈԴՎԱԾ ԱՌԱՋԻՆ)

### ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Հոդվածը նվիրված է հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս վարդապետի՝ ռուսական մշակույթի հետ ունեցած առնչություններին:

Հոդված - ռուսումնասիրության նախաբանում ներկայացվում են հայ-ռուսական դարավոր պատմամշակութային կապերը, ռուսական երաժշտական արվեստի նշանակությունը XIX դարի վերջի և XX դարի սկզբի արևելահայ կոմպոզիտորների գործունեության համար: Առաջին անգամ ժամանակաշրջանի պատմաքաղաքական համատեքստում հնարավոր ամբողջությամբ քննվում են Կոմիտաս վարդապետի գիտական կենսագրության՝ ռուսական մշակույթին առնչվող փաստերը, նրա արվեստին տրված ռուս ականավոր երաժշտագետների մասնագիտական գնահատականներն ու կարծիքները:

Վարդապետն էջմիածնում, Անդրկովկասում և Եվրոպայում ծավալել է ստեղծագործական և երաժշտագիտական գործունեություն, որին անդրադարձել են ռուսական մշակույթի հեղինակավոր ներկայացուցիչներ Թ. Հարթմանը, Ն. Չերեպանինը, Մ. Գնեպինը, Դ. Մազգիդը, Վ. Կորգանովը, Դ. Շոստակովիչը: Անդրկովկասի ռուսալեզու մամուլը բարձր է գնահատել Կոմիտասի երաժշտալուսավորական առաքելությունը, հրապարակումներին արձագանքել է պետերբուրգյան մամուլը: Վարդապետի համերգ-դասախոսությունները Թիֆլիսում, Բաքվում ընթացել են աննախադեպ հաջողություններով: Այս փաստերի համակողմանի ու նորովի դիտարկմամբ ամբողջանում են Կոմիտաս վարդապետի կատարած գործի դերն ու նշանակությունն ազգային մշակույթի համար:

**Քանալի բառեր** – Կոմիտաս վարդապետ, երաժշտական մշակույթ, ռուսական երաժշտություն, երաժշտագետ, կոմպոզիտոր:

Հայ-ռուսական պատմամշակութային և հոգևոր առնչությունները, ձևավորվելով դեռևս միջնադարում, անցել են դարերի փորձություն: Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը դեռ հնուց է եղել Ռուսաստանում: Մոսկվայի Կարմիր հրապարակում՝ Բարսեղ Երանելու տաճարի համալիրի մեջ, ավելի քան հինգ դար կանգնած է Հայոց Գրիգորի եկեղեցին (Церковь Григориса Армении)՝ Երանելու տաճարի գմբեթին կից վեր խոյացող գմբեթով. կառուցվել է Իվան Ահեղի հրովարտակով<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 226:

Հայ-ռուսական կապերն ավելի ամրապնդվեցին XIX դարում, երբ 1828 թ. Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Հայկական մշակույթն ապրեց զարգացման ու վերելքի բուռն շրջան. ստեղծվեցին հայ մշակութային և կրթական օջախներ ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանի և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Մոսկվայում, Աստրախանում, Ղրիմում, Թիֆլիսում և Բաքվում: Այսօր էլ Ռուսաստանի տարածքում գործում են ճարտարապետական ինքնատիպ լուծումներով աչքի ընկնող բազմաթիվ հայկական եկեղեցիներ ու դպրոցներ<sup>2</sup>: Իրենց լուսավորական գործունեությամբ առանձնանում էին Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբին հայ երաժշտական մշակույթի համար ռուսական առաջադիմական արվեստի հսկայական դերն անուրանալի իրողություն է: Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի կոնսերվատորիաներում մասնագիտական կրթություն են ստացել հայազգի նշանավոր կոմպոզիտորներ Մակար Եկմայանը (1856-1905), Ալեքսանդր Սպենդիարյանը (1871-1928), Ռոմանոս Մելիքյանը (1883-1935), երաժշտագետ Բարսեղ Ղորղանյանը (Վասիլի Կորգանով, 1865-1934), երաժիշտ կատարողներ Նադեժդա Պապայանը, Բեգլար Ամիրջանյանը, Հովհաննես Նալբանդյանը<sup>3</sup>: Ի դեպ, Բ. Ղորղանյանն<sup>4</sup> առաջին երաժշտագետներից էր, ով նկատել է երիտասարդ Շայապինի տաղանդը, լուսաբանել «Պուշկինը երաժշտության մեջ» թեման: Երաժշտության պատմության մեջ հայտնի է Սպենդիարով-Գորկի ստեղծագործական համագործակցությունը<sup>5</sup>: Այդպիսի բազում օրինակներ կան ընդհուպ

<sup>2</sup> 10-րդ դարից հայ սրբեր Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմեի պաշտամունքը տարածում է գտել ռուսական եկեղեցիներում, օր.՝ Նովգորոդի Սպաս Ներեդիցա տաճարի (1198) ինտերիերի որմնանկարներում: Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 10, Երևան, 1984, էջ 73:

<sup>3</sup> Տե՛ս **Աղայան Ա., Ասատրյան Ա.**, Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից, Սանկտ-Պետերբուրգ, Երևան, 2015:

<sup>4</sup> Բ. Ղորղանյանը 1900-ից Անդրկովկասում հիմնադրել է «Кавказский вестник» գիտագրական ամսագիրը: Լուսաբանել է Կովկասի մշակութային կյանքը: 1902-ին հրապարակված Բեթհովենի մասին ռուսերեն մենագրությունն առաջին լուրջ ուսումնասիրությունն էր՝ հիմնված նամակագրության և այլ փաստերի վրա: Կորգանովը հայ մեծ բարերար, Ռուսական կայսրության մեջ հայտնի արդյունաբերող Ա. Մանթաշյանցի փեսան էր, որի հովանավորությամբ է Կոմիտասը ուսանել Գերմանիայում:

<sup>5</sup> 1902-ին Ղրիմում Մ. Գորկին, հանդիպելով Ա. Սպենդիարյանին, նրան է հանձնել

մինչև XX դար<sup>6</sup>:

XX դարում Մոսկվայում էր զարգանում հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Իսախանյանի տաղանդը: Մայրաքաղաքում գործող Հայ արվեստի տունը կարևոր ազդեցություն ունեցավ «Հայկական հնգյակի»<sup>7</sup> կոմպոզիտորների մասնագիտական կատարելագործման վրա:

Հայոց հոգևոր կյանքում բացառիկ դեր և նշանակություն ուներ մեծանուն Կոմիտաս վարդապետը, ում կենսագրությունն անքակտելիորեն կապված է սեփական ժողովրդի պատմությանը: Նրա ճակատագիրը, սակայն, առ այսօր մեր առջև դնում է բարդ ու հետաքրքիր խնդիրներ: Հանճարեղ գեղարվեստագետի կյանքի փառքի ու ողբերգության բազում էջեր պարուրված են խորհրդավորության շղարշով: Կիսելով սեփական ժողովրդի ճակատագիրը՝ նա ևս իր ողբերգական վախճանն ունեցավ Հայոց Մեծ եղեռնից հետո:

Ժամանակի ընթացքում անհրաժեշտություն են դարձել Կոմիտասի կյանքի թվացյալ կամ «հայտնի» փաստերի նորովի մեկնաբանությունը, գիտական կենսագրության առավել խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունը:

Մեծ արվեստագետի կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված էին և անբաժանելի համաշխարհային մշակույթի և մասնավորապես ռուսական մշակույթի նվաճումներից:

Խորհրդային շրջանում տարբեր շեշտադրումներով են լուսաբանվել Ռուսաստանի հետ Կոմիտասի առնչությունները: Հայտնի են հիմնականում ոռու երաժիշտներ Թոմաս Հարթմանի (1885-1956) և Միխայիլ Գնեսինի

«Ձկնորսը և փերին» երկը, որը դարձել է Սպենդիարյանի երաժշտական բալլադի հիմնանյութը: Ռուս կոմպոզիտոր Ա. Չերեպնինը ևս բարձր է գնահատել Սպենդիարյանի արվեստը՝ իր երաժշտության մեջ ընդունելով հայ կոմպոզիտորի ազդեցությունը:

<sup>6</sup>Հայտնի է նաև ռուս կոմպոզիտոր Գեորգի Սվիրիդովի «Հայրերի երկիր» վոկալ շարքը՝ Ա. Իսահակյանի խոսքերով, Ս. Ռախմանինովի «Գիշերն իմ այգում» ռոմանսը՝ դարձյալ Ա. Իսահակյանի խոսքերով (Ա. Բլոկի թարգմանությամբ), ինչպես նաև հայ միջնադարյան տաղերգու Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի (թարգմ.՝ Ն. Գրեբնյով) հիման վրա խառը երգչախմբի համար Ա. Շնիտկեի հեղինակած խմբերգային կոնցերտը, որի գաղափարը տվել է հայ անվանի կոմպոզիտոր, Ա. Շնիտկեի մտերիմ ընկեր Տ. Մանսուրյանը:

<sup>7</sup> Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Էդվարդ Միրզոյանը, Ղազարոս Սարյանը և Ադամ Խուրդյանը «Հայկական հնգյակի» անդամներ էին կոչվում ռուսական «Հզոր խմբակի» օրինակով (անդամներն էին Մ. Բալակիրևը, Յ. Կյուին, Ա. Բորոդինը, Մ. Մուսորգսկին և Ն. Ռիմսկի-Կորսակովը):

(1883-1943) արժեքավոր հուշագրությունները նրա մասին<sup>8</sup>:

Հայ գրող, հրապարակախոս Դերենիկ Դեմիրճյանը (1877-1956), անդրադառնալով Կոմիտասին, կոմիտասագիտության հիմնախնդիրներին, 1956-ին գրում էր. «...մտահոգության առարկա է դարձել Կոմիտասի՝ դեպի ռուսական երաժշտությունն ունեցած առնչությունների համար նյութ գտնելու հարցը: Ապրելով և ստեղծագործելով նախկին Ռուսաստանում, նա (*Կոմիտասը – Լ.Ս.*) չէր կարող վերաբերմունք և տեսակետ չունենալ դեպի ռուսական երաժշտությունը... Մենք ունենք ընդարձակ նյութ այն մասին, որ Փարիզում և Պոլսում նա սերտ հարաբերություն ուներ ռուսական երաժշտության հետ, մեծապես գնահատում էր «Հզոր հնգյակը», գրի էր առնում ռուս ժողովրդական երգերը: ...Գնեսինի հետ ծանոթությունը, Արենսկու և Տանենի արժանավոր աշակերտ Հարտմանի հեղինակավոր կարծիքները և մասնագիտական գնահատությունները, նմանապես մեր մեծատաղանդ երաժշտի հմայքի ու գործունեության հանդեպ հայ և օտար հասարակության ցուցաբերած հիացքն ու սերը միանգամայն վկայում են նրա երաժշտության մեծ արժեքն ու նշանակությունը»<sup>9</sup>:

Մեր հոդվածի շրջանակներում առաջին անգամ պատմաքաղաքական տեսանկյունից հնարավոր ամբողջությամբ մեկտեղելու և դիտարկելու ենք Կոմիտաս վարդապետի գիտական կենսագրության, այսպես ասած, «ռուսական» շրջանը, ինչն, անշուշտ, նոր լույս կսփռի Կոմիտաս վարդապետի պատմական դերի ճշմարտացի գնահատականի վրա<sup>10</sup>:

Արդի երաժշտագիտության մեջ առկա է Կոմիտասի կյանքն ու ստեղծագործությունը լուսաբանող պատկառելի գրականություն<sup>11</sup>:

Կոմիտաս վարդապետը հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրն է, բազմաբեղուն երաժիշտ, կոմպոզիտոր, բանահավաք, երաժըշ-

<sup>8</sup> **Գասպարյան Ս.**, Կոմիտաս, Երևան, 1947: **Յոլյան Ի.**, Կոմիտաս, Երևան, 1969: **Գյոդակյան Գ.**, Կոմիտաս, Երևան, 1969: **Шавердян А.**, Комитас и армянская музыкальная культура, Ереван, 1956.

<sup>9</sup> Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960, էջ 5: Դերենիկ Դեմիրճյանը 1892-ին ուսանել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, մասնակցել Կոմիտասի երգչախմբային դասերին: Դեմիրճյանին է պատկանում Ն. Գոգոլի «Մեռած հոգիներ» վեպի առաջին հատորի հայերեն թարգմանությունը:

<sup>10</sup> Տե՛ս **Սահակյան Լ.**, Կոմիտաս վարդապետը և ֆրանսիական մշակույթը, «Կանթեղ», Գիտական հոդվածներ, N3 (68), Երևան, 2016, էջ 242-263: Մեզ համար առանձին ուսումնասիրության նյութ է նաև վարդապետի կյանքի՝ Պոլսի հետ կապված շրջանը:

<sup>11</sup> **Նույնի՝** Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ, Երևան, 2010, էջ 145-167:

տագետ, խմբավար, երգիչ ու մանկավարժ: Նա կորստից փրկել և գիտականորեն ուսումնասիրել է հայ երաժշտության շատ գանձեր, հաստատել հայ ինքնուրույն երաժշտության գոյության փաստը: Իր երկարատև, հիմնավոր հետազոտություններով Կոմիտասն ապացուցեց հայ երաժշտարվեստի կարևորագույն առանձնահատկությունները, նրա հնադարյան ծագումն ու զարգացման ինքնատիպությունը: Նա նաև եվրոպական ու արևելյան երաժշտության գիտակ էր, որի հետաքրքրությունների տեսադաշտում էին XX դարի սկզբի համաշխարհային երաժշտության նորահունչ միտումները, ինչպես նաև Եվրոպայի համար հայտնություն դարձած ռուսական երաժշտական մշակույթը:

Կոմիտաս վարդապետը ծնվել է 1869-ին Փոքր Ասիայի Քյոթահիա քաղաքում: Ուսանել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, այնուհետև Բեռլինի Ռ. Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում և «Վիլհելմ Ֆրիդրիխ» Արքունական համալսարանում (այժմ՝ Հումբոլդտ համալսարան): Նա գիտական և լուսավորական բոլոր գործունեություն է ծավալել Անդրկովկասի, Եվրոպայի և Մերձավոր Արևելքի քաղաքներում ու մշակութային կենտրոններում: Վարդապետի բանահավաքչական և գիտական աշխատանքները մեծ մասամբ իրականացվել են Արևելյան Հայաստանում, որը XX դարի սկզբին Ռուսական կայսրության մի մասն էր<sup>12</sup>, նաև Անդրկովկասի մշակութային կենտրոններ Էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, որտեղ մեկտեղված հայ և օտարազգի մտավորականները ոգեշնչվում էին ռուսական մշակույթի առաջադեմ, լուսավորական գաղափարներով: Վարդապետի ստեղծագործական գործունեությունը նաև ռուս առաջադեմ մտավորականների ուշադրության կենտրոնում էր: Նա ժամանակի ուսյալ արվեստագետներից մեկն էր, որը տիրապետում էր նաև գերմաներենին, ֆրանսերենին, ռուսերենին: Ի դեպ, Գևորգյան ճեմարանում Կոմիտասը ռուսաց լեզու սովորել է հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանից (1864-1929), որը, նկատելով Կոմիտասի՝ երաժշտության հանդեպ ունեցած բացառիկ ընդունակությունները, Ռուսաստանից բերել է տալիս երաժշտական դասագրքեր<sup>13</sup>: Հոգևոր ճեմարանում ռուս գրականություն և պատմություն է ուսանել հայտնի բանասեր, պատմաբան Ստեփան Լիսիցյանի (1865-1947) դասարանում:

Շրջելով աշխարհի տարբեր երկրներում, հստակ գիտակցելով իր ապ-

<sup>12</sup> «Հայկական սովետական հանրագիտարան», Երևան, 1984, հ. 10, էջ 36:

<sup>13</sup> Թերլեմեզյան Ռ., Կոմիտաս, Երևան, 1992, էջ 14:



րած բարդ ժամանակաշրջանն ու իր առաքելությունը՝ Կոմիտասը հայերի ճակատագիրը կապում էր Ռուսաց կայսրության հետ. «Չը պէ՛տք է բաժնունք. չը պէ՛տք է խաբունք Եւրոպայի գանազան խոստումնայից խաբկանքներէն. միանալու ենք եւ գործնական ճամբան բռնելու. ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայութիւնն ամփոփել Ռուսի իշխանութեան տակ...Ես վախ չունեմ, թէ ռուս կառավարութեան մէջ կը հալենք, որքան ալ որ հալենք, այնուամենայնիւ մեր ինքնագիտակցութիւնը զարթնած է եւ եթէ խելօք շարժուենք կը վաստկենք. ես այս կարծիքն ունեմ»<sup>14</sup>: Վարդապետի նամականու մեջ տեղ են գտել նաև ռուսերենով հեռագրեր ու նամակներ<sup>15</sup>:

Կոմիտասի գործունեության առաջին լուրջ գնահատականները տվել են ռուսական մշակութային գործիչները<sup>16</sup>: Իր «Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը» արժեքավոր հոդվածում երաժշտագետ Գևորգ Գյոդակյանը գրում է. «1919-ին Թիֆլիսում պրոֆեսոր Հարթմանի նշանավոր ելույթից հետո, որ «հայտնագործեց» (մասնավորապես «արևելահայերի» համար) Կոմիտաս կոմպոզիտորին, թերևս ոչ ոք այլևս չկործեց վիճարկել նրա բացառիկ դերը հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի ձևավորման մեջ»<sup>17</sup>:

Վարդապետի գործի գնահատության մեջ Թ. Հարթմանի կարևոր գնահատություններին մանրամասն կանդրադառնանք մեր հաջորդ շարադրանքում: Փորձենք փաստերը դիտարկել ըստ ժամանակագրության:

Իր գիտակցական կյանքի մի զգալի հատված Կոմիտասն ապրել է Արևելահայաստանում կամ Հայաստանի ռուսահպատակ հատվածում, և ինչպես վերևում նշեցինք, նրա «ծանոթությունը» ռուսական մշակույթի հետ սկսվել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, շարունակվել Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաքվում, որտեղ գործում էին հայկական եկեղեցիներ, մշակութային միություններ, դպրոցներ, թատրոններ, պարբերական մամուլ<sup>18</sup>: Չնայած լուսավորական հաստատությունների առա-

<sup>14</sup> Տե՛ս Կոմիտաս Վարդապետ, Նամականի, Երևան, 2009, էջ 216:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 219, 243, 244:

<sup>16</sup> Կոմիտաս վարդապետի գործի գնահատության մեջ կարևորում ենք նաև ժամանակակիցների՝ Շ. Պերպերյանի, Ս. Մելիքյանի, Վ. Կորգանովի վերլուծական հոդվածները:

<sup>17</sup> Տե՛ս Գյոդակյան Գ., Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը, Կոմիտասական, հ. 1, Երևան, 1969, էջ 84:

<sup>18</sup> Դարասկզբին Թիֆլիսում հրատարակվում էին հայալեզու «Մշակ», «Նոր Դար», «Հասկեր», «Գեղարուեստ», «Հորիզոն», «Սուրհանդակ», ռուսալեզու «Новое обозрение», «Новая речь», «Тифлисский листок», «Закавказье» լրագրերը, «Տարագ» շաբաթաթերթը,

տության՝ ցարական իշխանությունները վերահսկում էին Անդրկովկասի մշակութային կյանքը: Օրինակ, երբ 1906-ին Կոմիտաս վարդապետը Գարեգին Լևոնյանի հետ մտադրվել էր Վաղարշապատում հրատարակել «Գեղարուեստ» գրական-գեղարվեստական հանդեսը, Երևանի նահանգապետից ստանում է մերժում այն պատրվակով, որ Վաղարշապատը քաղաք չէ, և Անդրկովկասի գյուղերում հանդեսներ չեն հրատարակվում: Հավելենք, որ, ըստ նահանգապետի, Կոմիտասը «ռուսահպատակ» չէր, և բացատրության մեջ նաև գրված էր. «Խմբագիրներից մեկը՝ Կոմիտաս Գևորգյանը<sup>19</sup>, ռուսահպատակ չէ, իրավունք չունի այդ պաշտոնին հաստատվելու»<sup>20</sup>: Կոմիտաս վարդապետը՝ որպես «թրքահպատակ», մշտապես գտնվում էր Էջմիածնի միաբանության «ռուսահպատակ կղերականության ուշադրության կենտրոնում»<sup>21</sup>: Իր հերթին Հայ առաքելական եկեղեցին ևս, որը պետականություն չունեցող հայ ժողովրդի միակ հոգևոր և կրթական օջախն էր, ցարական կառավարության ուշադրության կենտրոնում էր: 1907-ին՝ Խրիմյան Հայրիկի մահվանից հետո, սրվեց հակահայկական քաղաքականությունը, և յուրաքանչյուր «այլախոհ» ճեմարանական հետապնդվում ու հալածվում էր: Կոմիտասի «ազատ» լուսավորական գործունեության հանդեպ կղերականության ռուսահպատակ հատվածի հետապնդումներն ու սահմանափակումները ժամանակի ընթացքում առավել մեծ թափ ստացան: Մայր աթոռը լքեցին կամ ակտիվ գործունեությունից մեկուսացվեցին Գարեգին Լևոնյանը (1872-1947), Երվանդ Տեր-Մինասյանը (1879-1974), Գարեգին Հովսեփյանը (1867-1952), Կարապետ Տեր-Մկրտչյանը (1866-1915): 1910-ից Էջմիածինը լքեց նաև Կոմիտաս վարդապետը:

Հայտնի է, որ 1893-ին՝ Էջմիածնի հոգևոր ճեմարանն ավարտելուց հետո, Կոմիտաս վարդապետը ծրագրում էր կատարելագործել իր ընդհանուր և երաժշտական գիտելիքները: 1895թ. նա երաժշտական մասնագիտական համակողմանի կրթություն ստանալու նպատակով մեկնում է Անդրկովկասի մտավորականության կենտրոն՝ Թիֆլիս՝ դասեր առնելու հայ անվանի կոմպոզիտոր, Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ, Ռուսական կայսերական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի ռեկտոր Մա-

Բաքվում «Ձանգ» շաբաթաթերթը, «Бакы» թերթը և այլն:

<sup>19</sup> Գևորգյան հոգևոր ճեմարանը համարելով իր Alma Mater-ը՝ Կոմիտաս վարդապետը «Գևորգյան»-ը որոշ ժամանակ որդեգրել էր որպես իր ազգանուն: Չի բացառվում, որ կարող էր օգտագործել հոր՝ Գևորգ Սողոմոնյանի անունն իբրև ազգանուն:

<sup>20</sup> Տե՛ս Լևոնյան Գ., Մեր Կոմիտասը, «Կոմիտաս» ժողովածու, Երևան, 1930, էջ 83:

<sup>21</sup> Մասնավորապես կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի:

կար Եկմայանի մոտ<sup>22</sup>: Անտարակույս է, որ դասական հարմոնիայից բացի, Եկմայանը Կոմիտասին հնարավորինս ծանոթացնում էր ռուսական ազգային երաժշտական դպրոցի գեղարվեստական բարձր ձեռքբերումներին: 1905-ին Թիֆլիսում Կոմիտասը ձեռք է բերում և ուսումնասիրում 1891-ին Մոսկվայում հրատարակված ռուս կոմպոզիտոր, դաշնակահար Անտոն Արենսկու (1861-1906) «Краткое руководство к практическому изучению гармонии», ինչպես նաև Պետերբուրգում 1883-ին լույս տեսած ռուս կոմպոզիտոր և մանկավարժ Անդրեյ Կազբիրյովի (1845-1885) «Руководство к практическому изучению гармонии», ռուս կոմպոզիտոր ու խմբավար Վասիլի Օռլովի (1858-1901) «Искусство церковного пения» աշխատությունները<sup>23</sup>: Հետագա տարիներին նրա սեղանի գիրքը դարձավ հայտնի կոմպոզիտոր, երաժշտահասարակական գործիչ, մանկավարժ Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի (1844-1908) «Практический учебник гармонии» ձեռնարկը:

Կոմիտասը մտադրություն ուներ սովորել Պետերբուրգի կոնսերվատորիայում, ծրագրել էր հետագայում հայ ուսանողների համար Թիֆլիսում կոնսերվատորիա բացել, սակայն հանգամանքների բերումով և հայ եկեղեցական գործիչ Մաղաքիա Օրմանյանի (1841-1918) խորհրդով նա ընտրում է Գերմանիայում ուսանելը<sup>24</sup>:

Ժողովրդական երգամտածողության հիմքով XIX դարում բուռն ծաղկում ապրող ռուսական երաժշտությունը, ազգային կոմպոզիտորական դպրոցի իր խոշորագույն ներկայացուցիչներով, չէր կարող վրիպել հզոր ինտուիցիայով օժտված երաժիշտ և գիտնական Կոմիտասի տեսադաշտից: 1890-ականներից Կոմիտաս վարդապետը հայ, արևելյան և եվրոպական երաժշտությանը զուգահեռ գիտականորեն ուսումնասիրում է նաև ռուսական երաժշտական հարուստ մշակույթը: XX դարի սկզբին ռուս երաժշտության հսկայական ազդե-

<sup>22</sup> Մ. Եկմայանը Պետերբուրգում ուսանել և ստեղծագործական շփումների մեջ է եղել ռուս մեծանուն երաժիշտներ Ն. Ռիմսկի-Կորսակովի, Ն. Սոլովյովի, Պ. Չայկովսկու, Ա. Ռուբինշտեյնի, Ա. Լյադովի հետ:

<sup>23</sup> **Սամվելյան Խ.**, Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն, «Սովետական արվեստ», 1969, N 11, էջ 56:

<sup>24</sup> Հայ եկեղեցական անվանի գործիչ, աստվածաբան Մաղաքիա Օրմանյանը 1887-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Օրմանյանի միջնորդությամբ եվրոպական համալսարաններում իրենց կրթությունն են շարունակել ճեմարանական իր սաները՝ Կոմիտաս վարդապետը, Գարեգին Հովսեփյանցը (1867-1952, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), Գևորգ Զ Չորեքչյանը (1868-1954, հետագայում՝ Ամենայն հայոց 129-րդ կաթողիկոս):

ցությունը երաժշտարվեստի վրա անուրանալի և բազմիցս արձանագրված փաստ է: Կոմիտաս վարդապետը քաջածանոթ է եղել այդ երաժշտությանը, ռուս կոմպոզիտորների՝ ազգային-ժողովրդականի վրա խարսխված լադակա-ռուցողական նորարարական սկզբունքներին: Կան բազմաթիվ փաստեր, թե ինչպես էր Վարդապետը Փարիզում կամ Կ. Պոլսում մասնակցում և կամ էլ ունկնդրում «Ռուսաց» համերգները: Հայտնի են վարդապետի ելույթները Փարիզի «Ռուսաց երեկոյթում», որտեղ նա հանդես է եկել իր նոր ձայնագրած երգերով<sup>25</sup>:

1905 թ. Խրիմյան Հայրիկին (1820-1907) Թիֆլիսից Ալեքսանդրապոլ մեկնող գնացքով ուղեկցում էր Կոմիտաս վարդապետը: Ճամփորդության ընթացքում խոսելով տարբեր ազգերի երաժշտարվեստի մասին՝ Վարդապետը բավական մանրամասն անդրադարձել է ժողովրդական երգերին: Նա առանձնացրել է ռուսական ազգային երգերի լայնահուն՝ հարթավայրի պես անձայրածիր բնույթն ու լադային ինքնատիպությունը: Ի հավաստումն իր ասածի՝ Հայոց կաթողիկոսի համար Վարդապետը կատարել է ռուսական երգեր<sup>26</sup>:

Կոմիտասի «Լեռնային բարձունքներ» ռոմանսը գրված է Մ. Լեբմոն-տովի բանաստեղծության խոսքերով: Նրա գրչին է պատկանում նաև Պ. Չայկովսկու (1840-1893) «Был у Христа-младенца сад» երգի խմբերգային տարբերակը<sup>27</sup>: Փարիզում, որտեղ XX դարի սկզբին շատ բարձր էր գնահատվում ռուսական երաժշտական մշակույթը, Վարդապետն առավել բազմակողմանիորեն է ընկալում ժողովրդական հարուստ ակունքներից բխած ռուսական երաժշտարվեստը: Ինչպես ճշմարտացիորեն նշել է Կոմիտասի սան Աղավնի Մեսրոպյանը. «Կոմիտասի նախասիրությունը եղավ ռուսական ժողովրդական երգի զարմանալի պոլիֆոնիզմը: Անոր պարզ ու հստակ հնչականությունը գրավեց իր հոգին, խորապես հուզեց իր մեծ տաղանդը»<sup>28</sup>: Ա. Մեսրոպյանն իր «Կոմիտաս և ռուսական երաժշտությունը» ակնարկում, անդրադառնալով Կոմիտասի՝ ռուս երաժշտության հանդեպ ունեցած վերաբերմունքին, գրում է. «Հայկական ժողովրդական երգերեն դուրս՝ Կոմիտասի ամենասիրած եղա-

<sup>25</sup> «Արարատ», Վաղարշապատ, 1907, N 10, էջ 907:

<sup>26</sup> **Бадикян Х.**, Русские ноты великого Комитаса, Голос Армении, Ер., 1999, 9 октября. «Արարատ», 1905, N 9, էջ 807:

<sup>27</sup> Տե՛ս **Հարությունյան Մ.**, Կոմիտասը ազգային և այլազգային աղերսների մարմնավորող. Ավանդույթներ և արդիականություն, Հայ երաժշտության հարցեր, Երևան, 1996, էջ 236:

<sup>28</sup> Տե՛ս «ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 291:

նակները մնացին Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա»-ի արիաները, Մուսորգսկիի «Երգ լվի մասին», Ռիմսկի-Կորսակովի «Շեհերազադը» և Դարգոմիստովի «Ռուսալկա» օպերան: Կոմիտաս բացառիկ սեր մը ուներ վերջինիս «Ջաղացպանի երգ»-ի նկատմամբ: Ունկնդիրներու հիշողության մեջ երբեք չեն կրնար մոռցվիլ այն պահերը, երբ Կոմիտաս մտերմական հավաքույթներու ժամանակ հաճախ կանցներ դաշնամուրի առաջ և անոր մեղեդիներուն միացնելով իր քաղցրալուր ձայնի ելևէջները, խորունկ վերապրումով կդրսևորեր ռուս աշխատավոր ջրաղացպանի ներքնաշխարհը»<sup>29</sup>: Կոմիտաս վարդապետն իր գրադարանում հատուկ խնամքով առանձնացնում և ուսումնասիրում էր ռուս դասականներ Մոդեստ Մուսորգսկու, Ալեքսանդր Բորոդինի և Ն. Ռիմսկի-Կորսակովի գործերը, իսկ իր «Նվիրական պահարանում» Խրիմյան Հայրիկի, Խ. Աբովյանի, Կ. Դեբյուսիի նկարների կողքին պահում էր Մ. Գլինկայի, Պ. Չայկովսկու և Մ. Գնեսինի նկարները<sup>30</sup>, հավաքում և խնամքով պահպանում էր ռուս երաժշտության մասին մամուլում հրատարակված հոդվածները: 1913-ին Ռուսաստանից Պոլիս ժամանած երգչախումբը հանդես էր գալիս Ստեպան Սմոլենսկու (1848-1908) Պատարագի կատարումով. արդապետը շատ բարձր էր գնահատում այդ գործը՝ իր աշակերտներին հորդորելով ներկա գտնվել բոլոր համերգներին: «Կոմիտասը մեծ ոգևորություն կապրեր ամեն անգամ, – գրում է Ա. Մեսրոպյանը, – որ Ռուսաստանեն Պոլիս կայցելեին ռուսական երաժշտական կատարողական ուժեր: Անոնցմե ամեն մեկուն հետ Կոմիտաս կձանոթանար Պոլսոս հայտնի երաժշտական «Կոմանտինկել» տան մեջ... Հաճախ, երբ այդ առիթով մենք կերթայինք ռուսական եկեղեցին, դասի մեջ կտեսնեինք Կոմիտասը կանգնած իր պատվավոր տեղը, որ վերացած վիճակի մեջ կմասնակցեր երգչախմբի երգեցողության»<sup>31</sup>:

1909-ին հայ անվանի պետական գործիչ, գրականագետ Ալեքսանդր Մյասնիկյանը (1886-1925) նամակ է գրել Կոմիտաս վարդապետին և հայ ուսանողական միության անունից խնդրել է գալ Մոսկվա, ուսանողներից մի երգեցիկ խումբ կազմել և համերգներ տալ այդ միության օգտին<sup>32</sup>:

Վարդապետը, պատճառաբանելով իր զբաղվածությունը, մերժել է Ա. Մյասնիկյանին: Նույն թվականին էջմիածնից Մոսկվա՝ Մյասնիկյանին

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 292:

<sup>30</sup> Ժամանակակիցները Կոմիտասի մասին, էջ 202:

<sup>31</sup> Գլինկան և Կոմիտասը, «Սովետական արվեստ», 1957, N 2, էջ 39:

<sup>32</sup> Ալեքսանդր Մյասնիկյանը և արվեստը, «Սովետական արվեստ», 1956, N 2, էջ 11:

հղած Կոմիտասի նամակը վարդապետի կախյալ վիճակի ևս մի փաստի վկայությունն է. «Ձեր ուզած եւ իմ ցանկացած համերգը պատուաւոր զլուխ բերելու համար անհրաժեշտ է առնուազն մէկ եւ կէս ամիս՝ գալու, գնալու եւ պատրաստելու համար. իսկ այդքան երկար ժամանակ ինձ դժուար թէ թողնեն բացակայեմ: Բայց եւ այնպէս, փորձեցէք՝ դիմեցէք պաշտօնապէս Վեհափառին, գուցէ թոյլատրում է, այն ժամանակ կը գամ. ես պատրաստ եմ ծառայելու»<sup>33</sup>:

Այս կախյալ վիճակում ռուսական մեծ քաղաքներում դժվար էր ճանաչելի դարձնել Վարդապետի երաժշտական և գիտական ժառանգությունը:

Կոմիտաս վարդապետի տեսական աշխատությունների բավական քիչ հատված է թարգմանվել օտար լեզուներով<sup>34</sup>: Ռուսական լայն լսարանի համար ևս անհայտ էր նրա գիտական ուսումնասիրությունների մեծ մասը: Նրա ժառանգության արժեքավոր հատվածն առաջին անգամ ռուսերեն թարգմանել և հրատարակել է ռուս երաժշտագիտության մեջ զգալի վաստակ ունեցող անվանի երաժշտագետ, քննադատ Վասիլի Կորգանովը:

Անդրադառնալով Կոմիտասի բանահավաքչական աշխատանքների կարևորությանը՝ Թիֆլիսի ռուսալեզու պարբերականներում Կորգանովը հանդես է եկել նրա անձն ու գործը լուսաբանող տարաբնույթ հոդվածներով: 1900-ին Թիֆլիսի «Кавказский вестник» ամսագրում նա գերմաներենից ռուսերեն է թարգմանել և հրատարակել վարդապետի «Հայկական եկեղեցական երաժշտություն» խորագրով հոդվածը<sup>35</sup>: 1902-ին նույն ամսագրում Վ. Կորգանովն իր «Взгляд в нечто» հոդվածում մանրամասն դիտարկել է վարդապետի «Հայ գեղջուկ պարը» խորագրով ուսումնասիրությունը<sup>36</sup>:

1904-ին իշխանուհի Մ. Թումանյանի (1870–1947) խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակվող «Новое обозрение» ռուսերեն օրաթերթի «Կովկասյան երաժշտությունը» խորագրով հոդվածում Վ. Կորգանովը գրում է. «Վերջապես, շատ տարիներ անցնելուց հետո, գտնվեց մի մարդ, որ զինված մասնագիտական կարողություններով, նվիրվեց կովկասյան երգերի ուսումնասիրությանը՝ արհամարհելով ամեն մի դժվարություն: Կոմիտասն հանդիսա-

<sup>33</sup> Տե՛ս Կոմիտաս վարդապետ, Երևան, 2009, էջ 171:

<sup>34</sup> «Die Armenische kirchenmusik» («Հայ եկեղեցական երաժշտություն»), հրատարակվել է 1899-ին Լայպցիգում: "La musique rustique Arménienne" («Հայ գեղջուկ երաժշտություն»), հրատարակվել է 1907-ին Փարիզում:

<sup>35</sup> «Кавказский вестник», 1900, N 1, с. 107.

<sup>36</sup> Նույն տեղում, 1902, N 6, էջ 32:

նում է հայկական երաժշտության առաջին ուսումնասիրողը... Նրան քաջալերող ծառայած պիտի լիներ ոչ թե նրան, այլ գեղարվեստին և ամբողջ մարդկության»<sup>37</sup>:

Երկու արվեստագետների՝ Կոմիտասի և Կորգանովի բարեկամության վկայությունն է 1904-ին անվանի երաժշտագետին հղած Վարդապետի նամակը՝ հետևյալ վերջաբանով. «Ուրախութեամբ սպասում եմ Ձեզ սեպտեմբերին, Յարգանքներով միշտ պատրաստ Ձեզ ծառայելու Ձեր անձնուէր, խոնարհ ծառայ Կոմիտաս վարդապետ»<sup>38</sup>:

Ժամանակի ընթացքում Վ. Կորգանովը դարձել է նաև Կոմիտասի առաջին քննադատներից: Իր «Կոմիտաս Գևորգյան» վերնագրով հոդվածում, անդրադառնալով Կոմիտասի փարիզյան ելույթներին և մասնավորապես «Հայ քնարի» հրատարակությանը, Վ. Կորգանովը գրել է. «Կոմիտաս վարդապետը չպետք է հրատարակեր այդ ժողովածուն, որ երաժշտական ու գիտական տեսակետից ունի ավելի շատ բացասական, քան դրական նշանակություն»<sup>39</sup>:

Զխորանալով կոմիտասյան մշակումների գեղարվեստականության մեջ՝ Կորգանովը նսեմացնում է դրանց արժանիքները: Երաժշտագետը պնդում է, որ ժողովրդական երգը, «հում նյութը» պետք է տպագրել այնպես, ինչպես երգում է ժողովուրդը: Ըստ նրա՝ մշակումը չի կարող վերարտադրել բնական երգի իսկական արտահայտչականությունը. «Я настаивал и настаиваю на желательности издания народных напевов в подлинном, аутентичном виде»<sup>40</sup>: Կորգանովը գտնում էր, որ Կոմիտասի հետազոտությունները պիտի հրապարակվեն ռուսերեն և հայերեն, քանզի դրանք ավելի շատ հետաքրքրում են հայերին և ռուսներին, այլ ոչ թե ֆրանսիացիներին և գերմանացիներին<sup>41</sup>:

1905-ին Կոմիտաս վարդապետը Թիֆլիսի Հովնանյան դպրոցում կարդում է դասախոսություն հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին: Դրան հաջորդում է Թիֆլիսի Արտիստական ընկերության համերգը, որն իր աննախադեպ հաջողությամբ դառնում է մշակութային մեծ իրադարձություն: Թիֆլիսի հայալեզու և ռուսալեզու մամուլը հիացական կարծիքներ է հայտնել Կոմիտասի մասին մասնավորապես արվեստի ու հայ երաժշտության մասին ընդհանրապես: Եվրոպական շրջագայություններից հետո՝ 1908-ին,

<sup>37</sup> Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960, էջ 15:

<sup>38</sup> Տե՛ս **Կոմիտաս Վարդապետ**, Նամականի, Երևան, 2009, էջ 85:

<sup>39</sup> Տե՛ս **Корганов В.**, Кавказская музыка, 1908, էջ 81:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>41</sup> **Корганов В.**, Еще о кавказской музыке, Тифлис, 1907, N 292, с. 7-8.

Անդրկովկասի մյուս հայաշատ կենտրոնում՝ Բաքվի ժողովարանի դահլիճում, Վարդապետը հանդես է եկել երկու նվագահանդեսով և ելույթ-դասախոսությամբ, որի մասին գրել է Պետերբուրգի «Русская музыкальная газета» շաբաթաթերթը<sup>42</sup>: Հոդվածագիրը «Лекции по музыке в России» վերնագրով հոդվածում անդրադարձել է հայ եկեղեցական երաժշտության մասին Բաքվում հրատարակված Կոմիտասի արժեքավոր ուսումնասիրությանը: Նույն շաբաթաթերթում «Музыка в провинции» ընդհանուր խորագրի տակ հրապարակվել է հաղորդագրություն ապրիլի 1-ին Կոմիտաս վարդապետի՝ Բաքվում կայանալիք համերգի վերաբերյալ<sup>43</sup>:

Կոմիտասագիտության մեջ հսկայական ավանդ ունեցող երաժշտագետ, կոմպոզիտոր Ռոբերտ Աթայանը նամակագրական կապի մեջ է եղել Լազարյան ճեմարանի շրջանավարտ, ռուս արևելագետ, դիվանագետ Վլադիմիր Մինորսկու (1877-1966) հետ: XX դարի սկզբին Մինորսկին պաշտոնավարել է Իրանի և Թուրքիայի ռուսական դեսպանություններում: Ուսումնասիրել է Պարսկաստանի և Անդրկովկասի պատմաաշխարհագրությունն ու մշակույթը: Նա Հայ դատը պաշտպանող ռուս այն դիվանագետն էր, որը հանդես էր գալիս հայանպաստ քաղաքական հայտարարություններով: Մասնավորապես դատապարտում էր Մեծ Բրիտանիայի Արտաքին գործոց նախարար Էռնեստ Բևինին՝ Թուրքիայի առաջին նախարար Սարաջողուի հայատյաց քաղաքականության շուրջ համագործակցելու համար: Հիշեցնելով Հիտլերի հայտնի խոսքերը<sup>44</sup> և երիտթուրքերի վայրագությունները՝ ռուս մտավորականը հակադարձում էր անգլիացի պաշտոնյայի այն հայտարարությանը, թե Ղարսում և Ադանայում հայեր չեն եղել:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Վ. Մինորսկին ապրել է Փարիզում, 30-ականներից՝ Անգլիայում: Նա եվրոպական մի շարք հեղինակավոր համալսարանների պատվավոր անդամ էր, Լոնդոնի համալսարանի պրոֆե-

<sup>42</sup> «Русская музыкальная газета», 1908, N 17, с. 414. Պետերբուրգյան հեղինակավոր ամսագիր է, որը հրատարակվել է 1894-1918 թթ., լուսարանել է ռուսական և համաշխարհային մշակույթի արժեքավոր իրադարձությունները: **Դեմուրյան Ս.**, Կոմիտաս Գևորգյան, «Կոմիտաս» ժողովածու, Երևան, 1930, էջ 93-95:

<sup>43</sup> «Русская музыкальная газета», с. 422.

<sup>44</sup> «Ո՞վ է այսօր խոսում հայերի բնաջնջման մասին», – ասել է Հիտլերը 1939-ին՝ Լեհաստանի վրա հարձակվելուց մեկ շաբաթ առաջ: Տե՛ս **Բարդակչյան Գ.**, Հիտլերը և Հայոց ցեղասպանությունը, Զորյան ինստիտուտ, Մասաչուսեթս, 1986:



սոր: Տիրապետում էր մի քանի լեզուների, այդ թվում՝ քրդերենին. ի դեպ, նրան հիացրել էին Կոմիտաս վարդապետի քրդական երգերի կատարումները:

1912-ից Մինորսկին աշխատել է Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանությունում, մտերիմ է եղել Կոմիտասի հետ: Գրեթե միշտ նա ներկա է եղել Վարդապետի՝ Կ. Պոլսում կայացած համերգներին, իր հուշագրություններում անդրադարձել է այդ նվագահանդեսներին: Հակիրճ ու բովանդակալից նամակներում ռուս գիտնականն առանձնակի ջերմությամբ ու անմիջականությամբ նկարագրել է «Մեծ արտիստին»՝ ներկայացնելով նաև այն մթնոլորտը, որով պարուրված էին կոմիտասյան համերգները: Կարևոր է, որ իսկական մտավորականի խորաթափանցությամբ նա արժևորել է Կոմիտաս վարդապետի գործունեության նշանակությունը համաշխարհային երաժշտական մշակույթի համատեքստում: Վ. Մինորսկու հուշերից Ռ. Աթայանը պատահիկներ է հրապարակել «Литературная Армения»<sup>45</sup> ամսագրում: Կոմիտասի կատարումն ունկնդրելուց հետո ռուս դիվանագետը գրել է. «После концерта я пошел приветствовать Комитаса и пригласил его к себе в посольство. Тут он, увидя мое искреннее внимание, сам пел, аккомпанируя себе на рояле, и был еще сердечнее и ближе. Я понял всю важность человека, прокладывающего новые пути в области народной музыки»<sup>46</sup>.

Կոմիտաս վարդապետի գործի ճշմարտացի գնահատության մեջ անուրանալի է նաև ռուս կոմպոզիտոր Թոմաս Հարթմանի դերը: Հարթմանը Մոսկվայի և Պետերբուրգի կոնսերվատորիաների շրջանավարտ էր, Ա. Արենսկու և Ս. Տանենի աշակերտը: 1919-1921 թթ. նա Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում վարել է կոմպոզիցիայի դասարանը, համագործակցել փիլիսոփա Գ. Գյուրջիևի հետ: 1920-ականներից ապրել է Բեռլինում, Փարիզում, այնուհետև ԱՄՆ-ում: Դասավանդել է Փարիզի Սերգեյ Ռախմանինովի անվան ռուսական կոնսերվատորիայում, որի հիմնադիր-ռեկտորն էր Նիկոլայ Չերեպանինը (1873-1945): Վերջինս նույնպես Կոմիտաս վարդապետի փարիզյան համերգների երկրպագուներից էր: Ռուս կոմպոզիտոր, դիրիժոր և մանկավարժ, Պետերբուրգի կոնսերվատորիայում Ռիմսկի-Կորսակովի դասարանի լավագույն շրջանավարտ Ն. Չերեպանինը հսկայական ներդրում ունի ռուսական երաժշտական մշակույթի տարածման մեջ: Հայտնի է նրա համագոր-

<sup>45</sup> **Минорский В.**, Константинопольские встречи, «Литературная Армения», N 10, 1969, с. 81.

<sup>46</sup> Տե՛ս նշված հոդվածը, էջ 82:

ծակցությունը ռուս առաջադեմ մտավորականության հետ<sup>47</sup>: Նրան է պատկանում Կոմիտասի երաժշտությանը տրված հայտնի գնահատականը. «Ինչպե՞ս պիտի ուրախանար Մորիս Ռավելը՝ լսելով այս երկերը»<sup>48</sup>:

Չերեպինի այս գնահատականը զետեղված է Թոմաս Հարթմանի՝ 1919-ին Թիֆլիսում կարդացած հայտնի դասախոսության մեջ (որին անդրադարձել է Գ. Գյոդակյանը):

Իր գիտական արժեքով Հարթմանի այս հոդվածը կարևոր ձեռքբերում է կոմիտասագիտության մեջ: Հարթմանն առաջիններից էր, որ կարևորեց Կոմիտաս կոմպոզիտորի դերն ու նշանակությունն ազգային երաժշտության համար: Մի իրողություն, որը, ցավոք, առ այսօր մեզանում լիովին գիտակցված չէ: Հարթմանն իր հոդված-դասախոսության մեջ ներկայացրել է Կոմիտաս վարդապետի կենսագրական փաստերն ու բազմաբեղուն գործունեության ոլորտները: Ըստ նրա՝ Կոմիտասը ժողովրդական երգի հիմքով հյուսում էր իր բազմաձայն երաժշտական կտավները: Նա Վարդապետի պոլիֆոնիկ վարպետությունը, մտածողության յուրօրինակությունը համեմատում է Վերածնության դարաշրջանի խմբերգային պոլիֆոնիայի հսկաների հետ: Հղում կատարելով իր ուսուցիչ Ս. Տանեկին՝ Հարթմանը գրում է. «Նշանաւոր ռուս տեսաբան Տանեկը անձամբ ինձ ասում էր, թէ այն եզրակացութեան է եկած, որ ռուս ժողովրդական երգերը պէտք է ձայն առ ձայն ոճով մշակել: Հանճարեղ Կոմիտասը, նախազգայնութեան ոյժով գործադրեց այդ ոճը եւ այնպիսի կատարելութեամբ, որ հազիւ իր արեւմտեան արուեստակիցներից մինը կարողանար իրագործել: Նրա «մշակումների» (միտումնավոր չակերտների մեջ են դնում), աւելի ճիշտ կը լինէր ասել, նրա քանքարաւոր խմբական երկերի մէջ ժողովրդական եղանակը պահուած է անձեռնմխելի՝ թէ չափի, թէ եղանակի

<sup>47</sup> Չերեպինը 1890-ականներին Ռուսաստանում ձևավորված «Мир искусства» գեղարվեստական միության գործուն անդամներից էր, 1909-ից՝ Ս. Դյագիլևի Ռուսական բալետային թատերախմբի համար երաժշտություն գրող կոմպոզիտորներից: 1917-18թթ. Ն. Չերեպինը ղեկավարել է Թիֆլիսի երաժշտանոցը, գործուն մասնակցություն ունեցել Թիֆլիսի մշակութային կյանքին:

<sup>48</sup> Տե՛ս **Հարթման Թ.**, Դասախոսութիւն Կոմիտասի մասին՝ կարդացուած Թիֆլիզում 1919 թուին, «Անահիտ», 1935, էջ 75-80: Այս հոդվածն առաջին անգամ հրատարակվել է Թիֆլիսի «Кавказское слово» օրաթերթում՝ 1919 թ. փետրվարի 28-ի և մարտի 1-ի համարներում: Այնուհետև Մ. Բաբայանի թարգմանությամբ այն հրատարակվել է Փարիզի «Անահիտ» հանդեսում (1935, 1936 թթ.): Տե՛ս նաև «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 54-62:

տեսակէտից: Նա ֆանատիկոս էր այդ հարցում: Ո՞վ նրանից լաւ կարող էր պաշտպանել ժողովրդական երգի հոգին»<sup>49</sup>:

Որպէս XX դարի սկզբի նորարար, ռեալիստ՝ Հարթմանն առնչություններ է տեսել Մ. Մուսորգսկու և Կոմիտասի միջև. «Կոմիտասը համանմանութիւն ունէր Մուսորգսկու հետ-դրական (րեալ) կերպով երևակայում էր երաժշտական պատկերը»<sup>50</sup>: Նրա այս հոդվածն առաջին լուրջ մասնագիտական ուսումնասիրություններից էր, որը հիմնավորում էր Կոմիտաս վարդապետի մեծ կոմպոզիտոր լինելը: Հարթմանն առաջինն էր, որ Վարդապետի ստեղծագործությունների մեջ արժևորեց գեղջուկ երգը բազմաձայնորեն ներդաշնակելու ինքնատիպ սկզբունքները. «Գերազանցորեն նա (Կոմիտասը – *Լ. Ս.*) գործի՛չ է, ազգագրագե՛տ, գիտնակա՛ն, թե՛ կոմպոզիտոր: Չնայած, որ Կոմիտասը երևան է եկել իբրև հեղինակ հայկական երգերի մշակումների, ես պնդում եմ, որ նախ և առաջ նա կոմպոզիտոր է: Նրա ճանապարհը միակ ճիշտ ուղին է, որ պետք է ընտրեր այդ մարդը, որ հսկայական նպատակ ուներ – գտնել այն ներդաշնակային և բազմաձայն (պոլիֆոնիկ) ոճը, որ իրենց էութամբ իսկական հայ ժողովրդական երգին համապատասխան են»<sup>51</sup>: Հարթմանը կարևորում է նաև Վարդապետի բանահավաքչական գրառումներն ու դրանց գիտական հիմնավորումները:

Կոմիտասի անձն ու գործը խորապէս ուսումնասիրած և ըստ արժանւոյն գնահատած Հարթմանն իր համոզիչ եզրահանգումներով հակադարձում է քննադատներին, այդ թվում և Կորգանովին՝ պնդելով, որ Կոմիտասի ազգագրական գրառումները կոմպոզիտորի գործունեության կարևորագույն հատվածն են: Նա առաջին երաժշտագետներից էր, որ կարևորեց Կոմիտասի գործի մնայուն նշանակությունը ոչ միայն հայ, այլև համաշխարհային երաժշտության համար:

Հարթմանի գործունեությունը Թիֆլիսում կապված էր երաժշտահասարակական, մշակութային կյանքին: Նա ստեղծագործական կապեր էր հաստատել Թիֆլիսի հայ մտավորականության երևելի դեմքերի՝ Հովհաննես Թումանյանի (1869-1923), Եղիշե Թադևոսյանի (1870-1936), Սպիրիդոն Մելիքյանի (1880-1933) (բոլորն էլ Վարդապետի մտերիմներն էին) հետ: 1919-ին

<sup>49</sup> Տե՛ս **Հարթման Թ.**, Դասախօսութիւն Կոմիտասի մասին, էջ 77:

<sup>50</sup> **Հարթման Թ.**, Ժողովրդական երգը եւ նրա հիւաքողները, «Անահիտ», Փարիզ, 1936, էջ 30:

<sup>51</sup> **Հարթման Թ.**, Դասախօսութիւն Կոմիտասի մասին..., էջ 76: Տե՛ս նաև «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 55:

ռուս կոմպոզիտորը դարձել էր Թիֆլիսում կազմակերպված «Կոմիտաս» ընկերության (գործել է երկու տարի) գործուն անդամներից: Ընկերությունը ծրագրել էր համերգներ կազմակերպել, հրապարակել և պահպանել կոմպոզիտորի ժառանգությունը: Այն նպատակ ուներ անդամավճարներ հավաքելու միջոցով տարեկան որոշակի գումար հատկացնել վարդապետին<sup>52</sup>:

Մեր կարծիքով Կոմիտասն, իրավամբ, մշակեց ժողովրդական երգերի ձայնագրման և դաշնավորման սեփական սկզբունքները: Նրա ազգագրական բարձրարժեք գրառումները հիմնանյութ հանդիսացան Վարդապետի գիտական հետազոտությունների և ստեղծագործությունների համար: Այդ գրառումները դարձան հայ ազգային երաժշտամտածողության ինքնատիպության ապացույցներ:

## АРХИМАНДРИТ КОМИТАС И РУССКАЯ КУЛЬТУРА

### Статья первая

ЛУСИНЕ СААКЯН

Данная статья посвящена взаимоотношениям основоположника армянской национальной композиторской школы Комитаса с русской культурой.

В предисловии статьи-исследования прослеживаются вековые русско-армянские культурно-исторические связи, рассматриваются роль и значение русской музыкальной культуры в творческой деятельности восточно-армянских композиторов конца 19-го и начала 20-го веков. Впервые в контексте историко-политических событий эпохи наиболее целостно изучаются факты, подтверждающие причастность творческой биографии Комитаса к русской культуре, излагаются профессиональные оценки и мнения крупнейших русских музыкантов о творчестве Комитаса.

Активная творческая и научная деятельность, которую Комитас развернул в Эчмиадзине, Закавказье и в Европе, была широко освещена авторитетными деятелями русской культуры Ф. Гартманом, Н. Черепниным, М. Гнесиным, Д. Маггидом, В. Коргановым, позже и Д. Шостаковичем. Русскоязычная пресса Закавказья высоко оценила музыкально-просветительскую миссию Комитаса; его публикации находили отклик в петербургской прессе. Лекции-концерты Архимандрита в Тифлисе, Баку проходили с

<sup>52</sup> Ընկերության անդամներից էին Ե. Թադևոսյանը, Գ. Լևոնյանը, Ս. Մելիքյանը: Տե՛ս նաև **Հովհաննիսյան Թ.**, «Կոմիտաս» ընկերություն, «Գանձասար», Հալեպ, 1994, էջ 79-83: **Լևոնյան Գ.**, Մեր Կոմիտասը, «Կոմիտաս» ժողովածու, Երևան, 1930, էջ 75-88:

беспрецедентным успехом. Благодаря разностороннему изучению и новаторскому освещению этих фактов, роль Архимандрита Комитаса и его значение в национальной культуре высвечивается наиболее полно и целостно.

**Ключевые слова** – Архимандрит Комитас, музыкальная культура, русская музыка, музыковед, композитор.

## ARCHIMANDRITE KOMITAS AND RUSSIAN CULTURE

LUSINE SAHAKYAN

The article is dedicated to the relationships of Archimandrite Komitas, the founder of the Armenian national composing tradition, with Russian culture.

The preface of the research article highlights the centuries-old Armenian-Russian historical and cultural relations, and the role Russian music played in the creative life of the Eastern Armenian composers of the late 19<sup>th</sup>-early 20<sup>th</sup> centuries. This study is the first ever attempt to comprehensively examine, within the context of the historic and political situation of the time, the connections of Komitas's works with Russian culture. Reference is made to the most prominent Russian musicologists' professional assessments and views of Komitas's academic achievements.

Archimandrite's professional activities in Etchmiadzin, the Transcaucasian region and Europe were widely covered by such renowned figures of Russian culture as T. Hartmann, N. Cherepnin, M. Gnessin, D. Maggid, V. Korganov and D. Shostakovich. The Russian-language press of Transcaucasia highly appreciated Komitas's musicological and educational activities; his publications were addressed by the press in St. Petersburg. The lecture concerts performed by Komitas in Tiflis and Baku had been an unprecedented success. Due to the thorough study and innovative coverage of these facts, the role and significance of Archimandrite Komitas in national culture are presented most comprehensively.

**Key words** – Archimandrite Komitas, music art, Russian art, musicologist, composer.

---

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>ԵՐՆՋԱԿՅԱՆ Արա</b> – Հորացիոն և Գովերը .....	3
<b>ԵՐՆՋԱԿՅԱՆ Արա</b> – Շեքսպիրի միկրո- և մակրո տիեզերքը .....	8
<b>ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վիդեա</b> – Անհատական և հասարակական գիտակցության խնդիրը Դ. Հ. Լուրենսի փոքր արձակում .....	15
<b>ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Սյուզաննա</b> – Չլուծված անցյալի խնդիրը և կերպարների համակարգը Հայնրիխ Բյոլի «Եվ չասաց ոչ մի բառ» վեպում .....	22
<b>ՇԱՇԻԿՅԱՆ Գրիգոր</b> – Միջտեքստայնությունը՝ իբրև պատումի կերտման միջոց Հրանտ Մաթևոսյանի «Խումհար» վիպակում .....	30
<b>ՖԻՐՈՒՋԻՄՈՂԱԴԱՄ Մահմուդ</b> – Սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի մանկական գրականությունը (1920-1950թթ.) .....	39
<b>ՖԻՐՈՒՋԻՄՈՂԱԴԱՄ Մահմուդ</b> – Սահմանադրությանը հաջորդող երկրորդ սերնդի մանկական գրականությունը (1950-1980թթ.) .....	50

### ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

<b>ԱԴԻԼԽԱՆՅԱՆ Անահիտ</b> – Պաշտոն ցույց տվող բառերի իմաստաբանական առանձնահատկությունները .....	59
<b>ԲԱԴԱԴՅԱՆ Մարիանա</b> – Անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով եղանակավորող և հաղորդակցական դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում .....	68
<b>ՄԱԿԱՐՅԱՆ Անահիտ</b> – Միջտեքստային տարրերը հեղինակի հասկացական-լեզվական աշխարհի պատկերում (Ս. Մոեմի «Ստրկություն մարդկային» և «Ամփոփելով անցած ուղին» վեպերի հիման վրա) .....	76
<b>ՊԱՊԻԿՅԱՆ Սիլվա</b> – Կրոնաեկեղեցական տերմինների բառակազմական վերլուծություն .....	85

### ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<b>ԽԱՋԱՏՐՅԱՆ Արթուր</b> – Կոնվերգենցիա լրագրության զարգացման առանձնահատկությունները Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում .....	94
--	----

### ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>ԱՌԱՔԵԼՅԱՆ Անդրանիկ</b> – Միջարաբական տարածայնություններն իրաքյան (2003թ.) պատերազմի շուրջ .....	103
<b>ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Վահան</b> – Կիլիկիայի հայկական թագավորության և Հալեպի սուլթանության միջև 1203-1206 թթ. պատերազմը .....	117

### ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ Նորայր</b> – Նոր քաղաքական հարացույցի ձևավորման անհրաժեշտությունը և տարածաշրջանային ինտեգրացիոն նախագծերի	
--	--

հեռանկարները .....	130
<b>ԹՈՎԱՄԱՅԱՆ Գոռ</b> – ՀՀ-ՆԱՏՕ փոխգործակցության ազդեցությունը պաշտպանական բարեփոխումների վրա (2005-2015 թթ.) .....	139
<b>ԽԱՉԱՏՐՅԱՆ Գագիկ</b> – Տեղեկատվական պատերազմը Ադրբեջանի ապրիլյան ռազմական ագրեսիայի ընթացքում .....	148
<b>ՇԻՐԽԱՆՅԱՆ Սարգիս</b> – «Ժողովրդավարությունն Ամերիկայում» աշխատության քննական ասպեկտները. Ա. դը Տոկվիլի «Ոսկե միջինի» սկզբունքը ..	158
<b>ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԹՅՈՒՆ</b>	
<b>ՄՈՎՍԻՍՅԱՆ Նանե</b> – Լեզվի հիմնահարցը հայկական ինքնության արդիականացման լուսավորական նախագծում .....	176
<b>ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b>	
<b>ՆԱԶԻՆՅԱՆ Սյուզաննա</b> – ՀՀ սահմանադրությունը և գործող օրենսդրությունը .....	184
<b>ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ</b>	
<b>ԱՃԱՌՅԱՆ ԱՆԻ</b> – Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ինտերիերի դիզայնը	192
<b>ԱՐՏԵՄՅԱՆ Լիլիթ</b> – Լևոն Չաուշյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում (նվիրվում է ծննդյան 70-ամյակին) .....	200
<b>ԹԱՄԻՐՕՂԵՅԱՆ Աննա</b> – Գեղունի Չթյանի Թավջութակի և դաշնամուրի սոնատի կոմպոզիցիոն որոշ առանձնահատկությունները .....	207
<b>ՀՈՍՍԵԻՆՉԱԴԵ Յաշար</b> – Ակնարկ Դուբայի ժամանակակից երկնաքերներում կայուն ճարտարապետության նախագծման ներուժի և չափանիշների	216
<b>ՂՈԼԻՆԵԺԱԴ ՓԻՐԱԶԱՐԻ Ալիոեգա</b> – Շիրազ քաղաքի պատմական կենտրոնի (Բեյնոլ Հարամեյն) քաղաքային պաթոլոգիան և ռեհաբիլիտացիան ...	228
<b>ՂՈԼԻՆԵԺԱԴ ՓԻՐԱԶԱՐԻ Ալիոեգա</b> – Շիրազ քաղաքի հնագույն պատմական հատվածի վերականգնման, պահպանման ու նորացման հնարավոր ուղիներն ու անհրաժեշտ միջոցառումները .....	235
<b>ՄԵԼՔՈՆՅԱՆ Դավիթ</b> – Երաժշտական կյանքը Երևանում 1901-1910թթ. ....	242
<b>ՄԻՆԱՍՅԱՆ Նունե</b> – Միհրան Սոսոյանի գրքային ձևավորումները .....	250
<b>ՍԱՀԱԿՅԱՆ Լուսինե</b> – Կոմիտաս վարդապետը և ռուսական մշակույթը (հոդված առաջին) .....	260

## СОДЕРЖАНИЕ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ	
<b>ЕРНДЖАКЯН Ара</b> – Горацио и Гауэр .....	3
<b>ЕРНДЖАКЯН Ара</b> – Микрокосм и макрокосм Шекспира .....	8
<b>ОГАННЕСЯН Виолета</b> – Проблема индивидуального и общественного сознания в малой прозе Д. Г. Лоуренса .....	15
<b>НАВАСАРДЯН Сюзанна</b> – Проблема неразрешённого прошлого и система образов в романе Генриха Бёлля “И не сказал ни единого слова” .....	22
<b>ШАШИКЯН Григор</b> – Интертекстуальность как средство формирования наррации в повести “Похмелье” Гранта Матевосяна .....	30
<b>ФИРУЗИМОГАДАМ Махмуд</b> – Детская литература первого поколения постконституционного периода Ирана (1920-1950 гг.) .....	39
<b>ФИРУЗИМОГАДАМ Махмуд</b> – Детская литература второго поколения постконституционного периода Ирана (1950-1980 гг.) .....	50
ЯЗЫКОЗНАНИЕ	
<b>АДИЛХАНЫЯН Анаит</b> – Семантические особенности слов, обозначающих должности .....	59
<b>БАДАДЯН Мариана</b> – Характеризующие качества человека номинативные и коммуникативные фразеологические обороты в армянском, русском и английском языках .....	68
<b>МАКАРЯН Анаит</b> – Автоинтертекстуальные репрезентанты концептуально-языковой картины мира писателя (на материале романа С. Мозма “Бремя страстей человеческих” и автобиографического романа “Подводя итоги”) .....	76
<b>ПАПИКЯН Сильва</b> – Словообразовательный анализ армянских религиозно-церковных терминов .....	85
ЖУРНАЛИСТИКА	
<b>ХАЧАТРЯН Артур</b> – Особенности развития конвергентной журналистики во Франции и Великобритании .....	94
ИСТОРИОГРАФИЯ	
<b>АРАКЕЛЯН Андраник</b> – Межарабские разногласия в период войны в Ираке (2003г.) .....	103
<b>ТЕР-ГЕВОНДЯН Ваан</b> – Война 1203-1206 гг. между Киликийским армянским царством и Алеппским султанатом .....	117
ПОЛИТОЛОГИЯ	
<b>ДУНАМАЛЯН Норайр</b> – Необходимость формирования новой политической парадигмы и перспективы региональных интеграционных проектов .....	130



<b>ТОВМАСЯН Гор</b> – Влияние сотрудничества Армения-НАТО на оборонные реформы РА (2005-2015) .....	139
<b>ХАЧАТРЯН Гагик</b> – Информационная война в ходе апрельской военной агрессии со стороны Азербайджана .....	148
<b>ШИРХАНЯН Саркис</b> – Критические аспекты «Демократии в Америке»: принцип «Золотой середины» в концепции А. де Токвиля .....	158

#### ФИЛОСОФИЯ

<b>МОВСИСЯН Нане</b> – Проблема языка в просветительском проекте модернизации армянской идентичности .....	176
--	-----

#### ЮРИСПРЕУДЕНЦИЯ

<b>НАЗИНЯН Сюзанна</b> – Конституция и действующее законодательство Республики Армения .....	184
--	-----

#### ИСКУССТВОЗНАНИЕ И АРХИТЕКТУРА

<b>АЧАРЯН Ани</b> – Дизайн интерьера Музея-института Комитаса .....	192
<b>АРТЕМЯН Лилит</b> – Деятельность Левона Чаушяна в период независимости РА .....	200
<b>ТАМИРОГЛЯН Анна</b> – Некоторые композиционные особенности Сонаты для виолончели и фортепиано Гегуни Читчян .....	207
<b>ХУССЕЙНЗАДЕ НАГАДЕЙ Яшар</b> – Обзор потенциалов и критериев проектирования устойчивой архитектуры в современных небоскребах Дубая .....	216
<b>ПИРБАЗАРИ АЛИРЕЗА Холинежад</b> – Городская патология и ревитализация исторического центра (Бейнол Харамейн) города Шираз .....	228
<b>ПИРБАЗАРИ АЛИРЕЗА Холинежад</b> – Возможные пути и необходимые мероприятия по ревитализации, сохранению и реконструкции древней исторической части города Шираз .....	235
<b>МЕЛКОНЯН Давид</b> – Музыкальная жизнь в Эривани в 1901-1910гг. ....	242
<b>МИНАСЯН Нуне</b> – Книжные оформления Миграна Сосояна .....	250
<b>СААКЯН Лусине</b> – Архимандрит Комитас и русская культура (статья первая)...	260

**ԿԱՆԹԵԴ**  
Գիտական հոդվածներ  
КАНТЕХ  
Научные труды  
KANTEGH  
Articles

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան  
Ռուսերեն և անգլերեն տեքստերի խմբագիր՝ Սվետլանա Մարդանյան  
Շապիկի ձևավորումը՝ Վարդան Գաբրիելյանի  
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4,  
հեռ. 58-18-51, հեռապատճեն՝ 58-11-09

Адрес редакции: Ереван 0019, пр. Маршала Баграмяна 24/4,  
тел. 58-18-51, факс 58-11-09

Address: 24/4 Marshal Baghramian av., Yerevan 0019, Armenia,  
tel. 58-18-51, fax 58-11-09

Էլ. փոստ՝ [instart@sci.am](mailto:instart@sci.am)  
Эл. почта: [instart@sci.am](mailto:instart@sci.am)  
E-mail: [instart@sci.am](mailto:instart@sci.am)

Պաշտոնական կայքէջը՝ <http://Kantegh.am>  
Официальный сайт: <http://Kantegh.am>  
<http://Kantegh.am>



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում  
Ֆորմատ՝ 60x84 1/16, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 130:  
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)  
Ավան, Դավիթ Մայան 45 (տպարան)  
Հեռ. (374 1) 54.49.82, (374 10) 54 62 60, 54 49 82, 62.38.63 (տպարան)  
Էլ. Փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)